АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ГОСУДАРСТВЕННЫЙ ИСТОРИЧЕСКИЙ МУЗЕЙ АРМЕНИИ

К. КАФАДАРЯН

ГОРОД ДВИН И ЕГО РАСКОПКИ

I

РЕЗУЛЬТАТЫ РАБОТ
АРХЕОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕДИЦИИ
АКАДЕМИИ НАУК АРМ. ССР 1937—1950 ГОДОВ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1952

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

ԴՎԻՆ ՔԱՂԱՔԸ ԵՎ ՆՐԱ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

I

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԱԽՄԲԻ 1937—1950 ԹԹ.
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1952

ԱՌԱՋԱԲԱՆ

Դվին քաղաքի հնագիտական ուսումնասիրությունը թեև սկսվել է դեռևս 1899 թվականին, բայց մինչև Հայաստանում սովետական կարգեր հաստատվելը, այդ աշխատանքը, ինչպես և բոլոր տեսակի հնագիտական հետազոտությունները, պատահական բնույթ են կրել և կախված են եղել առանձին ուսումնասիրողների նախաձեռնությունից:

Հին կարգերի ժամանակ Հայաստանում չկար որևէ գիտական հաստատություն, չկար որևէ թանգարան, որտեղ հնարավոր լիներ կենտրոնացնել տարբեր տեղերում բացված նյութական կուլտուրայի մնացորդները: Էջմիածնի վանքի փոքրիկ թանգարանն ի վիճակի չէր որևէ գիտական աշխատանք ձեռնարկելու:

Ճիշտ է, ռուս և արևմտա-եվրոպական գիտնականներ երբեմն-երբեմն այցելել են Հայաստան և որոշ հնագիտական ուսումնասիրություններ կատարել, բայց դրանք ևս սիստեմատիկ բնույթ չեն կրել: Այդ իսկ պատճառով, եթե նկատի չառնենք Անի քաղաքի պեղումները, Հայաստանը սովետական կարգեր հաստատելուց առաջ, հնագիտության տեսակետով, քիչ ուսումնասիրված երկրներից մեկը կարող էր համարվել:

Դրությունը միանգամայն փոխվեց 1920 թվականից հետո, երբ նորաստեղծ Սովետական Հայաստանում իրար հետևից հիմնադրվեցին գիտահետազոտական և թանգարանային մի շարք պետական հաստատություններ, որոնք սկսեցին կազմակերպել պատմական հուշարձանների և հնավայրերի ոչ միայն պահպանության, այլև նրանց սիստեմատիկ ուսումնասիրության գործը:

Երևանում հիմնադրված Պետական համալսարանի համապատասխան ֆակուլտետներում և գիտահետազոտական ու ուսումնական հաստատություններին կից կազմակերպված ասպիրանտուրաներում անեցին գիտական երիտասարդ կադրեր, որոնք ձեռնարկեցին Հայաստանի նյութական կուլտուրայի պատմության սիստեմատիկ ուսումնասիրությունը, սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Այդ երիտասարդ կադրերն իրենց մարքս-լենինյան մատերիալիստական աշխարհահայեցողությամբ հնագիտությունը դրին գիտական բարձր հիմունքների վրա:

Բուրժուական հնագիտությունը առավելապես նպատակ էր դնում ի հայտ բերել թանկարժեք գանձեր, ինչպես նաև ձգտում էր բաց անել իշխող դասին պատկանող նոխ ապարանքներ և տաճարներ: Դրան հակառակ, սովետական հնագիտությունը նպատակ ունի հին ժամանակների կյանքի բացահայտումն իր բոլոր կողմերով, նա ուսումնասիրում է մարդկային հասարակության զարգացման բոլոր էպոխաների ճշմարտացի պատմությունը՝ սկսած

հնագույն Քարե դարի ժամանակներից, մինչև ուշ միջնադարը: Այդ պատճառով էլ սովետական հնագիտության համար կարևոր են ոչ միայն ոսկյա և այլ թանկարժեք բարձրարվեստ առարկաները ու պալատական ճոխ շինությունները, այլև համեստ խեցանոթները ու հյուղակները, որոնք հարուստ նյութ են տալիս հասարակության «ստորին» խավերի սոցիալական վիճակը, դասակարգային փոխհարաբերությունները ու կենցաղը պարզելու: Սովետական կառավարության օրոք հսկայական նյութական միջոցներ տրամադրվեց ինչպես Հայաստանի, այնպես էլ եղբայրական մյուս ռեսպուբլիկաների անցյալի նյութական կուլտուրայի բազմակողմանի ուսումնասիրության համար: Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն մի շարք որոշումներ կայացրեց հայ ժողովրդի պատմության և կուլտուրայի ուսումնասիրության առաջնահերթ խնդիրների վերաբերյալ, խնդիր դնելով մարքսիստորեն բացահայտել մեր անցյալի պատմությունն ու կուլտուրան, հաստատել սովետական պատմական գիտությունը՝ այն ծառայեցնելու երկրում աճող սոցիալիստական կուլտուրայի շահերին: Այդ առումով ձեռնարկվեցին մի շարք կարևոր հնագիտական խոշոր օբյեկտների երկարատև սիստեմատիկ պեղումներ, որոնք այժմ առատ նյութ են մատակարարում մեր ժողովրդի պատմության և կուլտուրայի տարբեր էտապների հիմնավորված պատմությունը կազմելու համար: Այդ աշխատանքների կատարմանը օգնության եկան նաև Մոսկվայի և Լենինգրադի գիտական ուժերը, որոնք մեծ չափով օժանդակեցին մեր պատմության հարցերը լուսաբանելուն: Սովետական Հայաստանում ձեռնարկված հնագիտական աշխատանքները տվին մեծ արդյունք: Այսպես, օրինակ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի և Պետական էրմիտաժի հնագիտական համատեղ արշավախումբը, վերջին տարիների ընթացքում Հայաստանում բաց արեց հին Քարե դարի հնավայրեր: Ինստիտուտի աշխատակիցներին հաջողվեց նույնիսկ գտնել այսպես կոչված շելյան կուլտուրայի մնացորդներ: Այդ կուլտուրան համարվում է ամենանախնականը ողջ Սովետական Միության մեջ հայտնի դարձածներից: Հայտնաբերվեցին և ուսումնասիրվեցին նաև Քարե դարի ուշ շրջանների նյութական կուլտուրայի բազմաթիվ մնացորդներ, որոնք մինչ այդ Հայաստանում անծանոթ էին:

1936—1937 թթ. Հայկական ՍՍՌ Պետական պատմական թանգարանի և Պատմական հուշարձանների պահպանության Կոմիտեի Շենգավիթում կատարած համատեղ պեղումների շնորհիվ Հայաստանում առաջին անգամ բացվեց էնեոլիթյան շրջանի կուլտուրան:

1936 թվին հայտնի դարձավ Կարմիր բլուրը, որտեղ 1939 թվականից սկսած պեղումներ են կատարվում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի և Պետական էրմիտաժի համատեղ արշավախմբի կողմից: Կարմիր բլուրում բացված Ուրարտական Թեյշեբաինի ամրոցը հարուստ նյութ տվեց, մինչ այդ գրեթե միայն սեպագրերի միջոցով մեզ ծանոթ, ուրարտական պատմության և կուլտուրայի համար:

1949 թվականին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտն սկսեց Գառնիի ամրոցի պեղումները, որոնք հենց առաջին տարիներից սկսած մեծ արդյունք են տալիս գլխավորապես հայ ժողովրդի հնագույն և անտիկ շրջանի պատմության վերաբերյալ:

Վերջապես, 1937 թվականից սկսած Հայաստանի երբեմնի մայրաքաղաք Դվինի պեղումները նպատակ ունեն ի հայտ բերել և ուսումնասիրել 4-ից մինչև 13-րդ դարին պատկանող այդ խոշոր քաղաքի ավերակները և նրանում պահպանված նյութական կուլտուրայի մնացորդները, որոնք նոր լույս կսփռեն այդ դարերի պատմության վրա:

Դվինի պեղումների արդյունքներին է նվիրված այս աշխատությունը: Սակայն, այստեղ մենք ոչ միայն նկարագրել ենք հնագիտական իրերն ու բացված ճարտարապետական օբեկտները, այլև հնարավորին չափով վերլուծման ենք ենթարկել առարկաները՝ պարզելու համար նրանց ժամանակը, տիպը, ծագումը, կրած փոփոխությունները, արվեստը և դերը միջնադարյան քաղաքի տնտեսության մեջ:

Այս տեսակետով, ներկա աշխատությունը ոչ թե լոկ հաշվետվություն է, այլ մի ընդհանուր ուսումնասիրություն՝ նվիրված պեղումների արդյունքներին:

Իհարկե, այստեղ մենք նպատակ չենք ունեցել տալ Դվինի պեղումների բազմահազար նյութերի մանրամասն մասնագիտական ուսումնասիրությունը: Դա մի մարդու ուժերից վեր է: Այդ խնդրի իրականացման համար հարկ կլինի տարբեր մասնագիտության պատկանող գիտնականների մի ամբողջ կոլեկտիվի երկար տարիների աշխատանք:

Այդ կարևոր գործը մասամբ իրականացնելու նպատակով արդեն իսկ աշխատանքի որոշ բաժանում է կատարված՝ արշավախմբի մասնակիցների և դրսից հրավիրված մասնագետների միջև:

Սակայն, մինչև այժմ լույս չի տեսել պեղումների արդյունքները ընդհանրացնող թեկուզ մի համառոտ ուսումնասիրություն, որի պակասը խիստ զգալի է[1]: Մեր այս աշխատությունը գալիս է լրացնելու այդ պակասը:

---

[1] *Դվինի պեղումների արդյունքներին են նվիրված հետևյալ աշխատությունները.*

(Ժամանակագրական կարգով)

1. Կ. Ղափադարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները: ԱրմՖան, Երևան, 1939 թ.: Ուսումնասիրել է կոմինգրի վրայի հայերեն արձանագրությունները:

2. Բ. Առաքելյան, Վ. Հարությունյան, Նյութեր Դվին քաղաքի պեղումներից, «Սովետական արվեստ» ամսագիր, Երևան, 1940 թ., № 4, էջ 47—55:

3. Ас. *Шахназарян.* Двин, историко-географический очерк, АрмФАН, Ереван, 1940 г., стр. 1—140.

4. *Б. А. Шелковников.* Художественная керамика двинских раскопок. Известия Армянского филиала АН СССР, Ереван, 1940 г., № 4—5, стр. 181—199.

5. *Б. А. Шелковников.* Художественная керамическая промышленность средневековой Армении. Известия Армянского филиала АН СССР, Ереван, 1942 г., № 3—4 (17—18), стр. 9—36. *Հայերեն և անգլերեն ամփոփումով:*

6. *Б. А. Шелковников.* Средневековая художественная керамика Ближнего и Дальнего Востока (по материалам Исторического Музея АрмФАН СССР). Известия Армянского Филиала Академии наук СССР, Ереван, 1942 г., № 6 (20), стр. 3—32, *հայերեն և անգլերեն ամփոփումով:*

7. *Н. М Токарский*, Архитектура древней Армении. Ереван, 1946 г. *Դվինի ճարտարապետական կառուցվածքներին են վերաբերում աշխատության 107—109 (կաթողիկե եկեղեցի), 43—47 (կաթողիկոսի պալատ), 299—303 (բնակելի տուն) էջերը:*

8. Վ. Հարությունյան, Դվինի պեղումները: «Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1946 թ., № 6, էջ 41—43: Ընդգրկում է միայն 1937—1939 թվականների պեղումները:

9. *В Арутюнян.* Архитектурные памятники Двина. Известия Академии наук Армянской ССР, серия общественных наук, Ереван, 1947 г., № 8, стр. 81—99. *Գրված է 1937—1939 թվականների պեղումների նյութերի հիման վրա:*

10. *В. Арутюнян.* Архитектура патриаршего дворца в Двине. Труды Ереванского политехнического института имени К. Маркса. Ереван, 1947 г., стр. 147—168, *հայերեն ամփոփումով:*

11. Կ. Ղափադարյան, Հնագիտական աշխատանքը Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո: Աշխատություններ Պետական պատմական թանգարանի, հատոր 1-ին, 1948 թ., Երևան, էջ 39—63:

12. Հռ. Ջանփոլադյան, Դվինի պեղումներից հայտնաբերված ձվաձև անոթները: Աշխատություններ Պետական պատմական թանգարանի, հատոր 3-րդ, Երևան, 1950 թ., էջ 147—167, ռուսերեն ամփոփումով:

13. Վ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները, Հայպետհրատ, 1950, էջ 1—115: Գրված է 1937—1939 թվականների պեղումների հիման վրա:

Դվինի պեղումները դեռևս ավարտված չեն։ Նրանք առաջիկա տարիներին շարունակվելու են ավելի մեծ ծավալով։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Նախագահությունը, նկատի առնելով Դվինի պեղումների կարևորությունը միջնադարյան Հայաստանի պատմությունն ու կուլտուրան ուսումնասիրելու համար, 1950 թվականի դեկտեմբերի 25-ի նիստում հատուկ որոշում ընդունեց պեղման աշխատանքները ընդարձակելու և արդյունքների ուսումնասիրությունն արագացնելու մասին։

* * *

Այստեղ հարկ է նշել, որ սովետական հնագիտության որոշ շրջաններում մինչև վերջին տարիները անվերապահորեն ընդունում էին Ն. Յա. Մառի ժառանգությունը և թույլ չէին տալիս քննադատական խոսք ասել Ն. Յա. Մառի հասցեին, չնայած այն բանին, որ Ն. Յա. Մառն իր կատարած հնագիտական աշխատանքների ընթացքում թույլ է տվել մի շարք լուրջ սխալներ, որոնցից անհրաժեշտ է ազատագրվել։

1950 թվականին լույս տեսան ընկեր Ստալինի լեզվաբանության հարցերին նվիրված հանճարեղ աշխատությունները, որոնցով հիմք դրվեց լեզվի ստալինյան ուսմունքին։ Առաջնորդի այդ աշխատությունները մեծ օգնություն ցույց տվին մի շարք այլ գիտությունների, որոնց թվում նաև հնագիտության, ազատագրվելու իրենց անկաշկանդ զարգացման խանգարող ավելորդ նախապաշարմունքներից և առաջին հերթին Ն. Յա. Մառի սխալ հայացքներից։ Ընկեր Ստալինը մեզ սովորեցնում է, որ

> «Ոչ մի գիտություն չի կարող զարգանալ և առաջադիմել առանց կարծիքների պայքարի, առանց քննադատության ազատության»[1]։

Այժմ սովետական հնագիտության պատվավոր և առաջնահերթ խնդիրն է՝ առաջնորդի տեսական ցուցումներով վերակառուցվել և վերանայվել անցած ուղին և ուղղել հնագիտության մեջ տեղ գտած տեսական սխալները։

Ներկա աշխատության մեջ մենք այդ ուղղությամբ որոշ փորձ ենք արել՝ ցույց տալու Ն. Յա. Մառի սխալները հայ ժողովրդի պատմությանը վերաբերող հարցերում։

Մեր կարծիքով, Ն. Յա. Մառը թերագնահատել է Բագրատունյաց թագավորության դերը հայկական ազգային պետություն և կուլտուրա ստեղծելու գործում։ Նա 10—11-րդ դարերի կուլտուրան համարել է հնի կրկնություն, իսկ Հայաստանի տնտեսական ու կուլտուրական զարգացումը նկատելիորեն կապել է օտար նվաճողների՝ Սելջուկ թուրքերի և Շեդադյան ցեղի հետ, որոնք իրականում միայն կեղեքել են հայ ժողովրդին և ամայացրել երկիրը։

Նա իր բազմաթիվ ուսումնասիրությունների մեջ ցույց չի տվել Անի և Դվին քաղաքների դերը հայ ժողովրդին մի միասնական պետության մեջ միավորելու հարցում և վերջապես, նա Բագրատունյաց թագավորական տան և ընդհանրապես հայկական ինքնուրույն պետության անկումը չի կապել ֆեոդալական կարգերում գոյություն ունեցող մասնատվածության հետ։ Ընկեր Ստալինը Մոսկվայի 800-ամյակի առթիվ իր ողջույնի մեջ ասում է.

> «Աշխարհում ո՛չ մի երկիր չի կարող հույս ունենալ պահպանելու իր անկախությունը, տնտեսական ու կուլտուրական լուրջ աճում ձեռք բերելու, եթե նա չի կարողացել ազատագրվել ֆեոդալական մասնատվածությունից և իշխանների գժտություններից։ Միայն միասնական, կենտրոնացված պետության մեջ միավորված երկիրը կարող է կուլտուր-տնտե-

---

[1] *Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1951 թ., էջ 70։*

ռական լուրջ անման հնարավորության. իր անկախության հաստատման հնարավորության հույս ունենալ»[1]:

Ընկեր Ստալինի այս խոսքերը ամբողջությամբ վերաբերում են նաև Հայաստանի անցյալ պատմության, որովհետև Բագրատունյաց շրջանում և նրա անկումից հետո Հայաստանում ստեղծվել էին մի քանի առանձին միմյանց դեմ պայքարող քաղաքականություններ, որոնց պատճառով հնարավոր չեղավ ներխուժող թշնամուն միահամուռ ուժերով հակահարված տալ և թշնամիները մաս առ մաս Հայաստանը գրավեցին ու ընդմիշտ վերջ դրին նրա ֆեոդալական ինքնուրույն պետության:

* * *

Մեր այս աշխատության 2-րդ գլխի՝ Դվինի սիստեմատիկ պեղումներին վերաբերյալ մասը կազմելու համար օգտվել ենք ինչպես մեր, այնպես էլ պեղումներին մասնակցող մյուս գիտական աշխատակիցների կազմած օրագրերից, իսկ 1937—1939 թթ. պեղումների նկարագրության համար՝ նաև Դվինի պեղումների նախկին ղեկավար պրոֆեսոր Սմբատ Տեր-Ավետիսյանի ձեռագիր «Դվինի պեղումները» աշխատությունից:

Ներկա աշխատության մեջ զետեղված չափագրություններն ու ձեռանկարները կատարել են Դվինի արշավախմբի մասնակից ճարտ. Գր. Քոչոյանը, ճարտ. Լ. Սադոյանը և նկարիչ Առաքել Պատրիկը, բացի № 84 և 85 նկարներից, որոնցից առաջինը պատկանում է պատմ. գիտութ. թեկնածու Ն. Տոկարսկուն, իսկ երկրորդը՝ ճարտարապետության թեկնածու Վ. Հարությունյանին:

Այս գրքի մեջ զետեղված 1937—1939 թվականների պեղումներին վերաբերող լուսանկարները կատարել է արշավախմբի լուսանկարիչ Արտեմ Սարապետյանը և մասամբ նաև տողերիս գրողը, իսկ 1946—1950 թթ. լուսանկարները՝ Պատմական թանգարանի լուսանկարիչ Պողոս Գրիգորյանը:

---

[1] Ի. Վ. Ստալինի ողջույնը Մոսկվա քաղաքի 800-ամյակի առթիվ: «Սովետական Հայաստան», 1947 թ., 7 սեպտեմբերի, № 210:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դվին անունը: Այս անունը տարբեր ժամանակներում տարբեր արտասանությամբ են գործածել։ Հին հայ մատենագիրներն ունեն Դուին, Դվին ձևերը։ Գրչագրերի մեջ պատահում է նաև Թվին։ Հնում արաբացիք կոչել են Դաբիլ, Դեբիլ: Հույները՝ Դուվիոս կամ Դուվիոն: Հին ասորիները՝ Ադաբին: Դվինի շրջապատի գյուղացի հայերն այժմ Դվին գյուղն անվանում են Դուգյուն, հավանաբար ժողովրդական ստուգաբանությամբ թյուրքերեն դյուգյուն՝ հարսանիք բառի հետ համեմատելով։

Դվին բառի ստուգաբանության առաջին փորձը պատկանում է մեր պատմահայր Մովսես Խորենացուն։ Նա այդ առթիվ ասում է, որ Դվին բառը պարսկերեն լեզվով բլուր է նշանակում[1]։ Սակայն, ինչպես արդեն շատերն են գիտել, պարսկերեն լեզվի մեջ այդպիսի բառ չկա։ Սեն-Մարտենը Խորենացու հետ համաձայն չլինելով, այդ բառի մասին գրում է, որ արդի պարսկերենում նման բառ չկա, բայց կարող է պատահել, որ հին պարսկերենում եղել է և հետագայում մոռացության է տրվել[2]։ Ն. Ադոնցն այդ բառը նույնացնում է Փոքր Հայքի Դարանա քաղաքի անվան հետ, որ նշանակում է գյուղ[3]։

[1] Մովսէս Խորենացւոյ Պատմութիւն Հայոց։ Աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 265։

[2] Mémoires historiques et geographiques sur l'Arménie, Par m. Saint-Martin. t. I. Paris, 1818, p. 119.

[3] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана. СПБ, 1908, стр., 222 примечание.

Մեզ թվում է, որ դրանք բոլորն էլ կամայական բացատրություններ են և Դվին բառը շատ ավելի հին ծագում ունի, քան թե մինչև այժմ ենթադրել են։

Դվինի բլուրը էնեոլիթյան շրջանից սկսած բնակավայր է եղել։ Հավանական է, որ Դվին անունն այդ բլուրի վրա ապրող ցեղի կամ տոհմի անունն է եղել, որ մնացել է իբրև տեղանուն։ Հին տեղանուններից շատերն այդպես են ծագել։

Դվին անունը ինչպես հայերենում, այնպես էլ օտար գրականության մեջ ունեցել է իր նեղ և լայն առումները։ Նեղ առումով Դվին է կոչվել միայն բերդն ընդգրկող բլուրը։ Ինչպես տեսանք, Խորենացին այդ իմաստով է մեկնաբանել այդ բառը, իսկ Թովմա Արծրունին Դվին բառի փոխարեն գրում է Բլուր։ Նա գրում է՝

«Հանդէպ քաղաքին Արտաշատու,
որ Բլուրն նորուն ասի, յորում շահաստանն Դուին...»[1]։

Սակայն, Դվին անունը հայ Արշակունի թագավորների ժամանակ ավելի լայն իմաստ ուներ. այդպես էր կոչվում նրանց արքունական դոմենը, որը հաճախ անվանվում էր նաև Ոստան Դվին: Դվինի բլուրի մոտ քաղաք հիմնադրվելուց հետո ամբողջ քաղաքը կոչվեց Դվին։ Պատմության մեջ Արարատյան դաշտի մի մասը Դվնա դաշտ է կոչվել (Դունայ դաշտ), հավանաբար այդպես է կոչվել արշակունյաց Ոստանը միայն։

[1] Թովմայի Վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց։ Ի լոյս էած Ք. Պ., ի Ս. Պետերբուրգ. 1887, էջ 230։

Հովհան Մամիկոնյանը գրում է, որ Դիակի վանահայր Եպիփանը

«...Եկեալն էր ի Դունայ գաւառէն»[1]։

9-րդ դարի արաբ մատենագիր Յակուբին Արաքս գետն անվանում է Դվինա գետ[2]։

Վարչական քաղաքական բաժանմամբ Դվինը, տարբեր ժամանակներում, ունեցել է իրեն ենթակա, իրարից խիստ տարբեր շրջաններ։

Ըստ հայկական աշխարհացույցի, Դվինը կամ Ոստան Դվինը մտնում է Արարատյան նահանգի մեջ իբրև նրա 19-րդ գավառը։

Արշակունի թագավորների անկումից հետո Դվինն ունեցել է իր տեղական իշխանական տունը։ Այդ ժամանակ Դվին բառը պետք է ունենար նաև նրանց հայրենիքը մատնանիշ անող իմաստ։

591 թվականի պայմանագրից հետո, Դվինի կողմերը Բյուզանդական Մորիկ կայսրը «Ներքսագոյն Հայք կոչէ։ Զայս անուանս գրէ ի գիւանի»[3], թեև Դվինն ինքը գտնվում էր Հայաստանի Պարսկաստանին ենթակա մասում։

Արաբական իշխանության ժամանակ Արմենիա վարչական միավորի կենտրոնը Դվինն էր։ Արաբների այդ Արմենիան, սակայն, իր մեջ էր ընդգրկում գրեթե ամբողջ Անդրկովկասը։ Արմենիան արաբները բաժանեցին չորս վարչական միավորների, որոնցից առաջինի մեջ էր մտնում Աղվանքը, երկրորդի մեջ՝ Վրաստանը, իսկ 3-րդի և 4-րդի մեջ՝ Հայաստանը, ըստ որում 3-րդի մեջ մտնում էին Վասպուրականը (Բասֆուրաջան), Դվինը (Դաբիլ), Սիրաջը, Տայքը, Բագրեվանդը և Նաշավան (Նախճավանը), իսկ 4-րդի մեջ՝ Սամոսատը (Շիմշատ), Խլաթը (Խիլաթ), Կալիկալան, Արճեշը և Բաջունեյսը[4]։

Դվինի ամիրայությունը կամ ոստիկանությունը հետագայում փոքրացավ, և վերջերքում նրա մեջ էին մտնում միայն մի քանի մերձակա գավառներ։

Բագրատունիները թեև մի քանի անգամ գրավեցին Դվինը և ուզեցին այն դարձնել իրենց մայրաքաղաքը, բայց այդ չհաջողվեց նրանց։ Այնպես որ, արաբներից հետո Դվինը Հայաստանի պաշտոնական մայրաքաղաքը չեղավ, թեև Շապուհ սպարապետի որդի Աշոտ Բագրատունին Աշոտ Երկաթի ժամանակ, արաբներին միաբանելով թագ ստացավ և Դվինում հաստատեց իր թագավորությունը։ Այնուհետև Դվինը մնաց տեղական հայ, կամ օտար իշխանների ձեռքին մինչև իր վերջնական անկումը։

Երբ Դվինը Հայաստանի մայրաքաղաք էր, դարձավ նաև Հայաստանի հոգևոր կենտրոնը, որտեղ իր աթոռը հաստատեց հայոց կաթողիկոսը և փոքրիկ ընդմիջումներով այնտեղ մնաց մինչև Դվինի մեծ երկրաշարժը՝ 893 թվականը։ Սակայն Դվինը կաթողիկոսանիստ լինելուց առաջ, ունեցել է իր առանձին եպիսկոպոսությունը[1], և 893 թվականից հետո էլ, երբ կաթողիկոսը Դվինից հեռացավ, Դվինում նորից հանդիպում ենք եպիսկոպոսի[2]։ Նշանակում է, այդ ժամանակամիջոցում Դվինն եղել է եպիսկոպոսական առանձին վիճակ, որի սահմանները պետք է կապված լինեին տեղական իշխանական տան կալվածքների հետ, որովհետև եպիսկոպոսական վիճակները իշխանական տներին կից էին լինում և հաճախ իշխանական տների անունով էլ կոչվում էին (Խոռխոռունեաց եպիսկոպոս, Ռշտունեաց եպիսկոպոս և այլն), իսկ Դվինինը միշտ կոչվել է Դվինի անունով կամ «Ոստան եպիսկոպոս», մանավանդ որ տեղացի հայ իշխաններն էլ իրենց պատիվ են համարել Դվինի անունով դվնեցի կոչվել։

Վերջ 14-րդ դարի մի անանուն ժամանակագիր գործ է ածում Դվինի երկիր դարձվածքը. հավանաբար նկատի ունի Դվին քաղաքն իր շրջապատով, որովհետև դրանից

[1] Յովհան Մամիկոնեան. Պատմութիւն Տարօնոյ։ Երևան, 1941, էջ 249։

[2] Արաբացի մատենագիրներ Հայաստանի մասին։ Հավաքեց և թարգմանեց Բագրատ Խալաթեանց։ Վիեննա, 1919, էջ 106։

[3] Հավաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ։ Ի Վենետիկ, 1862, էջ 59։

[4] СМОМПК, выпуск XXXII, стр. 13.

[1] Ուխտանէս եպիսկոպոս. Պատմութիւն հայոց։ Վաղարշապատ, 1871 թ., էջ 100։ Մկրտութիւն հայոց, վրաց, աբխազաց և ալանաց ի սրբոյն Գրիգորէ։ Ի ռուս հրատարակութենէ, կատարելոյ ըստ արաբերէն օրինակի յուսուցչապետ Նիկողայոսէ Մառ թարգմանեաց ի հայ Յուսիկ արքեպիսկոպոս, ի Վաղարշապատ, 1911, էջ 72։ Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ։ Երևան, 1941, էջ 78։

[2] Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա։ Կազմեց Հ. Յ. Վ. Տաշեան։ Վիեննա, 1895, էջ 350։

անմիջապես հետո հիշատակում է Անիի երկիր:

Մեր ժամանակներում Դվին են կոչվում հին քաղաքի ավերակների վրա հիմնված երկու գյուղեր՝ Վերին Դվին և Ներքին Դվին: Այդ նույն գրությունն է այնտեղ եղել նաև 17-րդ դարում. Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը 1673 թվականին գիշերել է Դվին գյուղում.

Դվին քաղաքը գրականության մեջ. Դվինն իբրև միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք և խոշոր կուլտուր-տնտեսական կենտրոն՝ մեծ տեղ է գրավել գրականության մեջ. Այդ գրականությունը մենք բաժանում ենք չորս խմբի՝ ա) հայ հին մատենագիրներ, բ) օտար հին մատենագիրներ, գ) ճանապարհորդական և տեղագրական երկեր և դ) գիտական աշխատություններ:

Համառոտակի կանգ առնենք դրանցից առաջին երեքի վրա, իսկ չորրորդի մասին անհրաժեշտության դեպքում. կխոսենք մեր այս աշխատության զանազան մասերում.

ա. Հին հայ հեղինակները Դվին քաղաքը և նրա հետ կապված պատմական անցքերն իրենց գրվածքներում հիշատակել են սկսած 5-րդ դարից մինչև 13-րդ դարի քառական թվականները: Այսինքն՝ մեր գրականության սկզբնավորությունից սկսած մինչև Դվին քաղաքի անկումը 13-րդ դարում.

Դվինի քաղաքանալու և հայ Արշակունի թագավորների մայրաքաղաք դառնալու մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում 5-րդ դարի մատենագիրներ Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին: Նրանք պատմում են Դվինում հայոց Խոսրով թագավորի հրամանով անտառ տնկելու և արքունիքը Դվին փոխադրելու մասին: Նույն դարի հեղինակ Ղազար Փարպեցին, իբրև ականատես, նկարագրում է Վահան Մամիկոնյանի Հայաստանի մարզպան դառնալը և այդ առթիվ կարևոր տեղեկություններ է հաղորդում Դվինի կաթողիկե եկեղեցու ու այլ պարապաների մասին: 7-րդ դարի մատենագիր Սեբեոսը բազմաթիվ անգամ հիշատակում է Դվինը Վրկանա մարզպան Սմբատ Բագրատունու, արաբների արշավանքի, Հովհան հակաթոռ կաթողիկոսի, Ներսես Տայեցու կապակցությամբ և այլ առթիներով: Դվինի մասին որոշ տեղեկություններ հաղորդում է նաև 7-րդ դարի մատենագիր Հովհան Մամիկոնյանը:

Արաբների տիրապետության ժամանակ տիրող դրության մասին խիստ կարևոր տեղեկություններ ունի 8-րդ դարի մատենագիր Ղևոնդ Երեցը: Նա մանրամասնորեն

Նկ. 1. Դվինի ավերակների ընդհանուր տեսարանը Արարատյան դաշտում

նկարագրում է արաբների հարստահարությունները Հայաստանում և հայերի ապստամբությունն Արտավազդ Մամիկոնյանի գլխավորությամբ։ Հովհաննես Դրասխանակերտցին, որ մինչև 897 թվականը եպիսկոպոս էր Դվինում, իսկ հետո էլ 897-ից[1] մինչև 929 թվականը[1] հայոց կաթողիկոս, գրել է ինչպես հնում եղած դեպքերի, այնպես էլ իր ժամանակի քաղաքական իրադարձությունների մասին։ Իբրև ականատես նկարագրել է Դվինի մեծ երկրաշարժը և Սմբատի կռիվներն ու մահը Դվինում։ Ուխտանես եպիսկոպոսը (10-րդ դար) ունի 7-րդ դարի կրոնական վեճերի նկարագիրը։ Կարևոր տեղեկություններ է հաղորդում Դվինի վերաբերյալ Թովմա Արծրունին (10—11-րդ դար)։ Սա լինելով Արծրունյաց տան պատմիչը, շատ դեպքերի մասին տալիս է միանգամայն այլ մեկնություն, քան մյուսները։ Դվինի մասին տեղեկություններ ունեն նաև Մովսես Կաղանկատվացին, կեղծ Շապուհ Բագրատունին, 10-րդ դարի վերջի և 11-ի սկզբի մատենագիր Ստեփաննոս Տարոնացին (Ասողիկ), որ նկարագրում է Սմբատ 2-րդի և արաբ ոստիկան Յուսուֆի միջև Դվինի շուրջը տեղի ունեցած կռիվները և այլն։ 13-րդ դարի հեղինակներից Դվինի մասին տեղեկություններ են հաղորդում Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին, Վարդան վարդապետը և Ստեփաննոս Օրբելյանը։ Սրանց տեղեկությունների մեծագույն մասը վերաբերում է անցյալին։ 13-րդ դարից հետո, հայ մատենագրության մեջ, Դվինն այլևս չի հիշատակվում, իսկ ավելի ուշ ժամանակներում Դվին անունը հանդես է գալիս քաղաքի ավերակների կամ նրանց տարածության վրա առաջ եկած փոքրիկ գյուղերի կապակցությամբ։

Հին հայ մատենագրության տված տեղեկությունների հիման վրա որոշ գաղափար կարելի է կազմել Դվինում տեղի ունեցած քաղաքական անցքերի մասին, բայց տնտեսական կյանքի և կենցաղային հարցերի մասին գրեթե ոչ մի պատկերացում չի կարելի ունենալ։

Օտար հին մատենագիրները Դվինը հիշատակել են զանազան երկրների հետ ունեցած քաղաքական անցքերի և առևտրական կապերի առնչությամբ։

Այսպես, օրինակ, Բյուզանդական 6-րդ դարի պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին իր բյուզանդա-պարսկական պատերազմներին վերաբերող երկհատոր պատմական գործի մեջ մի հատված ունի Դվինի մասին, որտեղ նկարագրում է քաղաքը՝ գովաբանում է նրա օդն ու ջուրը և երկրի բերքատվությունը, խոսում է նաև առևտրականների և օտար երկրների հետ ունեցած առևտրի, հայոց կաթողիկոսի և այլ հարցերի մասին։

Դվինի մասին բազմաթիվ կարևոր տեղեկություններ են հաղորդում 9-րդ և 10-րդ դարերի արաբ հեղինակները, բայց նրանցից շատերը կրկնում են միմյանց։ Այդպես են՝ Բալաձորին (մեռել է 892 թվականին), Ալ Իստախրին (գրել է 930 թվականին), Ալ Ֆակիհը (գրել է 903 թվականին), Իբն Խորդադբեհը (ծնվել է 816-817 թվականին), Կուդամա (մեռել է 948 թվականին), Ալ Յակուբին (գրել է 892 թվականին), Իբն Հաուկալը (գրել է 977-978 թթ.) և այլն։ Կարևոր տեղեկություններ է հաղորդում 10-րդ դարի մատենագիր Ալ. Մուկադասին (գրել է 985 թ.)։ Այս հեղինակները գլխավորապես աշխարհագրական ճամփորդական նոթերի ձևով որոշ տեղեկություններ են հաղորդում, ի թիվս մի շարք երկրների, նաև Հայաստանի և մասնավորապես Դվինի մասին։ Նրանք նկարագրում են քաղաքը, բնակչության կազմությունը, ժողովրդի զբաղմունքը, արտահանվող ապրանքները, քաղաքի վարչաձևը և այլն։ Մեզ ծանոթ արաբ հեղինակները, առանց բացառության, բոլորն էլ պատկանում են Բագրատունյաց շրջանին, հետևապես նրանց տված տեղեկություններն արժեք ունեն այդ շրջանի պատմության համար[1]։ Դվինի մասին, մա-

[1] Ակադ. Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. 1, Երևան, 1944, էջ 435։

Դրասխանակերտցու մահվան թվականը ճշտված չէ։ Աբեղյանը դնում է 925—930 թվականների մեջ, իսկ Օրմանյանն ընդունում է 929 թվականը։

[1] Արաբ հեղինակների գործերին մենք ծանոթ ենք Բագրատ Խալաթյանցի «Արաբացի մատենագիրները Հայաստանի մասին» 1919 թվականին Վիեննայում լույս տեսած գրքի միջոցով, որ խիստ անհաջող է և Ն. Կարաուլովի ռուսերեն թարգմանություններից, որոնք լույս են տեսել „Сборник для описания местностей и племен Кавказа" բազմահատոր հրատարակության 29, 31, 32 և 38 հատորներում, իսկ Բալաձորու «Երկիրների նվաճման» գիրքը օգտագործել ենք 1927 թվականին Բաքվու․

նավանդ 12—13-րդ դարերի անցքերի վերաբերյալ, կարևոր տեղեկություններ են հաղորդում վրացական հին մատենագիրները։ Դվինի պատմության համար արժեքավոր տեղեկություններ ունի 9-րդ դարի հեղինակ Արսեն Սափարացին և 13-րդ ու 14-րդ դարերի մի քանի անանուն պատմիչներ։ Նրանց տեղեկությունները առավել արժեքավոր են 12-րդ դարի վերջերին ու 13-րդ դարի սկզբներին Վրաստանի հզորացման և Հայաստանի մի մասի՝ սելջուկներից ազատագրելու կապակցությամբ։ Վերջին անգամ Դվինը հիշատակվում է 14-րդ դարի մի վրացի անանուն պատմիչի ժամանակագրության մեջ՝ թյուրքերի ավերած քաղաքների շարքում[1]։

Զ. Այս շրջանի հայ և օտար աշխարհագրական և տեղագրական երկերի հեղինակները նկարագրում են միայն Դվինի ավերակները և հին քաղաքի տարածության վրա առաջ եկած նոր գյուղերը։ 17-րդ դարի հայ հեղինակ Զաքարիա Ագուլեցին գիտե հին Դվին քաղաքի վրա առաջ եկած գյուղերը միայն. Նա գրում է.

«Ղենարեն մինչի Վեթու (Վեդու) գետն՝ մին աղաջ. Աստի մինչի Աղթաուն՝ մին աղաջ. Աստի մինչի Դվին՝ մին աղաջ, կամ Արդաշէր. Աջ գնաս, Դվին է, ձախ գնաս՝ Արդաշերայ, որ է Թափրայղալեն։ Դվնու մինչի Գառնու գետն՝ կէս աղաջ...»[2]։

Ավելի ուշ ժամանակի ճանապարհորդ Մեսրոպ Թաղիադյանը 1816 թվականին նկարագրել է Դվինի ավերակները.

«Ընդ գետն (Գառնոյ) ի վեր յարուցեալ՝ գտաք գաւերակս բերթապարիսպ հզօր քաղաքին, զորմէ հաստատէր Գօդոս Վարդապետ, լինել Յեսայորդ Նախնեայն Դվնայ՝ Ոստանին հայոց»[1]։

Թաղիադյանը գիտե, որ հին Արտաշատը այժմյան Արտաշար գյուղի հետ կապ չունի, այլ գտնվել է Խոր Վիրապի մոտերքը, իսկ այժմյան Արտաշատ գյուղի տեղում եղել է Դվին քաղաքը։

Թաղիադյանի գրածից երևում է, որ դեռևս 1816 թվականին Դվինի փոքրիկ բլուրի վրա (քաղաքի կենտրոնական թաղում) եղել են որոշ շինությունների հետքեր։ Նա գրում է.

«Բլուր ինն փոքրիկ անկանի ի մէջ աւերածոյն, զորով շրջապատեն աւերակք ապարանից և տանց լայնածիր նստիւք։ Այս յաջորդեն նոցա փլածոյք բերթապարսպին, որք երևին իբրև բլուրք արուեստակերտ պար առեալ զմեծ բլրովն, յորմէ՝ որպէս ինձ թուի, և զանունն էառ»[2]։

Այստեղ հետաքրքիր է նաև Թաղիադյանի վերջին նախադասությունը, որ բլրի անունով քաղաքը կոչված պետք է լինի Դվին։

Թաղիադյանը կարևոր է համարում այն մասին, որ իրենից առաջ ոչ ոք որոշակի չի գրել հին քաղաքի տեղի մասին և ոմանք Դվինը գրել են Շարուրի դաշտում ընդհանրապես, ոմանք անորոշությամբ գրել են, որ նա գտնվում է Ոստան գավառում և ոմանք էլ նույնացրել են Արտաշատի հետ։ Այդ բոլոր թյուրիմացությունները Թաղիադյանը վերագրում է այն բանին, որ Մեծամորի անունով գետն արդեն հայտնի չէ թե որն է և ինքը կարծիք է հայտնում, թե Մեծամորին Գառնու գետն է։

Եվրոպացի ճանապարհորդներն էլ, սկսած 17-րդ դարից, հիշատակել են Դվինն իրենց ճամփորդական նոթերում, բայց, մեծ մասամբ, սխալ ու աղավաղված կերպով։

Ֆրանսիացի ճանապարհորդ վաճառական Տավերնիեն 17-րդ դարում Թյուրքիայի վրայով դեպի Պարսկաստան անցնելու ժամանակ Էրզրում-Էջմիածին-Սպահան ուղեգծով, իր ճանապարհորդական նոթերում գրում է՝

յույս տեսած ռուսերեն թարգմանությունից։ Գիրքը լույս է տեսել բնագրի հետ միասին հետևյալ վերնագրով. Из сочинения Баладзори „Книга завоевания стран". Текст и перевод с арабского проф. П. К. Жузе.

[1] Վրաց աղբյուրներին ծանոթ ենք պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի գիտական թարգմանության միջոցով (Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին). հատոր Ա (Ե — ԺԲ դար) Երևան, 1934, հատոր Բ (ԺԳ—ԺԸ դար), Երևան, 1936 թ.)։

[2] Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938, էջ 23 24։

[1] Ճանապարհորդութիւն Մեսրովպայ Դ. Թաղիադեանց ի Հայս, հատոր առաջին, ի Կալկաթա, 1847, էջ 147։

[2] Թաղիադեան..., անդ, էջ 147—148։

«Այս եկեղեցու (Խոր Վիրապ) և Երևանի միջև կան հին հայոց թագավորների մայրաքաղաք Արտաշատի ավերակները, որոնք վկայում են նրա մեծ քաղաք լինելը և այնտեղ դեռևս կան մեծ պալատի որոշ մնացորդներ»[1]։

Այստեղ ակնհայտ է, որ Խորվիրապի և Երևանի միջև եղած մեծ քաղաքի ավերակները Դվինի ավերակներն են՝ վերին Արտաշատ, Դվին, Թոփաղկալա, Բզովան, և այլ մերձակա գյուղերի սահմաններում, որոնք Տավերնիեն շփոթել է հին Արտաշատ քաղաքի ավերակների հետ։ Այս մեզ ծանոթ ամենահին տեղեկությունն է, որտեղ Դվինի ավերակները սխալմամբ վերագրվել են Արտաշատին։

Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը, որ դարձյալ 17-րդ դարում անցել է Հայաստանի վրայով, Արտաշատը բոլորովին այլ տեղում է պատկերացրել։ Նա այդ մասին գրել է.

«Երեք եկեղեցիներ[2] նշանավոր վանքում պահվող ժամանակագրությունների մեջ ասվում է, որ Նախիջևան քաղաքը Հին Արտաշատն է, որ հունական պատմության մեջ կոչվել է Արտաքսատա և Արտաքսաղատա»[3]։

Հին Դվին քաղաքի մասին Շարդենը գաղափար անգամ չի ունեցել։ Նա 1673 թվականի ապրիլի 8-ին գիշերել է Ներքին Դվին գյուղում և գրել է հետևյալը.

«Այն երկիրը, որտեղով ես անցնում էի, ծածկված էր գյուղերով, որոնցից մեկում, շատ մեծ և գեղեցիկ գյուղ Դեվին անունով, ես կանգ առա»[4]։

Հետաքրքիրն այն է, որ Շարդենը Դվինի շրջապատում չի նկատել հին քաղաքի ավերակները։

Այնուհետև, 1814 թվականի հունիսի 12-ին Դվինի մոտ գտնվող Աղբաշ գյուղն է հասնում անգլիացի դիվանագետ Ջեմս Մորիերը և այցելում Դվինի ավերակները, որոնք նա սխալմամբ դարձյալ Արտաշատին է վերագրում և կարծելով թե Գառնիի տաճարն էլ այդտեղ պետք է լինի, զարմանում է, որ Շարդենի նկարագրած Տրդատա Թախտի 36 մարմարե սյուներն այդտեղ չեն։ Նա գրում է.

«Մեր վրանները կանգնեցրին Աղբաշ կամ Սպիտակ գլուխ գյուղի մոտ, Գառնի գետին մերձ, որ բխում է հարևան լեռներից և թափվում Արաքսի մեջ։ Մեր (վրաններին) հասնելուց առաջ, երբ մենք տակավին երկու մղոն հեռու էինք, արագ մի պտույտ կատարեցինք Արտաշատի (Ardaxata) նշանավոր ավերակներում. հիմա կոչվում է Ardasht, որի մեկ ծայրում կա մի բարձր բլուր, որ բնիկներն անվանում են Թախտ Տիրիդատ (Takht Tiridat) կամ Տրդատի գահը։ Այս ավերակները նմանում են Ռեյի (Rey) (ավերակներին), բաղկացած քանդված հողե պարիսպների բլուրներից, և այստեղ ու այնտեղ գունավոր կղմինդրի և ամանեղենի փոքրիկ կտորտանքներ կան։ Պահանջվում է շատ վառ երևակայություն՝ ներկա մնացորդներից մեծ ու փառահեղ գաղափարներ կազմելու համար, և բացի անվան նմանությունից ու ավերակների ընդարձակությունից, ոչ մի կերպ չի զանազանվում ներկա ժամանակների կործանված քաղաքներից։ Գլխավոր ավերակներին շատ մոտ գտնված է Արտաշիր (Ardachir) անունով գյուղը, և շատ ուրիշ [գյուղեր] սփռված են նկատելի պարիսպներից ներս։ Սրանից հետո անհրաժեշտ չէ ասել, թե մենք չգտանք այն երեսուն վեց սև մարմարե կոթողները, որոնց մասին Շարդենը ասում է թե կային այնտեղ»[1]։

Այս երկար մեջբերումը հետաքրքիր է նրանով, որ դեռևս մոտ 100 տարի առաջ, քաղաքի պարիսպները եղել են տեսանելի մի շարք գյուղերի սահմաններում, որոնցից շատ քիչ բան է մնացել այժմ։ Նշանակում է, Դվինի այն երկու հատակագծերը,

---

[1] Le six voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes. Prémiere partie. Paris. MDCLXXVII, p. 53.

[2] Հնում այդպես է կոչվել Էջմիածինը։ Թյուրքերեն լեզվով (Ուչ քիլիսե) Էջմիածին։ Հռիփսիմե և Գայանե երեք եկեղեցիների գոյության պատճառով։

[3] Путешествие Шардена по Закавказью в 1672—1673 гг. Перевод Е. В. Бахутовой и Д. П. Косовича Тифлис, 1902 г , стр. 297.

[4] Նույն տեղում, էջ 306։

---

[1] Ուղեգրություններ, հատոր Ա, Երևան, 1934, էջ 315–316։

որոնք պահպանվել են Կեր-Պորտերի և Դյուբուա դը Մոնպերեի ճանապարհորդությունների մեջ, այս կամ այն կերպ ճիշտ հասկացողություն են տալիս քաղաքի պարիսպների մասին։

1812 թվականին ռուսական ծառայության մեջ գտնվող դիվանագետ Ֆրեյգանը գրում է, որ Նախճավանն ըստ պարսիկների հին Արտաշատ քաղաքն է[1]։

Գեներալ Երմոլովի դեսպանության մասնակից Մ. Կոցեբուն 1817 թվականին նույն բանն է գրում, միայն թե, ըստ երևույթին,

1817 թվականին անգլիացի գնդապետ Ջոնսոնը Հնդկաստանից վերադառնալով Անգլիա, անցել է Դվինի մոտով և նրա ավերակների մասին գրել է.

«14-րդ մղոնում անցանք ընդարձակ ամրությունների մնացորդներից, կանգուններ միայն բլրակներով հավասար հեռավորությամբ և քարե պարիսպներով, որոնք տարածվում են ճանապարհի մեկ կողմից մյուսը։ Այս վայրը այժմ կոչվում է Թոփրա Կիլա (Topra Keella) և ոմանք կարծում են

Նկ. 2. Դվինի հատակագիծն ըստ Դյուպուա դը Մոնպերեի (17-րդ դար)

հիմնվում է Շարդենի տեղեկության վրա և հայտարարում.

«Էջմիածնի վանքում պահված հայկական պատմության հիշատակարանները հավաստում են, թե Նախիջևանը հին նշանավոր Արտաշատն է, և Հայաստանի ամենահին քաղաքներից մեկը»[2]։

թե հների Արտաշատն է, բայց ավելի ճիշտը համապատասխանում է Տիբիրումին (Tibirum), Դավոլույից իր ունեցած հեռավորության հետևանքով»[1]։

Տիբիրումը, հավանաբար Դվին բառի փոխարեն է գործածել աղավաղված կերպով։ Սակայն այստեղ տարօրինակը քարե պատերի մասին գրածն է, որ բոլորովին չի համապատասխանում իրականությանը, մա-

[1] Ուղեգրություններ, հատոր Ա, Երևան, 1934, էջ 419։

[2] Անդ, էջ 551։

[1] Անդ, էջ 434։

նավանդ, որ հենց նույն 1817 թվականին անգլիացի հնագետ նկարիչ Ռոբերտ Կեր-Պորտերը այցելել է Դվին և իր մանրամասն նկարագրության մեջ գրում է, որ այնտեղ ամեն ինչ հողով է ծածկված և քարե պատեր չկան։

Կեր-Պորտերի նկարագրությունը, որ ամենից ճիշտ է արտահայտում ավերակների վիճակը, այստեղ մեջ ենք բերում փոքր կրճատումներով, թեև այդ ավերակները սխալ կերպով նա վերագրել է Արտաշատին։

«Հասնելով Արտաշիրի ավերակներին, տեսա որ հողը ծածկել էր հսկա տարածություն, և ամեն կողմ անկանոն բլրակներ կային, որոնք ժամանակի ընթացքում կազմվել էին ավերակների կույտերի վրա։ Դրանք և երկար խրամանման շարքերը զգացնել էին տալիս, թե ես գտնվում էի մի քաղաքում, որ ոչ ևս է... այլևս չկային ոչ կոթող, ոչ գմբեթ և ոչ էլ որևէ բնակարանի պատ, ամեն ինչ խոր-



Նկ. 3. Դվինի հատակագիծն ըստ Կեր Պորտերի (17-րդ դար)

տակված էր և ոչ մի բան չկար ներկայումս զգայնել տվող նրա գոյությունը. այստեղ ամեն ինչ վերջացել է և ծածկվել հողի թումբերի տակ,- շիրիմներ, ոչ միայն ժողովրդի, այլ նաև նրանց տների, տաճարների, պալատների, ամեն ինչ թաղված մահանման լռության մեջ։ Անիում ես գտա ինձ շրջապատված հսկայական մեծության գերագույն հուշարձաններով։ Արտաշիրում ես կանգնեցի նրա գերեզմանի վրա... Այս գծից (պարիսպներից) ներս կային անթիվ բարձրություններ, որոնց շատերի մակերեսի վրա ես գտա ջան ու ցրիվ թրծած աղյուսի կտորներ, և կապույտ ու կանաչ կղմինդրի բեկորներ։ Ջուր փնտրելի որևէ տաշված մի քար կամ մի շենքի ակնհայտ հետք, կամ կանոնավոր ճարտարապետական կառուցվածքի շինանյութ... այս վայրերում կարելի է տեսնել նկա հաստությամբ մեծ պարիսպների շատ մասերը։ Նրանք շինված են արևով չորացրած աղյուսով, որ նույնիսկ այնքան դարերից հետո տակավին տեսնվում են կանոնավոր շարված»[1]։

Ինչպես տեսնում ենք, եվրոպացի ճանապարհորդներն են առաջ բերել Արտաշատի և Դվինի տեղագրական շփոթությունը և բազմաթիվ այլ թյուրիմացություններ՝ նյութին լավ ծանոթ չլինելու և իրենց թռուցիկ տպավորությունների ու անստույգ տեղեկությունների հիման վրա եզրակացություններ հանելու հետևանքով։ Եվրոպացիների այդ սխալները տարածվեցին նաև հայկական ու ռուսական գրականության մեջ։ Ալիշանն ու մի շարք ուրիշ հեղինակներ, որոնք իրենց հնագիտական-տեղագրական ուսումնասիրությունները կազմել են ուրիշների տեղեկություններն արտագրելով, կրկնել են նաև նրանց սխալները և վերջիվերջո այդ սխալների հարցն այնքան խճողվեց, որ Ն. Մառը 1899 թվականին պեղումներ սկսեց Դվինի տեղագրությունը պարզելու նպատակով, բայց այդ պեղումները շատ կարճ տևեցին և այնպես էլ Մառը չիմացավ, թե ինքը մի քաղաքի ավերակներն է պեղում՝ Արտաշատի, թե Դվինի։

Վերջին երկու տասնամյակների ընթացքում՝ սովետահայ պատմագրությունը ձեռնարկեց մի շարք հնագիտական և պատմագիտական հիմնավոր աշխատանքներ, որոնցից մեկն էլ Դվին քաղաքի սիստեմատիկ պեղումներն են և դրանց միջոցով վերջնականապես պարզեց նաև այդ խնդիրները։

[1] Ուղեգրություններ, Ջ. Հասոր, էջ 770- 772։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՔԱՂԱՔԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԸ

Հայաստանի երբեմնի խոշորագույն կենտրոններից մեկը հանդիսացող Դվին քաղաքն այսօր իսպառ ավերված է և չքացած գետնի երեսից։

Հին քաղաքն այժմ ծածկվել է հողի թանձր շերտով և նրա բռնած տարածության մեծագույն մասը վեր է ածվել արգավանդ դաշտերի և խաղողի այգիների, իսկ մեծազանգված պարիսպներն ու հսկայական բուրգերը դարձել են լեռնանման բլուրներ, որոնց կանոնավոր դասավորությունը և համաչափությունները միայն մատնում են նրանց՝ մարդու ձեռքով շինված լինելը։

Այժմ անհնարին է արտաքին նշանների հիման վրա որոշել այդ միջնադարյան քաղաքի սահմանները, որովհետև նրա բռնած տարածության մեծագույն մասն այսօր զուրկ է արտաքին նշաններից։ Գետնի վրա չի մնացել ոչ մի շինության հետք և ամեն ինչ, ինչը որ հնարավոր է եղել ավերակների միջից տանել և որևէ նպատակի ծառայեցնել, շրջապատի գյուղական բնակիչները դարեր շարունակ տարել են և օգտագործել։ Այդպես են վարվել ոչ միայն օգտագործելի առարկաների և շինարարական քարերի հետ, այլև հին քաղաքի հողի հետ, որը նրանք տարել են իրենց արտերն ու այգիները պարարտացնելու համար։ Այդ երևույթին վերջ է տրվել միայն Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, երբ օրենքներ հրապարակվեցին պատմական հուշարձանների պահպանության վերաբերյալ և Դվինի ավերակների վրա սահմանվեց մշտական հսկողություն։

Դվինի շրջապատը զուրկ է քարհանքերից. դրա պատճառով էլ մոտակա գյուղերի բնակիչներն անցյալում օգտագործել են ոչ միայն գետնի երեսին երևացող ավերակ շենքերի քարերը, այլև հանել ու տարել են հողի մեջ թաղված հիմնապատերի մնացորդները։ Եվ այսօր, հին Դվինի զանազան տեղերում, երևում են ավերակ շենքերի հատակաձևերն ուրվագծող բազմաթիվ փորումների հետքեր։

Անցյալում գյուղացիներն իրենց կարիքների համար օգտագործել են ոչ միայն շինարարական քարն ու պարարտ հողը, այլև հողամասերի սեփականատերերը դրամով ծախել են այդ հողն ավելի հեռավոր գյուղերի բնակիչներին՝ նրանց արտերը ևս պարարտացնելու համար։ Այդ երևույթն առանձնապես աչքի է ընկել հին քաղաքի հարավային մասերի վրա տեղավորված գյուղերում։

Բզովան գյուղի ծերունիներից մեկը մեզ պատմեց, որ իրենց գյուղից դեպի հարավ ընկնող մի հողամասի մեջ եղել է մի մեծ արհեստական բլուր, որի հողը դեռևս ցարական տիրապետության ժամանակ, ինքը մի քանի տասնյակ տարիների ընթացքում ծախել է հարևան գյուղերի բնակիչներին՝ յուրաքանչյուր սայլը 20 կոպեկով։

Այսպիսով, տեսնում ենք, որ միջնադա-

րյան Դվին քաղաքի մակերեսի վրա ոչ միայն չի մնացել որևէ շինության ավերակ, այլև քաղաքի տարածության վրա առաջ եկած գյուղերի բնակիչները նույնիսկ գետնի մակերեսի հողը հանգիստ չեն թողել և մի տեղից մի այլ տեղ տանելով, առավել չափով դժվարացրել են մակերեսային հետախուզությամբ հին քաղաքի սահմանները որոշելու գործը, մանավանդ, որ պարարտացման համար տարվող հողի հետ գնացել են նաև հնագիտական առարկաներ, գլխավորապես հասարակ և ջնարակած խեցեղենի բեկորներ, երկաթե գամեր, պղնձյա դրամներ ու այլ առարկաներ։



Նկ. 4. Քարտեզ՝ Դվինի ավերակների տեղագրության

Այդ իսկ պատճառով, քաղաքի տարբեր ժամանակի սահմանները որոշելու համար անհրաժեշտ եղավ երկարատև հետախուզական պեղումներ կատարել հին քաղաքի զանազան մասերում։

Այս եղանակով, թեև խիստ դանդաղ, բայց որոշակիորեն հետզհետե սահմանագծվեցին հին քաղաքը և նրա մի քանի թաղերը։

* * *

Դվինի ավերակները կարելի է բաժանել երեք խմբի.

ա) Դվինի մեծ բլուրը, որի վրա կառուցված է եղել հոչակավոր միջնաբերդը.

բ) Քաղաքի կենտրոնական թաղը և

գ) Քաղաքի մնացած մասերն ու արվարձանները։

Ա. ՄԻՋՆԱԲԵՐԴԸ

Դվինի բլուրն իր շրջապատի հարթության համեմատությամբ ունի 30 մետր բարձրություն և Արարատյան դաշտի այդ մասի վրա հանդիսանում է աշխարհագրական ամենաբարձր կետը։ Այդ է պատճառը, որ այդ բլրի վրա մարդն ուշադրություն է դարձրել և բնակություն հաստատել դեռևս այն ժամանակ, երբ ընդհանրապես նոր էր ինքը նստակյաց դառնում։ Իհարկե, այն ժամանակ այդ բլուրն այնչափ մեծ բարձրություն չուներ, ինչքան այժմ, բայց երկար ժամանակ մարդու շինարարական աշխատանքի հետևանքով, մեծացել է նրա բարձրությունը և վերջիվերջո մեծազանգված կավակերտ պարիսպների և պալատական շենքերի փլատակների շնորհիվ հասել է իր այժմյան վիճակին։

Բլրի գագաթը, որին պայմանական կերպով կոչում ենք նաև առաջին տեղամաս, ունի միանգամայն հարթ մակերես, որ հեռվից թողնում է կտրած կոնի տպավորություն։ Գագաթի հարթության մակերեսը հավասար է մոտավորապես 4000 քառակուսի մետրի, որտեղ լայնքը հյուսիսից հարավ ամենալայն տեղում 80 մետր է, իսկ երկարությունը արևելքից դեպի արևմուտք՝ 85 մետր։ Գագաթի հարթակի վրա կան զանազան ժամանակներում գյուղացիների կատարած բազմաթիվ փորվածքների հետքերը, որոնք փլատակված շենքերի միջից պիտանի քարեր և թրծած աղյուսներ ձեռք բերելու նպատակով են արված։ Այդ քանդումների հետևանքով բլրի գագաթին մնացել են ջարդոտված աղյուսների բազմաթիվ կտորներ, տեղ-տեղ նույնիսկ կույտերի վերածված, բայց քանդողները միշտ ամբողջական աղյուսներն առանձնացրել և տարել են, իսկ մանր կտորտանքը թողել տեղում։ Այսպիսով,

Նկ. 8. Հատակագիծ քաղաքի կենտրոնական մասի, ըստ Ն. Մ. Տոկարսկու.

այսօր գետնի երեսին չի մնացել ոչ միայն որևէ շենքի ավերակ, այլև մի մետրից ավելի պետք է հողը փորել, որպեսզի տակից երևան գան հին շենքերի փլատակները։

Ամենայն հավանականությամբ Դվինի բուն քաղաքը հնագույն ժամանակներից սկսած պարսպով առանձնացված է եղել բլրի լանջերի ստորին մասերից։ Մենք թեև պեղել ենք բլրի քաղաքի միայն միջնադարյան շերտը իր 9—13-րդ դարերին պատկանող շենքերի մնացորդներով, բայց արևելյան լանջի վրա, քաղաքից մոտ 9—10

մետր ներքև, բացվել են ցիկլոպյան պատերի մեծազանգված քարե պատնեշներ, որոնք մեր թվականությունից առաջ երկրորդ և առաջին հազարամյակների ընթացքում պաշտպանել են բլրի գագաթին տեղավորված նախնական բնակավայրը։

Մեր պեղումները ցույց տվին, որ միջին դարերում բլրի լանջերն ունեցել են աստիճանաձև տեսք և ծածկված են եղել բնակելի մանր տներով ճիշտ այնպես, ինչպես լինում են մեր լեռնային շրջանների գյուղերը, որտեղ մեկի տան կտուրը մյուսի բակն է հանդիսանում։ Դվինում բլրի գագաթի հարթակը ստորին բերդից առանձնացված է եղել հում աղյուսե մեծ պարսպով, որի հետքերը մենք բաց արինք գագաթի հյուսիս-արևելյան ծայրին։

Մեծ բլրի գագաթի հարթակն իր շրջապատի պարսպով միասին, Դվինի քաղաքանալուց հետո, դարձել է նրա միջնաբերդը (կամ վերին բերդը), որտեղ ապրել են նախ Արշակունի վերջին թագավորները՝ Խոսրով Կոտակից սկսած, իսկ նրանց թագավորության անկումից հետո՝ Հայաստանի մարզպանները, և վերջում էլ արաբ ոստիկանները, ապա՝ հայ և արաբ իշխանները։ Ահա այդ բոլորը հերթականությամբ՝ բլրի գագաթին կառուցել են իրենց պալատները, իհարկե, միշտ նորը շինելով հնի ավերակների վրա։

Այդ բոլոր կառուցումների հետևանքով բլրի գագաթի տարբեր մասերում հնագիտական միևնույն շերտի թանձրությունն ու խորությունը գետնի մակերեսից տարբեր է և դրանով իսկ շատ դժվար է նույնիսկ միևնույն շերտի մեջ կառուցված շենքերի հետնագույն հավելվածքներն ու փոփոխությունները հիմնական կառուցվածքներից տարբերելը։

Դեռևս Դվինի քաղաքանալուց առաջ էլ, միջնաբերդի շուրջը կառուցված է եղել ստորին բերդը, որն ընդգրկել է բավականին ընդարձակ տարածություն Դվինի բլրի լանջերին և մասամբ էլ նրա շրջապատի հարթության վրա։

Բերդն ընդգրկում է մի անկանոն քառանկյունի տարածություն, որը դրսից սահմանազատված է կավակերտ ահռելի պարիսպներով և ունի մոտ 10 հեկտար տարածություն, ըստ որում մի հեկտարից ավելին կազմում է միջնաբերդի գագաթն իր լանջերով միասին։

Ստորին բերդը կազմված է իրարից տարբեր բարձրության վրա գտնվող երկու մասերից, հարավ-արևելյան կողմի մասը համեմատաբար բարձրադիր քառանկյունաձև մի տարածություն է, որի գրեթե ուղիղ կենտրոնում ցցված է միջնաբերդի գագաթը 15 մետրով ավելի բարձր հարթության վրա, որին պայմանականորեն անվանում ենք 6-րդ տեղամաս, իսկ մյուսը, որ նախորդի հյուսիս-արևմտյան կողմումն է, մի ցածրադիր եռանկյունաձև հարթավայր է, որը միջնաբերդի գագաթից ցածր է մոտավորապես 22—24 մետրով և բերդը եզերող խրամատից բարձր միայն 6—8 մետրով։ Ստորին բերդի այս է մասը կոչում ենք նաև 3-րդ տեղամաս:

Ստորին բերդի երկարությունն է՝ հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք, ամենաերկար գծով, մոտ 450 մետր, իսկ լայնքը, իր ամենալայն տեղում՝ 300 մետր։

Դվինի բերդն իր ընդարձակ տարածությամբ միջին դարերում համարվել է ռազմական մի խոշոր և անառիկ կառուցվածք, որտեղ մեծ ճակատամարտեր են տվել թշնամի պետությունների զորքերը Հայաստանի այդ խոշորագույն քաղաքին տիրելու ձգտումով։

Ստորին բերդի մեջ ապրել են Դվինի պաշտոնեությունը, իշխանական դասը, սպայակույտը և զորքը։

Ստորին բերդը դեռևս քիչ է ուսումնասիրված. մինչև այժմ այնտեղ կատարված են միայն փոքրածավալ հետախուզական և փորձնական պեղումներ, այդ պատճառով էլ նրա բնույթն ու նշանակությունը հայտնի է մեզ լոկ ընդհանուր գծերով։

Այնտեղ, գետնի երեսին կան բազմաթիվ մնացորդներ՝ կավե թրծած աղյուսների, միջնադարյան հասարակ և ջնարակած խեցեղենի, շինարարական տուֆի և բազալտ քարերի, գիպսե ձուլածո և փորագիր զարդերի, սովորական ու ջնարակած շքաղյուսի բեկորներ, որոնց մեծ մասը, սակայն, զանազան ժամանակներում գլորվել է այդտեղ միջնաբերդի գագաթի վրայից և նրա լանջերից։

Ստորին բերդում շենքերի ավերակները

Նկ. 6. Բերդի ավերակների ընդհանուր տեսարանը

Նկ. 7. Հառակաձի բերդի և քաղաքի կենտրոնական թաղի ավերակները։
Չափագրություն Գր. Բոչոյանի

շատ ավելի խորն են ընկած գետնի մեջ, քան թե Դվինի մի այլ վայրում։ Այստեղ մակերեսի հողը, Դվինն ավերվելուց հետո, հետզհետե բարձրացել է, մի մասը բերդն օղակող հսկայական կավակերտ պատերի փլուզման հետևանքով, մի մասն էլ միջնաբերդի բարձունքից հողի և քարի հետզհետե ներքև սահելուց։ Փորձնական պեղումները ցույց տվին, որ ստորին բերդի հարավային մասում շենքերի ավերակները թաղված են 2,5-ից մինչև 3,0 մետր, իսկ հյուսիսային մասում՝ 1,5-ից մինչև 2,0 մետր խորության մեջ։

Ստորին բերդը քաղաքից անջատված է եղել կավակերտ ահռելի բերդապարսպով, որից այժմ տեղում մնացել են երկարաձիգ բլուրներ՝ որոշ տարածությամբ իրարից հեռու դասավորված գագաթներով, որոնք մատնացույց են անում պարսպի միջի բուրգերը, իսկ բերդի եզրափակիչ չորս անկյունների վրա մնացել են մեծադիր աշտարակների մնացորդները հանդիսացող չորս մեծ բլուրներ։ Այս պարիսպներն ու բուրգերն այժմ այն աստիճան քայքայվել են, որ նրանք իրենց արտաքին տեսքով ոչնչով չեն տարբերվում բնական բլուրներից և եթե չլինեին պարիսպների կանոնավոր ուղղությունները, բուրգերի համաչափ մեծությունները և բուրգերի միմյանց նկատմամբ ունեցած հավասարաչափ հեռավորությունները, նրանք միանգամայն բնական բլուրներ կթվային այցելուի աչքին։

Նկ. 8. Բերդի հյուսիսային անկյան մեծ աշտարակի բլրակերպ ավերակները

Պարիսպների այժմյան մնացորդներից երևում է, որ Դվինի բերդի կավակերտ պարիսպներն ունեցել են կիսաբոլոր բուրգեր և իրենց չորս անկյունների վրա չորս մեծ բոլորակ աշտարակներ, որոնց մնացորդներն իրենց լայն նստվածքով ու ահռելի բարձրությամբ զգալի չափով տարբերվում են սովորական բուրգերից, թեև մուտքի երկու կողքերի աշտարակները ևս ավելի մեծ են եղել սովորական բուրգերից։

Բերդապարսպի բարձրության և թանձրության մասին այժմ դժվար է որևէ որոշակի խոսք ասել, սակայն, նկատի առնելով նրանց քայքայումից գոյացած երկարաձիգ բլուրների զանգվածը, պետք է ենթադրել, որ այդ պատերն ունեցել են առնվազն 12—15 մետր թանձրություն և 15—20 մետր բարձրություն։ Իհարկե, բուրգերն ու մանավանդ աշտարակներն անհամեմատ ավելի բարձր և ավելի թանձր են եղել, քան թե սովորական պատերը, բայց թե ինչ չափով, այդ այժմ անհնարին է որոշել, առանց հատուկ այդ նպատակով պեղումներ կատարելու։

Դվինի բերդի հյուսիս-արևմտյան մասի ցածրադիր եռանկյունաձև հարթությունը ստորին բերդից որևէ պարսպով բաժանված չի եղել. գոնե այժմ բաժանման ոչ մի հետք չկա տեղում, բայց թե այդ երկու տարբեր մակերեսներն իրար հետ ինչ եղանակով են կապված եղել, այժմ անհայտ է, թեև պարզ է, որ միջին դարերում այդ ցածրադիր հարթությունը ստորին

բերդի բաղադրիչ մասերից մեկն է հանդիսացել և ամենայն հավանականությամբ այս տարածությունը եղել է Դվինի զորաժողովի վայրը, որտեղ զինվորներն իրենց վարժություններն են արել, իսկ պատերազմի օրերին այդտեղ հավաքվել են տարբեր վայրերի նախարարական զորախմբերն ըստ զորանամակի։

Այդ նույն տարածությունը, ինչպես ցույց են տալիս այդ մասում կատարված պեղումները, քաղաքի գոյության վերջին շրջանում (12-րդ դարերում) եղել է նաև շուկա, որտեղ իրենց կարավաններն են տեղավորել օտարերկրյա վաճառականները Դվինի տերերի հատուկ պաշտպանության ներքո՝ իրենց առևտուրն անելու համար։ Այժմ, երկրագործության համար օգտագործվելու հետևանքով, այդ հողամասի երեսը միանգամայն զրկվել է հնագիտական մնացորդներից, սակայն հողի մեջ այժմ էլ երևում են միջնադարյան խեցեղենի մանր բեկորներ և երբեմն էլ գտնվում են դրամներ, իսկ վարելու միջոցին հաճախ հայտնագործվում են նաև քանդակազարդ տուֆ քարի բեկորներ, որոնք մատնացույց են անում այդ տարածության մեջ, գլխավորապես նրա եզրերին, մոնումենտալ շինությունների գոյությունը։

Ստորին բերդի հարավ-արևմտյան պարսպապատ ամբողջ տարածության վրա բերդապարիսպն ունեցել է ընդամենը յոթը բուրգ, ըստ որում արևելյան կողմից հաշված 3-րդ և 4-րդ բուրգերն ավելի մեծ են և իրար շատ մոտ են կառուցված։ Այդ երկու իրար մոտիկ տեղադրված բուրգերի մեջ գտնվելիս է եղել բերդի գլխավոր մուտքը, որով բերդը հաղորդակցություն է ունեցել քաղաքի կենտրոնական թաղի հետ։ Մուտքը շինված է եղել սրբատաշ քարով, որի հետքերը պահպանվել են տեղի վրա։ Պեղումների միջոցով այդտեղ բացվեցին մուտքի կամարի կրունկների կրաշաղախ զանգվածները և երեսապատ սրբատաշ քարերից մի քանիսը՝ տեղահան արված վիճակում։

Նկ. 9. Բերդի հրապարակի ընդհանուր տեսքը հարավից

Բերդի արևմտյան մասում հարավից դեպի հյուսիս ձգված պարիսպն իր երկու անկյունային մեծ աշտարակների միջև ունեցել է ինը բուրգ, բերդի հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք երկարող պարիսպը՝ 13, իսկ արևելակողմի հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք ձգվողը՝

ինը։ Այս մասերում բուրգերի դասավորության մեջ մուտքի հետքեր չեն նկատվում։ Ըստ երևույթին այս կողմերում բերդը մուտք չի ունեցել և կամ, որ ավելի հավանական է, մուտքեր եղել են, բայց նրանք իբրև պահեստի մուտքեր ունեցել են երկրորդական նշանակություն, ուստի և չեն ազդել բուրգերի դասավորության վրա։

Այսպիսով, տեսնում ենք, որ յուրաքանչյուր 40 մետրի վրա դրված է եղել մի բուրգ և եթե դուրս գանք բուրգի մոտավոր թանձրությունը, կստացվի, որ մի բուրգից մինչև հաջորդը, եղել է մոտ 10 մետր հարթ պատ։ Դվինի բերդը, բացի հաստ պատերից, թշնամուց պաշտպանվել է նաև ջրային պաշտպանության գոտիով, որի խրամատի մնացորդների մի զգալի մասը պահպանվել է տեղում։

Այդ խրամատն ամենից լավ պահպանված է բերդի հարավային մասում, որտեղ նա եզերված է երկարաձիգ բնական բարձունքով։ Խրամատը մասամբ լավ է պահպանված նաև բերդի արևելյան կողմում, որտեղ բերդն իր երկայնքով քաղաքի արևելյան թաղերից սահմանազատված է եղել պարիսպների երկրորդ շարքով, իսկ բերդի հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմում, որտեղ խրամատի մեջ ջուրը պատշաճ բարձրության վրա պահելու համար բերդի պարսպին զուգահեռ, խրամատի հանդիպակաց եզրին, շինված է եղել արհեստական պատնեշ, ժամանակի ընթացքում այդ պատնեշն իսպառ ոչնչացվել և այդտեղ խրամատի լայնքն այժմ անհնարին է ճշտությամբ որոշել՝ առանց հատուկ պեղումների։

Բերդը շրջապատող խրամատն իր ջուրն ստացել է Ազատ գետից (Գառնի գետ)։ Տիկնունի ամրոցի մոտից, արհեստական հունով, գետը թեքվել է դեպի Դվին քաղաքը և այդ մասում գետի հունի հետքերը մինչև այժմ էլ երևում են տեղի վրա։ Նշանակում է, Ազատ գետը Գառնիի կիրճից դուրս գալով դեպի Արարատյան հարթավայրը, ուղղված է եղել ուղիղ դեպի հարավ, որտեղ նա Դվինի բերդի շուրջն օղակ կազմելուց հետո, իր ավելցուկ ջրով հոսել է հարավային ուղղությամբ, այժմյան Բզովան գյուղի միջով, և դուրս գալով քաղաքի հարավային սահմաններից՝ ի վերջո թափվել է Արաքս գետի մեջ՝ Արտաշատ քաղաքի մոտերքում։

Նկ. 10. Բերդի խրամատի ավերակները քաղաքի կենտրոնական թաղի կողմում

Սակայն, գետի մակերեսի նշաններից երևում է, որ գետը միայն մի հոսանք չի ունեցել, այլ Տիկնունի ամրոցի մոտից սկսած մի քանի առուներ են եղել ձգված դեպի արևելք, հավանաբար դեպի Խոսրովակերտ անտառը և մերձակայքի արգավանդ

դաշտերը, որոնք ոռոգվել են Ազատ գետի ջրերով։

Բերդը պաշտպանող ջրի խրամատի լայնքի և խորության մասին ճիշտ չափեր ասելն այժմ անհնարին է, որովհետև տեղում լայնքը և խորությունը ցույց տվող որոշակի ոչ մի նշան չի պահպանվել, ուստի և այդ խնդրում առայժմ բավականանալու ենք միայն մոտավոր թվերով։

Քաղաքի կենտրոնական թաղամասի կողմում խրամատի այժմյան լայնքը մոտ 20 մետր է, եթե դրա վրա ավելացնենք նաև պատերի փլվածքի տակ ծածկված տարածությունը, համանաբար խրամատի լայնքն այդտեղ եղած պետք է լինի 30 մետրից ոչ պակաս, իսկ բերդի արևելյան կողմում խրամատն ունեցել է մոտ 50 մետր լայնություն. դրա համար էլ բերդի այդ մասում խրամատի վրա կառուցված է եղել երկկամար կամուրջ, որի միջին կրունկը դեռևս պահպանվում է խրամատի կենտրոնում։

Դեպի այժմյան վերին Արտաշատ գյուղի կողմի խրամատի բացվածքը ցույց է տալիս, որ ջրի օղակը բերդի տարբեր կողմերում տարբեր լայնք է ունեցել, ըստ որում ամենալայն մասը բերդի հյուսիս-արևելյան կողմումն է եղել, որտեղ խրամատն ունեցել է մոտ 65—70 մետր բացվածք։ Այստեղ ջուրը մեծ փակվածք է ունեցել այն պատճառով, որ այդ կողմում, իբրև պատնեշ, օգտագործել են բերդի գիմացի սարալանջի բնական եզրագիծը։

Ծորփաղկալա գյուղի ուղղությամբ խրամատի լայնքն անորոշ է, բայց ըստ երևացող կասկածելի նշանների, այդտեղ նա ունեցել է մոտ 40—50 մետր լայնք։

Այսպիսով տեսնում ենք, որ Դվինի բերդի ջրի օղակն ընդհանուր առմամբ ունեցել է 45—50 մետր լայնք, իսկ քաղաքի կենտրոնական թաղամասի կողմում, որտեղ տեղավորված են եղել կաթողիկե եկեղեցին և կաթողիկոսի պալատը, ջրի օղակը նեղացել է մինչև 30 մետր։

Ավելի դժվար է որոշել ջրի հնարավոր խորությունը խրամատի մեջ։ Բանն այն է, որ ոչ մի տեղ չի ծածկվել խրամատի սկզբնական հատակը ցույց տվող որևէ նշան, ուստի ստիպված ենք առայժմ բավարարվել ընդհանուր դատողություններով, որոնք, սակայն, կարող են շատ հեռու լինել ճշմարտությունից։

Կաթողիկոսական թաղամասի կողմից խրամատն այժմ ունի մոտ 5—6 մետր խորություն, եթե հաշվենք, որ ջուրը մեկ կամ երկու մետր եզերքից ավելի ցածր է կանգնել և մի երկու մետրի չափ էլ այժմյան հատակին տիղմ է նստած, կստանանք այն, որ ջրի խորությունը Դվինի բերդն օղակող խրամատի մեջ եղած պետք է լինի մոտ 5—6 մետր, թեև խրամատի հատակը բերդի հյուսիսային մասում, որտեղից ներս էր հոսում Ազատ գետը և հարավային կողմում, որտեղից դուրս էր գնում ավելացած ջուրը, միևնույնը չէր կարող լինել։ Մեր կարծիքով, խրամատի հունն իր արտահոսման կողմում ավելի խորն էր լինելու, քան ներհոսման մասում, որպեսզի ջուրը որոշ թեքության պատճառով հոսեր դեպի ելքը և խրամատի հատակին էլ շատ տիղմ չգոյանար։ Սակայն, ինչ ձև էլ տային խրամատի հատակին, նրա մեջ տիղմը նստելու էր, ուստի խաղաղ ժամանակ նա պետք է կարիք ունենար մաքրվելու, մանավանդ, գարնան տղմոտ ջրերից հետո։

Դվինի բերդը քաղաքի հետ հաղորդակցություն է ունեցել մի քանի կամուրջների միջոցով, որոնք ձգված են եղել ջրի խրամատի վրայով բերդից դեպի քաղաք։ Տեղում, ինչպես ասացինք, այժմ ծածկվել են միայն երկու կամուրջների հետքեր՝ մեկը բերդի հարավային կողմում, քաղաքի կենտրոնական թաղին նայող երեսի վրա և մյուսը՝ բերդի արևելյան անկյունի մոտ, այժմյան վերին Արտաշատ և Նորաշեն գյուղերի ուղղությամբ։

Բերդի հարավային մուտքի հենց դիմացը, կամ նրան շատ մոտիկ, պետք է եղած լիներ քաղաքը բերդի հետ միացնող կամուրջը։ Եվ իրոք, թեև կամուրջի ոչ մի հետք չի ծածկվել բերդի կողմում, բայց բերդի մուտքի դիմաց, խրամատի մյուս ափին, կաթողիկե եկեղեցուց մոտ 40 մետր դեպի արևելք, բացվել են անմիջապես խրամատի վրա բացվող սրբատաշ քարերով շինած մուտքի ծածկոցներ, որոնք մատնացույց են անում այդ տեղում միակամար քարե կամուրջի գոյությունը՝ մոտ 30 մետր բացվածքով։ Այդ կամուրջը միացրել է քաղաքի կենտրոնական թաղամա-

որ բերդի գլխավոր մուտքի հետ և հանդիսացել է բերդի ամենաբանուկ և գլխավոր կամուրջը։

Բերդի արևելյան կողմի կամուրջի նման կետը դժբախտաբար այժմ բոլորովին անորոշ է։ Ջրի խրամատի կենտրոնում պահպանված կամարի կրունկը ցույց է տալիս, որ այդտեղ նա ունեցել է երկու թռիչք՝ մոտավորապես 50 մետր ընդհանուր երկարությամբ։ Այս կամուրջը բերդը

բում գոյություն է ունեցել միայն բերդը՝ բայց հետագայում, երբ Արշակունի թագավորներն իրենց գահը տեղափոխել են այնտեղ, բերդի շուրջն առաջ եկած բնակավայրն արագ կերպով մեծացել է և վերածվել մեծ քաղաքի, որն իր գոյության մոտ մի հազարամյակի ընթացքում մեծ դեր խաղաց Հայաստանի պատմության մեջ՝ իբրև նրա խոշորագույն կենտրոններից մեկը։

Նկ. 11. Բերդի խրամատի արևելյան կողմի ավերակները, որտեղ երևում են երկկամար կամուրջի հետքերը

միացրել է քաղաքի արևելյան պարսպապատ թաղամասի հետ և կարող էր կառուցված լինել քաղաքի արևելյան մասը բերդի հետ հաղորդակցություն ունենալու նպատակով, որը պատերազմների ժամանակ էլ կարող էր օգտագործվել իբրև օժանդակ կամուրջ։

Ուրիշ կամուրջների հետքեր չկան ինչպես բերդի, այնպես էլ քաղաքի այլ մասերում, թեև պարզ է, որ քաղաքն ունեցել է մայրաքաղաքին վայել մի քանի կամուրջներ, որոնց վրայով Ազատ գետի աջափնյա բնակիչները հաղորդակցել են գետի ձախ ափի հետ։ Կարծում ենք, որ բացի մեծ կամուրջներից, պետք է լինեին նաև ավելի փոքրերը, քաղաքի տարբեր թաղերով հոսող ջրանցքների մի ափը մյուսի հետ միացնելու համար։

Դվինի բերդը քաղաքի ամենահին մասն է, որից նա ստացել է իր անունը։ Սկզբ-

Բ. ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԱՂԸ

Բերդից հետո քաղաքի ամենահին մասը քաղաքի կենտրոնական թաղն է, որ պայմանական կերպով կոչում ենք նաև երկրորդ տեղամաս։

Քաղաքի կենտրոնական թաղը գտնվում է բերդի հարավ-արևմտյան կողմում, այժմյան Թոփրաղկալա և Վերին Արտաշատ գյուղերի արանքում. ունեցել է մոտավորապես հետևյալ սահմանները, որոնք ընդհանուր գծերով հնարավոր է որոշել հնագիտական մնացորդների և տեղում երևացող ավերակների հիման վրա. արևելքից այս թաղի սահմանը բերդի խրամատից դուրս հոսող ջրի հունն է եղել՝ մինչև այժմյան Բզովան գյուղի սահմանները, հյուսիսից՝ բերդից զատված է եղել բերդը շրջապատող ջրի խրամատով, իսկ արևմտյան կողմից այս թաղն իր մեջ ընդգրկել է

ամբողջ Թորփաղկալա գյուղը, մինչև նրա գերեզմանոցը, որն ընկած է գյուղից դուրս՝ նրա հարավ-արևմտյան կողմում։ Այդ գերեզմանոցի զանազան մասերում երևում են հյուսիսից դեպի հարավ ձգվող կավակերտ հին պարսպի հետքերը. ամենայն հավանականությամբ հենց այստեղ եղել է այդ թաղը մյուս թաղերից բաժանող թաղամիջյան պարիսպ։ Թաղի հարավային սահմանն այժմ դժվար է որոշել, որովհետև այդ կողմում երկրի մակերեսը հավասարվել է Արարատյան դաշտի ընդարձակ հարթավայրին։ Սակայն, դատելով որոշ նշաններից, պետք է ենթադրենք, որ այս թաղը դեպի հարավ շատ չի տարածված եղել։ Նա նույնիսկ չի ընդգրկել Բզովան գյուղի ուղղությամբ Թորփաղկալայի դաշտերի ամբողջ տարածությունը։

Այսպիսով տեսնում ենք, որ քաղաքի այս թաղն ունեցել է մի քիչ ավելի մեծ տարածություն, քան թե այն բարձրադիր տարածությունը, որն այժմ մնացել է այնտեղ գյուղացիների օգտագործումից ազատ։ Սակայն այստեղ կարևորն այն է, որ այդ թաղը, ինչպես տեսնում ենք, մնացորդներից, քաղաքի հին ժամանակն ունեցել է իր առանձին թաղային պարիսպը, որի մնացորդները պահպանվել են բերդի կողմի մասերում։ Դեպի բերդը տանող մուտքի բացվածքից երևում է, որ պարիսպն ունեցել է 5,1 մետր հաստություն, իսկ բարձրությունը որոշելու ոչ մի տվյալ չի մնացել տեղում։

Այդ պարիսպը շարունակվելով դեպի արևմուտք, իր մեջն է ընդգրկել Թորփաղկալա գյուղի հարավային կեսը և դուրս գալով գյուղից, նրա արևմտյան կողմում, թեքվել է դրեթե ուղիղ դեպի հարավ՝ մոտ մեկ կիլոմետր երկարությամբ և այնուհետև ուղղվել է դեպի մոտավորապես արևելք՝ Բզովան գյուղի ուղղությամբ, բայց այդտեղ արդեն պարսպի հետքերը լավ չեն պահպանվել և այժմ կորչում են մշակված դաշտերի մեջ։ Այդ պարսպի մնացորդներն այնուհետև մենք գտնում ենք միայն Բզովան գյուղի հյուսիսային ծայրից ոչ հեռու, որտեղ նրանք ուղղված են դեպի հյուսիս, բերդի մոտից այժմ հոսող առվի ուղղությամբ, որն արդեն հանդիպացել է, ինչպես վերևում նշեցինք, կենտրոնական թաղի արևելյան սահմանը։

Դվին քաղաքի ընդարձակ շահաստանը, որի մեջ է մտել նաև կենտրոնական թաղը, ամբողջությամբ վերցված է եղել շատ ավելի ընդարձակ պարսպի մեջ։

Ուրեմն, այստեղից կարելի է եզրակացնել, որ Դվինում որոշ թաղեր ունեցել են իրենց առանձին պարիսպները, որոնցով նրանք բաժանված են եղել քաղաքի մյուս թաղերից։

Այս եզրակացությունն առայժմ պետք է ընդունենք որոշ վերապահությամբ, որովհետև կենտրոնական թաղը լինելով քաղաքում ամենահին, Արշակունի հայ թագավորների օրով, կամ հետագայում, գուցե նաև մարզպանության սկզբնական շրջանում, հանդիսացել է Դվինի պարսպափակ միակ շահաստանը, որի շրջապատում, հետագայում, մարզպանների օրով և արաբների տիրապետության ժամանակ առաջ են եկել քաղաքի մյուս թաղերը։ Հետագայում այդ թաղերը նույնպես առնվել են ավելի մեծ և բոլոր թաղերի համար ընդհանուր պարսպի մեջ, որոնց հետքերն այժմ երևում են տեղի վրա։

Երևացող բոլոր նշաններից կարելի է անվերապահորեն եզրակացնել, որ Դվին քաղաքի կենտրոնական կամ կաթողիկոսական թաղը, նույնիսկ արաբների տիրապետության օրերին, ունեցել է միայն հայկական բնակչություն։ Այդ թաղի կենտրոնական մասում, որտեղ մենք պեղումներ ենք կատարել, տեղավորված են եղել կաթողիկե եկեղեցին, միանավ բազիլիկ տաճարը և կաթողիկոսի պալատը։ Նշանակում է, այդտեղ ապրել է միայն Դվինի բարձր հոգևորականությունը կաթողիկոսի գլխավորությամբ, բայց կարող է պատահել, որ նույն թաղի ծայրամասերում ապրել են նաև իշխաններ և հարուստ վաճառականներ, որովհետև թաղի հարավային մասերում կան բնակելի շենքերի այլ մնացորդներ ևս։

Արաբ մատենագիրները նշում են, որ հայոց եկեղեցին արաբական մզկիթի կողքին է եղել, բայց այդ թաղում մինչև այժմ չի գտնված մահմեդական կրոնին կամ արաբ բնակչության վերաբերող որևէ առարկա կամ շինություն, որից հնարավոր լիներ ենթադրել, որ հայերի հետ

միասին ապրել են նաև արաբներ։ Մեզ թվում է, որ իրավացի է Ն. Տոկարսկին, երբ ենթադրում է, որ կաթողիկոսի պալատը մեծ երկրաշարժից հետո վեր է ածվել մզկիթի, բայց այդ տեղի է ունեցել այն ժամանակ, երբ կաթողիկե եկեղեցին կործանվել էր և կաթողիկոսը Դվինից ընդմիշտ հեռացել։

Հնում, բազմազգ բնակչություն ունեցող արևելյան քաղաքների մեջ, միևնույն ազգության պատկանող բնակիչները, համախմբվում էին առանձին թաղերում, որտեղ և կառուցում էին իրենց տաճարները։ Այդ պատճառով էլ քաղաքներում առաջ էին գալիս, բացի առանձին արհեստներին վերաբերող համքարային թաղերից, նաև ազգային հատկանիշներով միմյանցից բաժանվող թաղեր։

Այս սովորությունը պահպանվել է մեր քաղաքներում մինչև իսկ 16—19-րդ դարերում, երբ բնակիչները քաղաքներում առանձին ազգային մահալե-ների (մահլա) էին բաժանվում։

Նույնիսկ միևնույն ազգության տարբեր դավանանք ունեցող բնակիչները քաղաքում առանձնանում էին հատուկ թաղերի մեջ։ Այդ ձևով են առաջ եկել արգեն շատ ուշ ժամանակներում ֆրանգանոց (կաթոլիկ հայերի բնակած) թաղերը հայաբնակ մի քանի քաղաքներում։

Մեզ թվում է, որ աշխարհագրական անունով կոչվող թաղերն էլ, եթե նրանք ավելի մեծ քաղաքամաս չեն ցույց տվել, ենթակա են եղել նույն սովորություններին, այսինքն՝ նրանցից ամեն մեկում բնակվել է որևէ մի ազգություն կամ որևէ տոհմ։ Այդ սովորության հետքերը նկատվում են նաև Դվինի կենտրոնական թաղում, որտեղ գետնի մակերեսին, նախքան պեղումները, կային երեք առավել աչքի ընկնող բարձունքներ, որոնցից երկուսն այժմ պեղվել են, իսկ մեկը դեռևս մնում է։ Այդ երկու բարձունքներից մեկի տակ բացվեցին կաթողիկե եկեղեցու, իսկ մյուսի տակ՝ կաթողիկոսի պալատի ավերակները։

Կենտրոնական թաղում գետնի երեսը սփռված է ամեն տեսակ հնագիտական մնացորդներով՝ սրբատաշ տուֆ քարեր, կրաշաղախի զանգվածներ, հասարակ և ջնարակած խեցեղենի մնացորդներ, ծածկի կղմինդրի և թրծած աղյուսի բեկորներ և այլն, որոնց առատությունը հնագետների ուշադրությունն է գրավել դեռևս անցյալ դարից սկսած, ուստի այս թաղը պետք է ենթադրել ավելի շուտ, քան թե քաղաքի մյուս տարածությունները, մանավանդ, որ, տեղ-տեղ գետնի մեջ երևում են նույնիսկ պատերի շարվածքի հետքեր։

Գետնի երեսին Թոփռաղկալա գյուղի մոտերքում պահպանվել են մի քանի շինությունների կավակերտ մնացորդներ, որոնցից մի քանիսը հին են և մի քանիսն էլ բոլորովին նոր և, հետևապես, զուրկ են հնագիտական արժեքից։ Կաթողիկոսարանից մոտ 25 մետր դեպի արևմուտք երևում է սրբատաշ քարով շինված մի կամարածածկ շենքի ավերակ, որի ինչ լինելը գուցե պարզվի հետագա պեղումների ժամանակ։

Գ. ՔԱՂԱՔԻ ՄՆԱՑԱԾ ԹԱՂԵՐՆ ՈՒ ԱՐՎԱՐՁԱՆՆԵՐԸ

Քաղաքի չորրորդ տեղամասը: Այս տեղամասը մի բարձրադիր հարթություն է, որն ընկած է կենտրոնական թաղից դեպի հարավ մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա և ընդգրկում է մոտ 2 հեկտար տարածություն։ Այնտեղ գետնի մակերեսն իր շրջապատի մշակվող դաշտերից 2—3 մետր բարձր լինելու հետևանքով անմատչելի է մնացել ոռոգող առուներին, ուստի և այդ տարածությունը գյուղացիք չեն կարողացել օգտագործել երկրագործական մշակության համար։ Տեղացի ծերունիները պատմում են, որ այդ տարածությունն առաջ ավելի մեծ է եղել, բայց հետզհետե արտատեր գյուղացիները մաս առ մաս հարթել և իրենց արտերին են խառնել։ Սակայն, ամառվա շոգ օրերին այս տեղամասի շրջապատի արտերի մեջ պարզ նկատելի են դառնում շենքերի հատակաձևերի ուրվագծերը։ Հարցն այն է, որ գյուղացիք գետնի երեսն են միայն մաքրել շինարարական մնացորդներից, իսկ հին քաղաքի ավերակների մնացորդները մնացել են հո-

ղի տակ և այժմ, երբ ամառվա շոգ օրերին բամբակի կամ ցորենի արտերը ջրում են, պատերի վրայի հողը շուտ է չորանում և իր հետ էլ շուտ է չորացնում բույսը, իսկ շենքի միջի տարածության հողի հաստ շերտն ուշ չորանալու հետևանքով բույսն այնտեղ մնում է դալար: Այսպիսով, Դվինի արտերում երբեմն ուրվագծվում են հին շենքերի հատակագծերն իրենց ուղղանկյուն քառանկյունի տեսքով, երբեմն նույնիսկ

ղարերդ գյուղերն իրենց հանդերով միասին: Սակայն, հենց այդ գյուղերի սահմաններում էլ վերջացած է եղել քաղաքը, որովհետև այդ գյուղերից դեպի հյուսիս այլևս ջուր չի եղել և տեղի վրա էլ քաղաքի մնացորդների ոչ մի հետք չի պահպանվել: Այդտեղ հաճախակի հայտաբերվող միջնադարյան գերեզմանները վկայում են այն մասին, որ քաղաքի հյուսիսային թաղերի հասարակական գերեզմանոցը գտնվելիս է եղել այժմ-

Նկ. 12. Չորրորդ տեղամասի ընդհանուր տեսարանը պեղումներից առաջ

իրենց ներքին բաժանումներով միասին:

4-րդ տեղամասի մակերեսը լի է շինարարական մնացորդներով, որտեղ ամենից շատ կան թրծած աղյուսի սովորական և ձևավոր բեկորներ: Այստեղ գյուղացիները քանդումներ և ավերումներ շատ են կատարել անցյալում, կան բազմաթիվ փոսեր, որոնցից քար են տարել, իսկ փոսերի կողքերին, հողի մեջ կատարած քանդումների պատճառով գոյացել են հողակույտեր: Այս տարածությունը դեռևս կանոնավոր ուսումնասիրության և սիստեմատիկ պեղման չի ենթարկվել, հետևապես և նրա հնագիտական բովանդակությունը լրիվ չափով դեռ չի պարզված:

Հյուսիսային սահմանները: Հյուսիսային սահմանների մեջ ներգրավված են եղել այժմյան Վերին Դվին, Ներքին Դվին և Հոռ-

յան երկու Դվին գյուղերի հյուսիսային սահմաններում:

Դվինի բլրից դեպի հյուսիս ընկնող քաղաքամասը գտնվում է զգալի թեքության վրա: Այնտեղ, դեպի հյուսիս, երկրի թեք մակերեսը հետզհետե բարձրանում է և դրա շնորհիվ հողաշերտը ժամանակի ընթացքում մաշվել է. այդ տարածության վրա շատ տեղերում հին քաղաքի կուլտուրական շերտը ոչնչացել է, բայց որոշ տեղերում էլ, որտեղ երկիրը մաշվելու ենթակա չի եղել, մնացել են հնագիտական բեկորների մնացորդներ, որոնց հիման վրա կարելի է վստահորեն պնդել, որ այդ տարածությունը քաղաքի գոյության ժամանակ բնակեցված են եղել քաղաքային բնակչությամբ:

Այստեղ, մեր կարծիքով, կարելի է այն հանգամանքը, որ այժմյան Դվին և Հաղա-

բերդ գյուղերի բռնած տարածությունը թեև շատ մոտ է գտնվում Դվինի բերդին, բայց երբեք պարսպով պատված չի եղել, այլ նա հանդիսացել է Դվին քաղաքի հյուսիսային արվարձանը[1]։

Արևելյան սահմանները: Քաղաքի այս կողմի սահմանների մեջ են մտել այժմյան Նորաշեն և Վերին Արտաշատ գյուղերն իրենց հանդերի մեծ մասով։ Այդ երկու գյուղերի տեղում հնում եղել է միջնադարյան մի մեծ թաղ, որը հատուկ պատնեշով անջատված է եղել իր շրջապատի մյուս թաղերից և, բացի դրանից, այդ տեղում են գտնվել նաև քաղաքի արևելյան արվարձանները, որոնց հետքերը երևում են նույնիսկ Վերին Արտաշատ գյուղի սահմաններից դուրս։ Գյուղի մեջ բերդի պատերին զուգահեռ կան հին պարիսպների բլրացած հետքեր, որոնք դեպի հարավ ձգվելով անցնում են Բզովան գյուղի սահմաններից էլ հեռու և ըստ երևույթին իրենց մեջ պարփակում են այդ կողմի քաղաքամասը։ Վերին Արտաշատի մեջ ևս նկատելի են հին քաղաքի բազմաթիվ հետքեր, թեև գյուղացիներն ամեն կերպ աշխատել են հարթել իրենց տան և տնամերձ այգիների ու բանջարանոցների համար, քանդելով և ավերելով հին քաղաքի մնացորդների խորդուբորդությունները։

Քաղաքի այդ մասերում գետնի երեսին, թեև բացի պարսպի հետքերից չի մնացել որևէ այլ մնացորդ, բայց գյուղացիների կատարած փորումների ժամանակ հաճախ հանդես են գալիս հնագիտական կարևոր առարկաներ։ Այսպես, օրինակ, 1947 թվականին հայտնագործվեց մեր ճարտարապետության և արվեստի մեջ բացառիկ տեղ գրավող մի խոյակի բեկոր, որը հավանաբար առանձին կանգնած սյան մասն է հանդիսացել 6—7-րդ դարերում։ Այդ թաղամասում տարբեր ժամանակներում գյուղացիները գտել են ոսկյա զարդարանքի առարկաներ և բյուզանդական դրամներ։

Հարավային սահմանները: Այս կողմում քաղաքը շատ ավելի ընդարձակ տարածության վրա է գտնվել. Նրա սահմանները տարածվել են մինչև 3 կիլոմետր հեռու Այգեստան և Բզովան գյուղերի ուղղությամբ, որոնց սահմաններում մնացել են հին բերդապարիսպների մեծազանգված մնացորդներ։

Բզովան գյուղից դեպի հարավ միջնադարյան քաղաքի շերտն ընդհանուր առմամբ խիստ հաստ է. նա հասնում է մոտավորապես 3—4 մետրի և իր մեջ պարունակում է բազմաթիվ հնագիտական մնացորդներ. 1947 թվականին մեր արշավախմբի հետախուզական ջոկատն այդ տեղերում հավաքեց զգալի քանակությամբ միջնադարյան հնագիտական առարկաներ՝ ջնարակած, զունազարդ և հասարակ խեցեղեն, ոսկրամաններ և միջնադարյան բազմաթիվ այլ իրեր։

Տեղացիների պատմելով, քաղաքի այս թաղերում հաճախ հայտնաբերվում են ամբողջական կարասներ, պղնձեղեն առարկաներ, ոսկե դրամների գանձեր և զարդարանքներ։

Քաղաքի հարավային կողմի կանաչ կենտրոնում երևում են դեռևս գյուղացիների կողմից չիրացված հնագիտական վայրեր, որոնք փոքրիկ բլուրների ձևով կանգնած են հարթավայրի մակերեսին։ Սակայն, դրանց մեծ մասը հետզհետե փոքրացել և ոչնչացել են, որովհետև գյուղացիք հին կարգերի ժամանակ այդ մնացորդների հողը տարել և օգտագործել են իրենց արտերը պարարտացնելու համար։

Այդ քանդումներից հանված քարերն անգամ տեղում չեն մնացել։ Հայտնագործված սրբատաշ կամ քանդակազարդ քարերը գյուղացիները տարել և օգտագործել են իրենց տների, ցանկապատերի և նույնիսկ գերեզմանաքարերի համար։ Այժմյան Այգեստան գյուղի գերեզմանոցում բազմաթիվ հին քարեր օգտագործել են իբրև տապանաքար, որոնցից մի քանի կարևորները 1939 թվականին մեր արշավախումբը տեղափոխեց թանգարան։

Արևմտյան սահմանները: Այս կողմում քաղաքի սահմանները հասել են, ըստ երե-

[1] Ա. Շահնազարյանն իր Двин. Историко-географический очерк (1940 թ. Երևան) աշխատության մեջ Դվին քաղաքի սահմանների մասին խոսելիս վեճի է մտնում ակադ. Հ. Մանանդյանի հետ և այժմյան Դվին գյուղը (չգիտե որ երկու Դվին գյուղ կա) համարում է հին քաղաքի սահմաններից դուրս։ Տեղի վրա երևացող նշաններն արդեն հերքում են ընկ. Շահնազարյանի այդ ենթադրությունը։

վույթին, մինչև այժմյան Դալար գյուղի մոտերքը, նրան չհասած, որտեղ մնացել են խոշոր հողակերտ պարիսպների հետքեր՝ մոտավորապես հյուսիսից դեպի հարավ ձգված։ Սակայն, այդ մասում քաղաքի վերջավորությունը շատ ավելի անորոշ է մնում, քան թե մյուս կողմերում։ Այս տարածության մեջ գետնի մակերեսի վրա, գրեթե չկան հնագիտական նյութեր, միայն երբեմն հողերի մեջ երևում են միջնադարյան խեցու փոքրիկ կտորներ և այլ առարկաներ։

Ահա սրանք են մոտավորապես հին Դվին քաղաքի բռնած տարածության վրա այժմ երևացող մնացորդները։ Հենց այդ ավերակների շրջանում էլ ձեռնարկվել են Դվինի հնագիտական պեղումները։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԴՎԻՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Ա. ՄԱՍՆԱԿԻ ՊԵՂՈՒՄՆԵՐ ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Մառի պեղումները 1899 թվականին. *–1899 թվականին Պետերբուրգի համալսարանի դեռևս պրիվատ դոցենտ Նիկողայոս Մառը կայսերական հնագիտական հանձնաժողովի միջոցներով հետախուզական պեղումներ ձեռնարկեց Դվինի բերդում, որոնք նպատակ ունեին պեղման վայրում հին Արտաշատ կամ Դվին քաղաքների ավերակներն ի հայտ բերելը։*

Դվինի ավերակներն այն ժամանակ շատերի կողմից վերագրվում էին հին Արտաշատ քաղաքին, որովհետև, ինչպես քիչ առաջ ասացինք, ավերակների կողքին այժմյան Վերին Արտաշատ (կամ Արտաշար) գյուղի գոյությունը ճանապարհորդներին և գիտնականներին թյուրիմացության մեջ էր գցել, ուստի և Մառը որոշել է պեղման միջոցով ստուգել այդ բերդի ավերակները։

Նա իր պեղումները կենտրոնացրել է երկու կետերում՝ ստորին բերդի հրապարակի հարավ-արևմտյան անկյունում և վերին բերդի գագաթի արևելակողմի եզրին (տես նկար № 7, ժա և ժբ*):*

Ստորին բերդի հրապարակի պեղումները Մառն սկսել է բերդապարսպի երկու երեսից միաժամանակ։ Դրսի երեսի պեղումներից նա գտել է անզարդ կավե ամանների բեկորներ, տարբեր մեծության թրծած գեղնավուն և կարմիր քառակուսի աղյուսներ, որոնք խիստ տարածված են այդտեղ, մի թոնիր մոտ 70 սմ *տրամագծով, պղնձյա ժանգոտ 2 դրամ, կամարի կամ թաղի մի սրբատաշ կարմրավուն քար, հասարակ խեցանոթների կտորտանք, ապակյա, պղնձե և քարե ուլունքներ, մարդու կմախք, ածխացած փայտ և ձիթաճրագի բեկոր։ Բերդապարսպի ներսի երեսի պեղումներից գտել է ոսկրե մի խողովակիկ, ինկի ոսկրե գլուխ, մետաղյա կոճակ և մատանի։ 2,5 մետր խորության մեջ բացվել է մի թոնիր, նրանից քիչ ներքև՝ մի կարաս, որի մեջ եղել են կավե ամանի բեկորներ։ Այդտեղ գտնվել է նաև սպիտակ կավե ամանի հատակ (հախճապակյա) մարդու գեղեցիկ պատկերով, որի նմանահանությունը տպագրված է կայսերական հնագիտական հանձնաժողովի 1899 թվականի հաշվետվության 93 էջում։*

Բերդապարսպի դրսի երեսին 5 մետր խորության մեջ բացվել են միմյանցագուցած կավե ջրատար խողովակներ՝ յուրաքանչյուրը 30 սմ *երկարությամբ և 18* սմ *անցքով, նախորդից ավելի խորն ի հայտ է եկել նույնանման ջրատար խողովակների երկրորդ շարքը։ Այդտեղ բացվել են նաև բերդապարսպի խիստ վատ պահպանված երեսապատ մասերը։*

Մեծ բլրի գագաթին պեղման համար Մառն ընտրել է այն տեղը, որտեղ նա տեսած է եղել մի ստորերկրյա անցք։ Այդ անցքը վերևից հորի նման ուղղահայաց

փորելու միջոցին խորքում բացվել են անտաշ քարեր, իսկ հետո էլ՝ սարիճանաձև շարված պատերի հիմնացորդները: Այդտեղ Մառը գտել է երկու ուլունք, ապակյա սև ապարանջանի բեկոր, և մութ ջնարակ ունեցող չքաղյուսի կտոր:

«Այդպիսով,—գրված է Կայսերական հընագիտական հանձնաժողովի 1899 թվականի հաշվետվության մեջ,—պարզվեց, որ Արտաշարի մոտի «բերդի» մոտ կան ինչ որ հին բնակավայրի ավերակներ: Իսկ անկանոն եռանկյունի կազմող բլուրները, որոնք մեկը մյուսից համասար հեռավորության են տեղադրված, հավանաբար, արհեստականորեն առաջացել են ուշ ժամանակի աղյուսաշեն պատերի վրա ավելացրած կավակերտ պատերի փլատակների շնորհիվ: Համեմատաբար ոչ հեռու անցյալում, հավանաբար 14-15-րդ դարերում, հին քաղաքի ավերակները շենացրել են նրա նոր բնակիչները, որոնց, ըստ երևույթին, պատկանել են վերևում նկարագրված կավե ջրատար խողովակների սիստեմը: Արդյոք պատկանո՞ւմ են այդ ավերակները Արտաշատին կամ Դվինին, պ. Մառին չհաջողվեց որոշել: Քաղաքատեղի մեծ տարածության և լիցքերի բարձրության հետևանքով սիստեմատիկ ուսումնասիրության համար պահանջվում է մեծ միջոցներ և տևական ժամանակ»[1]:

Նկ. 13. Բերդի հատակաձևը ըստ Ն. Մառի

Նա իր համառոտ հաշվետվության մեջ ի վերջո գալիս է այն եզրակացության, որ՝ «Արտաշատի մոտի բերդում, իսկապես կան ինչ որ մի հին բնակավայրի հիմնացորդներ», բայց թե դրանք Արտաշատինն են թե՞ Դվինինը, նա թողնում է անկախ[2]:

---

[1] Отчет императорской Археологической коммисии за 1899 год. СПБ., 1902, стр. 93.

[2] Մառի պեղումների մասը հաշվետվության մեջ զբաղվում է 90-ից մինչև 94 էջերը, ունի մի քանի լուսանկար և Դվինի բերդի հատակագիծը:

Դվինում Մառը գյուղացիներից ձեռք է բերել նաև մի քանի հետաքրքիր առարկաներ. մի փորագիր քար գլխի նկարով, կավե ամաններ, կարասի գրոշմազարդ խուփի մի բեկոր՝ կենդանիների դրոշմանկարով, արաբերեն արձանագրությամբ մի կարմիր գեմմա, որի վրա երկրս կրկնված է ալլահի անունը, մի քանի պղնձե իրեր, 29 դրամ, որոնցից 4-ը արծաթից են և պատկանում են մուսուլման իշխողների, իսկ 25-ը պղնձից, որից 1-ը հայկական, 1-ը վրացական, 1-ը հունական և 22-ը արաբական գրությամբ: Մառը գնել է նաև խալցեդոնե մի ուլունք՝ թևավոր եզան և առյուծի պատկերով:

Խաչիկ վարդապետի պեղումները 1904 (?), 1907 և 1908 թվականներին.— *Թեև գիտենք, որ Մառից հետո Դվինում պեղումներ է ձեռնարկել Խաչիկ վարդապետ Դադյանը կայսերական հնագիտական հանձնաժողովի թույլտվությամբ, բայց ճշտիվ հայտնի չէ, թե երբ է սկսել և երբ է նա դադարեցրել իր պեղումները։ Հարցն այն է, որ Խաչիկ վարդապետն իր Դվինի պեղումների մասին «Արարատ» ամսագրի մեջ 1907 թվականին հաղորդում է, որ արդեն երկու ամիս է ինչ ձեռնարկել է պեղումները և այնուհետև թվարկում է կատարած աշխատանքները. իսկ 1909 թվականին «Արարատի» մեջ հաղորդում է, որ հնագիտական որոնումները Դվինում նա ձեռնարկել է դեռևս 1904 թվականին։*

Այդ նույն հաղորդումից կարելի է ենթադրել, որ պեղումները շարունակվել են նաև 1908 թվականին։ Նույն ամսագրի մեջ հրատարակված պաշտոնական լուրերի մեջ նշված է, որ Խաչիկ վարդապետը 1907 թվականին է կայսերական հնագիտական հանձնաժողովից ստացել պեղման արտոնագիր, պետք է ենթադրենք, որ 1904 թվականին նա Դվինում միայն հետախուզական աշխատանքներ է կատարել առանց որևէ արտոնագրի[1]։

Խաչիկ վարդապետն իր պեղումների ընթացքում բաց է արել կաթողիկե եկեղեցու պատերի ներքին երեսը՝ կիսելով հողի մեծ մասը եկեղեցու կենտրոնում։ Նա է հայտնագործել նաև միանավ բազիլիկ տաճարը, որ նրա կարծիքով սուրբ Սարգիս եկեղեցին է։

Խաչիկ վարդապետն իր պեղումների միջոցին գտել է խիստ ուշագրավ հնագիտական առարկաներ, որոնց մեջ ամենից արժեքավորը, անկասկածորեն, կաթողիկե եկեղեցում հայտնագործված խճանկար պատկերն է։ Այդ պատկերի վրա եղել է տիրամոր դեմքը։ Այդ բեկորը, նրա ասելով և ականատեսների վկայությամբ, արվեստի մի գլուխ գործոց է եղել, որը, սակայն, հետագայում, ինչպես ինքն է գրել «Արարատի» 1909 թվականի փետրվարի համարում, այնտեղ գտնված գրամների, կերպասյա բանվածքների հետ միասին փչացրել են Թոփաղկալայի բնակիչները։

Կաթողիկեի պեղումների ժամանակ Խաչիկ Դադյանն ի հայտ է բերել նաև այլ որմնանկարների նմուշներ, իսկ այնտեղ բացված դամբարաններից հանել է կերպասյա հանդերձանքի նմուշներ և ժապավենաձև ասեղնագործության նուրբ բանվածքներ։

Միանավ բազիլիկ եկեղեցու ավերակների մեջ Խաչիկ վարդապետը գտել է մի սյունախարիսխ և երկու զվարթնոցատիպ խոյակներ։ Այստեղ ու այնտեղ գտել է նաև կավե հասարակ և ջնարակված ամանների բեկորներ, երկաթե բեռներ, ձիթաճրագներ, ծածկի կղմինդր և այլն։

Թեև Խաչիկ վարդապետը ճիշտ է ենթադրել, որ այդտեղ եղող ավերակները Դվինինն են և ոչ թե Արտաշատինը, բայց այդ եզրակացության նա հանգել է միանգամայն սխալ ենթադրության հիման վրա։ Նա պեղելով Զվարթնոցի տաճարը եկել է այն սխալ համոզման, որ Զվարթնոցը Արտաշատի ավերակների մեջ է շինված և, հետևապես էլ, Թոփաղկալա գյուղի մոտի ավերակները ոչ թե Արտաշատ քաղաքինն են, այլ Դվինինը։

Դադյանի՝ «Արարատ» ամսագրում տպագրած տեղեկատու հոդվածների մեջ կան խիստ կասկածելի կետեր ևս, որոնց ամենևին չի կարելի հավատ ընծայել։ Իր անվանած «սուրբ Սարգիս» եկեղեցու մեջ գտնված խոյակներն ամենայն հավանականությամբ եղել են հրապարակի վրա առանձին կանգնած հուշասյուներ՝ դրված գերեզմանների վրա, ինչպիսիք մենք ունենք Օշականում, Հովհաննավանքում և այլ տեղերում։ Մեր կարծիքով, Զվարթնոցի թանգարանում նրա հավաքած կերամիկայի, երկաթե և պղնձե ջահակիր ձողերի ու օղերի, ինչպես նաև ջահերի ապակյա սրվակների մի մասը նա տարել է Դվինից և խառնել Զվարթնոցի նյութերին, որոնց գյուտի մասին խոսում է իր գրած վերոհիշյալ հոդվածում։

---

[1] «Արարատ» պաշտոնական ամսագիր ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1907, էջ 526, նաև նույն թվի, էջ 659–661 և 1909, էջ 173–178։

Բ. ԴՎԻՆԻ ՍԻՍՏԵՄԱՏԻԿ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1936 թվականի նոյեմբերի 9-ին, Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետը Հայաստանում հնագիտական ուսումնասիրությունները ուժեղացնելու նպատակով որոշում կայացրեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի միջոցով 1937 թվականից սկսած սիստեմատիկ պեղումներ կատարել Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Դվինում։

Դվինի սիստեմատիկ պեղումներն սկսվեցին 1937 թվականին։ 1937–1939 թվականներին պեղումները ղեկավարել է պատմական գիտությունների դոկտոր Սմբատ Տեր-Ավետիսյանը, *պեղումներին աշխատակցել են՝ ավագ գիտական աշխատակից* Կարո Ղաֆադարյանը *(ղեկավարի տեղակալ)՝ 1938—1939 թթ., ավագ գիտական աշխատակից* Հովսեփ Եղիազարյանը՝ *1937 թ., ճարտարապետ* Նիկոլայ Տոկարսկին՝ *1938 և 1939 թթ., հնագիտության ասպիրանտներ* Բաբկեն Առաքելյանը՝ *1938—1939 թթ. և* Հարություն Մնացականյանը՝ *1938 և 1939 թթ., ճարտարապետության ասպիրանտ* Վարազդատ Հարությունյանը՝ *1939 թ. և լուսանկարիչ* Արտեմ Կարապետյանը՝ *1938—1939 թթ.։*

1946–1950 թվականներին պեղումները ղեկավարել է պատմական գիտությունների թեկնածու Կարո Ղաֆադարյանը, *պեղումներին աշխատակցել են ճարտարապետ* Գրիգոր Քոչոյանը *(ղեկավարի տեղակալ)՝ 1946 1950 թթ., պատմական գիտությունների թեկնածու* Ասլան Շահնազարյանը՝ *1946—1949 թթ., պատմական գիտությունների թեկնածու* Բաբկեն Առաքելյանը՝ *1946 թ., պատմական գիտությունների թեկնածու* Վալենտինա Աբրահամյանը՝ *1946–1950 թթ., պատմական գիտությունների թեկնածու* Հարություն Մնացականյանը՝ *1946, 1948—1950 թթ., ճարտարապետ* Լիպարիտ Սադոյանը՝ *1946—1948 թթ., տեխնիկ-հնագետ* Նազիկ Քարամանյանը՝ *1946–1950 թթ., ավագ լաբորանտ* Լենա Կարապետյանը՝ *1947–1950 թթ., ավագ լաբորանտ* Մարգո Վահանյանը՝ *1947 1950 թթ., հնագիտության ասպիրանտ* Եվգինե Մուշեղյանը՝ *1946—1947 թթ., դրամագիտության ասպիրանտ* Խաչիկ Մուշեղյանը՝ *1948 թ., կերամիկայի ռեստավրատորներ* Գուրգեն Առևշատյանը՝ *1946—1950 թթ. և* Հայկ Հայրապետյանը՝ *1948—1950 թթ., մետաղի ռեստավրատոր* Վաճարին Ղազազյանը՝ *1946—1950 թթ., նկարիչ* Առաքել Պատրիկը՝ *[illegible] թ., լուսանկարիչ* Պողոս Գրիգորյանը՝ *[illegible] 1950 թթ., ինչպես նաև պրակտիկանտ ուսանողներ՝ Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական համալսարանի պատմության ֆակուլտետից* Ստեփան Եսայանը՝ *1950 թ. և* Սարգիս Կարապետյանը՝ *1950 թ.։ Բացի այդ, կարճ ժամանակով Դվինում են եղել իրենց մասնագիտության հարցերով պատմ. գիտ. թեկնածու* Բորիս Ենիկոլոպովը՝ *1946 և 1949 թվականներին, պատմ. գիտ. թեկնածու* Հռիփսիմե Ջանփոլադյանը՝ *1948 թ., բիոլոգիական գիտությունների թեկնածու* Ս. Կ. Դալը՝ *1949 թ. և նկարչուհի* Լ. Ա. Դուրնովան՝ *1950 թվականին։*

1937 թվականի պեղումները.— *1937 թվականին արշավախումբն իր պեղումներն սկսեց կաթողիկե եկեղեցուց։*

Նախապես մաքրեց եկեղեցու արևելյան սեղանն ու նրա երկու կողքերին գտնըվող փոքրիկ ավանդատները, այնուհետև սկսեց հեռացնել եկեղեցու կենտրոնում Թաշիկ վարդապետի կիտած հողը, որտեղ ի հայտ եկան տաճարի կենտրոնի չորս գըմբեթակիր մույթերի հիմքերը, որոնք չէր տեսել Թաշիկ վարդապետը։ Կաթողիկե եկեղեցու լիքը հողի մեջ ի հայտ եկան 15–17-րդ դարերին պատկանող բազմաթիվ աղյուսաշեն դամբարաններ, որոնք վերևից ծածկված էին սալ քարերով։ Այդ դամբարանների մեջ ոչ մի առարկա չէր գտնվում։ Այդ տարին, ինչպես նաև 1938 և 1939 թվականներին, կաթողիկե եկեղեցու պեղումները մնացին անավարտ, որովհետև տաճարի հիմնական ձևերը ենթադրվում էր, որ արդեն հայտնի են և մեծ հողային աշխատանք էր պահանջվում նրա մեջ լցված մոտ 5 մետր բարձրությամբ հողը հեռացնելու համար։

Նույն 1937 թվականին արշավախումբը ձեռնարկեց կաթողիկե եկեղեցու հյուսիսային կողմում գտնվող բարձունքի պեղումները, որ երկրորդ տեղամասի ամենաբարձր կետն էր հանդիսանում։ Այս տարածությունը վերևի երեսին գրեթե չուներ որևէ ավերակի հետք, այլ ընդհակառակը,

առանձին տարիների ընթացքում քար և այլ առարկաներ հայտնաբերելու նպատակով կատարված փորփրումների հետևանքով այդ բարձունքի մակերեսը ծածկված էր խորդուբորդություններով, որոնց գետնի երեսին կարելի էր գտնել հատուկ և ջնարակված խեցեղենի մանր բեկորներ, աղյուսի և մշակված քարի կտորներ և այլն, որոնք սովորական են գրեթե ամբողջ քաղաքատեղի համար: Այս մասի պեղումներից, գետնի մեջ, մոտ 2 և 2,5 մետր խորությունից ի հայտ եկան կաթողիկոսի

հնարավորություն ունենք որոշելու այդտեղի պարսպի թանձրությունը: Սրբատաշ քարերից շարված մուտքի մնացորդների լայնքը 5,10 մետր է և բացի այդ 0,50 մետր էլ մի քարաշար հիմնապատ ունի արտաքին երեսին (Ջրի խրամատի կողմում): Բայց նշաններից երևում է, որ այդ հիմնապատն իր վրա պատ չէր կարող ունենալ, այլ նա ծառայել է հիմքի ամրության, ուստի պարսպապատի թանձրությունը պետք է հաշվենք 5,0—5,10 մետր: Այս մուտքի կամարակապ գլխին պարզ է, որ պետք է

Նկ. 14. Քաղաքի կենտրոնական թաղի պեղումների սկիզբը 1937 թվականին

պալատի ավերակները, որոնց պեղումներն ընդհանուր կերպով շարունակվեցին նաև 1938 թվականին և ավարտվեցին 1939 թվականի ամառային կամպանիայի ժամանակ:

1937 թվականին, 2-րդ տեղամասում, կաթողիկե եկեղեցուց դեպի հյուսիս-արևմուտք, ի հայտ եկան կենտրոնական թաղամասից դեպի բերդը տանող մուտքը, չորս և կես մետր բացվածքով: Մենք կարծում ենք, որ ինչպես որ մուտքի բացվածքի լայնքն էր, նույնպես էլ պետք է լիներ այդ մուտքին համապատասխանող կամուրջի լայնքը, ուստի պետք է ենթադրել, որ կամուրջի օգտագործելի լայնքը 4 մետրից ավելի է եղել:

Այդ մուտքի մնացորդների շնորհիվ մենք

լիներ Դվինի բերդը հատկանշող որևէ բարձրաքանդակ կամ կառուցման արձանագրություն, ինչպես սովորություն էր հնում, բայց դժբախտաբար այդպիսի բան չգտնվեց տեղում:

Սրբատաշ քարերի մի երկու շարքերի միջոցով որոշել այդ մուտքի և նրան կից պարսպի կառուցման ժամանակը, իհարկե, անհնարին է, բայց մի բան պարզ է, որ նա կառուցված պետք է լինի առաջ, քան արաբների Հայաստանում երևալը, որովհետև այդ մուտքը սերտորեն կապված է այդ թաղի մոնումենտալ շենքերի կառուցվածքի հետ:

Նա կառուցված պետք է լինի կենտրոնական թաղի ձևավորման հետ զուգընթաց, երբ հարկ է եղել քաղաքի այդ մա-

որ մյուս թաղերից բաժանել առանձին պարսպով,

Հոգևոր վերնագույն իշխանության կենտրոնը, ինչպես Էջմիածնում, այնպես էլ ամենուրեք, պետք է շրջափակված լիներ ամուր պարսպով։ Այդ իմաստով, Դվինի կենտրոնական թաղի պարսպի կառուցումը, կարծում ենք, պետք է կապել Կաթողիկոսական աթոռը Դվին փոխադրելու և Կաթողիկոսական տան կառուցման հետ։

Հետաքրքիրն այն է, որ առվի ջուրը խրամատի մեջ է լցվել ոչ թե մուտքի բացվածքով, այլ նրա մոտով, պարսպի մեջ արված անցքի միջոցով։

Քաղաքի կենտրոնական թաղից դեպի բերդը տանող մուտքի բացումից հետո արշավախումբը 1937 թվականին պեղումներ կատարեց նրանից դեպի արևմուտք, Թոփռաղկալա գյուղի կողմը, կաթողիկե եկեղեցու և բերդի խրամատի միջև ընկած ըն-

Նկ. 15. 14—17-րդ դարերի դամբարաններ քաղաքի կենտրոնական թաղում

Նշանակում է, այդ պարիսպը կառուցվել է 5-րդ դարի 2-րդ կեսին, ինչպես այդ կտեսնենք կաթողիկոսարանի կառուցմանը վերաբերող հատվածում։

Մուտքի պեղումների միջոցին 1938 թվականին ի հայտ եկան երկու շարք ջրատար խողովակներ, որոնք անցնում են մուտքի բացվածքի միջով։ Ըստ երևույթին նախկինում եղած կամրջի վրայով ջուրը բերդի կողմից հոսել է կաթողիկոսական թաղը։

Նույն մուտքի մոտ, ջրատար խողովակներին զուգահեռ, բացվեցին քարերով շարված առվի հետքեր։ Այդ առվի դիրքից երևում է, որ նրա միջով ջուրը հոսել է կաթողիկոսական թաղից դեպի բերդի խրամատը։ Հավանաբար նա թաղի աղբյուրների ջրերի ավելցուկը բերել լցրել է խրամատի մեջ։

դարձակ տարածության վրա։ Այդ տարածությունը ռուստիկանությունից դուրս մի բարձրադիր հարթավայր էր, որտեղ կային փորփրումների բազմաթիվ հետքեր։ Գետնի երեսը առատ էր հասարակ և ջնարակած միջնադարյան կերամիկայի, ինչպես նաև աղյուսի կտորտանքներով։

Պեղումների ժամանակ պարզվեց, որ գետնի մակերեսից մոտ կես մետր և ավելի խորության մեջ, ամբողջ այդ տարածությունը բռնված է ուշ ժամանակների գերեզմաններով, որոնք երբեմն այնքան խիտ են, որ միայն 25 քառակուսի մետր տարածության վրա տասնուհինգ գերեզման է տեղավորված (Նկ. 15)։

Այդ գերեզմանոցը սկիզբ է առել քաղաքը կործանվելուց հետո, երբ ավերակների վրա այստեղ ու այնտեղ առաջացած գյու-

ների բնակիչներն անօգտագործելի հողերը դարձրել են գերեզմանոց։

Այս գերեզմանները կարելի է բաժանել երկու տեսակի. առաջին տեսակը հին քաղաքի ավերակների ապյուսով շարված պատեր ունի և ծածկված է լինում բարակ և շերտավոր սալքարերով, իսկ երկրորդ տեսակը՝ դարձյալ ապյուսաշեն գերեզմաններն են, բայց ծածկված թրծած ապյուսներից շինած երկթեք ծածկով։

Այս երկրորդ տիպի գերեզմանի մեջ ննջեցյալը պառկած է լինում փայտե դագաղով, որոնց մի քանիսի մեջ գտնվեցին կանացի հասարակ պղնձյա զարդեր, ականջօղեր և մատանիներ։ Այս տիպի դամբարաններից մեկի արտաքին չափերն էին. երկարությունը՝ 3,73 մ, բարձրությունը՝ 1,18 մ, լայնքը՝ 1,80 մետր։

1937 թվականին պեղվեցին նաև միանավ նեղ ու երկար բազիլիկ եկեղեցու հիմնապատերը, որոնք նախօրոք արդեն հայտնի էին Խաչիկ Դադյանի պեղումներից։ Այդ հուշարձանը խիստ շատ է ավերված։ Տեղում մնացել են միայն հիմքի վերջին շարքերը, բայց չնայած այդ բանին, այնուամենայնիվ, պարզվում է նրա տիպը, ժամանակը, ինչպես նաև առանձնահատուկ կողմերը, որովհետև այդ տաճարի նմանները գիտությանն արդեն հայտնի են Փարպիում (Ծիրանավոր), Ծիրվանջուղում և այլն։

Այս բազիլիկ եկեղեցու պեղումների միջոցին հայտնաբերվեցին միջնադարյան ապակյա իրերի բեկորներ, հասարակ և ջնարակած կավե ամանների մանր կտորտանք, ծածկի կղմինդրի բեկորներ, որով, ըստ երևույթին, Ժ-րդ դարի նորոգության ժամանակ ծածկել են տաճարը։ Հյուսիսային պատի արտաքին երեսին գտնվեցին մոզայիկ զարդապատկերի խճաքարեր, որից երևում է, որ այդ տաճարը ևս երբեմն զարդարված է եղել մոզայիկ պատկերներով։

1938 թվականին, բազիլիկ եկեղեցու պեղումների ժամանակ տաճարի կենտրոնում, բացվեց մի թոնիր և նրա կողքին՝ հողի մեջ թաղած մի մեծ կարաս։ Թոնրի միջից գտնվեց ապակյա կոնաձև մի կանթեղ, երկու թասեր՝ մեկն ապակյա, մյուսը՝ պղնձից, երկու կավե կճուճներ, իսկ կարասի միջից գտնվեց արաբական մակագրությամբ պղնձյա մի մաշված դրամ։

Նկ. 16. Միանավ բազիլիկ տաճարի ավերակները 1937 թվականի պեղումներից հետո

Սակայն, 1937 թվականին շուտով պեղումների կենտրոնը փոխադրվեց դեպի արևմուտք. որտեղ ի հայտ եկան կաթողիկոսական պալատի մնացորդները։

1937 թվականին կաթողիկոսական տան սյունազարդ դահլիճում արմավենազարդ մեծ խոյակի գյուտը նորություն էր հայկական ճարտարապետության համար։ Իրոք, այդ մենաճակատ խոյակը կարելի է դասել հայկական արվեստի լավագույն նմուշների շարքին, մանավանդ, որ նա պարգարել է աշխարհիկ մի այնպիսի շինություն, որն իր տեսակի մեջ եզակի է ամբողջ հայկական ճարտարապետության հին շրջանի համար։

Կաթողիկոսի պալատի պեղումներն սկըսվեցին մի քանի տարբեր կետերից, որովհետև հետախուզության ժամանակ շենքի տարբեր մասերում երևան եկած ավերակների մնացորդները դեռևս հնարավորություն չէին տալիս պարզելու, որ դրանք միևնույն շենքի տարբեր մասերն են, ուստի, երբ այդ բանը պարզվեց 1938 թվին, այն ժամանակ աշխատանքները միացվեցին և շենքն սկսեց պեղվել մի ընդհանուր ծրագրով, հյուսիսային կողմից, աստիճանաբար դեպի հարավ գնալով։

Այստեղ էլ գտանք մակերեսին ամենուրեք քանդումների հետքեր էին երևում։ Վերին շերտը ծածկված էր աղյուսաշեն գերեզմաններով։ Պեղումների միջոցին հողի մեջ նաև՝ գտնվում էին միջնադարյան հասարակ և ջնարակած կավե ամանների բեկորներ, երբեմն պղնձե դրամներ, թրծած աղյուսի կտորտանք և այլն, բայց դամբարանների տակ գյուտերի բնույթն անմիջապես փոխվեց. այստեղ սկսեցին ի հայտ գալ մեծ մասամբ շինության վերաբերող բեկորներ՝ ծածկի տարբեր տեսակի կղմինդր, թևավոր խաչի բեկորներ, սրբատաշ տուֆ քարեր և գիպսե փորագիր զարդարանք։

Նկ. 17. Կաթողիկոսի պալատական դահլիճի պեղումները 1937 թվականին

Այստեղ գտնված ծածկի կղմինդրը, մեր կարծիքով, պատկանում է կաթողիկե եկեղեցուն և ոչ թե կաթողիկոսարանին, որովհետև այդ կղմինդրը գտնվեց կաթողիկոսական տան միայն հարավային մասում, որը շատ մոտ է տաճարին և որ գլխավորն է, այդ կղմինդրի արձանագրությունների մեջ հիշատակված է սուրբ Գրիգոր տաճարի անունը, որ կաթողիկե

Նկ. 18. Կաթողիկոսի պալատի ավերակների ընդհանուր տեսարանը 1939 թվականի պեղումներից հետո

եկեղեցու պաշտոնական անունն է եղել։

Կաթողիկոսական պալատի պեղումներից ի հայտ եկան գիպսե փորագիր նախշերի բազմաթիվ բեկորներ, որոնք զարդարել են պալատի դահլիճի պատերը։ Այդ գիպսե հարդարանքների մեջ կան դահլիճի պատերի վրա կամարաձևություն առաջացնող կամ տարբեր եղանակով պատերի անկյուններին հագցվող գեղեցիկ զարդաձևեր, որոնք մեծ մասամբ ունեն բուսական մոտիվներ։

Նկ. 19. Քաղաքի կենտրոնական թաղի հնախուզական խրամատ 1937 թվականին

Այս բեկորներն իհարկե պալատի կառուցման սկզբնական շրջանին չեն վերաբերում, այլ նրանք պատկանում են 9-րդ դարին և, հավանաբար, վերաբերում են Դվինի 893 թվականի մեծ երկրաշարժից հետո կատարած հիմնական նորոգությանը։

Կաթողիկոսական պալատի ներսում աղյուսե հատակից 40 սմ բարձրության վրա, գտնվեց երկաթյա մի ջահ, որն իր կենտրոնում ուներ 20 օղակ՝ ապակյա կանթեղներ հագցնելու համար։ Այս ջահը հավանաբար իր մի ծայրով ամրացվել է սենյակի պատին։

Կաթողիկոսական սյան դահլիճում բացված սյուներից մի քանիսը հետագայում, հավանաբար, մեծ երկրաշարժից հետո, ամրացվել են անորակ շաղախ ունեցող աղյուսաշեն հնապատերով և հին հատակը, որ անշուշտ քարից է եղել, քանդել և նրանից մոտ 40 սմ ավելի բարձր թրծած աղյուսից նոր հատակ են շինել։ Այդ նույն միջոցին դահլիճում ավելացրել են նրա ներքին տեսքն այլանդակող մի սյուն, որի գրանիտե խարիսխը մնացել է տեղում։

Ավելի ուշ ժամանակներում, հավանաբար 12 13-րդ դարերում, այդ աղյուսե հատակի վրա հում աղյուսե պատերով փոքրիկ սենյակներ են կառուցել։ Այս միջոցին պալատի ծածկն արդեն փլված էր, իսկ պատերի մեծ մասը դեռևս կանգուն, որովհետև աղյուսե պատերի հետ միասին իրենց սենյակների համար նոր բնակիչներն օգտագործել են նաև շենքի սրբատաշ քարերով շարված հին պատերը։

Պալատի մեջ բացվեց մի թոնիր, կողքին էլ հացահատիկի մի մեծ հոր, որոնք երկուսն էլ ուշ ժամանակների են պատկանում և կապված են հում աղյուսե պատերի հետ։

Այստեղ գտնվեցին նաև թեավոր խաչերի[1]

[1] Թեավոր խաչ ենք անվանում այն քարերը, որոնք իրենք խաչի ձև ունեն և Հայաստանում հանդես են գալիս 5 7-րդ դարերում։ Ուշ ժամանակներում, 10-րդ դարից սկսած, քառանկյունի հարթ քարի վրա քանդակում էին խաչի պատկերը, իսկ քարին խաչի ձև այլևս չէին տալիս։

երկու բեկորներ, որոնց նմանները մեզ ծանոթ էին Ջվարթնոցից և 5-7-րդ դարերին պատկանող մի քանի այլ հուշարձաններից։

Դվինի պեղումների առաջին կամպանիայի աշխատանքներն ամփոփելիս անհրաժեշտ է նշել, որ 1937 թվականին պեղող արշավախումբը քաղաքի կենտրոնական թաղի հարավային կողմի բարձունքի պարունակությունը պարզելու նպատակով մեկ ու կեսից մինչև երկու մետր խորությամբ մի երկար խրամատ փորեց բարձունքի մի ծայրից մինչև մյուսը, որով պարզվեց, որ այնտեղ ևս կան հին շինությունների վատ պահպանված հետքեր, որոնց մեծ մասն ունեն աղյուսե հատակ, իսկ ավելի բարձրում, գետնի այժմյան մակերեսից 0,5-ից մինչև 1,0 մետր խորության մեջ, խիտ դասավորությամբ դարձյալ ուշ ժամանակի աղյուսաշեն գերեզմաններ են։ Այդ տարածության կենտրոնական մասում, կաթողիկե եկեղեցուց դեպի հարավ, բացվեց մի նկուղային շենք, որի մեջ իրար կողքի շարված էին գինու մեծ և փոքր բազմաթիվ կարասներ։ Այդ կարասներից մի քանիսն իրար հետ կապված էին կավե հաստուկ խողովակներով, որոնց միջոցով գինին մի կարասը լցվելուց հետո կարող էր հոսել մյուսի մեջ առանց դուրս թափվելու։

1938 թվականի պեղումները.— Այս տարվա պեղումների հիմնական նպատակն էր ավարտել կաթողիկոսի պալատի պեղումները և բաց անել կաթողիկոսական տան և կաթողիկե եկեղեցու միջև ընկնող տարածությունը։

Արշավախմբի ղեկավարությունը նկատի ունենալով նախորդ տարվա սխալները՝ պեղումների և գյուտերի տեղագրական ֆիքսացիայի պրիմիտիվ մեթոդները, մշակեց պեղման նոր ձևեր. նախ՝ ամբողջ քաղաքատեղը բաժանեց առանձին տեղամասերի, ըստ որում վերին բերդաքաղաքն անվանեց առաջին տեղամաս, քաղաքի կենտրոնական թաղը՝ երկրորդ, բերդի հրապարակը՝ երրորդ, քաղաքի հարավային կողմի բացատը՝ չորրորդ և այլն։ Այնուհետև, ամեն մի տեղամաս բաժանեց մեծ և փոքր քառակուսիների, ըստ որում մեծ քառակուսիներն ունեն 50×50 մետր և փոքրերը 5,0×5,0 մետր տարածություն և այդ բոլոր քառակուսիները համաձայնեցված են տեղի աշխարհագրական կետերի հետ այնպես, որ ամեն մի գյուտ կարելի է հեշտությամբ տեղադրել տեղագրական քարտեզի վրա։ Իսկ իբրև պեղման հիմնական մեթոդ ընդունեց վերևից, շերտ առ շերտ փորելու եղանակը, որպեսզի ի հայտ եկած ամեն մի առարկայի դիրքը և խորությունը հնարավոր լինի հաշվի առնել։

1938 թվականի ընթացքում պեղվեցին կաթողիկոսական տան հարավային հինգ սենյակները և կաթողիկոսական տան ու կաթողիկե եկեղեցու արանքում գտնվող փողոցը, որն ունի 10—12 մետրից մինչև 20 մետր լայնություն։

Կաթողիկոսական տան մոտ բացվեց մի հոր, որի միջից դուրս եկան ապակյա գեղեցիկ սրվակներ, ապակյա բաժակ, սև կավե կճուճի մի բեկոր, որի վրա կան ռուռուցիկ և քանդակված խաղողի ողկույզներ։ Այդ հորից գտնվեցին նաև ապակյա ուլունքներ, բրոնզե ապարանջան, բրոնզե հայելի և այլն։

Ծաղկազարդ կարասի բեկորը հայկական կերամիկայի պատմության համար ունի բացառիկ նշանակություն այն իմաստով, որ միանգամայն նորություն է և պատկանում է 5—7-րդ դարերին։ Ի միջի այլոց մինչև այժմ Հայաստանի 5—7-րդ դարերի կերամիկան ընդհանուր առմամբ անծանոթ է գիտությանը (նկ. 113)։

Այդ հորն ունի 80 սմ տրամագիծ և նրա պատերը շարված էին քարերով, իսկ իջնելու և բարձրանալու համար շարվածքի մեջ կային ոտնատեղեր։

Փողոցի պեղումների ժամանակ անընդհատ ի հայտ էին գալիս կրաշաղախի մեծ զանգվածներ, կրածեփի բեկորներ, սրբատաշ քարեր, որոնցից մի քանիսն իրենց վրա ունեն քարտաշ վարպետների նշաններ։ Այս մասում լիցքը նույնպես գլխավորապես շինարարական մնացորդներից էր բաղկացած, որոնք առաջացել էին կաթողիկե եկեղեցու փլատակվելուց։ Հողի միջից անընդհատ գտնվում էր զանազան գույնի բնական քարերից, ոսկեզօծ ապակուց և ներկած գիպսե քառակուսիներից կազմված մոզայիկի խճաքար։ Կային նաև եկեղեցական որմնանկարների որոշ բեկորներ, որոնց վրա դեռևս պահպանվել էին գույների հետքերը։

23 h քառակուսում գտնվեց ապակյա երկու բաժակ, մի գեղեցիկ կավե կճուճ, մուգ ջնարակով և մի արաբական պղնձե դրամ, իսկ 22 a քառակուսու մեջ ի հայտ եկավ ծածկի կղմինդրի մի բեկոր, որի վրա փորագրված է Քրիստոսի սրբապատկերը (նկ. 234)։

1938 թվականին Դվինի արշավախմբի հիմնական նպատակներից մեկն էլ արհեստավորական թաղամասի պեղումներն էին։ Այդ նպատակով ձեռնարկվեցին հետախուզական պեղումներ քաղաքի մի քանի կետերում։ Այդ ուղղությամբ կատարված պեղումների միջոցին, հենց կենտրոնական թաղում, դեպի բերդը տանող մուտքի մոտ, բացվեց դարբնի մի արհեստանոց։

Քաղաքի կենտրոնական մասում, հենց բերդի մուտքի և միանավ բազիլիկայի միջև ընկած տարածության պեղումների միջոցին բացվեցին չքավոր բնակիչների տներ, որոնց պատերը շարված էին հասարակ գետաքարերով և հում աղյուսով։

Այդ հյուղակների գոյությունը քաղաքի կենտրոնում ցույց է տալիս, որ քաղաքի ներսում թեև ընդհանուր առմամբ առանձին թաղերում են ապրել իշխողներն ու հարուստ ժողովուրդը, բայց պալատական շենքերի կողքին լինում են նաև չքավորական հյուղակներ։ Այդ երևույթը բացատրվում է ոչ թե քաղաքի վարչության դեմոկրատիզմով, այլ նրանով, որ քաղաքի մի որևէ մասը ժամանակի ընթացքում կարող էր կորցնել իր նշանակությունը և

Նկ. 20. Թամբավոր ձի (խաղալիք), գտնված միանավ բազիլիկ տաճարի մոտի թոնրի մեջ

երբեմնի հարուստների պալատները վերածվել չքավոր բնակչության տների։

Այդպես էլ պատահել է Դվինի բերդի հարավային մուտքի մոտի հրապարակի հետ, որտեղ 11—12-րդ դարերում քաղաքի բնակչության երբեմնի հավաքատեղին, արդեն դարձել էր չքավորական խավերի արհեստանոցների փողոց։

Այստեղ պետք է նկատի ունենալ նաև այն, որ հնում արհեստանոցները խիստ հարգված էին և քաղաքի ամենամարդաշատ փողոցների վրա խանութներ և արհեստանոց-

Նկ. 21. Երկաթե առարկաների կույտ, գտնված քաղաքի կենտրոնական թաղի դարբնոցի ավերակների մեջ։

ներ էին կառուցվում, իսկ բնակելի տները, եթե արհեստանոցներին կից չէին, ապա կարող էին մի որևէ արվարձանում լինել։

Նույն թաղամասի 12 j քառակուսու մեջ, բացվեց մի խղճուկ հյուղակ աղյուսե հատակով, կենտրոնում թոնիր, իսկ թոնրի մեջ էլ կերակուրի մնացորդ և թամբավոր ձի պատկերող կավե խաղալիք (նկ. 20)։ Նրա կողքին 11 j քառակուսու մեջ բացվեց մասնիվ քարաշար մի պատ, որը շարունակվում էր հարևան քառակուսիների մեջ։ Այս պատի մեջ օգտագործվել էին հին շենքերի պատերի վրայից հանված բազմաթիվ քարեր, հավանաբար, նրանց փլատակներից հետո։

Այդ պատի անկյունավորված մասում գտնվեց երկաթե առարկաների մի մեծ կույտ, ամբողջովին ժանգի վերածված։ Հողը մաքրելուց հետո այդ կույտի մեջ երևացին կացնի, բահի, մեծագլուխ գամերի, ձիու կիսալուսնաձև պայտի, տապակի և այլ երկաթե առարկաների հետքեր (նկ. 21)։ Այդ շենքի հատակը 23×23 սմ մեծության թրծած աղյուսներով էր շարված և ուներ քառակուսի հարթակի տեսք՝ 3,5×3,5 մետր չափերով։ Շինության հատակի վրա կար 0,6×0,6 մետր կողմերով և 0,50 մետր խորությամբ մի փոս, որտեղ եղել է դարբնի զնդանը։ Այսպիսով, այդ շենքը 11–12-րդ դարերին պատկանող դարբնի արհեստանոց

էր, որը մինչև այժմ Հայաստանում գտնըված դարբնոցների մեջ ամենահինն է։

Դարբնոցի շրջապատի պեղումների ժամանակ հողի միջից գտնվեցին կրաշաղախի մեծ զանգվածներ, բազմաթիվ մոզայիկ խճաքարեր, սրբատաշ քարերի կտորներ, որոնք բոլորն էլ պատկանում էին կաթողիկե եկեղեցուն։ Ուստի պետք է ենթադրենք, որ 9-րդ դարի վերջում, կաթողիկե եկեղեցու ավերվելուց հետո, նրա փլատակների մնացորդները ժամանակի ընթացքում տարածվել են շենքից մոտ 20—25 մետր հեռու։ Եթե նկատի առնենք կաթողիկե եկեղեցու ծավալն ու բարձրությունը, այդ բանը երբեք զարմանալի չպետք է թվի մեզ։

Պեղումների ժամանակ այստեղ գտնըվեցին ապակու, երկաթե առարկաների և կերամիկայի շատ բեկորներ ու պղնձե դրամներ, որոնց մեջ կան Քեյ Խոսրովի, իլդիգիզյանների, վրաց Թամար թագուհու և Դավթի դրամների նմուշներ։

1938 թվականին ձեռնարկվեցին փորձնական պեղումներ բերդի ցածրադիր հրապարակի արևելյան ծայրում, դեպի միջնաբերդը բարձրացող սարալանջի սկզբին, որտեղ բացվեց մի երկհարկանի շենք կավակերտ պատերով, բայց ներքուստ ճոխ զարդարված, որ հավանաբար պատկանում էր մի հարուստ արհեստավորի։ Շենքի ստորին հարկում բացվեց մի մառան, շարքով դրված մեծ կարասներով, իսկ վերնատունը, որն ուներ մի քանի սենյակներ, գանձ որոնողների կողմից արդեն կողոպտված էր անցյալում։ Այստեղ, սենյակներից մեկի մեջ բացվեց մի աղյուսաշեն զարդարուն խորշ՝ գիպսե ձուլածո զարդաքանդակներով շրջանակված, որտեղ պատկերված էր գազանների վազք և շղթայի մեջ առնված միմյանց հաջորդող մեծ և փոքր ուռուցիկ կլորակներ։ Խորշի ճակատի վերին անկյունների վրա, երկու կողմերում էլ, դիմաց առ դիմաց հագցված էին երկու եռանկյունաձև գիպսե ձուլածո զարդեր, որոնց վրա քանդակված էին միմյանց նայող մարդկային դեմքով առյուծներ, ճիշտ այնպիսիները, ինչպիսիք սովորական են հայկական ձեռագրերի մանրանկարներում, կամ 12—13-րդ դարի ճարտարապետական բազմաթիվ հուշարձանների վրա։

Այդ շենքի վերնատան սենյակները զարդարված են եղել ջնարակած զույնզգույն շքաղյուսներով և հասարակ, բայց ձևավոր զարդաղյուսներով, որոնց բազմաթիվ բեկորները գտնվեցին պեղումների միջոցին։

Խորշավոր սենյակի մեջ բացվեց երկու հոր, որոնցից մեկը մեծ խնամքով փակված էր կենտրոնում անցք ունեցող մի նախշազարդ տուֆ քարի սալով, իսկ մյուսը՝ աղյուսով։

Նկ. 22. Խորշի ավերակներ՝ բերդի հրապարակի մոտ բացված բնակելի տան մեջ

Շենքի մեջ, խորշավոր սենյակի հատակին, կային երկու փոքրիկ քառանկյունի ջլկահորեր, որոնք ցույց են տալիս այդ տան տիրոջ զբաղմունքը։ Ջուլհակի տան պատի մեջ բացված խորշը նշանակալից է նրանով, որ մինչ այդ մեզ ծանոթ էին սրբատաշ քարով շինված եկեղեցական շինությունների կամ նրանց գավիթների գեղեցիկ խորշերը, իսկ այստեղ այդ խորշը շինված էր կավակերտ պատի մեջ, վրայից էլ գաջով սվաղած, և գիպսե ձուլածո զարդաքանդակներ հագցրած։

Մինչ այդ, ժողովրդական շենքերի այդպիսի խորշեր մեզ ծանոթ էին շատ ուշ ժամանակներից (17—18-րդ դարերից), ուստի Դվինի այս խորշը, իբրև հնագույն օրինակ, ունի կարևոր նշանակություն մեր աշխարհիկ ճարտարապետության պատմության համար։

1939 թվականի պեղումները.—Դվինի պեղումների երրորդ կամպանիայի միջոցին աշխատանքները շարունակվեցին կաթողիկոսական տան հյուսիսային կողմի երեք սենյակների և մեծ բլրի հյուսիսային լանջին (հրապարակի մոտ) բացված հարուստ քաղաքացու տան մեջ և ձեռնարկվեցին կաթողիկե եկեղեցու հարավային հողի միջից գտնվեցին կարևոր հնագիտական առարկաներ, տեղական և այլ երկրներից բերված գեղարվեստական և հախճապակյա անոթների բեկորներ և Դվինի համար սովորական առարկաներ (ձիթաճրագ, պղնձե մատանի, ուլունքներ, դրամներ, ապակյա անոթներ և այլն)։ Սենյակների մեջ ինչպես ամենուրեք, այնպես էլ այս

Նկ. 23. Միջնաբերդի գագաթի ընդհանուր տեսարանը 1939 թվականի պեղումների սկզբին

և արևմտյան պատերի պեղումներն արտաքուստ։ Սակայն այդ տարվա պեղումների կարևոր օբյեկտը հանդիսացավ վերին բերդի գագաթը, որտեղ առաջին անգամ ձեռնարկվեցին 10 13-րդ դարերին պատկանող վերին շերտի պեղման աշխատանքները։

Գլխավոր բլրի հյուսիսային լանջի պեղումները պարզեցին, որ այդ տարածությունը Դվին քաղաքի ավերվելուց հետո գերեզմանոցի չի վերածվել, այլ մնացել է միանգամայն անօգտագործելի։ Այդտեղ պեղմամբ բացվեցին երկու սենյակներ՝ մեկը փոքր, մյուսը՝ համեմատաբար մեծ, որոնց պատերի բարձրությունից մնացել էր 1,5 մետր և քիչ ավելի։ Այդ սենյակների պատերի ստորին մասերը կավակերտ էին, իսկ վերը՝ հում աղյուսով շարված։ Երկու սենյակները միմյանց հետ հաղորդակցվում էին 1,10 մետր լայնք ունեցող դռան միջոցով։ Սենյակների հատակը պատած էր թրծած աղյուսով, իսկ շենքի ներքին հարդարանքից անգամ ոչ մի բան չէր մնացել։ Դրան հակառակ, սենյակների լցքի տեղ, բացվեցին հորեր, որոնց խորությունը հասնում էր մինչև 8- 9 մետրի։

Միջնաբերդի բլրի գագաթի պեղումները մեծ կարևորություն ունեն մեր պատմության համար, որովհետև այդ գագաթը թագավորանիստ է դարձել դեռևս Արշակունի հայ թագավորների օրոք և այնուհետև Հայաստանի մարզպանների և արաբ ոստիկանների աթոռանիստն է եղել մինչև 893 թվականի մեծ երկրաշարժը։

Արշակունյաց և մարզպանական շրջանի նյութական կուլտուրան մեզ գրեթե անծանոթ է, բացառությամբ ճարտարապետության, ուստի այդ շրջանին պատկանող ամեն մի առարկա մեծ արժեք ունի գիտության համար։ Այդ նկատառումով էլ 1939 թվականին ձեռնարկվեցին Միջնաբերդի գագաթի պեղումները, որտեղ, ինչպես արդեն ասել ենք, գետնի մակերեսին որևէ շինության հետք չէր պահպանվել տեղում։ Միջնաբերդի գագաթը 5×5 մետր քառակուսիների բաժանելուց հետո սկսեցինք պեղել Ա գծի 3, 4, 5, 6, 7, 8, 9 և Բ գծի

6 և 9 քառակուսիները։ Միջնաբերդի լիցք հողը խիստ թույլ էր և խառն էր թրծած աղյուսի բեկորների հետ, այնպես որ ամեն մի հնագիտական քառակուսու միջից օրական մի քանի հարյուր հատ 20×20 սմ *մեծության թրծած աղյուսներ էին գտնվում։ Կես մետրից մինչև մեկ և կես մետր պեղելուց հետո ի հայտ եկան շենքերի հիմնապատերի մնացորդները։ Այդ հիմնապատերի թանձրությունը տարբեր տեղերում 0,7 մետրից մինչև 2,5 մետրի է հասնում։ Միջնաբերդում պեղմամբ հայտնաբերվեցին Դվինի ուշ շրջանի՝ 10—13-րդ դարերին պատկանող պալատական փլատակ մեծ շենքի մի քանի մասեր, որոնց վերականգնված ու ձևափոխված լինելու հետքերը պարզ երևում են նրանց հատակաձևերի վրա։ Այդ շենքերը թեև կառուցված են կավակերտ կամ աղյուսե պատերով, բայց գտնված բազմաթիվ բեկորներից երևում է, որ նրանք ունեցել են ներքին հարուստ հարդարանք։ Պեղումների ժամանակ գտնված առարկաներից էլ երևում է, որ այդ շենքերում ապրել են հարուստ բնակիչներ։ Գտնված այդ առարկաների մեջ թեև զգալի չափով գերակշռում են տեղական արտադրանքի իրերը, բայց նրանք բարձրորակ և թանկարժեք առարկաներ են, որոնք տեղում գործ են ածվել բարձր խավին պատկանող մարդկանց կողմից և արտահանել են օտար երկրներ։*

Դվինի բլրի վրա բացված այդ շենքերն ամենայն հավանականությամբ շինված են 893 թվականի մեծ երկրաշարժից հետո։

1939 թ. պեղվեցին նաև մի քանի քառակուսիներ կաթողիկե եկեղեցու և կաթողիկոսական տան հյուսիսային կողմում։

1946 թվականի պեղումները.— *1946 թվականին վերսկսվեցին Դվինի պեղումները, որոնք այդ տարին կատարվեցին Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի և Պատմական թանգարանի համատեղ ուժերով, իսկ 1947 թվականից սկսած՝ միայն թանգարանի աշխատակիցների միջոցով։*

1946 թվականի աշխատանքները կենտրոնացվեցին գլխավորապես Միջնաբերդի գագաթին՝ նպատակ ունենալով բաց անել այնտեղի պալատական շենքը։ Արշավախումբն այստեղ սկսեց պեղել 1939 թվականին պեղված տարածության շարունակությունը և բաց արեց ուշ շրջանի պալատական մեծ շինության մասերը։

Քաղաքի կենտրոնական թաղում պեղումները շարունակվեցին կաթողիկե եկեղեցու արևմտյան կողմում, որտեղ գտնվեցին ճարտարապետական մի քանի կարևոր բեկորներ։ Հետախուզվեցին նաև ստորին բլուրը և քաղաքի հարավային ու հյուսիսային տարածությունները՝ այդ կողմերում հին քաղաքի սահմանները որոշելու նպատակով։

Միջնաբերդի բլրի գագաթի պեղումները *սկսվեցին 1939 թվականին կատարված մասի շարունակության վրա, գլխավորապես նրա հյուսիսային կողմում և բաց արվեցին* a, b, c *և* d *գծերի 2-ից մինչև 9 քառակուսիները։ Բացի այդ, պեղվեցին նաև* b *գծի վեց քառակուսիները, որով պեղված դաշտը միջնաբերդի գագաթին 1939 թվականին կատարվածների հետ միասին ունեցավ ուղղանկյուն քառանկյունու ձև արևելքից դեպի արևմուտք 40 մետր երկարությամբ և հյուսիսից հարավ՝ 30 մետր լայնությամբ՝ ընդամենը 1200* քմ *մակերեսով։*

Այստեղ պեղմամբ բացվեց 1939 թվականին հայտնագործված պալատական մեծ շինության շարունակությունը, որի արտաքին պատերը 2,2 մետր թանձրությամբ բացվեցին դաշտի հյուսիսային, արևելյան և արևմտյան կողմերում, իսկ հարավում շենքի շարունակությունը մնում էր դեռևս չպեղված տարածության մեջ։

Շենքի արտաքին պատի հիմքը քարից է, որոշ մասը գետաքարից, և մի մասն էլ սրբատաշ քարից, որ, կարծեք թե, այլ տեղերից են բերել և հարմարեցրել կավակերտ պատին։ Հետաքրքիրն այն է, որ պատի այդ քարաշար մասը շենքի արևելյան կողմում տեղական ավազաքարից է, որից շինված է նաև կաթողիկե եկեղեցին, իսկ արևմտյան կողմի պատը մոխրագույն սրբատաշ տուֆաքարից է՝ դարձյալ տարված որևէ հին շենքի վրայից։

Նշանակում է, այդ շենքը կառուցված է գլխավորապես Դվինի արդեն փլատակված շենքերի քարերով և ոչ թե հատուկ պատվերով ստացված շինաքարով։ Նույն երևույթն է աչքի զարնում նաև միջնաբերդ-

ների մեջ։ Այնտեղ դարձյալ օգտագործված են զանազան տեղերից հավաքած քարեր։

Այդքան մեծ քանակությամբ քար Դվինում կարելի էր հավաքել միայն 893 թվականի մեծ երկրաշարժից հետո, երբ կաթողիկե եկեղեցին և բազմաթիվ այլ շինություններ քաղաքի զանազան թաղերում ու բերդի ներսում հիմնահատակ կործանվել էին։ Մանավանդ որ, միջնաբերդի գագաթի հին շինությունները ևս այդ ժամանակ էին փլատակվել։ Կան նաև մատենագրական տեղեկություններ այն մասին, որ այդ մեծ երկրաշարժի ժամանակ պալատական շենքերը փլատակված են եղել։

թացվածք և մի մետրից ավելի խորություն, միջակները՝ 60–70 սմ տրամագիծ և 80—100 սմ խորություն, իսկ փոքրերը՝ 40–50 սմ տրամագիծ և 50–60 սմ խորություն։

Ճիշտ նույն սովորությունը պահպանվել է նաև այժմյան հայկական գյուղերում, որտեղ մեծ թոնիրները վառվում են աշնանը՝ ձմռան համար մեծ քանակությամբ լավաշ հաց թխելու կամ մեծ հանդեսների ու տոնախմբության օրերին հրավիրված բազմության համար կերակուրներ եփելու ժամանակ։ Միջակ թոնիրները ծառայում են առօրյա հացը թխելուն և

Նկ. 24. Միջնաբերդի ընդհանուր տեսարանն արևելքից

Շենքի արտաքին պատերի ներսում շինված են բազմաթիվ բնակարաններ միմյանց նկատմամբ գրեթե անպատեհ դիրքով, որը ցույց է տալիս ներքին բաժանումների մի ծրագրով շինված չլինելը։ Դրա հետևանքով էլ առաջ է եկել շենքի կազմության ներքին խճողվածությունը։

Շենքի ներքին բաժանմունքներում պեղումների ժամանակ բացվեցին բազմաթիվ մեծ և փոքր թոնիրներ։ Երբեմն մի հարկաբաժնում լինում էր երեք, չորս թոնիր և, հավանաբար, նրանցից յուրաքանչյուրն իր ժամանակին ունեցել է իր հատուկ նշանակությունը։

Դվինում թոնիրները մինչև շրթները թաղված են գետնի մեջ մի բարձրադիր հարթակի վրա, որ կոչվում է թոնրափ: Մեծ թոնիրներն ունեն մոտ մի մետր բերանի

հաց թխած օրերին էլ նրանց վրա ճաշն են եփում, իսկ փոքր թոնիրների մեջ օրական մի քանի անգամ կերակուր են եփում և անհրաժեշտության դեպքում էլ շտապ կարգով մի քանի հատ բլիկ հաց թխում։ Սովորաբար կերակուր եփելը մեծ և միջակ թոնիրների վրա բոլորովին չի խանգարում հաց թխելուն, որովհետև կերակուրը թոնրի վրա են դնում նրա բոցավառ ժամանակը, երբ թոնրի կողերը դեռևս լավ տաքացած չեն հաց թխելու համար։ Այդ միջոցին թոնրի վրա են դնում խաչերկաթը և նրա վրա շարում կերակուրի կամ ջուր տաքացնելու ամանները։ Թոնրի վրա դրվող ամանները պետք է անպատճառ ունկեր ունենան, որպեսզի հատուկ երկարապոչ կեռերով թոնրի տաք ժամանակը դնեն նրա վրա կամ նրա վրայից վերցնեն։ Սովորաբար մեծ թոնիրը վառելու օրերը

պղնձե մեծ կաթսաներով (50—100 լիտր տարողությամբ) ջուր են տաքացնում մինչև եռալու աստիճան և այնուհետև խառնուրդ անելով ամբողջ ընտանիքով լողանում են մոտիկ որևէ հարկաբաժնում՝ թոնրից հեռու։ Հաց թխելն ավարտելուց հետո թոնրի հատակն են իջեցնում եփելու համար երկար ժամանակ պահանջող կերակուրները, որոնք թոնրի տաք մոխրի և թեժ ածուխի մեջ մնում են հաճախ ամբողջ մի օր կամ նույնիսկ ավելի։

Թոնրի բոցավառ ժամանակ նրա ակը (անվածքը) միշտ բաց է, որպեսզի օդի հոսանքի շնորհիվ բոցն ուժեղանա, բայց թոնիրն անցնելուց հետո, երբ սկսում են հաց թխելը, ակը որոշ չափով փակում են օդի

Նկ. 25. Թոնիր՝ բացված միջնաբերդի հարկաբաժիններից մեկում

հոսանքը դանդաղեցնելու նպատակով, իսկ հետո բոլորովին փակում են՝ տաքությունը երկար ժամանակ պահպանելու համար։ Հաց թխելն ավարտելուց հետո թոնրի բերանն էլ են փակում բրդյա հաստ կտորներից կարած մինդարներով և սովորություն է, որ ձմռանը տնեցիք ու մոտիկ հարևանները, մեծ մասամբ կանայք ու երեխաները, բոլորվում են թոնրի շուրթը և մրսած ոտները կախում նրա մեջ։

Թոնիրների դասավորությունը Դվինի միջնաբերդում և այլ միջնադարյան բնակավայրերում վկայում է այն մասին, որ միջին դարերից են գալիս թոնրի հետ կապված վերոհիշյալ սովորությունները, որոնք գոյություն ունեն այժմ մեր գյուղական բնակչության մեջ։

Միջնաբերդի 8 b քառակուսու մեջ բացվեց մի թոնրատուն, որտեղ թոնրի հատակից հանվեց չորս ունկ ունեցող ջնարակած մի մեծ քրեղան՝ 36 սմ տրամագծով, մեջը ոչխարի գանգի և սրունքների ոսկորներով լեցուն։ Այս արդեն մի պարզ ապացույց էր այն բանի, որ եփելու կամ տաք պահելու համար կերակուրը դրել են թոնրի մեջ, և հավանաբար բնակիչներն ինչ որ պատճառով փախել են և թոնրի մեջ թողել եփած կերակուրը։ Այդ թոնիրն ուներ 62 սմ բերանի բացվածք և 70 սմ խորություն, թոնրափոր սալահատակված էր թրծած աղյուսով։

Նկ. 26. Հորի բերանի քարե կափարիչ՝ գտնված միջնաբերդի հարկաբաժիններից մեկում

Երբեմն էլ թոնրի շատությունը առաջ է եկել այն բանից, որ մի որևէ թոնիր անպետքանալուց հետո նրա մեջը հողով լցրել են և կողքին մի ուրիշը թաղել։ Նշանակում է, Դվինում պեղումների ժամանակ ի հայտ եկած բոլոր թոնիրները միաժամանակյա չեն, թեև նրանք բոլորն էլ միևնույն շրջանին են պատկանում, այլ հաճախ մեկին փոխարինել է մյուսը, նրա փչանալուց հետո և կամ հին թոնրատան կողքին շինել են նորը։

Այլապես անբացատրելի կլինի միևնույն փոքրիկ թոնրատան մեջ երբեմն մեկը մյուսի մեջ մտնող կամ իրար նկատմամբ անկանոն դիրքավորված մի քանի թոնիրների գոյությունը։

Պակաս հետաքրքրություն չունեն նաև միջնաբերդում բացված բազմաթիվ հորերը, որոնք գրեթե հավասար կերպով ցրված են նրա գագաթի բոլոր մասերում և հաճախ միևնույն հարկաբաժնում նրանց թիվը հասնում է մինչև յոթի, իսկ երկուսը կամ

երեքը՝ ամենասովորական թիվն է յուրաքանչյուր բաժանմունքի համար։

Սակայն, բոլոր հորերը միատեսակ ու միաչափ չեն։ Նրանց կարելի է բաժանել երկու հիմնական խմբի. կան հորեր, որոնք ունեն նեղ անցք և մեծ խորություն, բայց կան նաև հորեր, որոնք լայն բացվածք ունեն և շատ խորը չեն։ Նեղ անցքով հորերի մի



Նկ. 27. Միջնաբերդում գտնված հորի բերանի մի քանի կափարիչների չափերը։
Չափագրությունը Գր. Քոչոյանի

մասը ծածկված է լինում քանդակազարդ քառակուսի քարով, կամ կենտրոնում խիստ փոքր անցք ունեցող մեծ քառակուսի սալյակով։ Այս տեսակ հորերը ծառայել են գործածված ջրի և կերակուրի թափոնների համար։ Այդ հորերի մեջ են գցել նաև տան կոտրատված ամանեղենի բեկորները։ Այս նույն երևույթը նկատվել է նաև Անիում։ Այնտեղ ևս միջնաբերդի պալատական շինությունների մեջ բացվել են բազմաթիվ հորեր, որոնց միջից պեղումների ժամանակ ի հայտ են բերվել մեծ քանակությամբ հնագիտական առարկաներ։ Այդ երևույթը առիթ է տվել Ն. Մառին կարծելու, որ այդ հորերը տան մեջ շինված թաքստարաններ են, որոնց մեջ վտանգի ժամանակ պահել են թանկարժեք գույքը[1]։

Սակայն այդ բոլոր հորերը թաքստարաններ չեն, որովհետև այդ հորերից դուրս են եկել զանազան խորության միջից, ճիշտ է քանակով շատ, բայց կոտրատված ամանեղեն՝ բազմաթիվ քարերի, ոսկորի կտորների և հողի հետ միասին, իսկ թաքցրած ամանեղենը պետք է լիներ թանկարժեք ու ամբողջական։ Լայն բացվածք ունեցող հորերը ծառայել են գլխավորապես հացահատիկ պահելու համար։ Կան նաև հորեր, որոնք նեղ են և խոր, բայց մեջը բոլորովին դատարկ. դրանք խոր ջրհորներ են։

Կեղտոտ ջրի հորերն իրենց բերանին թեև ունենում են փոքր անցքով քար, բայց հորի կողքին լինում է կամ խողովակով մեծ անցք, որի միջոցով հորի մեջ են թափում կերակրի թափոններն ու կոտրատված կամ արդեն անպետքացած ամանները։

Այս հորերից, Դվինում, պեղումների ժամանակ դուրս եկան բազմաթիվ հնագիտական առարկաներ։ Բացի կերակրի ոսկորներից հորերում մեծ քանակությամբ խեցանոթներ են գտնվում, որոնց կտորտանքը միշտ էլ տեղում ամբողջանում են, որովհետև կոտրված ամանների գրեթե բոլոր կտորները միասին են գցել հորը։ Այդ հորերի միջից երբեմն դուրս են գալիս նաև ուրիշ առարկաներ, մատանիներ, դրամներ, մարգարտաշար թելեր և այլն, որոնք արդյունք են ոչ թե այն բանի, որ բնակիչներն իրենց հարստությունը թաքցրել են այդ հորերում, այլ, որ ջրի և կերակրի թափոնների հետ միասին անզգուշությամբ հորն են գցել նաև արժեքավոր իրեր։

Այսպես օրինակ, 7 a քառակուսու մեջ մի հոր բացվեց, որի բերանը զգալի չափով նեղ էր և շարված էր քարով, իսկ տակը՝ համեմատաբար լայն։ Հորի բերանի մոտ շուրթերը դեպի վայր թաղված էր կավե մի պուտուկ, իսկ հորաբերանի քանդակազարդ քարի կեսն ընկել էր հորի մեջ։ Այդ հորի միջից դուրս եկան մեծ քանակու-

[1] Н. Я. Марр Ани. Книжная история города и раскопки на месте городища. Огиз, Москва-Ленинград, 1934, стр. 67.

թյամբ անասունի ոսկորներ, բոլորն էլ կերակուրի մնացորդ, կավե ամանների բազմաթիվ բեկորներ, ապակյա ապարանջանների կտորներ, թոնրի կափարիչի մի մեծ բեկոր, սնդկամաններ, ձվի կճեպ, բրոնզե մատանիներ, ջնարակած ձիթաճրագ, երկաթե սուր՝ բոլորովին քայքայված վիճակում, ջնարակած քուզաններ և այլն։

որոնք պահպանել էին իրենց ձևը։ Նույն քառակուսու մեջ բացվեց նաև ցորենի պահեստ, պարզյալ հորի մեջ։

Դվինում ալյուրը պահել են կավե կարասների մեջ։ Հայաստանի փայտառատ շրջաններում ալյուրը և նույնիսկ ցորենը պահել են փայտե մեծ ամբարներում, իսկ Դվինում, ինչքան հնարավոր է,

Նկ. 28. Միջնաբերդում բացված հորը՝ քարե կափարիչը բերանին

2 Ե քառակուսու մեջ բացված հորից դուրս եկան 12 ջնարակած քուզան, 5 ջնարակած ձիթաճրագ, մի գավ. ապակյա անոթների բազմաթիվ բեկորներ, 18 պղնձե դրամ, մի հախճապակյա գավ, մի քանի կավե փարչ, կուլիկներ, հախճապակյա թասեր, ուլունքներ, պղնձե զարդեր (գինդ և բոժոժ) և այլն, բոլոր ամաններն էլ այս կամ այն չափով կոտրված վիճակում։

Ինչպես արդեն ասացինք, լայնաբերան հորերի մեջ պահել են հացահատիկ։ Օրինակ, 2 Ժ քառակուսու մեջ բացվեց մի լայն հոր 2,1 մետր տրամագծով, որը լցված էր կորեկով։ [illegible] Ժ քառակուսու մեջ բացվեց խաղողի կորիզների մի բավականին հաստ շերտ ունեցող հոր, որտեղ խաղողի կորիզը թեև փտելուց քայքայվել էր, բայց նրանց մեջ կային այնպիսիները,

փայտին միշտ փոխարինել է կավը և այդ պատճառով էլ կարասներն այստեղ օգտագործվել են ամեն տեսակ նյութեր և կենսամթերք պահելու համար։ Այդ է պատճառը, որ Դվինի Միջնաբերդի հարկաբաժիններում հաճախ պատահում են կարասների ամբողջ շարքեր՝ ալյուրով կամ մի որևէ այլ նյութով լցված։

Հնարավոր է նաև իբրև թաքստարան ծառայող հորերի գոյությունը Դվինում, որոնց մեջ պահված լինեն անային թանկարժեք առարկաները, բայց, ինչպես երևում է մեր վերևում նկարագրած մի քանի հորերից, մինչև այժմ բացված հորերից և ոչ մեկն այդպիսին չէր, որովհետև նրանց մեջ առարկաները թափված են ցաք ու ցրիվ վիճակում։

Սակայն, պետք է նշել, որ Միջնաբեր-

գում գտնված հնագիտական առարկաների մեծագույն մասը հորերից է ստացվել. օրինակ՝ 1946 թվականին մեր գտած 322 հնագիտական առարկաներից 308-ը դուրս են եկել հորերի միջից։



Նկ. 29. Միջնաբերդում բացված հորերից մեկը՝ կոտրված կափարիչով և քարաշար բերանով։ Հորի մեջ երևում է բերանի վրա ընկած կճուճը

Միջնաբերդի շենքերի ավերակների միջից դուրս եկած առարկաները հորերի միջից դուրս եկածներից ըստ էության բոլորովին չեն տարբերվում, միայն թե հորերի միջինները ավելի լավ են պահպանված և հաճախ ամբողջանում են։ Դրան հակառակ, քառակուսիների մեջ գտնվածները, մեծ մասամբ, լինում են մանր բեկորներ և քիչ դեպքերում միայն կարող են ամբողջանալ։ Դրա պատճառն այն է, որ շենքերի ավերակների վրայի լիցք հողը գոյացել է դանդաղորեն, երկար ժամանակի ընթացքում, պատերի անընդհատ քայքայումից, ուստի և հողի մեջ ընկած առարկաները ջարդոտվել ու մանրացել են։

Միանգամայն այլ պատկեր են ներկայացնում այն բնակավայրերի ավերակները, որոնց մեջ կյանքը միանգամից է դադարել և երկրաշարժի, հրդեհի կամ պատերազմի հետևանքով ամեն ինչ միանգամից է թա-ցել հողի ծածկույթի տակ։ Այդպիսի դեպքերում պեղումները տալիս են մեծ քանակությամբ ամբողջական առարկաներ և, որ գլխավորն է, հողի մեջ մնացած է լինում ամեն ինչ, առանց բացառության, ինչ որ ունեցել են տեղի բնակիչները բնակավայրի կործանման միջոցին։ Իսկ դանդաղորեն հողե ծածկույթի տակ անցնող ավերակների մեջ պահված են լինում միայն այնպիսի առարկաների բեկորներ, որոնք ոչ ոքի պետք չեն եղել անցյալում և, բացի այդ, հետագայի այցելուներն էլ հաճախ տեղում թողած են լինում իրենց անպետքացած կամ կորցրած առարկաները։

Այսպես դանդաղ են հողի ծածկույթով պատվել Դվինի միջնաբերդի ավերակները, այդ պատճառով էլ այնտեղ բացված հորերն ունեն կարևոր նշանակություն միջնաբերդի մեկը մյուսի վրա բարդված ավերակների ժամանակը որոշելու հարցում։ Էլ չասենք, որ բացի վերոհիշյալից, Դվինի շրջակայքի բնակիչները, հետագա դարերում, զանազան տեղերում փորփրումներ են կատարել և դրանով կրկնակի կեր-

պով փչացրել հողի ընդերքում պահվող հնագիտական արժեքները։

Միջնաբերդի գագաթի այդ մեծ շենքը կառուցվել է հայ իշխանների համար, ինչպես ասացինք, 893 թվականի մեծ երկրաշարժից հետո, երբ արաբ ոստիկաններն արդեն հեռացել էին Դվինից։ Շենքի մեջ բացված բազմաթիվ թոնիրներն ու հայկական քրիստոնեական առարկաները ևս այդ բանն են հաստատում, թեև որոշ ժամանակ այնտեղ ապրել են նաև արաբ կիսանկախ իշխաններ։

Պատմությունից գիտենք, որ մի ժամանակ Դվինը դարձավ Շեդադյան ցեղի մի ճյուղի կենտրոնը, բացի այդ, որոշ դեպքերում Դվինն ունեցավ նաև իր տեղական արաբ իշխանները։ Դրանք բոլորն էլ իրենց իշխանության ժամանակ հերթով ապրել են միջնաբերդի այդ շինության մեջ։

Միջնաբերդի պեղումները 1949 թվականին կատարել են տեղամասի ղեկավարներ՝ պատմ. գիտ. թեկնածու Ա. Շահնազարյանը և պատմ. գիտ. թեկնածու Ֆ. Առաքելյանը. քառակուսիների պեղումները ղեկավարել են՝ ասպիրանտ Հ. Մնացականյանը, ասպիրանտ Ե. Մուշեղյանը, ճարտարապետ Լ. Սադոյանը և ավագ լաբորանտ Ն. Թորամանյանը։

Քաղաքի կենտրոնական թաղում 1946 թվականի պեղումները կենտրոնացվեցին մայր եկեղեցու և կաթողիկոսական պալատի միջև ընկած տարածության արևմտյան կողմում, որտեղ վերոհիշյալ երկու շենքերի միջև ընկնող գլխավոր փողոցն էր շարունակվում։ Բացի դրանից, պեղվեց նաև մայր եկեղեցու արևմտյան պատը և նրա մերձակայքը։

Պեղված տարածությունը ամբողջապես ծածկված էր 16—17-րդ դարերի աղյուսաշեն դամբարաններով, որոնք ոչ միայն խիտ շարքեր էին կազմում իրար կողքի, այլև հաճախ իրար վրա դրված էին լինում։

12 k քառակուսու մեջ, 7-րդ դարին պատկանող շինության պատի տակ, բացվեց մետաղաձուլական մի արհեստանոց հետևյալ պայմաններում. նախ՝ քառակուսու մեջ մի կետում մոխրաշերտ երևաց, որն անհամեմատ ավելի փափուկ էր, քան շրջապատի հողը։ Այդ մոխրաշերտի տեղն իր կլոր գիծով սկզբում նման էր հորի բերանի, բայց մի փոքր խորանալուց հետո միջից դուրս եկան ածուխի կտորներ և պղնձի կտորտանք։ Մոխրաշերտը մաքրելուց հետո պարզվեց, որ դա մի քուրա է, շինված աղյուսե հատակի վրա։ Այդտեղից գտնվեցին երկու փոքրիկ երկարապոչ պղնձե գդալիկներ, որոնք ծառայել են վարպետների ձեռքին իբրև դեղգիր կամ իբրև հեղուկ մետաղը կաղապարների մեջ լցնելու գործիք, որոնց նմանները գտնվել են նաև Անիում՝ Ն. Մառի պեղումների ժամանակ։

Նկ. 30. Միջնաբերդի հյուսիսային կողմի հորերից մեկի մեջ ցաք ու ցրիվ վիճակում բացված ջարդոտված խեցանոթները և խոհանոցային մնացորդները

Կաթողիկե եկեղեցու արևմտյան կողմում, տաճարի հիմքից մոտ 10 մետր հեռավորության վրա, գտնվեցին եկեղեցու քանդակազարդ քիվի երկու բեկոր, որոնք ունեն բացառիկ նշանակություն տաճարի 7-րդ դարի սկզբներին վերակառուցման ենթարկված մասերի ուսումնասիրության համար, որովհետև մինչև այդ դեռևս ոչ մի քանդակազարդ բեկոր չէր գտնվել և տաճարի քանդակների ոճի մասին ոչ մի գաղափար չունեինք։ Այդ քիվի բեկորը ցույց է տալիս, որ մայր եկեղեցու քիվը իր թեքադիր մասում ունեցել է հյուսածո քանդակ, որ տարածված ձևերից մեկն էր 7-րդ դարում։ Այդպես է, օրինակ, Զվարթնոցի տա-

հարի քիվը, միայն այն տարբերությամբ, որ Զվարթնոցի քիվի ճակատային մասի բարձրաքանդակների փոխարեն Դվինի տաճարի քիվը ունեցել է ընդարձակ արձանագրություն, որի հետքերը պահվել են գտնված բեկորների վրա։ Հավանական է, որ այդ արձանագրությունը քիվի վրա շրջապատել է ամբողջ եկեղեցին, կամ գոնե նրա արևմտյան ճակատը։

նաբերել են նույն տեղում և տարել իրենց գյուղը, որտեղ մինչև այժմ էլ դրված են գյուղի կենտրոնում։ Այստեղ հետաքրքիրն այն է, որ այդ սյունազարդ շենքը եկեղեցի չէ, այլ մի ինչ որ աշխարհիկ շինություն, պալատ կամ պաշտոնատեղի և հավանաբար կործանվել է դարձյալ 893 թվականի մեծ երկրաշարժի ժամանակ, որովհետև այնտեղ ուշ ժամանակի պատկանող նորոգության



Նկ. 31. Հատակագիծ Միջնաբերդի մեծ շինության՝ 1948 թվականի պեղումներից հետո։
Չափագրությունը Գ. Քոչոյանի

Կաթողիկոսի պալատի և մայր եկեղեցու արևմտյան կողմում, փողոցի շարունակության վրա ընկնող քառակուսիների մեջ բացվեցին սրբատաշ տուֆ քարով շինված մոնումենտալ շինության հիմնապատեր, որտեղ գտնվեց նաև տուֆ քարից մի սքանչելի խարիսխ։ Այդ խարիսխն իր շրջանաձև վերին մասից քառակուսու փոխարկվելու միջանկյալ տարածության անկյուններին ունի չորս ուռուցիկ եռանկյունաձև զարդեր։ Այդ խարիսխը, ինչպես նաև ամբողջ շինությունը, պատկանում է 7-րդ դարին։ Այդ խարիսխի երկու այլ օրինակներ էլ մի քանի տասնամյակ առաջ, վերին Արտաշատ գյուղի բնակիչները հայտ-

որևէ հետք չի երևում։ Դժբախտաբար շենքի ընդհանուր ձևի մասին դժվար է որևէ որոշակի խոսք ասել՝ հիմնապատերի միայն որոշ տեղերում պահպանված լինելու հետևանքով։

Դվինի կենտրոնական թաղն ունի հնագիտական մի հիմնական շերտ, որ պատկանում է միջնադարին։ Այս թաղն իր սկիզբն առել է 4-րդ դարից քիչ առաջ և այնուհետև հարատևել է մինչև վերոհիշյալ մեծ երկրաշարժը, երբ կործանվել են նրա բոլոր կարևոր շինությունները։ Այնուհետև նույն թաղում որոշ կառուցումներ արվել են նաև հետագայում, բայց նրանց մնացորդները այլևս նոր շերտ չեն կազմել այնտեղ,

այլ հին փլատակները մաքրելով, նրանց մնացորդներն օգտագործվել են նոր շենքեր կառուցելու համար։

Պեղումները ցույց են տալիս, որ քաղաքի այդ թաղը նախքան քաղաք դառնալը, հավանաբար քրիստոնեությունից





Նկ. 32. Կաթողիկե եկեղեցու և կաթողիկոսի պալատի արեմտյան կողմում բացված շինության ավերակների մեջ գտնված սյան խարիսխի չափերը։
Չափագրություն Գր. Քոչոյանի

առաջ, եղել է դամբանադաշտ բերդի բնակիչների համար։

1938 թվականին, կաթողիկոսական տան հարավակողմի փոքր սենյակներից մեկում, շենքի հին հատակը գտնելու նպատակով կատարված փորումների ժամանակ, մոտ 1,4 մետր խորության մեջ ի հայտ եկավ կարասայա թաղում։

1946 թվականին կաթողիկոսական տան և կաթողիկե եկեղեցու արեմտյան կողմում կատարված պեղումների ժամանակ բացված հորերից մեկում երևացին կարասայա թաղման մնացորդներ՝ մոտավորապես մեկ մետր խորության մեջ։

Այս թաղի հնում դամբանադաշտ լինելու ավելի պարզորոշ ապացույցներ ունեցանք 1947—1949 թվականներին, երբ պեղումները կենտրոնացված էին կաթողիկե եկեղեցու շրջապատում։ Այդտեղ դուրս եկան մի քանի կարասայա թաղումներ, որոնցից մեկի մեջ գտնվեցին մի շարք առարկաներ՝ պղնձե երկու ականջօղ, ննջեցյալի կրծքին մի շքասեղ և աջ ձեռքին երկաթե օղ՝ մատանու փոխարեն։ Այդ կարասայա թաղումների մոտ սովորաբար դուրս են գալիս սև կավե

Նկ. 33 Կարասային թաղում՝ գտնված կաթողիկոսի պալատի հատակի տակ

փոքրիկ սրվակներ, հավանաբար արցունքամաններ։ 1950 թվականին, միանավ բազիլիկ տաճարի արևելյան կողմում դարձյալ բացվեցին կարասայա թաղումներ, որոնց մեջ գտնվեցին ուլունքներ, ականջօղեր, կնիքներ, և այլն (տե՛ս նկ. №57 և №58)։

Քաղաքի կենտրոնական թաղի պեղումները կատարել են պատմ. գիտութ. թեկնածու Վ. Աբրահամյանը և ճարտարապետ Գր. Քոչոյանը։

1946 թվականին ստորին բերդի հյուսիսային կողմի վրա կատարված հետախուզական պեղումները նպատակ ունեին պարզել այդ վայրի հնագիտական նշանակությունը և նախապատրաստել հետագայում կատարվելիք սիստեմատիկ պեղումները։ Ուստի նախապես պեղվեցին 3×3 մետր մակերեսով իրարից հեռու գտնվող մի քանի քննիչներ,

փորձնական պեղումների համար հարմարագույն վայր ընտրելու նպատակով, և շուտով աշխատանքները կենտրոնացվեցին մի կետում, որտեղ մեկը մյուսի շարունակությունը կազմող 2,5×2,5 մետր մակերես ունեցող բջիջներով հետախուզվեց ստորին բերդի հյուսիսային հարթությունը, արտաքին պարսպի մոտից սկսած մինչև միջնաբերդի գագաթի մոտերքը և պարզվեց, որ ստորին բերդի այդ մասն ունի բազմաթիվ բնակելի շենքեր, որոնք միջնաբերդի գագաթի լանջերին աստիճանաձև բարձրացել են մինչև բլրի գագաթը, թեև վերջինս ստորին բերդից անջատված է եղել աղյուսաշեն պարսպապատով։ Այդ պարիսպը բաց արվեց միջնաբերդի կողմից, մոտ 20 մետր երկարությամբ, իսկ բլուրի լանջի կողմից, նա բոլորովին քայքայված էր և սովորական հողից բոլորովին չէր տարբերվում։

Հետախուզական պեղումների ժամանակ ստորին բերդի բնակելի շենքերի հիմքերն ի հայտ եկան մոտ 2 մետր խորության մեջ, իսկ որոշ տեղերում, գլխավորապես միջնաբերդի լանջերի ստորին մասերում, որտեղ հողի սահանքի պատճառով գետնի մակերեսն ավելի է բարձրացել, շենքերի խորությունը հասավ մինչև 3,3 մետրի։ Այստեղի շենքերից մի քանիսն ունեին քարե սալահատակ՝ թրծած կամ հում աղյուսով շարված պատերով, որոնց ստորին շարքերը հաճախ անտաշ բիրտ քարով էին շարված։ Շենքերից շատերի մեջ բացվեցին թոնիրներ և աղյուսաշար թոնրափներ։ Այստեղ գտնվեցին բազմաթիվ հնագիտական առարկաներ և միջնադարյան կերամիկայի բազմաթիվ կտորներ, որոնց մեջ կային նույնիսկ իրանյան թանկարժեք խեցու բեկորներ, բայց դրանք մեծ մասամբ միջնաբերդից էին թափվել այստեղ։

Գտնված իրերը գրեթե առանց բացառության տնային կարասու բեկորներ են և հատկանշում են այդ ավերակների բնակարաններ լինելը։

1946 թվականի պեղումների վերջին օրերին հետախուզական փորումներ կատարվեցին բերդից մոտ մեկ կիլոմետր դեպի հարավ գտնվող 4-րդ տեղամասում, որտեղ բացվեցին աղյուսաշեն շենքերի հետքեր, հավանաբար 11—13-րդ դարերին պատկանող։ Այստեղ կենցաղային առարկաներ չկան, նշանակում է, որ այդ շենքի ավերակները ինչ որ մի հասարակական հաստատության են պատկանել։

1947 թվականի պեղումները.— 1947 թվականին պեղումները կատարվեցին երկու հերթով՝ մի ամիս հունիս և հուլիս ամիսների ընթացքում և մոտ երկու ամիս էլ՝ սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին։

Այդ թվականին ևս աշխատանքները կենտրոնացվեցին դարձյալ երկու հիմնական կետերում, միջնաբերդում, որտեղ պեղումները շարունակվեցին նախորդ տարվա պեղածի արևելյան և հարավային շարունակության վրա, և քաղաքի կենտրոնական թաղում, կաթողիկե եկեղեցու շուրջը, գլխավորապես նրա հարավային և արևմտյան կողմում։ Բացի այդ, հետախուզական պեղումներ կատարվեցին ստորին բերդի հարավային մասում և բերդից դեպի արևելք ընկած պարսպապատ տարածության մեջ, որ մեր հանույթներում համարակալված է իբրև 5-րդ տեղամաս։

Միջնաբերդում պեղվեց.— e գծի՝ —5, —6 և —7, c գծի՝ —1, b գծի՝ +1 և —1, a գծի՝ —1-ից մինչև +2, —a գծի՝ —1-ից մինչև +3, b գծի՝ —1-ից մինչև +3, c գծի՝ —7-ից մինչև +3 և d գծի՝ 6-ից մինչև —1 քառակուսիները։

Այդ բոլոր քառակուսիները, բացի e գծի վրա գտնվողներից, տեղադրված են միջնաբերդի մեծ շինության հարավային մասի վրա և նույն շինության արևելքում, բայց նրա պատից դուրս։ Արևելյան կողմի պեղումների նպատակն էր պարզել մեծ շինության արտաքին պատերից դուրս գտնըվող տարածության ինչ լինելը, իսկ մյուս մասերում՝ բացվեց մեծ շինության շարունակությունը։

Միջնաբերդի արևելյան մասի պեղումները պարզեցին, որ թեև մեծ շինությունը սահմանափակվել է 2,2 մետր թանձրություն ունեցող պատով, բայց նրանից դուրս էլ, դեպի արևելք, շինված են եղել նույն ժամանակներին պատկանող մի շարք բնակելի շենքեր, որոնք ըստ էության ոչ մի բանով չեն տարբերվել մեծ շինությունից։ Արևելյան կողմի շինությունների մեջ էլ բացվեցին նույն հորերն ու թոնիրները, նույն կարասներն ու խեցեղենը, նույն

Նկ. 34. Հատակագիծ 1947 թվականի ամռան ամիսներին միջնաբերդի արևելյան կողմի վրա կատարված պեղումների:

Չափագրությունը Լ. Տադոյանի

աղյուսե հատակներն ու կավակերտ պատերը։ Սակայն, այս մասի պեղումները պարզեցին նաև, որ միջնաբերդի վերին շերտի բոլոր շենքերը կառուցված են միջնաբերդը ստորին բերդից բաժանող պարսպի կործանումից հետո, երբ դեռևս նրա մասերը տեղ-տեղ պահպանված են եղել ոչ շատ բարձր վիճակում։ Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ որոշ տեղերում այդ պարըսպի մասերն օգտագործվել են բնակելի շենքերի համար։ Մեծ շինությունից դուրս գտնվող շենքերի հորերն էլ իրենց մեջ պարունակում էին բազմաթիվ տնային կարասու բեկորներ և կենցաղային այլ առարկաներ։

Մեծ շինության հարավային մասի պեղումները 1947 թվականին ավելի հետաքըրքիր ընթացք ունեցան։ Այստեղ — C գծի — 5 և 6 քառակուսիներում բացվեցին աղյուսաշեն բաղնիքի հետաքրքիր ավերակներ, որից տեղում պահպանվել էին միայն նրա հիմնապատերն ու ընդհատակյա ծխատար բաժանումները։ Բաղնիքը կազմված էր երեք բաժանմունքներից, ըստ որում կենտրոնում տեղավորված էր հնոցը, իսկ նրանից դեպի արևելք և արևմուտք՝ երկու լողասրահներ։ Բաղնիքի արդեն օգտագործված ջուրը կավե խողովակների միջոցով լցվել է նրա հյուսիսային կողմում գտնվող հորի մեջ, որի բերանը քանդակազարդ քառակուսի սալ քարով էր ծածկված։ Թե որտեղից և ինչ ձևով է ջուրը հասել մինչև բաղնիքի ջրամբարը, այդ առհասարակ չի պարզվում, որովհետև ընդհանուր առմամբ դեռևս չի պարզվում այն հարցը, թե միջնաբերդի բնակիչներն ինչ ջուր են օգտագործել, մանավանդ, որ ինքնահոսով կամ հին ժամանակվա մեզ ծանոթ որևէ միջոցով անհնարին էր այդ բլրի գագաթին հոսող ջուր բարձրացնելը, ուստի և առայժմ պետք է ենթադրենք, որ միջնաբերդի գագաթը հնում հոսուն ջուր չի ունեցել և եթե տեղում բացված մոտ 25—30 մետր խորություն ունեցող հորերի ջրից բացի ուզեցել են ավելի մաքուր ջուր գործածել, այդ դեպքում ջրկիրների միջոցով ստորին բերդից ջուրը բարձրացրել են միջնաբերդ։ Իսկ ստորին բերդը, ինչպես այդ արդեն պարզված է, ունեցել է Գառնիից բերած մաքուր ջուր, որը բերդի մեջ է մտել հյուսիսային կողմից, մոտավորապես այնտեղից, որտեղից այժմ առուն մուտք է գործում դեպի բերդի հրապարակը։

Բաղնիքի հնոցի և լողարանի հատակի աղյուսե հենակների մեջ լցված էր մեծ քանակությամբ մոխիր և մուր։ Այստեղ գտնված երկաթե ջրատար խողովակի կտորն անշուշտ ծառայել է տաք ջրի ծորակին, ինչպես այդ նույն բանը նկատվել է Անիում և Ամբերդում։

Եթե ջրի հորն իր ջրատար խողովակներով այստեղ չգտնվեր և երկաթե ջրատար խողովակի բեկորն էլ չհայտնագործվեր, պետք է ենթադրեինք, որ այդ կառուցվածքը մի ձուլարան կամ արհեստանոց է և ոչ բաղնիք։ Սակայն, վերոհիշյալ գյուտերը, ինչպես նաև այն, որ այդտեղ արհեստանոցի վերաբերող որևէ առարկա կամ արտադրական խոտանի նմուշ չի գտնվել, մեզ բերում է այն համոզման, որ դա իրոք մի բաղնիք է, մանավանդ որ, հին բաղնիքների մի շարք հատականիշները պահպանվել են տեղում։

Միջնաբերդի գագաթի պեղումների ժամանակ գտնվեցին բազմաթիվ հնագիտական առարկաներ, որոնց մեջ կային նաև մի քանի մինչ այդ անծանոթ իրեր։ Գտնըվեց երկաթյա մի մկրատ խիստ այժմեական ձևով, դրոշմազարդ կարաս, պղնձե մի եռոտանի ամանի՝ հալված մետաղի հետքերով և այլ առարկաներ։

Պեղումները կատարել են՝ պատմ. գիտ. թեկնածու Աս. Շահնազարյանը (տեղամասի ղեկավար), ճարտ. Լ. Ճաղոյանը, ասպիրանտ Ե. Մուշեղյանը, ավագ լաբորանտ Ն. Թորամանյանը և ավագ լաբորանտ Լ. Կարապետյանը։

Երկրորդ տեղամասում պեղումները կենտրոնացվեցին կաթողիկե եկեղեցու հարավային պատերի մոտ՝ մի քանի կառուցվածքի հետքեր բաց անելու նպատակով։ Հարցն այն է, որ այստեղ երևում էին եկեղեցուն պատկանող այնպիսի պատերի մնացորդներ, որոնք անհամատեղելի էին երևացող տաճարի տիպին, այդ պատճառով էլ հարց առաջ եկավ, թե գուցե և այդ եկեղեցու հիմքերը դրված են մի ավելի հին շինության հիմքերի վրա, որին լրիվ չափով չի ծածկել երևացող տաճարը։ Այդ նկատառումով նախ և առաջ մաքրվեց եկեղեցու ներսը,



Նկ. 35. Հատակագիծ 1947 թվականի ամռան ամիսներին միջնաբերդի հարավային կողմի վրա կատարած պեղումների: Չափագրությունը Լ. Սողոյանի

որ չէր պեղված և մեծ քանակությամբ հող էր լցված 1907 թվականին՝ արտաքին պատերը բաց անելու ժամանակ։ Այդ հողի տակից ի հայտ եկան տաճարի չորս գմբեթակիր մույթերի հիմքերը, որոնցից արևմտյան զույգն ավելի երկարավուն է արևելյանի համեմատությամբ։

Նկ. 36. Կարաս, դրոշմազարդ գոտիով, գտնված միջնաբերդի մեծ շինության մեջ

Պեղումները շարունակվեցին նաև տաճարի արևելյան կողմում, որտեղ հյուսիսային և հարավային պատերը եկեղեցուց դուրս շարունակվում էին 2,5 և 3 մետր երկարությամբ։ Այդ պատերի հետքերը միանգամայն անհասկանալի էր թվում մեզ համար։ Կարելի էր ենթադրել, որ եկեղեցին նախօրոք ավելի մեծ են ուզեցել շինել, բայց հիմքերը դնելուց հետո սահմանափակվել են երևացող շինության չափով, սակայն այդ դեպքում անհասկանալի էր թվում, թե ինչու այդ սահմանափակումը արել են տաճարի ավելի բարդ ձևեր ունեցող արևելյան պատի հատվածում, փոխանակ արևմտյանի, որը մի հարթ պատ է եղել։ Դուրս ցցված արևելյան ելուստները հենապատեր էլ չէին կարող լինել, որովհետև տաճարի այդ մասը լրացուցիչ հենապատերի միջոցով ամրացնելու կարիք չէր ունենա։ Այդ մասի պեղումները բաց արին տաճարի շինության և նրա կրած փոփոխությունների գաղտնիքը։ Տաճարի արևելյան կողմում, մոտ 9 մետր հեռավորության վրա, բացվեց մի ուրիշ աբսիդ, որով պարզվեց, որ եկեղեցու արևելյան կողմում շարունակվող պատերը պատկանել են այդ նորահայտ աբսիդին, որ նախապես կառուցված է եղել իբրև եռանավ բազիլիկ եկեղեցի՝ արևելքում դուրս ցցված աբսիդով։ Հնագույն այդ եկեղեցու դահլիճն ունեցել է ներսից 48,5 մետր երկարություն և 18,4 մետր լայնություն։

Եռանավ բազիլիկ տաճարներն ընդհանրապես իրենց հյուսիսային և հարավային պատերին դուրս ցցված կողմնային աբսիդներ չեն ունենում, այդ պատճառով ստուգման ենթարկվեցին նաև հյուսիսային և հարավային աբսիդները։ Պարզվեց, որ հին պատերն ուղիղ գծով շարունակվում են, իսկ աբսիդները դրսից կպցրած են հին պատի հիմքերին։ Սակայն այստեղ ավելի հետաքրքիրն այն էր, որ այդ պեղումների ժամանակ տաճարի հարավային պատի տակ գտնվեց որմնասյան խոյակի երկու բեկոր, որոնք ցույց են տալիս տաճարի երկու անգամ ձևափոխման ենթարկվելը։ Այդտեղ պարզվեց, որ արևելյան նորահայտ աբսիդը հավանաբար մի հնագույն վերաշինության արդյունք է և կապված չէ նախնական շինության հետ։ Հարավային պատի տակ գտնված որմնախոյակների բեկորները ցույց են տալիս, որ տաճարը կարող էր ունենալ արտաքին կողմից սյունազարդ ծածկույթ։

Նկ. 37. Դամբարան՝ բացված կաթողիկե եկեղեցու հնագույն աբսիդի տակ

Նորահայտ աբսիդի մեջ, կլալի խորության մեջ, բացվեց կարմրավուն տուֆ քարի սալերից շինած քարարկղյա մի դամբարան քրիստոնեության վաղագույն շրջանին պատկանող։ Դամբարանի արտաքին չափերն են. երկարությունը՝ 2,1 մետր, լայնքը՝ գլխի կողմում 0,80 մետր և ոտների կողմում՝ 0,65։ Տուֆ քարի սալերը լավ տաշված են և ունեն 12—15 սմ հաստու-

թյուն։ Դամբարանի կողքերը և վրայի ծածկը կազմված են երկուական սալ քարերից, իսկ գլխի և ոտների կողմերը՝ մեկական։ Քարերը լավ տաշված և դամբարանը խնամքով պատրաստած լինելու պատճառով մեջը հող չէր լցվել։ Կմախքը տղամարդու էր և պահպանված էր լավ վիճակում, պառկած էր երեսով վերև և ձեռները կրծքին։ Մեջն առարկաներ չկային, միայն մնացել էր 8 սմ լայնության կաշվե գոտին և գլխի մոտերքում, կտավի մնացորդներ։ Այս դամբարանից քիչ հյուսիս գտնվեց մի մեծ կարաս՝ ուռուցիկ գոտիով, իսկ դեպի հարավ և մի քիչ էլ ավելի խորը՝ բացվեց կարասյա մի թաղում, որն ամենայն հավանականությամբ պատկանում էր քրիստոնեության մուտքից ավելի առաջ ընկնող ժամանակներին։

Նորահայտ արսիդի ամենից տարօրինակ երևույթն այն էր, որ այնտեղ պատերի ստորին շերտերում բացվեցին որմնանկարների հետքեր, որոնք, սակայն, մի քարից դեպի մյուսը չէին շարունակվում, այլ ընդհատվում էին։ Այդ երևույթը ցույց է տալիս, որ քարերը նախապես այլ շենքի են պատկանել, որն ունեցել է որմնանկարներ, բայց քանդել են և նրա քարերով շինել այս նորահայտ աբսիդը։ Եվ քանի որ այս նորահայտ աբսիդը շինվել է քրիստոնեության մուտքի առաջին տարիներում, նշանակում է, որ այդ որմնանկարները պատկանում են հեթանոսության շրջանին, բայց, դժբախտաբար, բացի կապույտ և կարմիր գծերից և մի քանի գույների հետքերից, այլ բան չի կարելի տեսնել այնտեղ։

Տաճարին զուգահեռ, նրա ամբողջ հարավային երկայնքով, մոտ 4 մետր հեռավորության վրա բացվեցին կրաշաղախ հիմնապատեր, որոնք վերաբերում են տաճարի արտաքին սյունապարդ ծածկույթին։ Տաճարի արևմտյան մասում այդ ծածկույթի մնացորդներն ավելի լավ են պահպանվել, քան մյուս տեղերում։ Այնտեղ մնացել է քարե հիմնապատերի հետ միասին նաև գեղեցիկ սալահատակը, որն ընդհատվում է տաճարի կողմնային արսիդով, իսկ արևմըտյան կողմում նա շարունակվում է մինչև տաճարի մուտքը, միայն թե այդտեղ ծածկույթն ավելի լայն է, քան թե հարավում։

Քաղաքի կենտրոնական թաղում պեղված ամբողջ տարածությունը բռնված էր ուշ ժամանակների դամբարաններով, որոնք հաճախ խանգարում էին բուն քաղաքի պեղումներին, որովհետև շատ դեպքերում դամբարանի համար քանդել են քաղաքի ավերակների մնացորդները և դամբարանը տեղավորել այնտեղ։ 16 C քառակուսու մեջ բացվեց քարաշար մի մեծ դամբարան, որն ուներ 250×332 սմ մակերես և 55×60 սմ մակերեսով հավելված էլ իր արևմտյան կողմում։ Խորությունը 55 սմ էր։ Այս դամբարանի պատերը թեև կավի շաղախով էր արված, բայց քարերի կարերը լցված էր կրաշաղախով, իսկ հատակը 18×18×3,5 սմ մեծության աղյուսներով էր պատած։ Դամբարանը ծածկված էր փայտի տախտակներով, որոնք, սակայն, փտելուց խորտակվել էին դամբարանի մեջ, որտեղ կային 10-ից ավելի մարդկային կմախքներ՝ իրար կողքի և իրար վրա շարած վիճակում։

Նկ. 38. Արծաթե իրերի կույտ, գտնված կաթողիկե եկեղեցու հարավային կողմում (մաքրելուց առաջ)

Թե ինչ պատճառով է առաջացել այս բազմամարդ թաղումը այժմ անհնարին է ճշտել, բայց մի բան պարզ է, որ 15—16-րդ դարերում որևէ դիպվածով այդ տասից ավելի մեռած մարդկանց դիակները, իբրև բացառություն, թաղել են միասին այդ մեծ դամբարանի մեջ։

Տաճարի հարավային կողմի պեղումների ժամանակ,— 9 b քառակուսու մեջ, ի թիվս բազմաթիվ հնագիտական առարկաների, գտնվեց արծաթե զարդերի մի փոքրիկ ժողովածու՝ խաչ, մատանիներ և օղեր (տես նկ. № 39), իսկ 17 C քառակուսու մեջ գտնըվեց մի դրամաքսակ՝ մեջը 115 հատ 7-րդ դարի բյուզանդական արծաթե դրամներ և մարգարտի մի քանի հատիկ։

Այս գանձը հավանաբար թաղված է եղել հողի մեջ դեռևս արաբական արշավանքնե-

րից առաջ, թեև մեր գտած ժամանակ նա արդեն տեղահան արված վիճակումն էր, որովհետև նա ի հայտ եկավ ուշ ժամանակի պատկանող գերեզմանի լիցք հողի միջից խիստ ժանգոտած և դրամներն իրար կպած վիճակում։ Ըստ երևույթին, այդ գանձը սկզբնապես այդտեղ թաղված է եղել մի քիչ ավելի մեծ խորության մեջ, բայց հետագայի գերեզմանափորները տեղահան են արել և ժանգոտած դրամների կույտը հողից չտարբերելով թողել են անուշադիր։



Նկ. 39. Արծաթե իրեր, գտնված կաթողիկե եկեղեցու հարավային կողմում (մաքրված վիճակում)

Ինչպես այս, այնպես էլ նախորդ և հետագա տարիներին, կաթողիկե եկեղեցու շրջապատում, գլխավորապես նրա հյուսիսային և հարավային կողմերում, գտնվեցին մի քանի քարե հնագույն խաչեր, որոնք ծառայել են իբրև մահարձան՝ այնտեղ թաղված մարդկանց համար։

Եկեղեցուց դեպի հարավ գտնվող բարձունքի վրա ի հայտ եկան գիպսե ձուլածո որմնապարդերի բեկորներ, որոնք մատնացույց են անում այդտեղ 11—13-րդ դարերին պատկանող մի շենքի գոյությունը, թեև այդ շենքը կարող է հին լինել, բայց նորոգված 11—13-րդ դարերում։

Պեղումները կատարել են՝ ճարտարապետ Գր. Քոչոյանը, պատմ. գիտ. թեկնածու Վ. Աբրահամյանը և ավ. լաբորանտ Մ. Վահանյանը։

Հետախուզական պեղումներ 1947 թվականին կատարվեցին ստորին բերդի հարավային հարթակի վրա՝ 3×3 մետր փոքրիկ բջիջների միջոցով։ Այդտեղ ևս, ինչպես հյուսիսային կողմի վրա, դուրս եկան բնակելի շենքեր 10—13-րդ դարերին պատկանող, միայն թե այստեղ շենքերի ավերակներն ավելի խորն էին նստած հողի մեջ, քան մյուս տեղերում։ Հողի թանձրությունն այստեղ հասնում էր մինչև 3,5 մետրի։

Հետախուզական պեղումներ կատարվեցին նաև 5-րդ տեղամասում։ Այդ տարածությունը թեև պարսպով շրջափակված է եղել ստորին բերդի հետ միասին, բայց զարմանալիորեն զուրկ էր հնագիտական շերտից։ Պեղումներն սկսեցինք այնտեղ պարիսպների մեջ առնված թեքադիր տարածության մի քանի կետերում, բայց ոչ մի տեղում էլ կուլտուրական շերտ չկար։ Այդ տարածության վրա, գետնի երեսին ևս հնագիտական առարկաների մնացորդներ չկան, թեև միշտ չէ, որ գետնի երեսին բեկոր չլինելը կուլտուրական շերտի բացակայությունն է բնորոշում։ Երբեմն գյուղի երեխաները, գլխավորապես անասուն արածացնողները, գետնի երեսից հավաքում են կավե ամանների բեկորները և նրանցից կլոր քարեր սարքելով իրար հետ խաղ են անում։ Դրանով էլ գետնի երեսից ժամանակի ընթացքում վերանում են խեցեղեն անոթների բեկորները։

5-րդ տեղամասում ամենուրեք բացվեցին նոր ժամանակների գերեզմաններ, որտեղ դիակը դրված էր ուղղակի կավահողի մեջ և երեսը մի քանի սալ քարով ծածկած։

Ամենայն հավանականությամբ այդ վայրը հնում եղել է բերդի ծաղկանոցը, որը և ջրվել է խրամատից հանված ջրով, այլապես անհասկանալի կլինի, թե ինչու այդ տեղը կուլտուրական շերտ չունի, մանավանդ որ, ծաղկանոցներ իշխանական ամրոցների մեջ սովորաբար լինում էին։

1948 թվականի պեղումները.— 1948 թվականին միջնաբերդի գագաթին պեղում-

ները շարունակվեցին մեծ շինության հարավային մասում և նրա հյուսիսային մի քանի կետերում, որտեղ խորացվեցին արդեն բաց արված մի քանի սենյակներ՝ նրանց տակից հին շենքերի մնացորդներ ի հայտ բերելու նպատակով։ Քաղաքի կենտ- որ մեծ շինության ավերակները բլուրի այդ կողմում ավելի լավ են պահպանված, քան այլ տեղերում. գուցե պատճառն այն է, որ բլուրի այս մասում շենքի ավերակներն ավելի խորն են թաղված հողի մեջ։ Բնակարանների մեջ դարձյալ գտնվում էին

Նկ. 40. Արծաթե դրամներ, գտնված կաթողիկե եկեղեցու հարավ-արևմտյան անկյունի մոտ

րոնական թաղամասում շարունակվեցին պեղումները կաթողիկե եկեղեցու շուրջը և սկսվեց Մայր տաճարի հարավում գտնըվող մեծ բարձունքի ուսումնասիրությունը, որտեղ նախորդ տարին կատարվել էին հետախուզական աշխատանքներ։

Ըստ էության, եթե չհաշվենք այդ նոր բարձունքը և Միջնաբերդում կատարված խորացումը, այս տարի որևէ նոր հարց առաջ չքաշվեց, այլ աշխատանքները կենտրոնացվեցին նախորդ տարվանից կիսատ մնացած կետերում։

Միջնաբերդում պեղվեց—e գծի—1-ից մինչև—8, f գծի—2-ից մինչև—6 և g գծի—6 քառակուսիները, որոնց տակ մեծ շինության շարունակությունն էր գտնվում բլուրի հարավային մասում։ Պետք է ասել, նույն առարկաները, ինչ որ մյուս տեղերում և ամենուրեք բացվում էին թոնիրներ, հորեր և աղյուսե հատակներով շենքեր։

Այստեղ 1948 թվականին բացվեց մի հետաքրքիր նկուղ, որ պահպանվել էր բավականին լավ վիճակում։ Վերնահարկից դեպի այդ նկուղը կարելի էր իջնել արևմտյան կողմի աստիճաններով, որոնք տեղի վրա պահպանված էին գրեթե առանց վնասվածքի։ Նկուղի հատակը չէր պահպանվել, բայց անկյուններում երևացող մասերից կարելի էր եզրակացնել, որ նա ծածկված է եղել 20×20 սմ մեծության աղյուսներով։ Պատերի ստորին մասերը քարից էին, իսկ քիչ բարձրում՝ աղյուսից։ Հենց այդ աղյուսաշեն մասից էլ սկիզբ էր առնում նկուղի թաղակապ ծածկը, որի կամարաձևության մնա-

յորդները երևում էին պատերի վերին մասերում։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Դվինի միջնաբերդի մի շարք շենքերի փայտե ծածկի կողքին գոյություն են ունեցել նաև աղյուսաշեն թաղակապ ծածկ ունեցող սենյակներ, իսկ քաղաքի կենտրոնական թաղի փոքրիկ կամարածածկ շենքը վկայում է նաև այն մասին, որ քարաշեն աշխարհիկ շենքերից մի քանիսն ունեցել են թաղակապ ծածկ՝ շինված սրբատաշ քարով։

1948 թվականին միջնաբերդում կատարված կարևոր գործը նախկին տարիներում պեղած սենյակների խորացումն էր, որի համար ընտրվեց միջնաբերդի հյուսիսային կողմը։ Այդ նպատակով պեղվեցին Ա, Բ և Գ սենյակների միջի տարածությունն առանց սենյակների պատերին դիպչելու։ Սակայն 1948 թվականին չհաջողվեց շատ խորանալ այդ սենյակներում և 6,5 մետր փորելուց հետո, երբ վտանգ կար լիցք հողերի փլչելուն կամ սահելուն, խորացման աշխատանքները դադարեցվեցին, որպեսզի հաջորդ տարին ավելի լայն չափերով շարունակվեն։ Այդ խորացումների ժամանակ պարզվեց, որ լիցք հողը բլուրի գագաթին շատ մեծ շերտ է կազմում և 6 մետրի տակին կան սրբատաշ տուֆ քարե պատերի հիմնադրմներ, իսկ մինչ այդ, արդեն պեղված վերին շերտից մոտ 2,5 մետր խորության մեջ երևան եկավ հում աղյուսով շինված մի խիստ կանոնավոր շենքի հիմնադրդ, որից պահպանվել էին մեկ և կես մետր բարձրությամբ հիմնապատեր։

Այստեղ ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այս խորացվող սենյակների մեջ գտնված առարկաները գրեթե որևէ բանով չեն տարբերվում վերին շերտի առարկաներից, այդ պատճառով էլ, կարծում ենք, միջնադարյան կերամիկայի ժամանակը որոշելու վերաբերյալ մեր ունեցած հասկացողությունները կարոտ են ստուգման և վերանայման։



Նկ. 41. Հատակաձև՝ 1948 թվականի ամռան ամիսներին կատարված միջնաբերդի հարավային կողմի պեղումների։ Չափագրություն Լ. Սադոյանի

Պեղումները կատարել են՝ տեղամասի ղեկավար պատմ. գիտ. թեկնածու Աս. Շահնազարյանը, քառակուսիների ղեկավարներ՝ ճարտարապետ Լ. Սադոյանը, նկարիչ Առաքել Պատրիկը, ավագ լաբորանտներ Ն. Թորամանյանը և Լ. Կարապետյանը։

Քաղաքի կենտրոնական թաղում նախ և առաջ պեղումներն սկսվեցին հարավակողմյան բարձունքում, որտեղ հետագարյան դամբարանների շերտի տակ բացվեցին 10—13-րդ դարերի բնակելի շենքերի հիմնադրդներ։ Այդտեղ գտնվեցին բազմաթիվ կենցաղային առարկաներ 1,5—2,0 մետր խորության միջից։ Բացվեցին թոնիրներ, երկանքաքարեր, սանդեր և այլն։ Միակ տարբերությունը միջնաբերդի գագաթի պեղումներից այն էր, որ այստեղ հատարակ խեցեղենը գերիշխող է, այնինչ, միջնաբերդի գագաթին, թանկարժեք խեցեղեն անոթներն են մեծ թիվ կազմում։

Այստեղ շարունակվեցին նաև կաթողիկե եկեղեցու շրջապատի պեղումները, որոնք այս տարի կենտրոնացված էին տաճարի արևելյան կողմի քառակուսիներում։ Այդտեղ պեղվեցին i գծի—5-ից մինչև—8, j գծի—6-ից մինչև—9, k գծի—6-ից մինչև 8, ինչպես նաև մի քանի քառակուսիներ—b,—g և—c գծերի վրա։ Պեղումների ընթացքում ի հայտ եկան վերին աստիճանի հետաքրքիր առարկաներ՝ հայերեն արձանագրություններ, թևավոր մի խաչ, արաբական դրամների գանձ և այլն։ Արձանագրությունները եր-

կու հնագույն եռանիստ տապանաքարերի վրա են և հավանաբար պատկանում են 6-րդ դարի երկրորդ կեսին, իսկ Թեոդոր խաչը նույն ժամանակին պատկանող մահարձանի գլխին է եղել դրված։

Նկ. 42. Թաղակապ քարաշեն շենքի ավերակները քաղաքի կենտրոնական թաղի արևմտյան մասում

Պեղումները կատարել են՝ տեղամասի ղեկավար ճարտարապետ Գր. Քոչոյանը, քառակուսու ղեկավարներ՝ պատմ. գիտ. թեկնածու Վ. Աբրահամյանը և ավ. լաբորանտ Մ. Վահանյանը։

Պեղումների վերջին շաբաթում հետազոտվեց նաև ստորին բերդի հարավային մուտքի շրջապատը, որտեղ ի հայտ եկած կրաշաղախի մեծ բեկորները ցույց են տալիս մեծազանգված բուրգերի գոյությունն այդ տեղում։ Պեղումները պարզեցին, որ այդտեղ ևս, հենց մուտքի բացվածքի մեջ, բնակվել են հավանաբար արդեն գյուղացի դարձած հին քաղաքի բնակիչների վերջին ժառանգորդները։

Միջնաբերդում գտնված բազմաթիվ առարկաներից կնշենք այստեղ միայն երկուսը. դրանցից մեկը երկաթե ուրագն է, որ գտնվեց նկուղի մեջ կիսապատրաստ վիճակում, իսկ մյուսը՝ երկաթե մկրատը, որ ի հայտ եկավ Ա սենյակի խորացման աշխատանքների ժամանակ, մոտ 6 մետր խորության մեջ։

Գեղածո ուրագ ընդհանրապես չէր գտնըվել որևէ տեղում։ Այդ տեսակետով էլ խիստ ուշագրավ է ուրագի գործածությունը հին Դվինում։

1949 թվականի պեղումները.— *1949 թվականի ծրագրի մեջ կարևոր տեղ էին բռնում միջնաբերդի ստորին շերտի և չորրորդ տեղամասի պեղումները։ Բացի այդ, զգալի աշխատանք կատարվեց կաթողիկե եկեղեցու շրջապատում և ներսում՝ տաճարի հին և ուշ ժամանակների մասերը պարզելու նպատակով։*

Միջնաբերդի գագաթին *նախորդ տարվա պեղումների տեղում և մի քանի այլ կետերում շարունակվեցին խորացման աշխատանքները, որոնք հետզհետե ընդարձակվելով, վերջիվերջո ընդգրկեցին բլուրի գագաթի ամբողջ լայնքը՝ հարավից դեպի հյուսիս, բայց հյուսիսային մասն ավելի խորացվեց, քան թե հարավայինը։ Այստեղ նախորդ տարիների պեղումների տակ, մոտ մեկ և կես մետր խորության մեջ բացվեց կանոնավոր շարվածքով հում աղյուսե պատեր ունեցող մի շենք, որն իր մի շարք բաժանումներով տարածվում է պեղված տեղամասից ինչպես դեպի արևելք, այնպես էլ դեպի արևմուտք։ Այդ բանից*

պետք է եզրակացնել, որ մոտավորապես շենքի կենտրոնական մասին ենք հանդիպել։ Այդ շենքի հյուսիսային ծայրը, ըստ երևույթին, մինչև բլրի լանջը չի հասնում, այլ վերջանում է մոտավորապես միջնաբերդի գագաթի հարթության եզրից 10—15 մետր հեռավորության վրա։



Նկ. 43. Հատակագիծ՝ 1948 թվականի ամռան ամիսներին կատարված միջնաբերդի արևմտյան մասի պեղումների։
Չափագրություն Լ. Սաղոյանի

Բլրի սկզբնական մակերեսից մոտ ութը մետր խորության մեջ երևացին հասարակ քարից կազմած պատերի մնացորդներ, որոնց տակ ի հայտ եկան փայտե սյան երկու փոքրիկ խարիսխներ՝ տեղական սպիտակավուն ավազաքարից, իսկ ավելի խորքում, այդ սյան խարիսխներից մոտ մի մետր ցածր, բացվեցին կարմրավուն տուֆ քարից կազմված գետնուղու մնացորդներ, որոնք ուղղված են դեպի բլրի հյուսիսային կողմը։ Այս փորվածքների մեջ, հողի կտրըվածքում, պարզ երևում են տարբեր բարձրության վրա գտնվող երեք առանձին մոխրաշերտեր, որոնք այդտեղ ընդգրկում են շատ ընդարձակ տարածություն և անշուշտ գոյացել են շենքերի հրդեհումից։ Այդ հրդեհներից մեկը վերաբերում է աղյուսե շենքին, որի ծածկի փլվածքն ուրվագծվում է շերտի կտրվածքի մեջ, երկրորդ մոխրաշերտը, որ ավելի խորն է, համընկնում է հասարակ դետաքարերից շինած շենքին, իսկ երրորդը, գտնվում է փայտե սյուներ ունեցող խարսխի տակ, ուրեմն պատկանում է ավելի հին շերտի, քան մեր բաց արածները։ Նշանակում է, պեղումները շարունակելու դեպքում, այդ սյունազարդ շենքի տակ էլ հանդես է գալու հրդեհով կործանված մի ավելի հին շինության մնացորդ։ Այստեղ անհրաժեշտ է խորացնել պեղումները, որովհետև այդ մեծ, մոտ 10 մետր հաստություն ունեցող հողաշերտի վերին և ստորին մասերում գտնվող առարկաների տարբերությունը այնքան չնչին է, որ եթե դատելու լինենք միայն գյուտերի հիման վրա, ապա ամբողջ այդ հաստ շերտը 9—10-րդ դարերից այն կողմը չենք կարող տանել։ Այդ պատճառով էլ պետք է խորացվեն պեղումները, որպեսզի կամ ապացուցվի, որ իրոք կարճ ժամանակամիջոցում միջնաբերդում գոյացել է այդքան մեծ շերտ և կամ պարզվի, որ վաղ միջնադարի իրերը մենք մինչև այժմ վերագրում ենք ավելի ուշ ժամանակների։

Միջնաբերդի խորացրած մասերում գտնվող առարկաների բնույթը թեև չի փոփոխվում, բայց քանակը զգալի չափով մեծանում է։ ԺԱ սենյակում գտնվեց դարբնի մի քուրա, որ կազմված էր 3 քարերից և երկաթե առարկաների ու ձուլվածքների մեծ կույտից։ Այդ դարբնոցը գետնի մակերեսից 2,5 մետր խորության մեջ էր գտնըվում և վերաբերում էր կամ վերին շերտի նկուղային որևէ հարկի և կամ հում աղյուսե շենքի ժամանակներին։ Այդ դարբնոցի ժամանակն ավելի ճիշտ որոշելու միջոց չկա՝ վայրը փլատակվելու պատճառով, թե-



Նկ. 44. Հատակաձև՝ 1947 և 1948 թվականների աշնան ամիսներին կատարված միջնաբերդի պեղումների: Չափագրություն Գր. Քոչոյանի

պետ այդ բանը տվյալ դեպքում այնքան էլ կարևոր չէ, որովհետև այդ երկու շերտերն էլ ուշ ժամանակների և իրարից ոչ այնքան տարբեր դարերի արդյունք են։ Միջնաբերդում գարբնի արհեստանոցի գոյությունը զարմանալի չէ, որովհետև հնում համար արդեն սովորական դարձած նետերի սլաքներից, դաշույններից, նիզակի ու տեգի ծայրերից, կային նաև երկու տարբեր մեծության գետաքարերի կույտեր, մեծերը, գրեթե միջակ ձմերուկի չափ են, մոտ 20—25 սմ տրամագծով, իսկ փոքրերը՝ հավի

Նկ. 45. Միջնաբերդի ստորին շերտում բացված սյունազարդ սրահի ավերակները

սովորություն էր նույնիսկ պալատներին կից ունենալ սեփական արհեստանոցներ[1]։

Հում աղյուսե շենքի շերտում հանդիպեցին մեծ քանակությամբ կենդանիների և թռչունների ոսկորներ, որոնք հավանաբար արդյունք են խոհանոցային թափթփուկների։ Այստեղ գտնվեցին նաև զենքի տարբեր տեսակներ, որոնց մեջ, բացի Դվինի ձվից մի քիչ ավելի փոքր։ Այդ մեծերը ըմբաքարեր են լծակավոր գործիքի միջոցով թշնամու վրա նետվող, իսկ փոքրերը ձեռքի սովորական պարսատիկով թշնամու վրա նետվող պարսաքարեր։ Այդ քարե զենքերի կույտերը պատերի տակ թափվել են հավանաբար պատերազմի ժամանակ՝ պատերը քանդվելու պատճառով։

Աղյուսե շինության մեջ ի հայտ եկան մեծ քանակությամբ գյուղատնտեսական մթերքների թափթփուկներ։ Բացի Դվինի համար սովորական դարձած ցորենի և կորեկի պաշարներից, այնտեղ գտնվեցին նաև խաղողի, ձմերուկի, սալորի կորիզներ և կաղնի կճեպ, նույն տեղում գտնվեցին երկանքի բեկոր, սանդաքար և կենդանիների ու թռչունների բազմաթիվ ոսկորներ։

Գտնված առարկաների մեջ առանձնապես կարևոր են թռչնի ոտի ոսկրից շինած հինգ անցք ունեցող շվին, որ դուրս

[1] Նույն երևույթը եղել է ամենուրեք։ Հին Կիևի ուսումնասիրող Մ. Կ. Կարգերն իր հաշվետվության մեջ գրում է. «Պետք է ասել, որ հարյուր տարուց ավելի առաջ սկսված և մինչև վերջերս հաջողությամբ շարունակվող Կիևի ամենաարիստոկրատիկ կենտրոնական թաղի պեղումներն անգամ, հնարավորություն տվին վկայելու, որ իշխանական շքեղ ապարանքներից և շատ հարստությամբ փայլող Դեսյատիննայա եկեղեցուց մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա տեղավորվել են իշխանական խոլոպների (ճորտերի) գետնափոր փոքրիկ արհեստանոցները»։ М. К. Каргер, Археологические исследования древнего Киева. Отчеты и материалы (1938—1947 гг) Киев, 1950 г., стр. 6.

եկավ Դ սենյակի պեղումներից։ Այստեղ գտնվեց նաև մի ավելի փոքր շիլ՝ դարձյալ ոսկրից։ Դ սենյակի խորացման տեղում դուրս եկավ ոսկե մատանի՝ փիրուզյա ակով և միրան սևագույն նախշերով, իսկ ԺԲ սենյակի հորում գտնվեց բյուզանդական զոդավոր մի ոսկեդրամ որ պատկանում է

թասցորդներ, որտեղ է հայտ եկան հաստարակ քարե հիմնապատերով կացարանի հետքեր՝ կարասների, ազորիքների, սանտիտառների մի քանի թասցորդներով հանդերձ, իսկ տաճարի հյուսիս արևելյան մասում բացվեցին նախաքրիստոնեական շրջանի համար բնորոշ հաստ և մեծ շիկա-

Նկ. 46. Միջնաբերդի ներքին շերտի պեղումների ընդհանուր տեսարանը 1949 թվականին

Ռոմանոս 4-րդ կայսեր և որդիներին (1067—1070)։ Պեղումների ընթացքում գտնվեցին նաև ապակյա զարդարուն երկու թասեր, համարյա թե ամբողջական վիճակում, որոնք իրենց վրա ունեն վերադիր զարդաթելեր։ Այստեղ ի հայտ եկան նաև մի քանի հախճապակյա անոթներ, որոնք կարող են տեղական արտադրության լավագույն նմուշները համարվել։

Պեղումները կատարել են՝ տեղամասի ղեկավար, պատմ. գիտ. թեկնածու Հ. Մնացականյանը, բաժնակուսու ղեկավարներ՝ ավ. լաբորանտ Ն. Թորամանյանը, ավ. լաբորանտ Լ. Կարապետյանը և ասպիրանտ Ռ. Մուշեղյանը։

Քաղաքի կենտրոնական թաղում կաթողիկե եկեղեցու շուրջը կատարվող պեղումների միջոցով վերջնականապես պարզվեց կաթողիկե եկեղեցու ձևափոխումների հարցը։ Տաճարի հիմքերի տակ բացվեցին մեր թվականությունից առաջ առաջին հազարամյակի կեսերին պատկանող բնակավայրի գույն աղյուսների փլվածքներ, որոնք նախօրոք մեզ ծանոթ էին Հայաստանում՝ Կարմիր բլուրի ուրարտական ամրոցի և Վրաստանում՝ Արմազիի ավելի ուշ շրջանի պեղումներից։ Պարզ է, որ այստեղ մենք գործ ունենք նախաքրիստոնեական շրջանի առաջին հազարամյակին վերաբերող մի մեծ, հավանաբար պետական շինության հետ, ինչպիսիք բացվել են Արինբերդում կամ Կարմիր բլուրում, բայց այդ հարցն առայժմ դուրս լինելով մեր ծրագրից, պեղումները չխորացրինք այդ կետում։

Կաթողիկե եկեղեցու պեղումների միջոցին, եկեղեցու հատակից մոտ մեկ մետր խորության մեջ, մի քանի տեղերում դուրս եկան մարդկանց խառն ի խուռն իրար վրա թափված բազմաթիվ ոսկորներ, որ, ըստ երևույթին արդյունք է որևէ աղետի, բայց թե ինչ ժամանակի է պատկանում դա, դժվար է որոշակի բան ասել, մանավանդ որ, կաթողիկե եկեղեցու մեջ թաղված բազմու-

Նկ. 47. Միջնաբերդի հյուսիսային մասի ստորին շերտերի պեղումները 1949 թվականին

Նկ. 48. Կաթողիկե եկեղեցու հարավային կողմի պեղումները 1949 թվականին

Նկ. 49. Կաթողիկե եկեղեցու արևմտյան կողմի սյունազարդ սրահի հիմնապատերը

թյան մասին չունենք որևէ գրավոր հիշատակություն։ Այսպիսի դեպք մեզ հայտնի է ս. Սարգիս եկեղեցու մասին, որն ըստ պատմագիրների կառուցվել է հրդեհված մատուռի փոխարեն Ներսես Տայեցի կաթողիկոսը 7-րդ դարի կեսերին և այնտեղ ամփոփել սրբերի առաջին արշավանքի ժամանակ Դվինում սպանված մարդկանց գլխակները[1]։

Նկ. 50. Ուրարտական ժամանակներին պատկանող կացարանի մնացորդներ կաթողիկե եկեղեցու հիմնապատերի տակ

Պեղումները կատարել են՝ տեղամասի ղեկավար պատմ. գիտ. թեկնածու Ա. Շահնազարյանը, քառակուսու ղեկավարներ՝ պատմ. գիտ. թեկնածու Վ. Աբրահամյանը և ավ. լաբորանտ Մ. Վահանյանը։

Չորրորդ տեղամասի սիստեմատիկ պեղումների մասին դեռևս վաղաժամ ենք համարում վճռական կարծիք հայտնել, քանի որ շենքի միայն մի փոքր մասն է բացված առայժմ, բայց երևացող բոլոր նշաններից կարելի է եզրակացնել, որ այստեղ բացվում է մինչև այժմ մեզ անծանոթ մի շենք, որ կենցաղային մնացորդներ չունի։ Այդ պատճառով էլ նա ամենայն հավանականությամբ հասարակական որևէ շինություն է՝ պաշտոնատուն կամ հասարակական այլ շենք։

Պեղումները կատարել են պատմ. գիտ. թեկնածու Հ. Մնացականյանը և ասպիրանտ Ի. Մուշեղյանը։

1950 թվականի պեղումները.— *1950 թվականին պեղումները դարձյալ կենտրոնացվեցին նույն երկու կետերում՝ ա) Միջնաբերդի գագաթին, որտեղ շարունակվեցին խորացման աշխատանքները հնագիտական ավելի հին շերտերի մեջ և բ) քաղաքի կենտրոնական թաղում, որտեղ հետազոտվեցին դեռևս 1938 թվականին մասամբ հայտնի դարձած ջրամատակարարման երկու սիստեմները, պեղվեցին նախաքրիստոնեական շրջանի մի քանի դամբարաններ, հայտնաբերվեցին 5-րդ և 7-րդ դարերին պատկանող ճարտարապետական և գերեզմանական քանդակազարդ կոթողներ և մաքրվեց միանավ բազիլիկ տաճարի հյուսիսային ավանդատունը։*

Միջնաբերդի գագաթին *պեղումները սկսվեցին անցյալ տարվա խորացումների շարունակության վրա, դեպի արևելք և դեպի հարավ։ Այստեղ, նախ՝ շարունակվեցին նախորդ տարվանից թերավարտ մնացած 12-րդ սենյակի պեղումները, որից հետո, հաջորդաբար խորացվեցին պեղումները 11 այլ սենյակների մեջ՝ 13-րդից սկսած մինչև 23-րդը, ըստ որում 22 և 23-րդ սենյակները տեղավորված էին բլուրի հարավային կողմում, գրեթե նրա լանջի վրա։ Այդպիսով, 1950 թվականի պեղումների շնորհիվ բացվեցին դեռևս նախորդ տարվանից հայտնի դարձած հում աղյուսե շենքի մի քանի բաժանմունքները, բայց դրանով շենքը դեռևս լրիվ կերպով չբացվեց։ Բլրի հարավային կողմում աղյուսե շինության*

Նկ. 51. Կաթողիկե եկեղեցու հյուսիսային կողմի դուրս շեշտված աբսիդի (Բ) և հնագույն եռանավ բազիլիկի հիմնապատերի (Ա) միացման կետը, որտեղ երևում է աբսիդի հիմնապատերի հետնագույն հավելված լինելը եռանավ բազիլիկի ուղիղ շարունակվող քարաշար հիմքերի կողքին

---

1 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց։ Տիփլիս, 1912, էջ 83։ Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց։ Վաղարշապատ, 1893, էջ 83։ Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, ի Վենետիկ՝ 1862, էջ 67։

Թաղարդները լավ չեն պահպանվել այդ մասում եղած մեծ փլատակումների հետևանքով, որոնք առաջ են եկել պատերազմների կամ երկրաշարժների պատճառով։

Աղյուսե շենքի մեջ և նրանից ավելի խոր շերտերում, բացվեցին բազմաթիվ հորեր։ Միայն 18-րդ սենյակում բացվեց 6 հոր, 16-րդում՝ 4 հոր, 19 և 20-րդում՝ 2-ական հոր և այլն։

Ամենից շատ հնագիտական առարկաներ դուրս եկան 18-րդ սենյակի հորերից։ Բավական է նշել, որ 1950 թվականի պեղումների ընթացքում գտնված 180 հնագիտական առարկաներից 63-ը ստացվել է 18-րդ սենյակից։ Այդտեղի հորերից 2-ը կատարյալ պահեստներ էին կոտրատված վիճակում պահպանված թանկարժեք առարկաների։ Այդ հորերից դուրս եկան մի քանի նախճապակյա սափորիկներ, մի քանի թասեր, ափսեներ, շողյուն արտաքինով տեղական արտադրության մի նախճապակյա սափորիկ և մի կապտավուն նախճապակյա թաս, վրան վերջնարակային սևագույն նախշերով և կնոջ պատկերով զարդարած։ Նույն տեղում գտնվեցին բազմագույն ջնարակով զարդարված կավե ջրեղաններ, ափսեներ, թասեր, ձիթաճրագներ, կարմիր ներկով պատած կավե մի նուրբ սափորիկ, երկաթե դանակներ, նիզականման զենք, երկաթե գամեր, դրոշմազարդ ոսկե առարկա, պղնձե կոճակներ և այլն։ Այս հորերից մեկում գտնվեց թոնրի ջնարակած փորագիր մի խուփ, որ առաջին անգամ է պատահում Հայաստանում։ Այդ գյուտը ցույց է տալիս, որ պալատական շենքերի մեջ թոնիրն ունեցել է արտաքին վայելուչ տեսք և թանկարժեք թոնրախուփ։ Այդտեղ գտնվեց նաև տեղական շողյուն նախճապակյա արտադրության լավագույն նմուշներից մեկը՝ սպիտակ ջնարակով ծածկված գեղեցիկ մի սափոր, որն ունի վերջնարակային շողյուն զարդարանքներ։ Միջնաբերդի մյուս տեղերից գտնված առարկաների մեջ առանձնապես հետաքրքրական է 16-րդ սենյակի 2-րդ հորից գտնված տեղական արտադրության նախճապակյա կապտավուն թասը, որի վրա կան մետաղական փայլով շագանակագույն վերջնարակային զարդարանքներ։ Այդ զարդարանքների կենտրոնում ընկած են 4 թռչունների գեղեցիկ պատկերներ։ Մետաղե առարկաների մեջ հետաքրքիր է նույն հորում գտնված ոսկե ցանցկեն

Նկ. 52. Չորրորդ տեղամասի պեղումները քաղաքի հարավային կողմերում

(աժուր) կրծքաքարդը, որի ակն ընկած է։ Կան նաև ջնարակած կերամիկայի և պղնձե իրերի արժեքավոր նմուշներ։

Սակայն, միջնաբերդում գտնված առարկաների մեջ բացառիկ տեղ են գրավում կիսաթափանցիկ սպիտակ հախճապակյա երկու թասերը, որոնցից մեկն իր նուրբ քան-

1. Քաղաքի կենտրոնական թաղից դեպի բերդը տանող մուտքի շրջապատում, որտեղ մաքրվեց 350 քառակուսի մետր տարածություն։

2. Կաթողիկե եկեղեցուց դեպի հարավ ընկնող տեղամասում, որտեղ մեջընդմեջ փորվեց 6 քառակուսի +a գծի վրա և 3

Նկ. 53. Քաղաքի կենտրոնական թաղից դեպի բերդը տանող մուտքի մեջ 1938 և 1950 թվականներին ուսումնասիրված ջրատար խողովակների երկու գծերը

դակներով այդ տիպի խեցեղենի մեջ լավագույն օրինակը կարող է համարվել։

Ի միջի այլոց, այս կերամիկան գտնըվել է միայն Հայաստանում՝ մի քանի բեկորներ Անիում և մի քանի ամբողջական անոթներ էլ Դվինում։

Միջնաբերդի աղյուսե շենքը դեռ լրիվ բացված չէ։ Նրա մասին հանգամանորեն կխոսենք պեղումների ամփոփումից հետո։

Պեղումները կատարել են՝ տեղամասի ղեկավար պատմ. գիտ. թեկնածու Հ. Մնացականյանը և քառակուսիների ղեկավարներ՝ ավագ լաբորանտներ Մ. Վահանյանը և Ն. Թորամանյանը։

Քաղաքի կենտրոնական թաղում *պեղումները կատարվեցին երեք տարբեր կետերում.*

իրար կողքի գտնվող քառակուսիներ +b գծի վրա, ընդամենը 225 քմ տարածությամբ։

3. Միանավ բազիլիկ տաճարի հյուսիսային կողմն ամբողջ երկարությամբ և նրա արևելյան կողմերը k-ից մինչև o գիծը, ընդամենը 24 քառակուսի, 600 քմ մակերեսով։

Այսպիսով, 1950 թվականին քաղաքի կենտրոնական թաղում պեղվել է ընդամենը 1175 քառակուսի մետր մակերես։

1. Բերդի մուտքի մոտ պեղումների մեջ ամենից հետաքրքիրը ջրամատակարարման երկու սիստեմների հետազոտությունն էր, որոնց հատվածների մի մասը, բերդի մուտքի բացվածքի հենց միջին, հայտնի էին դարձել դեռևս 1938 թվականի պե-



Նկ. 64. Հատակաձև՝ քաղաքի կենտրոնական թաղամասում պեղված երկու աղբյուրների և նրանց ջրատար գծերի։
Չափագրությունն Գր. Քոչոյանի

դումների ժամանակ, իսկ այս տարի այդ երկու սիստեմներն ուսումնասիրվեցին մինչև իրենց վերջավորությունը։ Այդտեղ պարզվեց, որ փողրակներով ջուրը հոսել է ստորին բերդից դեպի կենտրոնական թաղը՝ անցնելով բերդի կամուրջի վրայով։

Ջրամատակարարման այդ երկու գծերը քաղաքի կենտրոնական թաղին տվել են խմելու մաքուր ջուր։ Այդ բանը երևում է նրանից, որ փողրակների երկու շարքն էլ կաթողիկե եկեղեցու արևելյան մասում վերջանում են աղբյուրով։ Այդտեղ փողրակները գալիս են մտնում մի քառակուսի քարի մեջ և նրանց միջով բարձրանում դեպի վեր, մոտավորապես կես մետրի չափ ու այնտեղից դուրս թափվում, հավանաբար նախորդ քարերի վրա ուղղահայաց դիրքով դրված մի այլ քարի անցքից, ինչպես սովորություն էր հնում։

Միջնադարյան բերդերը սովորաբար ունենում էին ջրատար մի քանի սիստեմներ, եթե այդ հնարավոր էր, որպեսզի մեկն ու մեկը փչանալու կամ թշնամու ձեռքով ոչնչանալու դեպքում բերդի բնակիչներն առանց ջրի չմնան։ Հաճախ, երբ բերդն ունենում էր ջրատար խողովակների միայն մի սիստեմ, այդ դեպքում էլ, բերդի մոտ ջուրը երկու մասի էր բաժանվում և երկու տարբեր տեղերից ներս հոսում։ Բայց Դվինում, կարծում ենք, որ այդպես չի եղել, որովհետև հայտնագործված երկու գծերն էլ միևնույն կամրջով են անցել և միևնույն տեղում էլ վերջացել։

Այդ հանգամանքը ցույց է տալիս, որ փողրակների մի սիստեմը ավերվելուց հետո գիծը նորոգել են և նոր աղբյուր չինել հնի մոտ։ Մեզ թվում է, որ 1899 թվականին, ստորին բերդի հարավային պարսպի մեջ ակադ. Ն. Մառի բաց արած երկու շարք փողրակները հենց այս աղբյուրներին են վերաբերում, որովհետև այնտեղ էլ, ինչպես նկարագրել է ակադ. Մառն իր հաշվետվության մեջ, մեկը մյուսից մի քիչ խոր վիճակում հանդես են եկել երկու տարբեր շարքերով։ Այս մեր ենթադրությունն ավելի հավանական է դառնում, երբ նկատի ենք առնում այն հանգամանքը, որ բերդի այդ կողմերում պարսպից դուրս եկող խողովակները որևէ այլ տեղ չէին կարող գնալ։

Քաղաքի կենտրոնական թաղում բացված ջրատար խողովակների երկու շարքերի մեջ էլ փողրակները մեկը մյուսին հագցրած էին ամուր կրային շաղախով, որպեսզի նրանց միացման տեղից ջուրը դուրս չհոսի։ Դրա շնորհիվ էլ կառուցողները կարողացել են ջուրը տանել երկրի խորդուբորդ մակերեսին զուգահեռ, որով ստիպել են հոսող ջրին որոշ տեղերում իջնել և որոշ տեղերում էլ բարձրանալ այն հաշվով, որ ջրի հոսանքի սկզբնական կետն ընդհանուր առմամբ բարձր լինի բոլոր մնացած կետերից, որպեսզի ինքնամղման ուժի շնորհիվ ջուրն առաջ շարժվի և դուրս հոսի խողովակի վերջավորությունից։

Մի շարք տարիների ընթացքում կատարված սիստեմատիկ և հետախուզական պեղումների ժամանակ, այստեղ ու այնտեղ ի հայտ եկած գյուտերի հիման վրա եկել ենք այն եզրակացության, որ Դվինի խմելու ջրի գծերը կենտրոնական թաղում պատկանում են քաղաքի զարգացման վաղ շրջանին, այսինքն՝ Արշակունի թագավորներին կամ մարզպանների իշխանության ժամանակներին, բայց, պարզ է, որ այդ գծերը հետագայում որոշ նորոգությունների և փոփոխությունների են ենթարկվել։ Մատենագրական տեղեկություններից գիտենք, որ Դվինը 6-րդ դարում հայտնի է եղել իր լավորակ ջրով, բայց քանի որ տեղում ջուր չկա, նշանակում է, այդ ջուրը բերված է եղել Գառնիից։ 6-րդ դարի հույն հեղինակ Պրոկոպիոս Կեսարացին գրում է.

«Դուվին (Դվինը) շատ արգավանդ երկիր է, ունի բարենպաստ օդ և լավ ջուր»[1]։

Հասկանալի է, որ այստեղ խոսքը խմելու լավորակ ջրի մասին է։

2. Կաթողիկե եկեղեցու հարավային կողմում որևէ շինություն չբացվեց։ Հավանաբար այդ մասում լայն փողոց կամ հրապարակ է եղել։ Սակայն, պեղվող քառակուսիներից մեկում (—14+b) գտնվեցին կաթողիկե եկեղեցու վրայից ընկած մի քանի ճարտարապետական քանդակազարդ բեկորներ, որոնք կարևոր նշանակություն ունեն տաճարի վերակազմության մանրամասնությունները ճշտելու համար։

---

[1] Прокопия Кесарийского, История войн Римлян с персами, перевод С. Дестуниса, книга вторая, СПБ. 1880, стр. 181.



Նկ. 35. Կաթողիկե եկեղեցու քանդակազարդ բեկորներ, գտնված 1950 թվականին։
Չափագրությունը Գր. Քոչոյանի

Մեր կարծիքով այդտեղ գտնված բոլոր բեկորներն էլ վերաբերում են տաճարի վերջին վերակառուցմանը, որովհետև նրանք բոլորն էլ 7-րդ դարի կնիքն են կրում։ Այդ բեկորները ներկայացրել ենք № 55 նկարի մեջ։ Պեղման վերջին օրերին, —9+a քառակուսու մեջ բացվեց թևավոր մի մեծ խաչ, որը դեռևս իր կանգուն ժամանակ կոտրված է

Նկ. 56. Կարասյա թաղում, գտնված միանավ բազիլիկ եկեղեցու արևելյան կողմում

եղել և նորոգված՝ կոտրված տեղերի մեջ խրած երկաթե ձողերով։ Այս խաչը մինչև այժմ մեզ հայտնի եղածների մեջ ամենամեծ և ամենալրիվ օրինակն է։ Նա ունի երկու մետրից ավելի բարձրություն, չհաշված պատվանդանը և գրեթե ամբողջական է։

Միանավ բազիլիկ տաճարի արևելյան կողմում բացվեցին մեր թվականության առաջին երկու դարերին վերաբերող կարասյա երկու թաղումներ։ Այդ կարասներից մեկի մեջ գտնվեցին բազմաթիվ ուլունքներ (սերդոլիկ, ակատ, ապակի), երկու կնիք՝ մեկը սերդոլիկից, մյուսը կանաչավուն քարից։ Սերդոլիկի կնիքն իր վրա ունի նիզակով միմյանց դեմ մարտնչող երկու հետևակ զինվորի պատկեր, իսկ կանաչավունի վրա մի հեծյալ զինվոր նիզակով կռվում է իր դեմ կանգնած հետևակի հետ (Նկ. № 57)։

Այս տիպի կնիքները սովորական են 1-ին և 2-րդ դարի դամբարաններում, թեև պատահական գյուտերից բացի, այդպիսի կնիքների քիչ օրինակներ կան պահված մեր թանգարանում, որոնք գտնվել են պեղումների ժամանակ։

Այդ նույն դամբարանում գտնվեցին նաև մի զույգ արծաթյա օղակաձև ականջօղեր և պղնձյա մի մեծ գնդասեղ։ Ականջօղերն իրենց կենտրոնում ունեին սրածայր կաթնագույն կիսաթափանցիկ օնիքսանման քարեր, հավանաբար ակատ, որոնք ցցված են դեպի օղակի ներսը։

Երկրորդ դամբարանն էլ ճիշտ նույնպիսի իրեր ուներ։ Այդտեղ ևս գտնվեցին նույնանման ուլունքներ, նույնպիսի ականջօղեր և գնդասեղ, բայց կնիքներ չկային[1] (Նկ. № 58)։

Այս դամբարանների գյուտը դարձյալ ապացույց է այն բանի, որ մեր թվականության առաջին և երկրորդ դարերում քաղաքի կենտրոնական թաղի տարածությունը բերդի բնակիչների համար ծառայել է իբրև գերեզմանոց։ Մյուս կողմից էլ ցույց է տալիս, որ Դվինի բերդը հնում գոյություն է ունեցել իբրև բնակատեղի կամ ամրոց։

Պեղումները կատարել են տեղամասի ղեկավար՝ ճարտարապետ Գր. Քոչոյանը, և քառակուսիների ղեկավարներ՝ պատմ. գիտ. թեկնածու Վ. Աբրահամյանը, ավ. լաբորանտ՝ Լ. Կարապետյանը և փորձառու ուսանողներ Ս. Ետայանը և Ս. Կարապետյանը։

Այսպիսով, 1937—1939 և 1946—1950 թվականների ընթացքում կատարված պեղման աշխատանքների շնորհիվ, ինչպես տեսանք, միջնաբերդի գագաթին լիակատար կերպով բաց է արված 9—13-րդ դարերին պատկանող պալատական շենքը և այնուհետև ձեռնարկվել են ավելի խորքում հին Դվինի իշխողների պալատական շենքերի հայտաբերման աշխատանքները, որոնք դեռևս չեն ավարտված։ Ստորին բերդում առայժմ կատարված են միայն հետախուզական պեղումներ՝ պարզելու համար այդ տեղամասի ինչ լինելը։ Քաղաքի կենտրոնական թաղի կեսից ավելին բացված է և մյուս կեսում էլ աշխատանքները շարունակվում են։ 3-րդ, 4-րդ և 5-րդ տեղամասերում կատարված են հետախուզական աշխատանքներ և ձեռնարկված է 4-րդ տեղամասի սիստեմատիկ պեղումները։ Բացի այդ, մանր պեղում-

[1] *1950 թվականին Դառնիում բացված դամբարաններում ևս գտնվել են նման կնիքներ։*



Նկ. 57. Առաջին կարասյա թաղման միջից դուրս եկած հնագիտական առարկաներ.— ա. պղնձե ականջօղ, բ. երկրորդ ականջօղ քարե կախիկով, գ. կնիք, վրան միմյանց դեմ նիզակով մարտնչող երկու հետևակ զինվորներ, դ. կնիք, հեծյալի և հետևակի մենամարտի պատկերով, ե. պղնձե շքասեղ, զ. է. ը. ուլունքներ (սերդոլիկ, ապակի, ակատ), թ. պղնձե գմբեթաձև կոճակ։

Նկար Առաքել Պատրիկի



Նկ. 58. Երկրորդ կարասյա թաղման միջից դուրս եկած հնագիտական առարկաներ.— ա. ե. զ. ուլունքներ և կախիկներ սերդոլիկից, ապակուց, ակատից և այլ քարերից, բ. և գ. պղնձե ականջօղեր քարե կախիկով, դ. պղնձե շքասեղ։

Նկար Առաքել Պատրիկի

Նկ. 59. Կաթողիկե եկեղեցու պեղումները 1939 թվականին

ներ են կատարվել մի շարք այլ տեղերում և հետազոտվել են քաղաքի հեռավոր կետերը՝ հին քաղաքի սահմանները որոշելու նպատակով։

Մնում է կատարել հետագա տարիներին.

1. Միջնաբերդի ստորին շերտերի լիակատար հետազոտությունը՝ գլխավորապես Արշակունի հայ թագավորների և մարզպանների պալատների մնացորդներն ուսումնասիրելու նպատակով։

2. Ստորին բերդի տարածության վրա որոշ կետերում մասնակի պեղումներ, ստորին բերդի նշանակությունը պարզելու նպատակով։

3. Քաղաքի արհեստավորական թաղերից մի քանիսի պեղումները։

4. Քաղաքի կենտրոնական թաղի մնացած մասի պեղումները։

5. Զորրորդ տեղամասի մոնումենտալ շինության պեղումները։

Մեզ թվում է, որ այդ աշխատանքները կատարելուց հետո մենք ամփոփ և ճիշտ տեղեկություններ կունենանք միջնադարյան Հայաստանի այս խոշոր քաղաքի մասին։



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՔԱՂԱՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

Դվինում, ինչպես արդեն ասել ենք, գետնի երեսին ոչ մի շենք չի պահպանվել, այլ ամեն ինչ ի հայտ է եկել հողի թանձր շերտի տակից պեղումների միջոցով։ Սակայն, բոլոր ի հայտ եկած շենքերի ավերակները դեռևս չնչին մասն են կազմում մի այնպիսի խոշոր քաղաքի, ինչպիսին եղել է միջնադարյան Դվինը, մանավանդ որ, քաղաքի ավերակները բազմաշերտ են և մենք միևնույն վայրի մի քանի շերտերին ծանոթ չենք դեռևս։ Հետևապես մեր դատողությունները Դվինի ճարտարապետության մասին, որոնք արդյունք են արդեն բացված մի քանի շենքերի ուսումնասիրության, շատ հեռու են վերջնական կամ ավելի լավ է ասել, ամբողջական լինելուց։ Սակայն, քանի որ մեր պեղած շենքերից շատերը հանդիսացել են Դվինի շեն ժամանակվա առավել աչքի ընկնող ճարտարապետական կառուցվածքները, այդ իսկ պատճառով նրանց ուսումնասիրությունն ընդհանուր հասկացողություն կտա միջնադարյան այդ մեծ քաղաքի ճարտարապետության մասին, թեև այս հարցում մեզ մեծ չափով խանգարում է այն հանգամանքը, որ շենքերից պահպանվել են միայն նրանց հիմնապատերն ու առանձին բեկորներ, որոնք շատ դեպքում, հնարավորություն չեն տալիս նույնիսկ նրանց ընդհանուր ձևերի մասին հիմնավորված որոշ եզրակացության հանգելու։ Այդ պատճառով, կառուցված շենքերի մասին խոսելիս, մենք ստիպված ենք հաճախ լայն չափով կիրառել համեմատական մեթոդը, որպեսզի տարբեր վայրերի նմանօրինակ կառուցվածքների միջոցով վերակազմենք Դվինի շինությունների ընդհանուր պատկերը։

Դվինի ճարտարապետական կառուցվածքները մեծ արժեք են ներկայացնում հայկական պատմական ճարտարապետության համար, որովհետև ոչ մի տեղ դեռևս հայկական ճարտարապետական հուշարձանները պեղման միջոցով այնքան մանրամասն հետազոտման չեն ենթարկվել, ժամանակի ընթացքում իրենց կրած բազմաթիվ փոփոխություններով հանդերձ, ինչքան Դվինում, որտեղ հատուկ պեղումներ են կատարվել կառուցվածքների սկզբնական պատկերը և հետագա փոփոխությունները պարզելու նպատակով։

Դվինի ճարտարապետական կառուցվածքների կարևոր նշանակության պատճառով է, որ նույնիսկ պեղումների հաշվետվությունը լույս տեսնելուց էլ առաջ, նրա մի քանի կառուցվածքների մասին ուսումնասիրություններ են հրատարակվել այս կամ այն առիթով։ Այսպես օրինակ, կաթողիկե եկեղեցու մասին գրել են՝

1. Թորոս Թորամանյան, 1907 թվականին Խաչիկ վարդապետի պեղումների հիման վրա։ Տես «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», երկրորդ ժողովածու, Երևան, 1948 թ., էջ 159։

2. Josef Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa. Band I,1918, Wien.

3. Ն. Մ. Տոկարսկի, 1937—1939 թվական-

ների պեղումների հիման վրա, իր «Архитектура древней Армении» աշխատության 107 էջում։ Երևան, 1946 թ.։

4. Վ. Հարությունյան, հրատարակել է մի քանի անգամ, հայերեն և ռուսերեն լեզուներով — «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի (Հասարակական գիտություններ) 1947 թ., Երևան, էջ 87, «Սովետական Հայաստան» ամսագիր, 1946 թ. №6 (12)։ Դվինի 5—7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները, Հայպետհրատ, 1950 թ.։ Նյութերը հրատարակված են 1937—1939 թվականի պեղումների հիման վրա։

Կաթողիկոսի պալատը հրատարակել են իրենց վերակազմության տարբեր տարբերակներով Ն. Տոկարսկին (վերոհիշյալ աշխատության 43—47 էջերում) և Վ. Հարությունյանը։ Այդ պալատը Տոկարսկին վերագրում է 7-րդ դարի առաջին քառորդին և պալատի դահլիճն էլ համարում է սյունազարդ բակ, իսկ Վ. Հարությունյանը պալատը կառուցված է համարում նախքան 572 թվականը՝ գտնելով, որ սյունազարդ դահլիճն ունեցել է գլխատան գմբեթավոր փայտե ծածկ։

Կաթողիկե եկեղեցու մասին եղած վերոհիշյալ բոլոր աշխատություններն էլ այժմ հնացել են, որովհետև 1946—1951 թվականների պեղումները բազմաթիվ նյութեր են ի հայտ բերել տաճարի վերաշինության և նրա սկզբնական տեսքի վերաբերյալ, որոնք իսպառ հաշվի չէին կարող առնվել վերևում թվարկված աշխատությունների մեջ։

ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԱՂԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Երկրորդ տեղամաս)

Կաթողիկե եկեղեցին.—Դվինի կաթողիկե եկեղեցին հայկական ճարտարապետության հնագույն նմուշներից մեկն է, որի ավերակների մեջ երևում են նրա սկզբնական տեսքի և հետագայում կրած փոփոխությունների հետքերը։ Կաթողիկե եկեղեցու ավերակների հիման վրա կարելի է պարզել հայկական եռանավ բազիլիկ տաճարների սկզբնական տեսքը, հետագայում կրած փոփոխությունների բնույթը, հավելվածների (արտաքին սյունասրահ, ավանդատներ, կողմնային աբսիդներ) առաջացման ժամանակը և բազմաթիվ այլ խնդիրներ, որոնք օժանդակում են միջնադարյան Հայաստանի ճարտարապետության զարգացման հարցերի պարզաբանմանը։ Դվինում մինչև այժմ ի հայտ եկած հուշարձանների մեջ հնագույնը կաթողիկե մայր եկեղեցին է, որ մեր կարծիքով սկզբնապես կառուցված է եղել դեռևս հեթանոսության շրջանում իբրև մեհյան և Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հայտարարվելուց հետո վեր է ածվել եկեղեցու։

Տաճարի հիմնապատերի ներքին երեսը բաց է արել Խաչիկ վարդապետ Դադյանը 1907 թվականին, հողը կիտելով եկեղեցու մեջ։ Այնուհետև պեղման որոշ աշխատանքներ կատարվել են 1938—1939 թվականներին, իսկ հիմնովին բաց է արվել 1946—1951 թվականների պեղումների ընթացքում։

Դվինի կաթողիկեն մինչև այժմ գիտական գրականությանը հայտնի է իր վերջին տեսքով, երբ նա Թալինի մեծ տաճարի ձևն ուներ՝ իր դուրս շեշտված երկու կողմնային աբսիդներով և չորս հաստահեղույս պիլոնների վրա նստած հսկայական գմբեթով։ Ընդհանուր գծերով Թալինի տաճարին նման լինելով, Դվինի կաթողիկեն մասերի համաչափությամբ միանգամայն տարբեր է նրանից։

Թալինի տաճարի արևմտյան մասը համեմատաբար ավելի երկարավուն է, քան թե կենտրոնականն ու արևելյանը, իսկ Դվինում այդ մասերը համաչափորեն են դասավորված արևմուտքից դեպի արևելք։ Թալինում գմբեթը, ինչպես նաև կողմնային աբսիդները, տաճարի արևելյան մասում են տեղադրված և ավելի մոտ են արևելյան աբսիդին, որի շնորհիվ էլ այդ կողմի կամարներն ավելի փոքր թռիչք ունեն, քան արևմտյանները։ Դրան հակառակ, Դվինում արևմուտքից դեպի արևելք ձգվող բոլոր կամարները միմյանց հավասար են, հետևապես և գմբեթը, ինչ-

պես նաև կողմնային աբսիդները, գտնվում են եկեղեցական դահլիճի կենտրոնում և ոչ թե նրա արևելյան մասում։ Այսպիսով, տեսնում ենք, որ թեև այդ երկու տաճարները միմյանց նման են իրենց կազմության արտաքին պատկերով, բայց մասերի հարաբերությամբ զգալի կերպով տարբերվում են միմյանցից։

Կարծում ենք, որ այդ տարբերությունները առաջ են եկել ոչ թե կառուցողների ճաշակից, այլ մեծ մասամբ անհրաժեշտությունից։ Եթե Թալինում եկեղեցին չինել են այնպես, ինչպես կամեցել են, ապա Դվինում այդ հնարավորություններից զուրկ են եղել, որովհետև այնտեղ եկեղեցին նախապես գոյություն ուներ իբրև եռանավ բազիլիկ տաճար։ Այդ տաճարը ձևափոխման ենթարկելով, վերակառուցողներն աշխատել են հնից պահպանել ինչ որ հնարավոր է, որի հետևանքով էլ նրա չափերը չեն համեմատվում Թալինում ազատորեն չինված նույնանման տաճարի չափերին։

1947 թվականին հայտնագործված ավելի հին աբսիդի ավերակները՝ որոնք գտնըվում են արդեն հայտնի աբսիդից մոտ 9 մետր դեպի արևելք, ցույց տվին, որ իրոք այս տաճարի վերակառուցման ժամանակ չեն պահպանվել ոչ միայն տաճարի նախկին չափերը, այլև՝ նրա տիպը, իսկ 1948, 1949 և 1951 թվականներին կատարված մանրամասն ուսումնասիրությունները պարզեցին, որ կաթողիկե եկեղեցու սկզբնական շենքը երկու անգամ ենթարկվել է խոշոր ձևափոխությունների և միայն վերջին ձևափոխության ժամանակ է, որ նա ստացել է գըմբեթ և կողմնային աբսիդներ, իսկ սկզբնական շրջանում տաճարը եղել է ահռելի մեծության եռանավ բազիլիկ շինություն, առանց արևելյան ավանդատների ու արտաքին սյունասրահի[1]։ Այդ վիճակում Դվինի կաթողիկեն մեծ նմանություն է ունեցել նաև Քասաղի հնագույն բազիլիկ տաճարին, բայց իհարկե եղել է նրանից շատ ավելի մեծ։ Քասաղի եկեղեցին ունի արտաքուստ 23,4 մետր երկարություն, չհաշված աբսիդը, իսկ Դվինի կաթողիկեն՝ 44,4 մետր, ըստ որում Դվինի տաճարի ընդհանուր երկարությունը աբսիդի հետ միասին եղել է 53,4 մետր, որ մեզ ծանոթ հնագույն եկե-

Նկ. 60. Կաթողիկե եկեղեցու 1947 թվականին հայտնագործված հնագույն աբսիդի ավերակները

[1] Այս եզրակացությունն ընդունել է նաև ճարտարապետության դոկտոր Ռուբեն Աղաբաբյանը։ Տես Р. Я. Агабабян, Композиция купольных сооружений Грузии и Армении, АрмГИЗ, Ереван, 1950, стр. 90–92.

ղեցիներից ամենամեծն է։ Քասաղի բազիլիկ տաճարը և Դվինի կաթողիկեի սկզբնական շինությունը միմյանց նման են ոչ միայն ընդհանուր գծերով, այլև մի շարք մանրամասնություններով, որոնց հիման վրա կարելի է հաստատել այդ երկու, չափերով միմյանցից տարբեր, եկեղեցիների միև-



Նկ. 61. Հատակածև՝ կաթողիկե եկեղեցու 1949 թվականի պեղումներից հետո։
Չափագրություն Գր. Քոչոյանի

նույն ժամանակին պատկանելը։ Այսպես օրինակ.

1. Քասաղի բազիլիկ տաճարն ու Դվինի կաթողիկեի սկզբնական շինությունը ներքուստ ունեցել են հաստահեղույս մույթեր՝ Քասաղում 3 զույգ, իսկ Դվինում 7 զույգ, որոնք ձգվելով արևմուտքից դեպի արևելք, իրենց յուրաքանչյուր թևի վրա առաջացրել են հավասարաթոիչք կամարներ՝ Քասաղում մոտ 3,5 մետր, իսկ Դվինում մոտ 4,5 մետր բացվածքով։

2. Ինչպես Քասաղի տաճարը, այնպես էլ Դվինի կաթողիկեի սկզբնական շինությունն ավանդատներ չեն ունեցել։ Քասաղում այժմ գոյություն ունեցող հյուսիսային կողքի ավանդատունը տաճարի կառուցումից հետո արված հավելվածի արդյունք է։ Դվինում ևս տաճարի արևելյան աբսիդի երկու կողքերին կառուցված ավանդատները սկզբնական շինության վրա արված հավելվածքներ են։

Մատենական տեղեկություններից մեզ հայտնի չէ, թե Դվինի կաթողիկե եկեղեցու սկզբնական շինությունը երբ է եղել կառուցված, բայց Քասաղի տաճարի հետ միասին նա անշուշտ հանդիսանում է քրիստոնեության շրջանի ամենանախնական հուշարձաններից մեկն իր պարզ և անպաճույճ ձևերով, որի համեմատությամբ Երերույքի, Աշտարակի և Եղվարդի նույնատիպ եռաթև տաճարները նույն դարաշրջանի ճարտարապետական կառուցվածքների ավելի զարգացած օրինակներն են, իհարկե շինված շատ ավելի ուշ, քան թե Քասաղի և Դվինի տաճարները։

Ճարտարապետ Թորամանյանի կարծիքով Տեկորի տաճարն էլ իր սկզբնական շրջանում ունեցել է եռանավ բազիլիկի տեսք, առանց գմբեթի, որի ձևափոխումը կատարված է համարում 5-րդ դարում, այդ իսկ պատճառով քրիստոնեական եռանավ բազիլիկների սկզբնավորությունը նա դընում է 4-րդ դարում և նրանց համեմատելով հեթանոսական տաճարների հետ գտնում է, որ Տեկորի, Երերույքի, Քասաղի և Մրենի տաճարների սկզբնական շինությունների, առանց արևելյան աբսիդի, եղել են հեթանոսական մեհյաններ և քրիստոնեության մուտքի ժամանակ վեր են ածվել եկեղեցիների։ Այդ մասին նա գրել է.

> «Ըստ իս, Տեկորի, Քասաղի տաճարները պարզապես հեթանոսական մեհյաններ են»[1]։

Եթե այս տեսակետն առանձին հուշարձանների նկատմամբ սխալ էլ լինի, ընդհանուր առմամբ ճիշտ է, որովհետև վերոհիշյալ տաճարների նախնական տեսքը միանգամայն համընկնում է հեթանոսական մեհյաններին, էլ չասենք այն մասին, որ մեր հնագույն պատմիչները ևս հաստատում են, որ քրիստոնեության սկզբնական

1 Թորամանյան, Նյութեր..., I հն հատոր, էջ 210 և 303։

շրջանում հեթանոսական շատ մեհյաններ վերածվեցին եկեղեցիների։



Նկ. 62. Կաթողիկե եկեղեցու նախնական հատակածը։
Վերակազմություն Գր. Քոչոյանի

Սակայն, Թորամանյանը սխալվում է, երբ գրում է թե՝

«Քասաղի տաճարը, կերևի որ հիմնավորված օրեն ունեցեր է շուրջանակի սյունազարդ ծածկույթ»[1]։

Սյունազարդ ծածկույթը թեև հին երևույթ է և գալիս է հեթանոսության բավականին վաղ շրջանից, բայց հենց Քասախի վրա նա հավելված է, որ կատարվել է քրիստոնեության վաղ շրջանում[2]։

Այս բոլոր քննությունները ցույց են տալիս, որ Դվինի եկեղեցին էլ, իր ընկերակիցների նման, կարող է հեթանոսական ծագում ունենալ, որովհետև նրա արևելյան արսիդի հիմնացորդները ևս, ինչպես ասացինք, չեն պատկանում սկզբնական շինության։ Այստեղ հետաքրքիր է մի ուրիշ երևույթ։ Հարցն այն է, որ Դվինի կաթողիկե եկեղեցու հին արսիդի քարերը 4-րդ դարում բերել են մի այլ ավելի հին շինության վրայից, այդ պատճառով էլ նրա քարերի վրա երևում են խիստ նախնական



Նկ. 63. Կաթողիկե եկեղեցու վերակազմած հատակածն արտաքին սյունասրահը շինելուց հետո։
Վերակազմություն Գր. Քոչոյանի

որմնանկարների հիմնացորդներ, որոնք իրար հետ չեն կապվում, որովհետև շարելու ժա-

1 Թորամանյան, Անդ, I հատոր, էջ 211։

2 Ճարտարապետ Ալ. Սահինյանի վերջին տարիներս Քասաղի բազիլիկ եկեղեցու շուրջը կատարած հնագիտական պեղումները լիովին ապացուցեցին, որ արտաքին սյունասրահը և տաճարի արևելյան արսիդը հավելվածներ են և չեն պատկանում սկզբնական շինության։

մանակ քարերը խառնել են։ Այդ որմնանկարները, անշուշտ, ունեցել են հեթանոսական բովանդակություն։

Բացի այդ, Դվինի կաթողիկեի վերաբերյալ գոյություն ունի նաև ավանդություն այն մասին, որ նա եղել է հեթանոսական մեհյան և հենց դրանով էլ բացատրվում է այն հանգամանքը, որ հետագայում, 5-րդ դարի կեսերին, Ճավասպ Արծրունին և Վնդոն, երբ փորձեցին Հայաստանում վերականգնել հեթանոսական կրոնը, հենց այդ կաթողիկե եկեղեցին վերածեցին հեթանոսական մեհյանի։

Պատմությունից մեզ հայտնի է, որ մեհյաններն եկեղեցի դարձնելը քրիստոնեության մուտքի ժամանակ պատահական երևույթ չի եղել։ Դա հեթանոսությունն արմատախիլ անելու հիմնական միջոցառումներից մեկն էր, որ գործադրվում էր ամենուրեք։ Եթե Գրիգոր Պահլավունին բավարարվեր միայն մեհյանները քանդելով և քրմերի դասը ցրելով, դրանով քրիստոնեություն չէր տարածի, որովհետև մեհյանների ավերակներն ու նրանց առանձին

Նկ. 64. Կաթողիկե եկեղեցու արևմտյան մուտքի ավերակները և արտաքին սյունասրահի սալածածկ հատակը 1946—1949 թվականների պեղումներից հետո

քարերը պաշտամունքի առարկա կդառնային հեթանոս ժողովրդի համար, ուստի նա Տրդատ 3-րդի օգնությամբ ամենուրեք աշխատեց հին կրոնի պաշտամունքը փոխարինել նորով և քրմերին էլ դարձրեց քրիստոնեական եկեղեցու պաշտոնյաներ, որպեսզի ժողովուրդն իր հին սովորության համաձայն այցելի հին սրբավայրերը՝ այս անգամ իր քրիստոնեական աղոթքն անելու նպատակով։ Այդ հարցում քրիստոնեությունը խիստ զգուշավոր դիրք գրավեց և նույնիսկ պահպանեց հեթանոսական մի շարք տոներ՝ տալով նրանց քրիստոնեական գունավորում։ Այդ բոլորն արվեց, որպեսզի ժողովրդի մեջ արմատացած ավանդությունները չհակադրվեն և չխանգարեն քրիստոնեությանը։

Ագաթանգեղոսի պատմությունից պարզ երևում է, որ քրիստոնեություն տարածելու ժամանակ Գրիգոր Պահլավունին և Տրդատ Թագավորը ոչնչացնում էին քրմերի զորական ուժը, ջարդում աստվածների արձանները, խլում էին մեհենապատկան թանկարժեք առարկաներն ու մեհյանների հավաքած հարստությունը, և աստված-

ների արձանների տեղ կանգնեցնում Քրիստոսի սիմվոլը հանդիսացող խաչի նշանը։ Նրանք միայն Արտաշատ քաղաքի մեհյանն են այրել, իսկ շատ տեղերում քանդեալ և ավերեալ *բառերին հաջորդում է այն, որ նույն տեղում եկեղեցի են հիմնել և*

> *«զպաշտաւորսն քրմօքն հանդերձ և նոցին գետնովքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեանն»*[1]։

ված, կաթողիկե եկեղեցու վերաշինության ժամանակ, իսկ մինչ այդ, բերդը հավանաբար, ավելի ընդարձակ տարածություն է պարփակել իր մեջ, և ջրի խրամատը գտնվել է այժմյան երևացող տեղից ավելի հարավ։ Այդ բանը պարզ երևում է նրանից, որ կենտրոնական թաղամասի բերդի կողմից սահմանազատող երեք մետր թանձրություն ունեցող մի այլ պարիսպ, մոտավորապես 25 մետր ավելի հարավից է

Նկ. 65. Կաթողիկե եկեղեցու հյուսիսային կողմի արտաքին սյունազարդ ծածկույթի հիմքերը

Ինչպես տեսնում ենք, ոչ միայն քրմերին եկեղեցու սպասավոր են դարձրել, այլև մեհյանների կալվածքները նույնությամբ հանձնել են եկեղեցիներին։ Նշանակում է, քանդել և ավերել են ոչ թե շենքերը, այլ մեհենական հաստատությունը և նրա տեղ հիմնել եկեղեցի։ Մեզ թվում է, որ գուցե Խոսրով Կոտակից առաջ էլ Դվինի բերդից դուրս որոշ բնակչություն եղել է, երբ քաղաքի կենտրոնական թաղը դեռևս ջրի խրամատով անջատված չէր բերդից և կազմում էր մեծ բլրի անմիջական շարունակությունը։

Միանգամայն հավանական է, որ բերդի պաշտպանության ջրային օղակի հարավային հատվածը 7-րդ դարում է փոր-

անցնում և բոլոր նշաններից երևում է, որ նա իր մեջ ամփոփել է ոչ թե ամբողջ թաղը, այլ միայն կաթողիկե եկեղեցին, Յիզդբուզիտի վկայարանը և կաթողիկոսի պալատը և այդպիսով, նա հանդիսացել է կաթողիկոսարանի և նրան ենթակա երկու եկեղեցիների շրջափակը։ Բերդապարսպի ետ քաշելն այդ հատվածում կապված է կաթողիկե եկեղեցու վերաշինության հետ։ Սմբատ Բագրատունու ժամանակ, երբ կառուցվող եկեղեցին մոտիկ էր բերդին, բերդապանը բողոքում է նրա շինության դեմ և չկարողանալով արգելել կառուցումը, ստիպված է լինում որոշ չափով բերդի պարիսպը ետ քաշել, որպեսզի թշնամին քաղաքը գրավելուց հետո չկարողանա եկեղեցին օգտագործել բերդի դեմ կռվելու համար։

[1] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 406։*

Դվինի կաթողիկե եկեղեցին Շավասպ Արծրունու և դվինցի Վնդոյի ձեռքով մեհյանի վերածվելը կապ ունի նույն տեղը հնում մեհյան լինելու հետ։ Ամենայն հավանականությամբ, Շավասպն ու Վնդոն հեթանոսությունը վերականգնելու ձգտումով հին մեհյանը նորից են վերականգնել։

Սակայն, այս հարցում Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու գրածների մեջ որոշ հակասություն կա։

Նկ. 66. Կաթողիկե եկեղեցու արտաքին սյունազարդ ծածկույթի հարավային կողմի հիմքերը

Ըստ Դրասխանակերտցու, Վնդոն հայազգի է, այն էլ ավագագույն նախարարներից մեկը, նա «ի Դվին քաղաքէ» է և Դվինի տերը, ուստի և անարգել կերպով կարողանում է Շավասպ Արծրունու հետ միասին Դվինում վերահաստատել հեթանոսական կրոնը, եկեղեցին ատրուշանի վերածել և իր որդուն էլ տաճարի քրմապետ նշանակել։

Դրասխանակերտցուն կրկնել է Վարդան վարդապետը, իսկ Թովմա Արծրունին Վընդոյին ճանաչում է իբրև պարսիկ մարզպան ու մոգպետ, որի աջակցությամբ Շավասպ Արծրունին քանդում է եկեղեցին, չարչարում ու սպանում քրիստոնյաներին և Դվինում հաստատում հեթանոսությունը։ Վարդան Մամիկոնյանը հայ նախարարների համագործակցությամբ հարձակվում է հեթանոսների բանակի վրա, ջախջախում նրանց, սպանում Շավասպ Արծրունուն և Վնդոյի որդուն այրում ատրուշանի կրակի վրա.

«Եւ քանդեն աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղւոջն, և փոխեն անդ զկաթողիկոսն հայոց զԳիւտ»[1]։

Այս տեղեկությունները հետաքրքիր են մի քանի տեսակետով։

Նախ՝ տեղեկանում ենք, որ հայ նախարարներից ոմանք դեռևս 5-րդ դարի կեսերին ձգտում էին հեթանոսությունը վերահաստատել և, նույնիսկ հարմար առիթ գտնելով, որոշ գործնական քայլեր էին անում այդ ուղղությամբ։

Երկրորդ՝ նախարարներից շատերը Մա-

---

[1] Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, ՍՊԲ, 1887, էջ 78—79։

միկոնյանների գլխավորությամբ դեմ են եղել հեթանոսության, որոնք ներքին պայքար են մղել Արծրունյաց և մյուս հեթանոսության ձգտող նախարարների դեմ։

Երրորդ՝ հայերը, չնայած պարսից իշխանության հովանավորության ու խրախուսանքներին, երբեք չեն հանդուրժել հեթանոսությունն իրենց մեջ տարածվելուն և այդ կրոնն ընդունողներին համարելով ուրացող և դավաճան, ամենախիստ պատիժների են ենթարկել։

Ինչ էլ որ լինի, մի բան պարզ է, որ դվինցի Վնդոն և Շավասպ Արծրունին մեհյանի այդ տեղն ընտրել էին ոչ թե պատահական կերպով, այլ այն պատճառով, որ այդտեղ հնում ատրուշան է եղել, որն այն ժամանակ դեռևս մնացել էր մարդկանց հիշողության մեջ[1]։

Երբ Վահան Մամիկոնյանը Հայաստանի մարզպանության հրովարտակ է ստանում, հայոց կաթողիկոսը նրա պատվին հատուկ եկեղեցական արարողություն է կատարում Դվինի կաթողիկեում։ Այդ հանդեսին այնքան մարդ է հավաքվում, որ եկեղեցու հսկայական դահլիճը չի կարողանում տանել բոլորին, ուստի հավաքվածների մի մասն էլ եկեղեցու արտաքին սյունազարդ ծածկույթի տակ է կանգնում։ Այդ մասին ականատես Ղազար Փարպեցին գրում է.

«Իսկ տէրն Մամիկոնենից Վահան, զօրավարն հայոց և մարզպան, ընկալեալ զհրովարտակն մարզպանութեանն ի ձեռաց դեսպանին, թէպէտ և զխանդաղծութիւն հայ մարդկան ճանաչելով ծանրանայր ընդ իրս՝ այլ սակայն և ոչ ընդդիմանալ հրամանի թագաւորին իշխէր և անհնազանդ լինել։ Առեալ զհրովարտակն՝ խնդրէր վաղվաղակի անյապաղ ժողովել երթալ ի տունն Աստուծոյ։ Եւ լուեալ զայս մարդկանն որ ի քաղաքին էին, գրոհ տուեալ առ հասարակ ամենայն մարդոյ, նախարարաց և ազատաց, ոստանկաց և ռամկաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, այլ և հարսունք անգամ յառագաստաց, մոռացեալ առ վայր մի առ խնդին զամօթ հարսնութեան՝ դիմեալ ընթանային յեկեղեցին։ Եւ ոչ բաւեալ ընդունել զամենեսեան տանն Աստուծոյ՝ լնուին արտաքոյ սրահք եկեղեցւոյն և փողոցք և ամենայն տեղիք հրապարակացն շուրջանակի»[1]։

Միանգամայն պարզ է, որ Վահան Մամիկոնյանի մարզպան ձեռնադրվելու ժամանակ, 485 թվականին, կաթողիկե եկեղեցին արդեն արտաքին սյունազարդ սրահ ուներ, որ կառուցված էր դրանից առաջ։



Նկ. 67. Կաթողիկե եկեղեցու հնագույն որմնասյան խարիսխների բեկորներ

Բայց երբ կարող էր կառուցված լինել եկեղեցու արտաքին սյունասրահը։

Ինչպես ասացինք, արտաքին սյունազարդ սրահը եկեղեցու վրա հավելված է և չի պատկանում սկզբնական շինությանը։ Այդ սյունասրահը և եկեղեցու արևելյան կողմի երկու ավանդատները միասին են շինվել արևելյան հնագույն արսիդի շինությունից հետո և Վահան Մամիկոնյանի մարզպանությունից առաջ։ Այդ կարճ ժամանակամիջոցում մեզ հայտնի է միայն մի վերանորոգում 450-ական թվականներին, երբ մեհյանը քանդում են, եկեղեցին վերահաստատում կաթողիկեի տեղում։ Նշանակում է, արտաքին սյունասրահի և արևելյան կիսով չափ տաճարի կորպուսի մեջ

---

1 Թ. Թորամանյանը Տեկորի տաճարի ուսումնասիրության մի ծանոթության մեջ նկատի առնելով Թովմա Արծրունու տեղեկությունը Վնդոյի և Շավասպ Արծրունու մասին գրում է, որ «ակնարկ կա պատմագրաց կողմանե, որ նա (Դվինի կաթողիկեն) շինված է մեհյանի մը տեղին վրա՝ նույնիսկ մեհյանին քարերով», (Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատոր Ա, 1942, էջ 214)։

1 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, էջ 178։

մատծ և կիսով չափ դեպի հարավ և հյուսիս դուրս շեշտված ավանդատների կառուցման ամենահավանական ժամանակը 450-ական թվականներն են։ Արտաքին սյունասրահի այդքան հին լինելու ապացույցներից մեկը մինչև այժմս էլ մնացել



Նկ. 68. Կաթողիկե եկեղեցու հատակաձևի կրած փոփոխությունները Սմբատ Բագրատունու կատարած վերակառուցման ժամանակ։
Չափագրություն Գր. Քոչոյանի

է տեղում։ Տաճարի հարավային կողմից արևմտյան մասում երևում են սյունասրահի սատիճանավոր հիմնապատերի մնացորդները (տախտակ)։

Մարզպան ձեռնադրվելուց հետո Վահան Մամիկոնյանը վերանորոգում է Դվինի կաթողիկե եկեղեցին, էջմիածնի տաճարը և ուրիշ շենքեր։ Վահան Մամիկոնյանի պատմագիր Ղազար Փարպեցին ոչինչ չի գրել Դվինի կաթողիկեի նորոգության մասին, այլ նշել է միայն էջմիածնի նորոգությունը։ Դվինի եկեղեցու նորոգության մասին մեզ տեղեկություն են տալիս 7-րդ դարի մատենագիր Սեբեոսն ու 10-րդ դարի պատմագիր Դրասխանակերտցին։ Սեբեոսը գրել է.

«Այս Վահան (Մամիկոնեան) ժողովեաց և զհարկս աշխարհին Հայոց և շինեաց եկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր պարսից ի Վաղարշապատ քաղաք և ի Դւնի և ի Մցրայս և ի բազում տեղիս աշխարհիս հայոց»[1]։

Իսկ Դրասխանակերտցին Վահան Մամիկոնյանի շինարարական գործունեության մասին տալիս անորոշ տեղեկություն է տալիս։ Նա Սեբեոսի հետևությամբ հիշատակում է, որ Վահան Մամիկոնյանը Հայաստանի հարկը հավաքելով թշնամիների քանդած եկեղեցիները շինեց, բայց չի նշում եկեղեցիների անունները[2]։

Թե ինչ վիճակում է եղել Դվինի կաթողիկեն և Վահան Մամիկոնյանը ինչ նորոգություն է կատարել այնտեղ, մեզ հայտնի չէ։ Այդ պատճառով համեմատության համար անհրաժեշտ է պարզել, թե նա ինչ բնույթի նորոգություն է կատարել էջմիածնում։ Այդ մասին Ղազար Փարպեցին գրում է՝

«Հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց, քաջ զօրավարն հայոց Մամիկոնեանն Վահան»[3]։

Նշանակում է, նա գրեթե հիմքից քանդել և նոր տաճար է շինել էջմիածնում։ Նույն ձևով է հասկացել Ղազար Փարպեցու տեղեկությունը նաև ճարտ. Թ. Թորամանյանը։ Այդ առթիվ նա գրել է.

«Հին շենքը ամբողջովին քանդելով՝ հիմն ի վեր վերաշինել է Վահան Մամիկոնյանը 485 թվականին՝ Հայաստանի մարզպան նշանակվելուց հետո»[4]։

---

[1] Սեբէոս, էջ 38։

[2] Դրասխանակերտցի, էջ 61։

[3] Ղազար Փարպեցի, էջ 187։

[4] Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, երկրորդ ժողովածու, էջ 61։

Նշանակում է, Դվինում էլ Վահան Մամիկոնյանը մեծ աշխատանք պետք է կատարած լիներ, որովհետև եթե այդ նորոգությունը փոքր ծավալ ունենար, այդ դեպքում Սեբեոսը հազիվ թե Վահանի նորոգած բազմաթիվ շենքերից միայն այդ մի քանիսը հիշատակեր։ Մյուս կողմից էլ գիտենք, ~~որ շենքի~~ ոճի մեջ Մամիկոնյանը փոփոխություն չի մտցրել, որովհետև նախքան նրա նորոգությունը, Դվինի կաթողիկեն արդեն ուներ արտաքին սյունազարդ սրահ և երիք նավ, ուստի և պետք է ենթադրենք, որ Վահանի նորոգության ծավալը թեև մեծ է եղել, բայց տաճարի ձևերի մեջ որևէ էական փոփոխություն չի մտցրել։ Այդ միջոցին կաթողիկեի հսկայական շենքը, որ կանգնած էր քաղաքի կենտրոնում, նրա մեծագույն զարդերից մեկն էր հանդիսանում։

1951 թվականի պեղումների ժամանակ կաթողիկե եկեղեցու հարավային պատի երկարությամբ բացվեցին եռանավ բազիլիկ տաճարի որմնամույթերի խարիսխների հիմքերը, որոնց դասավորությունից երևում է, որ նրանց թիվը եղել է յոթը։ Դա նշանակում է, որ կաթողիկեի սկզբնական շինությունն ունեցել է արևմուտքից դեպի արևելք յոթը զույգ մույթ միմյանցից մոտավորապես 4,5 մետր հեռավորության վրա։

Այս տաճարի սկզբնական շինության հատակը մոտ մի մետրով խորն է եղել ուշ ժամանակի հատակից։ Այդ բանը պարզվեց տաճարի հարավային պատի արևմտյան կողմում բացված որմնամույթի խարիսխի շնորհիվ, որ գտնվում էր իր բուն տեղում, իսկ Վահան Մամիկոնյանի կատարած նորոգության հետքերը նրանից բարձր են և սկսվում են տաճարի համեմատաբար բարձր հատակի վրա գտնվող որմնամույթի տուֆաքարե տափակ խարիսխներով։ Կաթողիկեի այս երկրորդ հատակը նշանավոր է այն բանով, որ ծածկված է եղել բնական քարերից կազմված խճանկարով, որի հետքերը բացվել էին դեռևս 1938 թվականին, իսկ 1951 թվականին այդ մոզայիկան մեծ ծավալով հայտնաբերվեց եկեղեցու արևմտյան մասում, իր բուն տեղում։

Դեռևս եկեղեցու կանգուն ժամանակ, երբ նորոգել են եկեղեցին, խճանկար հատակի երեսը ծածկել են կրաշաղախի թանձր շերտով, ուստի և այժմ խիստ դժվար է բաց անել նրա երեսը, որովհետև խճանկարի հատիկները վերին կրաշաղախին ավելի են կպած, քան թե տակի շերտին։ Մոզայիկ հատակը շինելու համար նրա տակ լցրել են մի շերտ քար և այդ շերտի երեսին, կրաշաղախի վրա, մեկ քառ. սանտիմետրից ավելի փոքր մակերես ունեցող գույնզգույն խորանարդաձև խճաքարերը դասավորել են գեղեցիկ երկրաչափական ձևերով։



Նկ. 69. Կաթողիկե եկեղեցու հատակաձևը Սմբատ Բագրատունու կատարած վերակառուցումից հետո
Վերակազմեց Գր. Քոչոյան

Այս խճանկարը պատկանում է եռանավ բազիլիկ տաճարին, հետևապես նա 5-րդ դարի գործ է և վերաբերում է կամ 450 թվականի և կամ Վահան Մամիկոնյանի 480-ական թվականներին կատարած նորոգության։

Թեև այժմ խճանկարի երեսն ամբողջությամբ բաց չի արված, բայց ստուգումները ցույց են տալիս, որ հետագայի նորոգությունների ժամանակ, գլխավորապես 7-րդ դարի սկզբին, նրա մեծագույն մասն

ավերվել է և այժմ միայն որոշ տեղերում, իբրև կցցյակներ, անազարտ վիճակում պահպանվել են մի քանի բեկորներ։ Այս խճանկարը խիստ ուշագրավ է այն տեսակետով, որ նա Հայաստանի սակավաթիվ օրինակների մեջ հնագույնն է և ամենից լավ պահպանվածը։

Ինչպես արդեն ասել ենք, Խաչիկ վարդապետը 1907 թվականին հենց այս տաճարի արևելյան աբսիդի քարերի վրա բաց է արել տիրամոր խճանկար պատկերը, որը սակայն 7-րդ դարի սկզբին է պատկանել, որովհետև այդ աբսիդը շինված է 7-րդ դարում և հատակի խճանկարի հետ որևէ կապ չունի։

Այստեղ տեղին է նշել, որ 7-րդ դարում սովորություն է եղել Հայաստանի գլխավոր եկեղեցիների արևելյան աբսիդը Տիրամոր խճանկար պատկերով զարդարելը, պարզ է, որ մանուկ Հիսուսն էլ գրկին[1]։ Զվարթնոցի խճանկարի բեկորները, որոնք գտնվել են տաճարի արևելյան աբսիդի մնացորդների վրա, ապացույց են այն բանին, որ 10-րդ դարի արաբ Մատենագիր Ալ Մուկադդասու գրածը Զվարթնոցի վերաբերյալ միանգամայն ճիշտ է։ Այդ արաբ մատենագիրը գրել է.

«Դաբիլից երեք փարսախ հեռավորության վրա գտնվում է սպիտակ տաշած քարերից շինած ութը սյուների վրա (նստած) գմբեթաձև գլխարկի նմանող մի եկեղեցի, որի մեջ գտնվում է Մարիամ կույսի նկարը... Որ դռնից էլ (ներս) մտնես (եկեղեցի), դու կտեսնես Մարիամ կույսի պատկերը»[2]։

Կաթողիկե տաճարի վերջին հիմնական նորոգությունը պատկանում է Վրկանա մարզպան Սմբատ Բագրատունուն՝ 7-րդ դարի սկզբին։

[1] 5-րդ և 7-րդ դարերի խճանկարները միմյանցից խիստ կերպով տարբերվում են։ Մինչև այժմ հայտնի 5-րդ դարի մնացորդներն ունեն միայն երկրաչափական ձևեր, իսկ 7-րդ դարը՝ կոմպոզիցիոն նկար։ 5-րդ դարում օգտագործվել են միայն բնական քարերի տեսակներ, իսկ 7-րդ դարում՝ բնական քարերի հետ միասին նաև թափանցիկ ապակին, տակին արհեստական գունավորումով, մեծ մասամբ ոսկեգույն շերտով։ Բացի այդ, 7-րդ դարի խճանկարների հատիկները խիստ կերպով հենց տարբերվում են իրենց նրբությամբ։

[2] Ал. Мукаддаси, СМОМПК, выпуск XXXVIII, Тифлис, 1903 г., стр. 16

Ըստ ժամանակակից մատենագիր Սեբեոսի, Սմբատ Բագրատունին ութը տարի Վրկանում մարզպանություն անելուց հետո վերադառնում է պարսից արքունիք, որտեղ նա բազմաթիվ մեծարանքների է արժանանում և հրաման է ստանում գնալ իր ծննդավայրը տեսության։ Նա արքայից թույլտվություն է ստանում Դվինի կաթողիկե եկեղեցին վերանորոգելու և հանգուցյալ Մովսես կաթողիկոսի փոխարեն հայրապետական աթոռի վրա նոր մարդ դնելու վերաբերյալ։ Այնուհետև Սեբեոսը շարունակում է.

«Նստուցին զԱբրահամ զՌշտունեաց եպիսկոպոսն յաթոռ հայրապետութեան, ապա սկսան արկանել հիմն եկեղեցւոյն. ժողովեաց ճարտարապետս քարի, և կացոյց ի վերայ նոցա հաւատարիմ գործակալս, և հրաման ետ փութանակի հասուցանել ի կատարումն։ Եւ գրեաց գիր ամբաստանութեան բերդակալին և մարզպանին առ արքայ՝ եթէ «կարի մերձ է առ բերդն, և վնասակար է թշնամւոյ»։

Հրաման հասեալ յարքայէ՝ եթէ «բերդըն քակեսցի, և եկեղեցին անգրէն ի նմին տեղւոջն շինեսցի»[1]։

Դրասխանակերտցին այս վերաշինության հանգամանքների մասին պատմում է, որ՝

«Ինքն (Սմբատ Բագրատունի) արկանէ հիմն եկեղեցւոյն սրբոյ կոփածոյ քարամբք գեղեցկագիր շինուածիւ՝ կրով ձուլեալ ի մի, զի յառաջ յաղիւսոյ և ի փայտէ կազմեալ էր նա ի սրբոյն Վարդանայ։ Իսկ պահնակ ամրոցին ամբաստան առ արքայ լինի իբր վնասակար գոլ բերդին. և վաղվաղակի հրաման ընդունի. եթէ բերդդ քակեսցի և եկեղեցիդ ի դմին տեղ շինեսցի»[2]։

Դրասխանակերտցին այստեղ չափազանցության մեջ է ընկել։ Նա օգտվել է Սեբեոսի տեղեկություններից և իր կողմից էլ ավելացրել, որ հին եկեղեցին աղյուսաշեն և փայտակերտ է եղել։ Բուն եկեղեցու ավերակները վկայում են, որ նա երբեք աղյուսաշեն չի եղել, իսկ փայտե ծածկը դեռևս եռանավ բազիլիկ տաճարի գոյության ժամանակ վաղուց փոխված էր քարե։

[1] Սեբէոս եպիսկոպոս, էջ 102։

[2] Դրասխանակերտցի, էջ 71։

Որ եռանավ բազիլիկ դրությամբ, հավանաբար 450 թվականի վերաշինությունից հետո, Դվինի կաթողիկե եկեղեցին թաղակապ ծածկ է ունեցել, դրա անհերքելի ապացույցները գտնվեցին հենց տեղում. 1948 թվականին հայտնաբերվեցին տաճարի որմնասյուների քանդակազարդ խոյակների երկու բեկոր, որոնք իրենց վրա պահել են թաղի կամարները, 1950 թվականի պեղումների ժամանակ գտնվեց մի այլ որմնախոյակի բեկոր, դարձյալ նույն նպատակին ծառայող, իսկ 1951 թվականին, ինչպես ասացինք, իր բուն տեղում գտնվեց մի որմնախարիսխ, որ մեզ համար ծառայում է ոչ միայն իբրև որմնամույթերի մասին հասկացողություն տվող կարևոր փաստ, այլև հանդիսանում է 4-րդ դարին պատկանող ճարտարապետական մի կարևոր բեկոր, որի մասին մինչ այդ գաղափար չունեինք։ Աղյուսաշեն լինելը ևս սխալ է, քանի որ տեղի վրա պահպանվել են տաճարի կրած բոլոր փոփոխությունների հետքերը, բայց բոլորն էլ կոփածո քարով են և աղյուսի ոչ մի հետք չկա այնտեղ[1]։

Սմբատ Բագրատունու նորոգության թվականի մոտավոր որոշումը մեծ դժվարություն չի ներկայացնում, որովհետև դեպքերին ժամանակակից Սեբեոսը Սմբատի վերադարձը դեպի Հայաստան դնում է պարսից Խոսրովի թագավորության 18-րդ տարին, այսինքն 607 թվականը։ Ինչպես գիտենք, Սմբատը վերադառնալով Հայաստան, անմիջապես՝ ձեռնամուխ եղավ կաթողիկոսի ընտրության և տաճարի վերաշինության, հետևապես կաթողիկե եկեղեցու վերակառուցման սկիզբը պետք է համարենք 607 կամ 608 թվականը և եթե նկատի առնելով աշխատանքի հսկայական ծավալը, կառուցման տևողությունը դնենք մոտ տասը տարի, ուրեմն տաճարի նորոգության ավարտումը պետք է համարենք 618 թվականի մոտերքը։ Մեր այդ ենթադրու-



Նկ. 70. Կաթողիկե եկեղեցու քիվի չափերը



Չափագրություն Լ. Սադոյանի

[1] 1949 թվականի պեղումների ժամանակ կաթողիկե եկեղեցու հյուսիսային կողմում դուրս եկան հարդախառն, հում աղյուսների բեկորներ, ճիշտ այնպիսիք, ինչպիսիք գտնվել են Կարմիր բլուրում և Վրաստանում՝ Արմազիի պեղումների վայրում։

Դվինի այդ աղյուսները պատկանում են տաճարի բռնած տարածության տակ գտնված ուրարտական բնակավայրին և ոչ մի կապ չունեն եկեղեցու հետ։

թյունը հաստատվում է նաև այն բանով, որ տաճարի նորոգությունը ավարտվում է Աբրահամ կաթողիկոսի հաջորդ՝ Կոմիտասի կաթողիկոսության առաջին տարիներին, այսինքն՝ 618-619 թվականներին։

Գրեթե նույն տարեթվերն են ստացվում նաև 10-րդ դարի պատմիչ Ուխտանես եպիսկոպոսի և ավելի ուշ ժամանակների մատենագիրների տված թվականներով, ուստի և այդ հարցի վրա չենք ծանրանում։

Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունու նորոգության ժամանակ կաթողիկե եկեղեցու վրա կատարել են հետևյալ էական փոփոխությունները.

1. Վերացրել են տաճարի արտաքին սյունազարդ ծածկույթն ամբողջովին։

2. Տաճարի արևմտյան կողմի երկու զույգ հաստահեղույս մույթերի գլխին դրել են մի մեծ գմբեթ։

3. Տաճարի արևելյան աբսիդն ու նրա կողքերին գտնվող երկու ավանդատները քանդել են և արևելակողմյան մույթերին կից շինել են նոր աբսիդ և նրա կողքերին էլ՝ երկու փոքրիկ ավանդատներ, որով եկեղեցու ընդհանուր երկարությունը կրճատվել է մի քանի մետրով։

4. Գմբեթակիր մույթերի հյուսիսային և հարավային կողմերում կառուցել են դուրս ցցված կողմնային աբսիդներ, որով եկեղեցու ուղղանկյուն քառանկյունի հատակաձևը վեր է ածվել խաչաձևի։

5. Տաճարի հատակը բարձրացրել են մոտ 20 սմ և մոզայիկի փոխարեն ծածկել են սալ քարերով[1]։

Պարզ է, որ եկեղեցու աբսիդի տեղափոխությունը կապված է եղել գմբեթի շինության հետ։ Հարցն այն է, որ երբ արևմտյան չորս մույթերի վրա գմբեթ են դրել, արևելյան աբսիդը խիստ հեռու է մնացել տաճարի կենտրոնից և դրանով հատակաձևի խաչաձևության մեջ անկանոնություն է առաջ եկել, և որպեսզի տաճարի բեմը գմբեթից և կողմնային աբսիդներից շատ հեռու չլինի, եկեղեցու արևելյան մասը քանդել են և արևելյան մույթերին կից նոր աբսիդ շինել։

Այս փոփոխություններից հետո եռանավ բազիլիկ տաճարը դարձել է կողմնային աբսիդներ ունեցող գմբեթավոր մեծ եկեղեցի, որի գմբեթը նստած էր եկեղեցական դահլիճի կենտրոնում բարձրացող չորս հսկայական սյուների վրա։ Դվինի եկեղեցու այս ձևափոխությունը եզակի կամ պատահական երևույթ չէ հայկական ճարտարապետության համար։ Այս նույն բախտն է վիճակված եղել նաև մի քանի այլ հնագույն եկեղեցիների։ Օրինակ՝ Էջմիածնի տաճարը և Տեկորի հնագույն եկեղեցին նախապես եղել են եռանավ շենքեր, առանց գմբեթի, որոնք հետագայում, սկսած 5-րդ դարից, ձևափոխությունների են ենթարկվել և դարձել չորս հաստահեղույս մույթերի վրա գմբեթ կրող շենքեր։ Նշանակում է, ժամանակի ոգին է պահանջել խաչաձև հատակագծով գմբեթավոր եկեղեցի ունենալը և այդ տենդենցն իր արտահայտությունն է գտել Ագաթանգեղոսի պատմության մեջ, լուսավորչի տեսիլքին վերաբերող հատվածում, որտեղ, ինչպես ճիշտ է նկատել Թ. Թորամանյանը, չորս սյուների վրա հանգստացող գմբեթն է հանդես գալիս խաչաձև հատակաձևի կենտրոնում և նա արտահայտում է քրիստոնեության սիմվոլը հանդիսացող խաչը։

Այնուհետև կաթողիկե եկեղեցին իբրև մայր տաճար իր գոյությունն այդ վիճակում պահպանեց մինչև 893 թվականը, երբ մեծ երկրաշարժի ժամանակ վերջնականապես կործանվեց և դրանով էլ Դվինը դադարեց կաթողիկոսի աթոռանիստը լինելուց, որովհետև այդ երկրաշարժից անմիջապես հետո, ինչպես ասացինք, կաթողիկոսն իր աթոռը փոխադրեց այլ տեղեր։

Այնուհետև Դվինի այդ հսկայական շենքը ավերակ վիճակում մնաց մինչև քաղաքի վերջնական անկումը 13-րդ դարում։

*

Հնագիտության մեջ վաղուց ուշադրություն են դարձրել քարտաշ վարպետների անձնական նշանների վրա, որ նրանք փորագրել են իրենց տաշած և մշակած քարերի վրա, որպեսզի այդ նշաններով վարձատրություն ստանան շինարարության տերերից։

[1] Հին սալահատակը պահպանվել է նաև եկեղեցու արտաքին սյունազարդ ծածկույթի մեջ, որի մնացորդները ամենից լավ պահպանվել են եկեղեցու հարավ արևմտյան անկյունի մոտերքը (տես նկ. № 64)։

Այդ նշանների օգնությամբ կարելի է պարզել, թե միևնույն վարպետը ո՞ր շենքերի վրա է աշխատել և որոշել թվական չունեցող շենքերի կառուցման ժամանակը, որովհետև եթե ապացուցվի, որ երկու տարբեր շենքերի վրա աշխատել են միևնույն վարպետները, ապա այդ շենքերի կառուցման ժամանակի տարբերությունը միմյանց համեմատությամբ ամենաշատը կարող է լինել 50 տարի, այն էլ այն դեպքում, եթե ենթադրելու լինենք, որ շենքերից մեկը՝ վարպետները կառուցել են իրենց երիտասարդության, իսկ մյուսը ծերության հասակում։ Իսկ եթե միևնույն վարպետների կառուցած մի քանի շենքերի համեմատություն ենք կատարում, որոնցից մի քանիսն ունեն կառուցման թվական, այդ դեպքում ավելի նվազ կլինի մեր սխալը։

Այս մի կարևոր հարց է, որի վերաբերյալ դեռևս քիչ բան է հրատարակված, ուստի առայժմ Դվինի վարպետների նշանները լայն համեմատության չենք կարող դնել ուրիշ տեղերի նշանների հետ, մանավանդ որ Դվինում շենքերի քարերի մեծագույն մասը ոչնչանալու հետևանքով վարպետների նշանների շատ քիչ օրինակներ են հասել մեր ձեռքը։ Մինչև այժմ Դվինում կաթողիկե եկեղեցու պեղումներից հայտնաբերվել են հետևյալ ինը նշանները։



Նկ. 71. Շինարար վարպետների նշաններ կաթողիկե եկեղեցու որմնաքարերի վրա

Այս նշաններից №№ 1, 2, 3, 4, 5 և 6 ծանոթ էին մեզ Ջվարթնոցից[1], իսկ №№ 7, 8 և 9 այնտեղ չեն հանդիպում։ Նշանակում է, Դվինի կաթողիկե եկեղեցու վերջին վերակառուցման վրա աշխատող քարտաշներից ոմանք (ըստ այս նշանների, մեզ ծանոթ առաջին 6-ը) աշխատել են Ջվարթնոցի կառուցման վրա և, քանի որ Դվինի կաթողիկեն վերակառուցվել է 7-րդ դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում, իսկ Ջվարթնոցի տաճարը՝ նույն դարի կեսերին, պետք է ենթադրենք, որ Դվինի կաթողիկեի վերակառուցման վրա աշխատող երիտասարդ վարպետներից շատերն իրենց ծերության հասակում մասնակցել են Ջվարթնոցի կառուցմանը։

1 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, էջ 269։ Ас. Шахназарян, Двин. Историко-геогр. очерк, стр. 50.

Միանավ բազիլիկ եկեղեցին.— Քաղաքի կենտրոնական թաղի հնագույն կառուցվածքներից մեկն է միանավ բազիլիկ տաճարը, որ հիմնականում պեղվեց 1937 թվականին։ Այս տաճարից այժմ պահպանվել են միայն նրա հիմնապատերի ստորին շարքերը, բայց դրանց հիման վրա էլ ընդհանուր գծերով կարելի է վերականգնել տաճարի սկզբնական պատկերը։ Նա արտաքուստ ունեցել է 24,5 մ երկարություն և 10,7 մ լայնություն, իսկ ներքուստ նրա դահլիճն ունեցել է 20,5×6,5 մ մեծություն։ Տաճարը ծածկված է եղել թաղով՝ երեք տեղով թաղակիր կամարներով ամրացրած, որոնց որմնամույթերի հետքերը պահպանվել են հիմնապատերի մեջ։ Այդ թաղակիր կամարների շնորհիվ եկեղեցու դահլիճը բաժանված է եղել երեք հավասար մասերի, չհաշված բեմը։ Դա մի սովորական ձև էր, որ ընդունված էր հնագույն եկեղեցիների մեջ, որտեղ դահլիճի երկարության և լայնության համաձայն անում էին մեկ կամ մի քանի թաղակիր կամարներ։ Այսպես օրինակ, Ավանի 13 մ երկարություն և 6 մ լայնություն ունեցող փոքրիկ տաճարն ունի մի գոտի,[1] Փարպիի Ծիրանավոր տաճարն իր 11,5 մ երկարության մեջ (լայնքը՝ 4,15 մ) ունի դարձյալ մի գոտի,[2] Շիրվանջուղի 18 մ երկարություն և 5,2 լայնություն ունեցող տաճարը՝ երեք գոտի[3]։ Նշանակում է, թաղը պահող կամարները մոտավորապես քառակուսիների են բաժանում շենքը։

Դվինում տաճարի հյուսիսային կողմի վրա պահպանվել են բոլոր երեք թաղակիր կամարների հետքերը, իսկ հարավային պատին՝ միայն երկու ծայրերինը։ Կենտրո-

1 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Բ. ժողովածու, էջ 233։

2 Նույն տեղում, էջ 227։

3 Նույն տեղում, Ա. ժողովածու, էջ 118։

նական որմնայան հետքերը հարավային պատի վրա չեն պահպանվել, որովհետև այդ մասի հիմնապատերի քարերը տեղից հանված են։

Տաճարն ունեցել է, ինչպես ասացինք, թաղակապ (կիսագլան) առաստաղ, որ դրսից ծածկվել է երկթեք տանիքով, իսկ աբսիդը վերջացել է գմբեթարդով։

Եկեղեցու արևելյան պատը շենքից դուրս շարունակվում է դեպի հյուսիս, մոտ 3,5 մ երկարությամբ, որը մատնանիշ է անում այնտեղ ավանդատան գոյության մասին։ Եկեղեցու կառուցվածքից դուրս եկող այդպիսի պատեր երբեմն շինված են լինում նաև տաճարի արտաքին սյունազարդ ծածկույթի համար, բայց 1950 թվականի պեղումների միջոցով վերջնականապես բացվեց այդտեղ գոյություն ունեցած ավանդատան հիմնապատերը։ Այդ ավանդատունն ունի 2,8×4,5 մ մակերես և, չնայած այն բանին, որ նա կառուցված է եկեղեցու մակարդակից դուրս, այնուամենայնիվ հետադարյան հավելվածք չէ և շինված է եկեղեցու հետ միասին։

Այժմ հարավային և հյուսիսային պատերի մնացորդների վրա շարվածքների ընդհատման տեղում երևում են մուտքի հետքեր, հետևաբար տաճարը մուտք է ունեցել նաև կողքերից, այժմ երևացող հետքերի տեղից, որովհետև այդ հետքերն ընկնում են երկու կամարաձևությունների ճիշտ մեջտեղը, որ պատահականորեն չէր կարող ստացվել։

Տաճարի պատուհանների և զանազան մասերի ձևավորման մասին ոչինչ չի կարելի ասել տվյալների բացակայության պատճառով, միայն թե հնում սովորություն էր թաղերի կամարաձև գոտիների միջև ընկած մասում պատուհան անելը։ Այդ պատճառով կարելի է ենթադրել, որ Դվինի բազիլիկ տաճարն ունեցել է երեք պատուհան կողքերից և մի պատուհան էլ արևմուտքից։ Տաճարի աբսիդը հավանաբար եղել է պայտաձև, որովհետև մեծ խորություն ունեցող նման աբսիդները հնագույն ժամանակներում պայտաձև էին լինում։ Այդպես է օրինակ, Շիրվանջուղի եկեղեցին, իսկ Դիրաքլարի եկեղեցին, հավանաբար, բացառություն է, որովհետև նրա աբսիդը պայտաձև չէ, բայց այն էլ, ինչպես ենթադրում է ճարտարապետ Թ. Թորամանյանը, սկզբում քառակուսի է եղել և միայն հետագայում է բոլորշի դարձել[1]։

Այս տիպի նեղ և երկար միանավ տաճարներն իրենց ձևով ամենանախնականն ու պարզն են Հայաստանի քրիստոնեական շրջանի ճարտարապետական հուշարձանների մեջ, որոնց առաջին օրինակները պատկանում են չորրորդ դարին, իսկ որոշ փոփոխություններով հարատևել են մինչև 6-րդ դարը։ 7-րդ դարում այլևս չի կառուցվել ոչ մի բազիլիկ տաճար։ Մոտ 300 տարվա գոյության ընթացքում միանավ բազիլիկ տաճարներն իրենց կառուցվածքով որոշ ձևափոխությունների են ենթարկվել՝ ծածկի, աբսիդի և արևելյան կողմի ավանդատների կառուցման եղանակով, որոնց շնորհիվ կարող ենք որոշել յուրաքանչյուր օրինակի կառուցման մոտավոր ժամանակը։

Միանավ բազիլիկ տաճարների նախնականությունը ցույց տվող առանձնահատկություններից մեկը պատերի անհեթեթ հաստությունն է, ինչպես այդ մասին դիտողություն է արել ճարտարապետ Թ. Թորամանյանը[2]։ Այդ երևույթը խիստ կերպով աչքի է զարնում Դվինի այս տաճարում, որի հիմնապատերն ունեն մոտ 2 մետր հաստություն և եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ այդ հիմքերի վրա դրվող պատը որոշ չափով պետք է նեղ լիներ իր հիմքերից, այդ դեպքում պատերի թանձրությունը մոտավորապես կստացվի 1,5 մետրից ոչ պակաս, որ դարձյալ «անհեթեթ» կարելի է համարել, որովհետև այս թաղածածկ եկեղեցիների սովորական բարձրությունը 6—7 մետրից ավելի չէր լինում։

Տաճարի կառուցման ժամանակը որոշելու համար կարևոր հանգամանքներ են նաև տաճարի թաղակապ քարե ծածկ ունենալը և հյուսիսային կողմի ավանդատան տաճարի հետ միասին շինված լինելը։

Հայոց հնագույն տաճարները քրիստոնեության մուտքի և նրան հաջորդող առաջին տասնամյակների ընթացքում մեծ մասամբ ունենում էին փայտե ծածկ։ Այդպես են եղել չորրորդ դարում Էջմիածնի

---

1 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Ա. ժողովածու, էջ 113։

2 Նույն տեղում, էջ 113։

Նկ. 72. Քաղաքի կենտրոնական թաղի ավերակների ընդհանուր տեսարանը բերդի կողմից



Նկ. 73. Ընդհանուր հատակաձև՝ քաղաքի կենտրոնական թաղի 1930 թվականի պեղումներից հետո
Չափագրություն Գր. Քոչոյանի

տաճարը[1], Հռիփսիմեի վկայարանը, Հովհաննավանքի միանավ եկեղեցին[2] և այլն, որոնք հետագայում վերաշինվել են և ստացել քարե ծածկ։

հատկությամբ պատկանում է հնագույն բազիլիկ տաճարների շարքին, իսկ քանի որ ծածկը փայտից չէ, այլ թաղակապ է, նա այդ տիպի եկեղեցիների սկզբնական օրինակների



Նկ. 74. Վերակազմություն քաղաքի կենտրոնական թաղամասի ա. եռանավ կաթողիկե մեծ եկեղեցին իր հնագույն՝ տեսքով. բ. կաթողիկոսի պալատը, գ. Ցիգտուրզիտի վկայարանը, դ. Թաղի շրջապարիսպը բերդի մուտքի մասում, ե. անծանոթ աշխարհիկ շենք

Վերակազմեց Գր. Քոչոյան

Նշանակում է, Դվինի եկեղեցին իր նեղ և երկար տեսքով ինչպես նաև պատերի մեծ

թվին չի պատկանում. Այդ միևնույն եզրակացությանն ենք գալիս, երբ հաշվի ենք առնում հյուսիսային ավանդատան գոյությունը, որովհետև քրիստոնեական եկեղեցիների առաջին օրինակները Հայաստանում ավանդատուն չեն ունեցել, այլ հետագայում, 5-րդ դարի առաջին կեսից

[1] Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, էջ 141—142 և 288։

[2] Զաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870 թ., հատոր Բ, էջ 29։ Նաև Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948 թ., էջ 13։

սկսած, հին տաճարների կողքին ավանդատներ են ավելացրել և նոր կառուցվող տաճարների հետ շինել են նաև ավանդատներ[1]։

Մինչև այժմ կատարված ուսումնասիրությունների մեջ Դվինի այս տաճարի անունը և կառուցման ժամանակը անորոշ է մնացել։ Տոկարսկին նշում է, որ նա կառուցված է 7-րդ դարից առաջ[2], իսկ Վ. Հարությունյանը թվելով պատմագիրների տրված տեղեկությունները Դվինում կառուցված եկեղեցիների մասին, գալիս է այն եզրակացության, որ այդ տաճարը Դվինում կառուցված մատուռներից մեկն է,[3] իսկ թե որը, ոչինչ չի ասում։

Մատենական աղբյուրներում Դվինի կաթողիկոսարանին առնթեր հիշատակվում է մի վկայարան, որն ըստ 10-րդ դարի պատմիչ Դրասխանակերտցու, կառուցվել է Ներսես երկրորդի կաթողիկոսության օրով (548—557) քրիստոնեություն ընդունած և Դվինի պարսիկ մարզպան Վահրամի ձեռքով սպանված պարսիկ Յիզտբուզիտի գերեզմանի վրա։

Այդ առթիվ նա գրել է.

«Յաւուրս սորա (Ներսիսի Բագրեւանդեցւոյ) Մախոժ, որ էր ի Բեշապուհ գաւառէ ի Քունարաստան դեղջէ և յազգէ մոգ, և ըստ սուրբ աւազանին ի մկրտութեանն Յիզտբուզիտ անուանեալ, որ թարգմանի «աստուած ապրեցոյց», բազում չարչարանս կրեալ ի մարզպանէ Վշնասն Վահրամայ՝ ի Դվին քաղաքի պսակի մարտիրոսական մահուամբ ի քրիստոսէ»։

Նրա մարմինը

«Եդին մերձ ու սուրբ եկեղեցին կաթողիկոսարանի յարևելից կողմանէ, շինեալ ի վերայ վկայարան սուրբ կոփածոյ քարամբք»[4]։

Գրեթե բառացի Դրասխանակերտցուն կրկնել է 13-րդ դարի պատմագիր Վարդան վարդապետը, միայն այն տարբերությամբ, որ վկայարանի տեղն անորոշ է թողել, հիշատակելով միայն, որ այդ վկայարանը կառուցվել է կոփածո քարով, կաթողիկոսարանին առնթեր, բայց թե նրա որ կողմը, չի հիշատակել։

Յիզտբուզիտի վկայաբանությունը լայն տարածում է գտել հին մատենագրության մեջ։ Նրա մասին հիշատակություն ունի նաև 10-րդ դարի վերջի և 11-ի սկզբի մատենագիր Ասողիկը։ Յիզտբուզիտի մասին հիշատակություն կա նույնիսկ վրացական աղբյուրներում. 9—10-րդ դարերին պատկանող Արսեն Սափարացու պատմական երկասիրության մեջ, Յիզտբուզիտն անվանված է «Ազիդ-Բուզիտ»[1]։

Միանավ բազիլիկը կառուցված է կաթողիկոսարանի արևելյան կողմում կաթողիկե եկեղեցու մոտ։ Այստեղ ուրիշ եկեղեցի չկա, կաթողիկոսարանի արևելյան կողմն ամբողջովին պեղված է և որևէ նոր տաճար այնտեղ ի հայտ չի կարող գալ հետագա պեղումների ժամանակ, հետևապես և Դրասխանակերտցու և մյուս մատենագիրների հիշատակած Յիզտբուզիտի վկայարանը միանավ բազիլիկ տաճարն է։

Սակայն, այստեղ մենք մի կարևոր հանգամանք չպետք է աչքաթող անենք։ Այդ այն է, որ Յիզտբուզիտի նահատակության պատմությունն առաջին անգամ գրականության մեջ հանդես է գալիս 10-րդ դարում, իսկ ավելի վաղ շրջանի մատենագիրներն այդ դեպքին անծանոթ են, կամ կարևորություն չեն տվել, ուստի և կարող է այդ պատմությունը կամ հետագայում հորինված լինել և կամ ավանդաբար պատմվող վկայաբանության մեջ աղավաղումներ մտած լինել, մանավանդ որ քրիստոնեական հավատի համար զոհվող ամեն մի անձնավորություն դասվում էր սրբերի շարքը և նրա կենսագրության շուրջը հյուսվում էին զանազան առասպելական պատմություններ։ Սակայն, մի բան պարզ է մեզ համար, որ Դրասխանակերտցին ապրելով հենց Դվինի կաթողիկոսարանում, չէր կարող Յիզտբուզիտին վերագրվող վկայարանը շփոթել մի այլ բանի հետ։ Հենց այն,

1 Բ. Բորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Ա. ժողովածու, էջ 120—125, 188, 225 և այլն։

2 Н. М. Токарский, Архитектура древней Армении, стр. 41.

3 Վ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950 թ., էջ 81։

4 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն հայոց, էջ 64։

1 Պրոֆ. դր. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հ. I, Երևան, 1934 թ., էջ 40 և 59։

որ Դրասխանակերտցին կարևոր է համարել այդ ավանդությունը նշել իր պատմության մեջ, նշանակում է, որ այդ դեպքը վաղուց ծանոթ էր հայկական եկեղեցուն և վկայարանի Ներսում ամեն տարի կատարում էին հատուկ պատարագ։

Դվինում հիշատակվում է նաև մի այլ վկայարան ս. Սարգսի անունով, որը նույնպես առաջին անգամ հիշատակված է Դրասխանակերտցու պատմության մեջ, իսկ վկայարանի կառուցումը, կամ ավելի ճիշտ կրկին անել վերակառուցումը. վերագրել են Ներսես Շինողին (641–66), իսկ մյուսի անանուն ժամանակագիրը վերագրում է սբ. Սուքիասի որդի Սարգսի և վկայարանն էլ համարում է մենաստան։

Այս վկայարանը չպետք է շփոթենք Դվինում թաղված միանավ բազիլիկ եկեղեցու հետ, որովհետև նրանք երկուսն էլ առանձին-առանձին ծանոթ են Դրասխանակերտ-



Նկ. 73. Վերակազմություն քաղաքի կենտրոնական թաղամասի մոնումենտալ շենքերի
Նկար Ա. Գատրէկի

ավելի ուշ ժամանակի մատենագիրներն այս կամ այն կերպ կրկնել են նրան։ Այսպես են՝ Կիրակոս Գանձակեցին, Վարդան Վարդապետը, Սամուել Անեցին, Միխայել Ասորին[1] և վրացական 11-րդ դարի մի անանուն մատենագիր, միայն այն տարբերությամբ, որ հայ հեղինակները Սարգսի վկայարանի... ցուն։ Վերջինս Սարգսի Մատուռի վերաշինության մասին գրում է, որ արաբները առաջին անգամ մտնելով Դվին, այնքան շատ կոտորեցին քաղաքի բնակիչներին,

«որ ոչ էր կայր թիվ բազմութեան սպանելոցն»,

իսկ կենդանի մնացածներից էլ 35,000 մարդ գերի տարան իրենց երկիրը։ Ներսես Տայեցին կաթողիկոս ձեռնադրվելով՝

«ամփոփեալ հաւաքէր զբազմութիւն զդիականցն անկելոց՝ և ի նմին տեղ վե-

[1] Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, Թիֆլիս, 1909 թ., էջ 58, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, ի Վենետիկ, 1862 թ., էջ 67։ Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893 թ., էջ 83։ Տեառն Միխայէլի պատրիարքի ասորւոյ Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870 թ., էջ 804։

[1] Պրոֆ. դր. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները... Հ. I, էջ 114 և 116։

ըստին շինէր զհրդեհեալ զվկայարան մեծի նահատակին Սերգեայս[1]։

Այս վկայարանի տեղը բոլորովին չի ճշտվում, թեև վերոհիշյալ վրացի անանուն հեղինակը նշում է, որ կառուցված է եղել Դվին քաղաքի մոտերքում, նշանակում է քաղաքից դուրս։

Ինչ էլ որ լինի, արաբների այս հրդեհած եկեղեցին պետք է փայտե ծածկ ունենար, որ այրվեր, հետևապես նա սկզբնա-



Նկ. 76. Հատակածը՝ միանավ բազիլիկ տաճարի
Չափագրություն Գր. Քոչոյանի

պես կառուցված պետք է լիներ ավելի վաղ՝ քան Ցիզտբուզիտի վկայարանը, այսինքն 4-րդ դարում կամ 5-րդ դարի սկզբին։

Դվինում հիշատակվում է նաև մի վանք՝ Գրիգոր (Մանաճիհր) Ռաժկի անունով։ Այդ վանքը Դվինում ապրող նեստորական ասորիներին ծառայել է իբրև նրանց հավաքատեղի։ Այդ մասին բազմաթիվ տեղեկություններ կան Թղթոց գրքի մեջ։ Ներսես երկրորդ կաթողիկոսը չի հանդուրժել նեստորականությունը և այդ պատճառով քանդել է տալիս նեստորականների եկեղեցին, իրենց ընկերությունն էլ ցրում։ Ներսեսի օրով հայ իշխանների և բարձր հոգևորականության կազմած միաբանության ուխտի մեջ այդ մասին ասված է.

«Եւ ի տասն և յեթներորդ ամի Խոսրովու արքայից արքայի, ի մարզպանութեան Նիհորականայ, արարին իմն շինած յանուն Մանաճրհի Ռաժկի, որ հաւատացեալ ի Քրիստոս և մկրտեալ անուանեցաւ Գրիգոր, և սպանաւ վասն նորին հավատոյ, և ապա անուանեցին զնա տեղի ժողովոյ պղծութեան իւրեանց…



Նկ. 77. Վերակազմություն միանավ բազիլիկ տաճարի հատակածի
Վերակազմեց Գր. Քոչոյան

իսկ մեր ոչ կարացեալ համբերել այսպիսի չար գործոց նոցա… Քանդեալ աւերեցաք զտեղի ապաւինի անաւրէնութեան նոցա՝ և բարձաք ի մէնջ գիշերայինն զայն խավարս[2]։

Այս տաճարը ևս չի կարելի շփոթել կաթողիկոսական պալատի մոտ բացված միանավ բազիլիկ եկեղեցու հետ, որովհետև զազտնի կերպով հավաքվող նեստորականները չէին կարող կաթողիկոսարանի և կաթողիկե եկեղեցու մոտ, քաղաքի կենտրո-

1 Դրասխանակերտցի, էջ 83։

2 Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 72—73, նաև Այրարատ, բնաշխարհ Հայաստանեայց, տեղագրեաց Հ. Ղ. վ. Ալիշան, Վենետիկ, 1890, էջ 413—414։

նական թաղում, կատարել իրենց կրոնական ծիսակատարությունները։

Նշանակում է, այդ միանավ բազիլիկ եկեղեցին կապված է Յիզտբուզիտի անվան հետ։ Ուստի անհրաժեշտ է մեզ գիտենալ, թե երբ է եղել Յիզտբուզիտի մահը, որպեսզի նրա հիման վրա էլ որոշենք այդ տաճարի շինության թվականը։

Դրասխանակերտցին անորոշ է թողերկու տարի, 554—555 թվականների ընթացքում։

Այսպիսով, գալիս ենք այն եզրակացության, որ Դվինի կաթողիկոսարանի արևելյան կողմում բացված միանավ բազիլիկ տաճարը կառուցված է 554—555 թվականներին Ներսես Բագրևանդեցի կաթողիկոսի օրով, քրիստոնեություն ընդունած Յիզտբուզիտի գերեզմանի վրա իբրև վկայարան։

Նկ. 78. Կաթողիկոսական պալատի հյուսիսային թևի հարկաբաժինների ավերակները

նում այդ թվականը, նշելով միայն, որ Յիզտբուզիտի սպանությունը տեղի է ունեցել Ներսես երկրորդի կաթողիկոսության օրով[1]։ Այրիվանեցին Յիզտբուզիտի մահը դնում է 552 թվականին[2], Սամուել Անեցին 553 թ.[3]։ Բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանը ժամանակական հաշիվների հիման վրա վերագրում է 553 թվականի նոյեմբերի 9-ին,[4] որ մեր կարծիքով միանգամայն ճիշտ է։ Հետևապես, տաճարը շինված պետք է լինի, եթե շինության տևողությունը հաշվենք

Այս տաճարի հիման վրա կարող ենք պնդել, որ միանավ նեղ ու երկար եկեղեցիների կառուցումը սկսվը առնելով քրիստոնեության վաղ շրջանում, գուցե և հեթանոսության ժամանակ, հարատևել է մինչև 6-րդ դարի երկրորդ կեսը, որի վերջին օրինակներից մեկն է հանդիսանում Դվինի տաճարը։

Դրասխանակերտցու պատմությունից տեղեկանում ենք, որ այդ միանավ բազիլիկ տաճարը կաթողիկե եկեղեցու հետ միասին հիմնահատակ կործանվել է Դվինի 2-րդ մեծ երկրաշարժի ժամանակ 893 թվականին։

Ճիշտ է, Դրասխանակերտցին այդ տաճարի անունը մի քիչ անորոշ կերպով է հիշատակում, անվանելով նրան միայն «վկա-

1 Դրասխանակերտցի, էջ 64։

2 Միխիթարայ Այրիվանցւոյ, Պատմութիւն հայոց, Մոսկվա, 1860 թ. էջ, 48։

3 Սամուել Անեցի, էջ 75։

4 Գալուստ Տեր-Մկրտչյան, Գրիգոր Մանաճիհր Ռաժիկ Միհրանեան տոհմից, Վաղարշապատ, 1908 թ. էջ 3։

յարան», բայց կաթողիկե եկեղեցու կործանումը նկարագրելուց հետո զարմանքով նշում է, որ նույնիսկ վկայարանի հաստահեղույս պատերը հիմնահատակ կործանվել են։ Նա ասում է՝

«Զայլ ևս հաստահեղոյս վկայարանն՝ դղրդեալ քանդեալ աւերեալ ի վայր հոսէր, որ գրեթէ իբրև զփապարս վիմուտս դերբկաց սարասփելի տեսողացն երևէր»[1]։

Միանգամայն պարզ է, որ այստեղ հեղինակը նկատի ունի Ցիզտրուզիտի վկայարանը, որովհետև կաթողիկեի մոտ որևէ այլ հաստահեղույս վկայարան չի եղել։

Կաթողիկոսի պալատը.— Դվինի կենտրոնական թաղում 1937—1939 թվականների պեղումների ընթացքում բացված քար ու կիր աշխարհիկ շինության ավերակները հենվելով պատմագիրների վկայությունների վրա, իրավացիորեն վերագրվեցին կաթողիկոսարանին[2]։

Այդ պալատն իբրև միջին դարերի աշխարհիկ ճարտարապետության եզակի նմուշ, ունի խոշոր արժեք, ուստի անհրաժեշտ է փոքր ինչ հանգամանորեն կանգ առնել նրա վրա։

Դեռ նախ քան պեղումները, կաթողիկոսարանի շենքի հետքերը մերձակա գյուղերի բնակիչները գտել էին և զանազան ժամանակներում փորփորումներ կատարել այնտեղ՝ սրբատաշ քարեր հանելու նպատակով, այնպես որ, պեղումների միջոցին տեղում մնացել էին շենքի միայն հիմնապատերը, որոնք հավասարվել էին աղյուսե հետնագույն հատակին։ Այնուամենայնիվ, ավերակների այժմյան մնացորդներից երևում է, որ շենքն ամբողջությամբ կառուցված է եղել սրբատաշ տուֆ քարով և կրային շաղախով։ Նա բռնում է 31×32 մետր տարածություն և ունի, գրեթե ուղղանկյուն քառանկյունու ձև։ Նա տեղադրված է աշխարհագրական կողմերի ուղղությամբ, և մի քիչ ձգված է արևելքից դեպի արևմուտք։ Այս շենքն իր կազմությամբ հարավից դեպի հյուսիս բաժանվում է երեք թևի, ըստ որում հարավային թևում զետեղված են հինգ առանձին սենյակներ, որոնցից կենտրոնականը հատկացված է հարավային մուտքին իբրև նախասենյակ։ Կենտրոնական թևն իր ամբողջ երկայնքով հատկացված է կաթողիկոսարանի 26,9×11,5 տարածություն բռնող սյունազարդ դահլիճին, որ շենքի հանդիսավոր մասն է ներկայացնում, իսկ հյուսիսային թևը բաղկացած է տարբեր մեծության իրար կողքի շարված հինգ սենյակներից, որոնցից արևելյան ծայրինն ամենամեծն է և ունի 7,0×7,9 մետր մեծություն, նրա կողքինը՝ 4,2×7,9, երրորդը՝ 6,25×7,9, իսկ արևմտյան երկու սենյակներից յուրաքանչյուրն ունի 4,2×7,9 մետր հատակ։ Պատերը քիչ թե շատ լավ են պահպանվել հյուսիսային թևին պատկանող սենյակներում, որտեղ մնացել են սրբատաշ քարերի մի քանի շարքեր։ Այդ շարքերն ամենայն հավանականությամբ, հատակից ցածր ընկնող հիմնապատերին են պատկանում[1]։

Շենքի հարավային և արևելյան մասերում պահպանվել են միայն հիմնապատերի քարերը, որոնք հնարավորություն են տալիս որոշելու միայն շենքի ներքին բաժանումների ընդհանուր ուրվագծերը։ Պեղումների ժամանակ ի հայտ եկան շենքին պատկանող արժեքավոր մի քանի ճարտարապետական բեկորներ, որոնց հիման վրա հնարավոր է գաղափար կազմել շենքի կառուցման ժամանակի և ոճի մասին։

Պեղումների ժամանակ գտնվեցին սյունազարդ դահլիճի հինգ խարիսխներն իրենց բուն տեղերում և դահլիճի զարդը հանդիսացող արմավենազարդ խոյակներից մեկը, գրեթե ամբողջական վիճակում։ Բացի այդ, գտնվեցին նույն տիպի խոյակների մի քանի բեկորներ ու գրանիտից շինած հետապարյան մի փոքրիկ խարիսխ, որն ըստ երևույթին, այդտեղ են տեղափոխել դահլիճը վերանորոգելու ժամանակ։

Կաթողիկոսի պալատը մինչև իր վերջնական կործանումը սկզբնական վիճակում

---

1 Դրասխանակերտցի, էջ 162։

2 Այս կաթողիկոսարանը ընկ. Վ. Հարությունյանն իր հրատարակած բոլոր աշխատությունների մեջ, սխալմամբ անվանում է պատրիարքարան, որ բոլորովին այլ իմաստ ունի։

1 Դվինում, ինչպես կաթողիկոսի պալատի, այնպես էլ կաթողիկե եկեղեցու սկզբնական շինությունների մնացորդների մեջ նկատելի է, որ հատակից ցածր գտնվող հիմնապատերը երեսապատված են գրեթե սրբատաշ քարերով, բայց մի քիչ անփույթ կերպով շարված։ Այդ շարվածքների մեջ քարերի արանքին նկատելի են կրաշաղախի հետքեր և քարերն էլ միմյանց ճիշտ հարմարեցնելու մեծ ջանք չեն գործադրել։

չէր մնացել, այլ նա իր գոյության ընթացքում ենթարկվել էր զգալի փոփոխությունների. նախ՝ հին հատակը, որ ամենայն հավանականությամբ սրբատաշ սալքարերով պետք է եղած լիներ, քանդված էր և մոտ 40 սանտիմետրով նրանից ավելի բարձր նոր հատակ էր շինված՝ քառակուսի ցից մեկը Ն. Տոկարսկունն է, իսկ մյուսը՝ Վ. Հարությունյանինը։ Տոկարսկին ենթադրել է, որ կաթողիկոսական պալատի կենտրոնական սյունազարդ մասը ոչ թե դահլիճ, այլ ներքին բակ է,[1] որտեղ կաթողիկոսը առանձնության մեջ թարմ օդ է շնչել Դվինի ամառային շոգ օրերին։



Նկ. 79. Հատակաձև՝ կաթողիկոսական պալատի
Չափագրություն Գր. Քոչոյանի

թրծում աղյուսներով, որի շնորհիվ դահլիճի սյան խարիսխները կիսով չափ թաղվել էին գետնի մեջ. Դահլիճի և հարավային կողմի սենյակների որոշ տեղերում հում աղյուսե պատեր են շարված իրար միջնորմ։ Սյուներից մեկի կողքին աղյուսե հենապատ է շարված՝ հավանաբար ճաքված, սյան բեռը թեթևացնելու նպատակով։

Կաթողիկոսարանի սկզբնական ձևի վերակազմության մասին արդեն հրատարակվել են երկու տարբեր կարծիքներ, որոն-

Տոկարսկու տեսակետին հակառակ, ճարտ. Վարազդատ Հարությունյանը կաթողիկոսարանի սյունազարդ միջին թեր համարել է դահլիճ, որն ունեցել է իր ներքին սյուների վրա հենվող փայտե հազարաշեն երդիկավոր երեք գմբեթ։ Այդ գմբեթների միջից էլ դահլիճն ստացել է իր լույսը։ Ճարտ. Վ. Հարությունյանի այս տեսակետն ավելի հավանական է Հայաստանում տիրող

[1] Н. М. Токарский, Архитектура древней Армении, стр. 43.

շինարարական սովորությունների տեսա-կետով, բայց կարծում ենք, որ Հայաստանի հին ճարտարապետության համար ավելի տեղի չի ունեցել, այլ հիացել է հին փայ-տածածկը, որը հնարավորություն է տա-լիս մեզ ըմբռնելու նույնիսկ ձևափոխ-

Նկ. 80. Արմավենազարդ խոյակ կաթողիկոսի պալատական դահլիճի

հարազատ էր եռանավ բազիլիկ դահլիճի գո-յությունը, որովհետև 5-րդ դարում այդ ոճն ամենատարածվածն ու իշխողն էր հան-դիսանում։ Այստեղ կարևոր է նշել նաև այն ված եռանավ բազիլիկների մի քանի ման-րամասնությունները։

Ժամանակի որոշման մեջ Տեկորսկին խորապես սխալվում է, երբ այդ շենքը վե-

Նկ. 81. Կաթողիկոսական պալատի արմավենազարդ խոյակների բեկորներ

հանգամանքը, որ եթե հնագույն բազիլիկ եկեղեցիների փայտե ծածկը 5-րդ դարում շատ տեղերում փոխել են քարե ծածկի, կաթողիկոսարանում այդ [փոփոխությունը րագրում է 7-րդ դարին, որովհետև կաթո-ղիկոսարանը, ինչպես տեսանք, արդեն 6-րդ դարի կեսերին հիշատակվում է մի շարք մատենագիրների պատմական երկերի մեջ

Ցիզտրուզիտի կապակցությամբ։ Այստեղ մեզ կարող են առարկել, որ կաթողիկոսարանն այն ժամանակ կարող էր ուրիշ շենք ունենալ, բայց պատմագիրների վկայության մեջ կաթողիկոսարանի տեղը ևս ճշտըրվում է (վկայարանի արևմտյան կողմը)։ Տոկարսկին կաթողիկոսարանի ժամանակը եկել խոյակների վրա պարզ վոլյուտը և նրա տակին զամբյուղաձև հյուսվածքը, իսկ ճակատային զարդերի մեջ՝ խաղողի և նռան քանդակները։

Վ. Հարությունյանը կաթողիկոսարանի կառուցման ժամանակը միանգամայն անորոշ է թողնում, համարելով կառուցված



Նկ. 82. Կաթողիկոսական պալատի արմավենազարդ խոյակի չափերը
Չափագրություն Գր. Քոչոյանի

որոշելու համար հենվում է միայն շենքի քանդակագործության վրա, բայց այդ հարցում նա սխալի մեջ է ընկնում, որովհետև արմավենու ճյուղերը, որով զարդարված է կաթողիկոսարանի դահլիճի խոյակը, մեր ճարտարապետության մեջ հանդես է եկել միայն 5-րդ դարում (Քասաղ, Տեկոր, Երերույք և այլն), իսկ հետագայում, մանավանդ 7-րդ դարում, նա իսպառ վերացել էր ասպարեզից և նրա տեղն արդեն երևան էր 470 - 471—572 թվականների միջև, առանց որևէ սահմանափակում մտցնելու թեկուզ իր առաջարկած 100 տարվա տևողության մեջ։

Մեզ թվում է, որ Տոկարսկին կաթողիկոսի պալատը 7-րդ դարին է վերագրել գլխավորապես նկատի առնելով նրա կղմինդրե ծածկը։ Այս հարցում էլ Տոկարսկին սխալվել է, որովհետև կաթողիկոսի պալատը կղմինդրով ծածկված չի եղել և կըղ-

մինդրի այն բեկորները, որոնք ցրիվ եկած վիճակում գտնվել են պալատի միայն հարավային պատերի մոտ, պատկանել են մայր եկեղեցուն, որն այդտեղից հեռու է ընդամենը 10–12 մետրով, իսկ եթե պալատն ունենար կղմինդրե ծածկ, այն դեպքում նրա բեկորները կգտնվեին նաև պա-



Նկ. 83. Կաթողիկոսական պալատի դահլիճի սյան խարսխի չափերը
Չափագրություն Գր. Քոչոյանի

լատի հյուսիսային մասերում, այն էլ մեծ քանակությամբ։ Սակայն, այս հարցն այնքան էլ մեծ արժեք չունի, որովհետև կղմինդրե ծածկ կարող էր լինել նաև 5-րդ դարում, քանի որ այդպիսի ծածկ է ունեցել նույնիսկ առաջին դարին պատկանող Գառնիի հեթանոսական տաճարը։

Բայց, ամենայն հավանականությամբ, կաթողիկոսի պալատը փայտե ծածկի վրա ունեցել է հողե տանիք՝ կավով սվաղած, իսկ գտնված կղմինդրներն իրենց տակի երեսին պահպանել են կրային շաղախի հետքերը։ Նշանակում է, նրանք կրաշաղախ ծածկ ունեցող շենքի տանիքից են ընկել, ինչպիսին էր կաթողիկե եկեղեցին և ոչ թե կաթողիկե պալատի, որը կրաշաղախ ծածկ երբեք չի ունեցել։

Կաթողիկոսական պալատի կառուցման մասին մենք ոչ մի ուղղակի հիշատակություն չունենք պատմական աղբյուրներում։ Ըստ 7-րդ դարի մատենագիր Սեբեոսի՝ Բյուզանդական Կոստանդին կայսրը Դվին գալով հյուրընկալվում է կաթողիկոսարանում։ Նա այդ առթիվ գրում է՝

«Եւ երթեալ (արքայն Կոստանդին) ի Դուին՝ նստաւ ի տան կաթողիկոսին»[1]։

Նույն դեպքը Սեբեոսը երկրորդ անգամ հիշատակում է Ներսես Տայեցու՝ քաղկեդոնական ծեսով հույն եպիսկոպոսից Կոստանդին արքայի հետ միասին հաղորդություն ընդունելը պատմելու ժամանակ.

«Մինչև եկն արքայ Կոստանդին և նստաւ ի տան կաթողիկոսին»[2]։

Այս դեպքերը վերաբերում են 7-րդ դարի կեսերին, իսկ ավելի վաղ ժամանակի մասին հիշատակություն ունի Դրասխանակերտցին, որն, ինչպես տեսանք, Դվինի կաթողիկոսարանը հիշատակում է Յիզտբուզիտի կապակցությամբ 553 թվականին[3]։

Այս տեղեկությունները մեզ չեն կարող գոհացնել, որովհետև նրանցից տեղեկանում ենք միայն այն, որ 6-րդ դարի կեսին արդեն գոյություն ուներ կաթողիկոսարանը, բայց թե երբ էր կառուցվել, այդ մասին այդտեղ ոչ մի խոսք չկա։

1 Պատմութիւն Սեբէոսի..., էջ 227։

2 Նույն տեղում, էջ 229։ Նույն դեպքը պատմում է նաև Դրասխանակերտցին, իր պատմության 96 էջում։

3 Դրասխանակերտցի, էջ 64։ Նրան կրկնում է 13-րդ դարի մատենագիր Վարդան վարդապետն իր պատմության 57 էջում։

Մեզ թվում է, որ կաթողիկոսարանի կառուցումը կապված է հայրապետական աթոռը Դվին տեղափոխելու հետ, որովհետև կաթողիկոսարանը կառուցված պետք է լինի կաթողիկոսի Դվին տեղափոխվելուց անմիջապես հետո։ Աթոռի տեղափոխման մասին արդեն ունենք, թեև միմյանց հակասող, բայց ուղղակի տվյալներ, որոնց վրա արժե փոքր ինչ կանգ առնել։

Չամչյանը կաթողիկոսական աթոռը Դվին փոխադրելը կապել է վարդանանց պատերազմից հետո Մանազկերտի եպիսկոպոս Մելիտեին 452 թվականին կաթողիկոս ընտրելու հետ, երբ որոշում է ընդունվում հայրապետական աթոռը Դվինում հաստատելու մասին[1]։

Չամչյանի հետևությամբ նույն թվականն է ընդունել նաև Սեն Մարտենը[2]։ Սակայն, Մելիտե կաթողիկոսին ժամանակակից 5-րդ դարի մատենագիր Ղազար Փարպեցին ոչ մի խոսք չի ասում հայրապետական աթոռը Դվին փոխադրելու մասին,[3] այնպես որ, Մելիտեի օրոք աթոռը Դվին փոխադրելը լոկ ենթադրություն է և չի հիմնավորված ոչ մի վկայության վրա։ Ընդհակառակը, մեր մատենագիրներից մի քանիսը՝ Դրասխանակերտցին[4], Թովմա Արծրունին[5] և Վարդան վարդապետը[6] կաթողիկոսական աթոռի Դվին փոխադրելը կապում են Գյուտ կաթողիկոսի հետ (461—478)։ Նույնն է նաև Երևանի Պետական Ձեռագրատան (մատենադարան) մեջ պահվող 8—10-րդ դարերին պատկանող № 6983 ձեռագիր աշխատությունը, որի վերնագիրն է «Մեծահանդէս հակաճառութիւն փառաւոր յոգնագեղ իմաստիւք լցեալ Երանելեացն սրբոց մեծին Մովսէսի Քերթողի և Դաւիթ անյաղթ փիլիսոփայի...», այդ ձեռագրի 94 էջում գրված է, որ կաթողիկոսական աթոռը Դվին փոխադրեց Գյուտ կաթողիկոսը․

«Իսկ հայրն Գիւտ եկեալ հաստատէր զկարգս եկեղեցւոյ յԱշխարհին Հայոց և հաստատեաց զաթոռ իւր ի Դւին քաղաքին։»

Դրասխանակերտցին պատմում է, որ քրիստոնեությունն ուրացող հայ նախարարներ Շավասպ Արծրունին և դժնեցի Վնդոն Դվինում շինել են տալիս որմզդական մի մեհյան, իսկ մեծ Սահակի թոռ Վարդանը, զորք հավաքելով՝ հանկարծակի հարձակվում է Դվինի վրա։ Այդ ժամանակ մարզպանը փախչում է, Շավասպը սպանվում, իսկ ուրացող Վնդոյին այրում են հենց իր շինած մեհյանի վրա։ Դրանից հետո Վարդանը քանդում է մեհյանը, նրա տեղում շինում ս. Գրիգոր եկեղեցին, հայրապետական աթոռը փոխադրում է Դվին և հենց այդտեղ էլ հայոց կաթողիկոս է հաստատում Գյուտին։



Նկ. 84. Կաթողիկոսական պալատի սյունազարդ սրահն ըստ Ն. Տոկարսկու

Այսպիսով, տեսնում ենք, որ Դրասխանակերտցու պատմածի հիման վրա, կաթողիկոսական աթոռի Դվին փոխադրելը տեղի է ունեցել 461 թվականին, Գյուտ կաթողիկոսի ձեռնադրվելու ժամանակ․

Թովմա Արծրունին նույն դեպքերը թեև մի քիչ այլ կերպ է պատմում, բայց հայրապետական աթոռի Դվին փոխադրելը վերագրում է նույնպես Գյուտ կաթողիկոսին։

---

[1] Միքայէլ վ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Հատոր Բ, Վենետիկ, 1785 թ., էջ 85։

[2] Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. I, Paris, 1818, p. 120.

[3] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի և Ստ. Մալխասեանի, Տփղիս, 1904 թ., էջ 110։

[4] Դրասխանակերտցի, էջ 59։

[5] Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 78—79։

[6] Վարդան վարդապետ, Հավաքումն պատմութեան, էջ 53։

Ուսումնասիրողներից մի քանիսը վերոհիշյալ տեղեկությունները կասկածի տակ են առել։ Օրինակ՝ Օրմանյանն այս վկայությունն աղճատված է համարում, որովհետև դեպքերին ժամանակակից Եղիշեն և Ղազար Փարպեցին ոչինչ չեն գրել այդ մասին և որ գլխավորն է, այս դեպքերի ժամանակ, որոնք տեղի էին ունենում պարսից Պերոզ արքայի օրով, Վարդան Մամիկոնյանը կենդանի չէր։

Օրմանյանը ենթադրում է, որ Դրասխանակերտցին և Թովմա Արծրունին իրենց տեղեկությունները քաղել են անգիր զրույցներից, որոնց մեջ Վահան Մամիկոնյանի փոխարեն հանդես է գալիս Վարդան զորավարը[1]։

ապրում է Դվինում՝ պարսկական Հայաստանի մայրաքաղաքում»[1]։

Ասորի Զաքարիային ժամանակակից Բյուզանդական մատենագիր Պրոկոպիոս Կեսարացին ևս կաթողիկոսի աթոռը Դվինում լինելը հիշատակում է իր «Հռոմեացիների պատերազմները Պարսից դեմ» աշխատության մեջ։ Դվինի մասին խոսելիս, ի միջի այլոց, նա գրում է.

«Այստեղի (Դվինի) քրիստոնյաների եպիսկոպոսը հունարեն բառով կաթողիկոս է կոչվում, որովհետև միայն նա հոգևոր իշխանություն ունի այստեղի բոլոր գյուղերի վրա»[2]։

Հայ մատենագիրները Մուշե կաթողիկոսին (526—534) գիտեն իբրև Դվինում



Նկ. 85. Կաթողիկոսական պալատի սյունազարդ դահլիճն ըստ Վ. Հարությունյանի

Մենք այն տեսակետին ենք, որ կաթողիկոսական աթոռը Դվին է փոխադրվել Գյուտի օրով, Նրա կաթողիկոսության հենց սկզբին, որովհետև Գյուտից հետո ոչ մի կաթողիկոս Դվինից դուրս չի հիշատակվել։ 6-րդ դարում կաթողիկոսի աթոռանիստը ոչ միայն հայ, այլև օտար աղբյուրներում հիշատակված է Դվինը։ Այսպես օրինակ՝ 6-րդ դարի կեսերին ասորի մատենագիր Զաքարիա հռետորն, ըստ Պտղոմեոսի աշխարհագրության երկրները թվելուց հետո, ավելացնում է.

«Նկարագրած երկրներից բացի, հյուսիսային կողմերում դարձյալ կան 5 հավատացյալ ժողովուրդ, որոնք ունեն 24 եպիսկոպոս և նրանց կաթողիկոսն

նստող, բայց ոչ իբրև աթոռ փոխադրող[3]։ Այդ պատճառով էլ ուսումնասիրողներից ոմանք հայրապետական աթոռի Դվին փոխադրելը վերագրում են Գյուտ կաթողիկոսի հաջորդ՝ Հովհան Մանդակունուն (478—490), որովհետև հենց 5-րդ դարի պատմագիր և դեպքերի մասնակից Ղազար Փարպեցին թեև կաթողիկոսական աթոռի փոխադրության մասին ոչինչ չի գրում, բայց մի քանի անգամ Հովհան Մանդակունուն հիշատակում է Դվինում։ Օրինակ, երբ Վա-

[1] Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում, Հատ. Ա., Կ. Պոլիս, 1912 թ., էջ 432։

[1] Н. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, Москва—Ленинград, 1941, стр. 165. Նաև Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПБ., 1908, стр. 219.

[2] Прокопия Кесарийского, История войн римлян с персами. Перевод с греческого Спиридона Дестуниса. Кн. II, СПБ., 1880, стр 182.

[3] Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 77։

հան Մամիկոնյանը Դվին է վերադառնում, նրան ընդառաջ է գնում Հովհան Մանդակունին եկեղեցական թափորով և այդտեղ հանդես է գալիս հատուկ ողջույնի ճառով։ Նույն Վահանին մարզպան օծելու ծեսը, Հովհան Մանդակունին կատարում է Դվինում։ Այդ ժամանակ թեև էջմիածինը բոլորովին լքված չէր, բայց տաճարը միանդնում է 485 թվականին, Մանդակունու կաթողիկոսության վերջին տարիներին, որ մեր կարծիքով միանգամայն սխալ է։ Ճիշտ է, Ղազար Փարպեցին աթոռը Դյուսի օրով տեղափոխելու մասին ոչինչ չի գրում, բայց միայն այն, որ Մանդակունու կաթողիկոսության օրով էջմիածնի վանքի վանահայրը հենց ինքը Ղազար Փարպեցին էր,



Նկ. 86. Կաթողիկոսական պալատի սյունազարդ դահլիճի հավանական ձևը
Գծագրություն Գր. Քոչոյանի

գամայն խարխլված էր և կարիք ուներ մեծ նորոգության, որ կատարվեց հենց Վահան Մամիկոնյանի հրամանով։ Այդ միջոցներին երբեմն կաթողիկոսը էջմիածնում էլ էր պատարագ մատուցում, միայն այն պատճառով, որ էջմիածինը քրիստոնեության հիմնադիր Գրիգոր Պահլավունու անվան հետ էր կապված։

Օրմանյանը՝ աթոռի Դվին փոխադրելը ապացույց է այն բանի, որ այնտեղից արդեն կաթողիկոսը հեռացել էր, որովհետև կաթողիկոսական վանքը վանահայր չի ունենում։ Բոլոր պարագաներում պարզ է, որ Վահան Մամիկոնյանը Հայաստանի մարզպան դառնալուց առաջ էլ կաթողիկոսը նստում էր Դվինում և Դվինի կաթողիկե եկեղեցին Վահան Մամիկոնյանը նորոգեց իր մարզպանության առաջին տարիներին։

Այսպիսով, գալիս ենք այն եզրակացության, որ մեր պատմագիրների տված տեղեկությունները Գյուտ կաթողիկոսի ընտրության ժամանակ հայրապետական աթոռը Դվին փոխադրելու վերաբերյալ հաստատվում է մի շարք պատմական տվյալներով և այդ դեպքը հերքողների փաստարկումները հիմնավոր չեն։

Նկ. 87. Կաթողիկոսական պալատի հարավային թևի կենտրոնական հարկարաժնի հետնադույն ազյուսե հատակը և նրա հետ շինված հում աղյուսե պատերը

Ուրեմն, կաթողիկոսի պալատը Դվինում շինվել է 461 թվականից անմիջապես հետո, երբ այնտեղ փոխադրվեց հայրապետական աթոռը։ Սակայն, եթե ենթադրելու լինենք, որ հայրապետական աթոռը Դվին փոխադրելուց անմիջապես հետո չի շինվել կաթողիկոսարանը, այլ ավելի ուշ, այդ դեպքում պետք է ընդունենք, որ նա կառուցվել է 461 թվականից հետո և 553 թվականից առաջ, երբ արդեն պալատն իբրև օրիենտիր շինություն հիշատակված է Յիզտբուզիտի վկայարանը կառուցելու կապակցությամբ։

Արդ, տեսնենք թե այդ 90 տարիների միջև ընկած ժամանակամիջոցում, ե՞րբ կարող էր շինված լինել պալատը։ Այստեղ արդեն չունենք ոչ մի գրավոր տեղեկություն, այդ պատճառով էլ պետք է դիմենք երկրի քաղաքական իրադարձությունների օգնության։

Պատմությունից գիտենք, որ 451 թվականի Վարդանանց պատերազմից հետո պարսկական հալածանքները հայերի դեմ չվերջացան, այլ ուժեղ թափով շարունակվեցին մինչև 485 թվականը։ Մեզ ծանոթ են հայոց 481—484 թվականների ապստամբությունը Սասանյան Պարսկաստանի դեմ, իսկ մինչ այդ, Վահան Մամիկոնյանը ստիպված էր առերես ուրանալ քրիստոնեական կրոնը և Գյուտ կաթողիկոսը, որը Տիզբոն էր կանչվել բացատրությունների համար, նույնպես առաջարկ ստացավ պարսից արքայի կողմից դավանափոխ լինելու մասին և չհամաձայնելու պատճառով աքսորվեց։ Հայերի պահպանվող ինքնուրույնությունը ոչնչացնելու և պարսիկներին միաձուլելու քաղաքականությունը այնտեղ հասավ, որ նախարարներն ապստամբեցին Պարսկաստանի դեմ, Հայաստանից վանեցին պարսիկ մարզպանին, ստիպեցին Պարսկաստանին հայերի հետ հաշտություն կնքել և Վահան Մամիկոնյանին էլ մարզպան նշանակել Հայաստանի վրա 483 թվականին։ Այս խառն տարիներին մինչև 485 թվականը

Հայաստանում ոչ միայն որևէ շենք չէր կարող շինվել, այլ եղած շենքերը չէին կարող նույնիսկ նորոգվել։ Հայտնի է, որ այդ ժամանակ Դվինի կաթողիկե եկեղեցին և Էջմիածնի տաճարը մեծ կարիք ունեին նորոգության, որոնք կատարվեցին 485 թվականից հետո, երբ Վահան Մամիկոնյանն արդեն մարզպան էր։ Մենք կարծում ենք, արդեն Վահան Մամիկոնյանը մարզպան էր։ Հուցե Մանդակունին ինքն էլ ավարտել է կաթողիկոսարանի շինությունը և մեկ կամ երկու տարի ապրել է այնտեղ։ Նշանակում է, կաթողիկոսի պալատը կառուցվել է 461 կամ 485—489 թվականներին, այլ խոսքով, այդ շենքը պատկանում է 5-րդ դարի երկրորդ կեսին։



Նկ. 88. Կաթողիկոսական պալատի դահլիճի հարավային թևի սյուներից մեկի կողքերին շարված օժանդակ աղյուսե պատի մնացորդները

որ հենց եկեղեցու այդ նորոգության ժամանակ էլ կառուցվել է կաթողիկոսի պալատը, որովհետև նրանից հետո, մինչև 6-րդ դարի կեսերը, երբ արդեն այդ պալատի գոյությունը մեզ ծանոթ է պատմագիրներից, ոչ մի շինության մասին տեղեկություն չկա պատմության մեջ և երկրի քաղաքական վիճակն էլ Վահան Մամիկոնյանի (485—506) և նրա հաջորդ՝ Վարդ Պատրիկի չորսամյա իշխանությունից հետո այնքան բարենպաստ չէր շինարարության համար։ Եթե ընդունենք, որ կաթողիկոսի պալատը 460-ական թվականներին չի կառուցվել, այդ դեպքում պետք է ենթադրենք, որ նրա հիմքը դրվել և կառուցումն ավարտվել է Հովհան Մանդակունու կաթողիկոսության (478—490 թթ.) վերջին տարիներին, երբ

Կաթողիկոսի պալատը թեև վնասվել է 893 թվականի մեծ երկրաշարժի ժամանակ, բայց մյուս շենքերի նման չի կործանվել՝ փայտե ծածկ ունենալու պատճառով։ Թաղակապ քարե ծածկը երկրաշարժի հարվածներից ճաքճքվում է և թափվում գետին, իսկ փայտի ծածկն այդ վտանգից ազատ է, ուստի և 893 թվականին Դվինի մայր եկեղեցին և հատատաճեղույս վկայարանը հիմնահատակ կործանվել են, իսկ պալատը միայն վնասվածքներ է ստացել։ Դեպքերին ժամանակակից Թովմա Արծրունին մեզ տեղեկացնում է, որ երկրաշարժից հետո Գեորգ կաթողիկոսը՝

«Թողեալ զբնակելն ի Դուինն՝ ելեալ բնակեցաւ ի Նոր քաղաքին ի մեծ եկեղեցւոջն որ յանուն սրբոյն Գրիգորի

շինեալ էր երանելւոյ տեառն Ներսիսի երկրորդի Հայոց կաթողիկոսին»[1]։

Նշանակում է, երկրաշարժի ժամանակ կաթողիկոսարանն այնքան էր վնասվել, որ կաթողիկոսն ստիպված է եղել փոխադրվել Զվարթնոց, թեև աթոռի տեղափոխությունը արդյունք էր նաև մի շարք այլ հանգամանքների։ Սակայն այդ փոխադրությունը վերջնական չէր, որովհետև դրանից հետո ևս մի շարք անգամներ կաթողիկոսին մենք հանդիպում ենք Դվինում, մանավանդ Հովհաննես Դրասխանակերտցու կաթողիկոսության ժամանակ։

Պեղումները ցույց են տալիս, որ այդ երկրաշարժի ժամանակ խարխլել են կաթողիկոսի պալատի դահլիճի քարե սյուները, ուստի վերանորոգության ժամանակ հյուսիս արևելյան սյան մոտ դրել են մի նոր լրացուցիչ սյուն, գրանիտե խարիսխով, հարավային շարքի երկու սյուների խարիսխների շրջապատը շարել են աղյուսե հենապատեր՝ խախտված սյուներն ամրացնելու նպատակով, որպեսզի նրանք կարողանային իրենց վրա պահել դահլիճի բավականին ընդարձակ ծածկը (Նկ. № 88)։ Այս ժամանակ է, որ բարձրացրել են նաև դահլիճի և հարավային սենյակների հատակները մոտ 40 սմ։ Կաթողիկոսի հեռանալուց հետո պալատի ինչ բանի ծառայած լինելը հայտնի չէ, միայն այսքանը պարզ է, որ նա բնակարան չի դարձել, որովհետև կենցաղային առարկաներ և տնային կարասի համարյա թե չգտնվեց այդտեղ։ Մեր և ուրիշների այն ենթադրությունը, որ կաթողիկոսարանը կարող է վերածված լինել մզկիթի, արդյունք է միայն պատմական գրավոր տեղեկություններին։ 10-րդ դարի արաբ մատենագիր Իստախրին գրում է, որ Դվինում քաղաքի գլխավոր մզկիթը գտնվում է եկեղեցու կողքին[2]։

Այդ ենթադրել է տալիս, որ կաթողիկոսի Դվինից հեռանալուց հետո, հավանաբար Սմբատ առաջինի և Ափշինի (կամ վերջինիս հաջորդ Յուսուֆի) միջև Դվինի շուրջը տեղի ունեցող կռիվների ժամանակ (9-րդ դարի վերջերքին կամ 10-րդ դարի առաջին տասնամյակին մինչև Աշոտ երկաթի թագավորելը), կաթողիկոսի պալատը վեր է ածվել մզկիթի։ Այդ երևույթը տարօրինակ չպիտի թվա, երբ նկատի առնենք այն հանգամանքը, որ նույն բանը տեղի է ունեցել նաև Անիում։ Այնտեղ ևս ինչպես Դվինում, արաբները մզկիթը ոչ թե իրենք են կառուցել, այլ կաթողիկե եկեղեցին վեր են ածել մզկիթի, իսկ հետո էլ Շեդդադյանների օրով, քաղաքացիական մի գեղեցիկ շենքի կողքին բավականին մեծ մինարե կառուցելով, դարձրել են մզկիթ, որ այժմ հայտնի է Մանուչեի մզկիթ անունով։

Մեր ասածին հակառակ, 10-րդ դարի մի այլ մատենագիր, Ալ. Մուկադդասին գրում է, որ Դվինում գլխավոր մզկիթը գտնվում է մի հսկայական բլրի վրա, իսկ մզկիթի կողքին (գտնվում է՝) եկեղեցին[1]։

Ինչպես գիտենք, Դվինում մեծ բլուրը միայն միջնաբերդն է, իսկ միջնաբերդում մզկիթ չէր կարող լինել թեկուզ այն պատճառով, որ ամեն մարդ այնտեղ չէր կարող մուտք ունենալ աղոթք անելու համար, հետևապես քաղաքի հասարակական մզկիթն այնտեղ չէր կարող լինել։ Ալ. Մուկադդասին այստեղ սխալվում է. նա այդ տեղեկությունը, ինչպես նաև մի շարք այլ տեղեկություններ, արտագրել է ուրիշ մատենագիրներից, որոնց մեջ այդ մեծ բլրի մասին հիշատակություն չկա։

Ճիշտ է, կաթողիկոսի պալատը հարմար չէ մզկիթի համար, որովհետև հայկական շենքերի առանձնահատուկ կողմերից մեկն այն է, որ նրանք սովորաբար արևելքից դեպի արևմուտք են ձգված լինում, նույնիսկ այն դեպքում, երբ եկեղեցիներ չեն, իսկ մզկիթի համար անհրաժեշտ է հարավից դեպի հյուսիս ձգված շենք, որպեսզի հարավային կողմում մզկիթի մեհրաբ կառուցեն։ Սակայն, ինչպես Անիում, այնպես էլ Դվինում, առանց նկատի առնելու այդ անհարմարությունը, արաբներն արևելադիր շենքերն օգտագործել են մզկիթի համար։ Մեզ թվում է, որ Դվինի կաթողիկոսարանի հարավային թևի կենտրոնական սենյակում պահպանված հում աղ-

[1] Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց ՍՊԲ. 1887 թ., էջ 231։

[2] СМОМПК, выпсук XXIX. Тифлис, 1901, стр. 19.

[1] СМОМПК, выпуск XXXVIII, Тифлис, 1908. стр. 92.

Նկ. 89. Կաթողիկոսական պալատի դահլիճի փորագիր գիպսե հարդարանքի բեկորներ
Նկար. Ա. Պատրիկի

յուսե պատերը կարող են մզկիթի մեհրաբի հետքերը լինել։

Կաթողիկոսարանն այդ վիճակում էլ մնացել է մինչև իր վերջնական ավերումը 13-րդ դարի կեսերին, երբ ամբողջ քաղաքի հետ միասին կործանվեց մոնղոլների ներխուժման ժամանակ։

ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ԳԱԳԱԹԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջնաբերդի գագաթին, մինչև 1950 թվականը, բաց են արվել 1,5-ից մինչև 2,5 մետր խորության մեջ վերին շերտի կառուցվածքները՝ 102 քառակուսինների սահմաններում, ընդամենը 2550 քառ. մետր մակերեսով։

Այդ տարածության մեջ բացված մեծ շինության երեք կողմերն ունեն 2,2 մետր հաստությամբ արտաքին պատ, որն իր տարբեր մասերում շարված է տարբեր տեսակի քարերով, առանց որևէ սիստեմի։ Բոլոր նշաններից երևում է, որ այդ պատերը կավակերտ են եղել և միայն նրանց հիմքերն են քարով շարվել, այն էլ մի տեղում մանր գետաքարերով, մի այլ տեղում տեղական կավային շերտաքարով կամ կրային ավազաքարի բեկորներով, մի երրորդ տեղում՝ այլ շինության վրայից քանդված մոխրագույն և շեկ տուֆաքարերով։ Այդ պատի իսկական բարձրության չափը ցույց տվող հետքեր տեղում չեն պահպանվել, և դժվար է որևէ ենթադրություն անել, քանի որ նման կավակերտ պալատական շինությունների մենք հանդիպում ենք առաջին անգամ և համեմատության համար որևէ նյութ դեռևս չունենք մեր ձեռքի տակ։

Շենքի արտաքին պատն ի հայտ է եկել միջնաբերդի արևմտյան, հյուսիսային և արևելյան կողմերում, իսկ հարավային մասում նրա սահմանները մնում են դեռևս անորոշ։ Արտաքին մուտքի հետքերը ոչ մի տեղում հայտնի չեն, իսկ ներքին բաժանումների դասավորությունից որևէ բան չի կարելի հասկանալ, որովհետև շենքի գլխավոր մուտքի հետ պետք է կապված լինի գլխավոր միջանցքը կամ շենքի ներքին բակը, որ այժմյան մացառների մեջ միանգամայն անհնարին է գտնել։ Ընդհանուր առմամբ արտաքին պատի ներսում շենքի ներքին դասավորությունը բոլորովին անխառն է. այստեղ նույնիսկ անհնարին է պարզել, թե այդ շինության ներքին մասերը մեկը մյուսի հետ ի՞նչ կապ են ունեցել և դժվար է պատկերացնել՝ դրանք բոլորը մի մեծ շի-

Նկ. 90. Կաթողիկոսական պալատի դահլիճի փորագիր գիպսե հարդարանքի բեկոր
Նկար Մ. Մոխի

նության բաժանմունքներն են հանդիսանում, թե տարբեր շինությունների մի մեծ խմբակցություն։ Երկու դեպքում էլ անհրաժեշտ է ներքին բաժանումների մեջ որևէ սիստեմի առկայությունը, որ, ինչպես ասացինք, չկա։

Արտաքին պատերի ներսում հարկաբաժինների դասավորությունը ևս անկանոն

Նկ. 91. Միջնաբերդի մեծ շինության ավերակների ընդհանուր տեսարանը 1948 թվականի պեղումների ժամանակ

է. Նույնիսկ արտաքին պատերը միմյանց նկատմամբ ուղիղ անկյան տակ չեն գտնվում, այլ արևմտյան և արևելյան հանդիպակաց պատերն իրենց հյուսիսային մասում մոտ 5 մետրի չափով իրարից ավելի հեռու են, քան հարավում։ Այս թեքությունը թեև շենքի մեծության պատճառով հասարակ աչքի համար այնքան էլ նկատելի չէ, բայց եթե հաշվի առնենք մեր պատմական հուշարձանների կառուցման մեծ ճշտությունը, մի անգամ ևս կհամոզվենք, որ այս շենքի կառուցողները բոլորովին խստապահանջ չեն եղել և կառուցող վարպետներն աչքաչափով շինել են մի անճաշակ հսկայական բնակելի շենք։

Երբ ընդհանուր հայացք ենք գցում շենքի հատակագծին, տեսնում ենք, որ նրա բոլոր պատերը մոտավորապես ուղիղ անկյան տակ են գտնվում արտաքին պատերի համեմատությամբ, որ ցույց է տալիս, թե այդ պատերի կառուցման ժամանակ հաշվի են առել արտաքին պատերի գոյությունը և շենքի ներքին բաժանումները կապել են արտաքին պատերի հետ, սակայն, ներքին բաժանումների մեջ որևէ դասավորություն չկա և երբեք հաշվի չի առնված շենքի մի մասից մյուսն անցնելու հանգամանքը։

Դվինի միջնաբերդի այս շենքերին ժամանակակից են Անիի միջնաբերդում բացված պալատական շինությունները, որոնք պատկանում են Բագրատունյաց թագավորներին։ Թեև այնտեղ էլ շենքերի մեջ որոշ խճողվածություն կա, բայց ներքին բաժանարար միջանցքները և սենյակների առանձին խմբակցությունները ակներև են։ Օրինակ, Անիում պալատական շինությունները մի երկար միջանցքով (փող տանցն) բաժանված են երկու հիմնական խմբերի՝ հարավային և հյուսիսային. հյուսիսային

խմբի մեջ գտնվում են երեք մեծ հանդիսասրահներ, բաղնիքը և մի քանի այլ սենյակներ, իսկ հարավային համեմատաբար մեծ խմբի մեջ, բացի առանձին դահլիճներից ու սենյակներից, մտնում են նաև պալատական եկեղեցին, մատուռը և միջնաբերդի ջրամբարը։ Այդ բոլորից զատ, շենքերի հարավային խումբն էլ, իր հերթին, մի նեղ միջանցքով բաժանված է երկու ենթախմբի։

Դվինի միջնաբերդի պալատական շինությունների մեջ այդպիսի բաժանումներ տարբերելը միանգամայն անհնարին է։ Այստեղ կանոնավորության բացակայությունը, ինչպես նաև շենքերի քար ու կիր չլինելը արդյունք են այն բանին, որ այս շենքերն իրենց գոյության ընթացքում մեծ փոփոխությունների են ենթարկվել և կառուցող իշխաններն այն ճաշակն ու գուցե նաև դրամական միջոցները չեն ունեցել, ինչ ունեցել են Անիի Բագրատունիները։

Եթե չլինեին Դվինի միջնաբերդի շենքի ներքին հարուստ հարդարանքի բեկորները, մենք նրան պալատ չէինք անվանի, որովհետև պալատական շինությունն անհրաժեշտորեն պետք է ունենա մի քանի դահլիճներ, պալատական եկեղեցի, մատուռ, բաղնիք, և այլն։ Դրան հակառակ, Դվինի այս շինության ամենամեծ բաժանմունքն ունի հազիվ 50 քմ մակերես, իսկ եկեղեցի կամ մատուռ բոլորովին չկա։ Ճիշտ է, Դվինի միջնաբերդը բաղնիք ունի, սակայն նա Անիի բաղնիքի համեմատությամբ փոքր է և հասարակ։ Թեև, մենք բոլորովին այն կարծիքին չենք, որ պալատական կառուցվածքն անպայման քար ու կիր պետք է լինի, որովհետև շինանյութը սերտորեն կապված է տեղական հումքի և տեղում տիրող սովորության հետ, սակայն, քանի որ Դվինի կաթողիկոսի պալատը քար ու կիր կառուցվածք է և ունի սրբատաշ տուֆ քարի երես, նշանակում է, որ միջնաբերդի կառուցողներն ավելի նվազ հարստություն են ունեցել և բավարարվել են իրենց պալատը սովորական տների նման կավակերտ շինելով։

Նույն եզրակացությանն ենք հանգում, երբ միջնաբերդի այս շինությունը համեմատում ենք աշխարհիկ բնույթի այնպիսի շինությունների հետ, ինչպիսիք են ժամատները՝ Հաղբատում, Սանահնում, Գեղարդավանքում, Հոռոմոսում և այլ տեղերում, որոնք բոլորն էլ իրենց կառուցման ժամանակի ճարտարապետության բնորոշ արտահայտություններն են և ունեն բարձր արվեստ ու գեղեցիկ կառուցվածք, իսկ Դվինում, միջնաբերդի շինությունը դրանց փոխարեն կրում է իր անճաշակ տերերի գրեթե միանգամայն անփույթ վերաբերմունքի կնիքը։ Մեզ թվում է, որ դրա բուն պատճառը պետք է որոնել կառուցման ժամանակ տիրող կացության մեջ։ Եթե մենք նկատի ունենանք այն հանգամանքը, որ միջնաբերդի այդ շինության հիմնապատի քարերի մի մասը, հատկապես սպիտակավուն ավազաքարը, բերել են կաթողիկե եկեղեցու վրայից, որն այդ ժամանակ արդեն փլատակված էր 893 թվականի երկրաշարժով, իսկ մի մասն էլ, գլխավորապես մոխրագույն տուֆ քարը՝ կաթողիկոսական պալատի վրայից, որ նույն երկրաշարժից վնասվել էր, այդ պարագային այլևս Դվինի միջնաբերդի շենքը շինողներից բարձր արվեստ պահանջելն անմտություն կլինի, մանավանդ որ, շենքի կառուցման ժամանակ ուժեղ կռիվներ էին տեղի ունենում հայ բագրատունիների և արաբ ոստիկանների միջև, որոնք տևեցին մինչև 922 թվականը, երբ Աշոտ երկաթը Բաղդադի Խալիֆի կողմից ճանաչվեց թագավոր թագավորաց։ Այդ պատերազմների միջոցին, որոնք մեծ մասամբ Դվինի շուրջն էին տեղի ունենում, քաղաքն անվերջ ավերման ու կողոպուտի էր ենթարկվում և բերդի տերերը ստիպված էին արագ կերպով վերանորոգել թշնամու հարձակումներից քանդված իրենց տներն ու հսկայական բերդապարիսպները։

Միջնաբերդի շինությունը, ի հարկե, իր սկզբնական տեսքով զգալիորեն տարբերվել է այժմյան մնացորդներից, որովհետև ժամանակի ընթացքում այդ շինությունը վերանորոգումների է ենթարկվել, որոնց միջոցին նրա առանձին մասերը ձևափոխվել կամ բոլորովին քանդվել են։ Այդ նորոգումների հետևանքով, հասկանալի է, որ շենքն ավելի է խճողվել և իր սկզբնական տեսքը կորցրել։

Հիմնապատերի այժմյան մնացորդների հիման վրա դժվար է պարզել շենքի ընդհանուր կազմության, ծածկի և մանավանդ



Նկ. 92. Ընդհանուր հատակագիծ միջնաբերդի 1939 և 1946—1948 թթ. պեղումների
Չափագրությունն Լ. Սադոյանի և Գր. Քոչոյանի

առանձին մասերի բարձրության հարցերը։

Այստեղ մենք տեսնում ենք մարդկային բնակության ծառայող բազմաթիվ հարկաբաժիններ, որոնք ունեն իրենց առանձին պահպանման մեծ սենյակներն ու թոնրատները։ Սակայն բացված հնացորդները ցույց են տալիս, որ թոնրատներն այստեղ ուշ ժամանակների չեն պատկանում ինչպես Անիում,[1] այլ նրանք հիմնադրվել են շենքի հետ և նրա հետ էլ կործանվել։ Դվինի միջնաբերդի շինության մեջ կան տնտեսական հարկաբաժիններ, որոնց միջից դուրս են գալիս հացահատիկի պաշարներ և շարքով դրված մեծ կարասների խմբեր։ Այդ տիպի շինությունները գլխավորապես տեղավորված են բլուրի արևելյան և հարավ-արևելյան մասում։ Մեզ թվում է, որ 1948 թվականին բացված կամարածածկ նկուղն ու նրան կից շինությունները նույնպես տնտեսական նպատակների են ծառայել, թեև նրանց միջից միայն մի քանի կարասներ են գտնվել։

Հարկաբաժինների դասավորությունը շենքի բռնած մեծ տարածության մեջ մեզ ենթադրել է տալիս, որ սկզբնական շրջանում շենքի կենտրոնում եղել է բակ, որը կատարել է ի միջի այլոց նաև բաժանարար միջանցքի դեր, բայց հետագայում կատարված վերափոխումների շնորհիվ այդ բակի հետքերը կորել են։

Արտաքին պատի և ներքին միջնորմերի բարձրության մասին ևս դժվար է որոշակի խոսք ասել։ Միայն այն հանգամանքը, որ բազմաթիվ տեղերում թոնրատներ կան, ցույց է տալիս, որ այդ հարկաբաժինները միահարկ են եղել՝ հավանաբար իրենց վրա ունենալով գմբեթավոր երդիկ։ Շենքի արտաքին պատի 2,2 մետր թարձրությունը մեզ իրավունք է տալիս ենթադրել, որ շենքի որոշ մասերն եղել են երկհարկանի, մանավանդ որ, երկհարկանի շենք բացվել բերդի հրապարակի մոտ, բլուրի հյուսիսային լանջին, թեև հնում կավակերտ պատերը սովորաբար շատ հաստ էին շինում նույնիսկ մի հարկանի շենքերի համար։ Մեզ թվում է, որ միջնաբերդի այս շինությունը մեծ մասամբ մի հարկանի է եղել և դրա ապացույցները մենք գտնում ենք շենքի ներքին միջնորմերի բարակության մեջ, որոնք, եթե նկատի առնենք հին ժամանակվա շինարարական սովորությունները, չէին կարող երկու հարկի համար շինված լինել, որովհետև նրանց թանձրությունը մեծ մասամբ 60-ից մինչև 80 սմ է։

Շենքի կրած նորոգությունները պետք է բաժանենք երկու խմբի. առաջինի մեջ պետք է դնենք այն մասնակի նորոգությունները, որոնք շենքի կազմության մեջ որևէ փոփոխություն չեն մտցրել. օրինակ՝ ենթադրենք փոխել են հատակը, պատերի հարդարանքները կամ ավելացրել են նոր միջնորմեր և այլն, իսկ երկրորդ խմբի մեջ դնելու ենք այնպիսի նորոգություններ, որոնք շենքի ընդհանուր ձևի մեջ որոշ փոփոխություններ են մտցնում։ Օրինակ, երբ փոխել են սենյակների ձևն ու դասավորությունը, կամ դռների տեղերը, հատակների բարձրությունը և այլն։ Այս երկու տիպի փոփոխությունների բազմաթիվ հետքեր կան շենքերի ավերակների մեջ, ուստի և այսօր հասարակ աչքով անհնարին է պատկերացնել շենքի ամբողջությունը և դա արդյունք է գուցե այն բանի, որ այժմյան ամբողջ շինությունը կառուցված է արտաքին մեծ պատից հետո, նրան կից և ոչ թե նրա հետ միասին։ Այդ տեսակետով էլ, հավանական է, որ արտաքին պատն ընդհանուր առմամբ ավելի հին է, քան շենքի այժմ երևացող բոլոր ներքին բաժանումները։

Բոլոր նշաններից երևում է, որ միջնաբերդի գագաթի շենքի ներքին հարկաբաժինների կառուցողներն ամենուրեք օգտագործել են արտաքին պատը, որովհետև, ինչպես տեսցինք, նրանք իրենց կառուցած շենքի պատերն ուղիղ անկյան տակ բերել են և վերջիվերջո հենել արտաքին պատին։ Նույնն են կատարել նաև արտաքին պատերի դրսի կողմում շինություններ կառուցողները։

Նշանակում է, միջնաբերդի [illegible] մի շինության արտաքին պատը, շենքի վերաշինության ժամանակ օգտագործված է եղել իբրև պարիսպ, որի դրսի և ներսի կողմում կառուցել են շինություններ։

Ինչպես քիչ առաջ տեսանք, արտաքին պատը կառուցված է մեծ երկրաչափակ

[1] Թորամանյանը Անիի միջնաբերդում բացված բոլոր թոնիրներն անխտիր կերպով վերագրում է հետնագույն բնակիչներին, թեև պարզ է, որ պալատին կից պետք է լինեին տնտեսական շինությունների շարքում նաև հացատներ ու թոնրատներ։



Նկ. 95. Փորագիր գիպսե հարդարանքի բեկորներ, գտնված միջնաբերդում՝ լուսանցույց-ներ և որմնազարդեր

Նկար Ա. Պատրիկի

հետո, որովհետև այնտեղ օգտագործվել է կաթողիկե եկեղեցու և կաթողիկոսի պալատի քարերը։ Այդ ժամանակ էլ պետք է կառուցված լինեն մեծ շինության ներքին հարկաբաժիններից մի քանիսը, իսկ այժմ երևացող հիմնապատերից շատերը, հավանաբար, 11—12-րդ դարերի վերաշինության արդյունք են։ Կարճ ժամանակամիջոցում այդքան շատ վերափոխումներ կատարելն արդյունք է այն բանին, որ կավակերտ շենքերը դիմացկուն և երկարակյաց չեն։ Հարցն այն է, որ արտաքին հաստահեղույս պատն իր գոյությունն այս կամ այն կերպ կարողացել է պահպանել մինչև Դվինի վերջնական անկումը մոնղոլների արշավանքի ժամանակ, մոտ 400 տարի, իսկ ներսի շենքերն իրենց թույլ կառուցվածքով այդ ժամանակի ընթացքում մի քանի անգամ փոփոխման են ենթարկվել և վերաշինվել, որոնց բոլորի հետքերն էլ մնացել են պեղված շենքի հատակածի մեջ։

Բարեբախտաբար շենքերի լուսամուտների մասին որոշ տվյալներ պահպանվել են։ Պարզ է, որ շենքերի այդպիսի խճողվածության հետևանքով, երբ տան հարկաբաժիններից շատերն իրենց չորս կողմից շրջապատված են այլ շինություններով, միակ հնարավորությունը մնում է երդիկի անցքից լույս ստանալը։ Նույնպիսի երդիքային լուսանցք պետք է ունենային նաև թոնրատները, որոնցից շատերը դարձյալ բոլոր կողմերից շրջապատված են եղել այլ շինություններով, հետևապես և երդիկի լուսանցքը պետք է դրանց համար հանդիսանար լույսի միակ աղբյուրը։ Սակայն, պեղումների միջոցին գտանք գիպսե լուսանցույցի մի բեկոր, որը լուսամուտի մեջ դրված է եղել ուղղահայաց կերպով։ Այդպիսի մի լուսանցույց էլ գտնվել է Անիում՝ միջնաբերդի նկուղային հարկերից մեկում[1] և այլ տեղերում։ Նշանակում է, ցանցապատման այդ եղանակն ընդհանուր է եղել Հայաստանում Բագրատունիների օրով (Նկ. № 93)։

Մեզ թվում է, որ մասամբ իրավացի է Թորամանյանը, երբ Անիի պալատական շենքերի լուսավորությունը համարում է տանիքից[1]։ Նույն երևույթը, ինչպես տեսանք քիչ առաջ, նկատվում է նաև Դվինում, բայց կրկնահարկ շենքերի ստորին հարկը զուրկ լինելով առաստաղից լույս ունենալու հնարավորությունից, պետք է որ լուսամուտ ունենար պատի միջից։ Դվինում և Անիում գտնված գիպսե լուսանցույցներն ապացույց են այն բանին, որ երկու տեղում էլ միջնաբերդի պալատական շինություններից մի քանիսն եղել են կրկնահարկ, որոնց իրական նշանները չեն պահպանվել տեղի վրա։ Սակայն, Ամբերդի Պահլավունյաց ամրոցի մնացորդներից երևում է, որ բազմահարկ պալատական շինությունները սովորական էին Հայաստանում։ Ամբերդի պալատի մնացորդները միջնաբերդում պահպանվել են երկու հարկի բարձրությամբ՝ կամարավոր և ուղղանկյուն լուսամուտների մեծադիր բացվածքով, իսկ երրորդ հարկի պատերի մեջ դարձյալ երևում են պատուհանների մնացորդների հետքեր։ Այս պատուհանները բոլորն էլ ուղղված են դեպի ստորին բերդը, որտեղից ընդարձակ տեսադաշտ է բացվում դեպի Արագածի ստորին փեշերն ու Արարատյան դաշտավայրը, իսկ հակառակ կողմի վրա, բարձրանում են ամրոցային խուլ պատեր՝ իրենց կիսաշրջան բուրգերի շարքով։

Այս օրինակի հիման վրա կարող ենք ենթադրել, որ Դվինում ևս միջնաբերդի պալատական շենքի վերին հարկերի պատերն ունեցել են լուսամուտի բացվածք, որպեսզի այնտեղ ապրողները հնարավորություն ունենային դիտելու Արարատյան լեռների և կանաչապատ դաշտերի զմայլելի տեսարանները։

Նշանակում է, Դվինի միջնաբերդի պալատական շենքի միահարկ մասերն ունեցել են տանիքի վրա գմբեթավոր լուսամուտներ, իսկ երկհարկ մասերի ստորին հարկերը, ինչպես նաև վերին հարկի սենյակներից մի քանիսը՝ պատերի մեջ բացված լուսամուտներ։

---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Առաջին ժողովածու, էջ 363։

[1] Н. Я. Марр, Ани, стр. 70. Մառն այդ գիպսերը կասկածանքով է լուսանցույց համարում, ենթադրելով, որ նրանք կարող են պատի վրայի զարդարանք լինել, բայց նա այդ հարցում սխալվում է, որովհետև այդ գիպսերի վրա չկան պատի մեջ խրված լինելու որևէ նշան կամ հետք։

Ինչպես արդեն ասել ենք, միջնաբերդում բացված նկուղներից մեկն ուներ աղյուսե թաղակապ ծածկ: Բացի այդ, ավերակների մեջ թափված բազմաթիվ աղյուսների առկայությունը ապացույց է այն բանի, որ նման թաղակապ ծածկ շատ է եղել Դվինի միջնաբերդի շինության նաև այլ մասերում։

Մենք արդեն խոսեցինք երդիկավոր շենքերի մասին, որոնց գոյությունը պայմանավորված է առաստաղի լույսի հետ, իսկ փայտե հարթ ծածկի հետքեր գտնվեցին C գծի—3, -4 և—5 քառակուսիների վրա, որտեղ ծածկի փլատակի մեջ պահպանվել էին եղեգնի շերտի հետքերը, թեև ծածկն այրվել էր շենքը փլչելուց առաջ։ Այդ եղեգնի շերտն ինքնին ցույց է տալիս գերաններով ծածկված հարթ կտուրի գոյությունը Դվինում, որպիսիք մինչև այսօր էլ կան մեր գյուղերում և քաղաքներում։ Միջնաբերդի շինության մեջ գտնվեց նաև մի սյան խարիսխ, որի վրա բարձրացել է փայտե սյունը և սենյակի կենտրոնում պահպանել շենքի ծածկը. այս ևս ցույց է տալիս, որ միջնաբերդի շենքը տեղ-տեղ ունեցել է փայտե գերանների վրա նստած հարթ ծածկ։

Մեր առածին հակառակ, պեղումների ժամանակ ծածկի գերան չգտնվեց, այդ հանգամանքը բացատրվում է ոչ թե նրանով, որ գերանների վրա նստած ծածկ չի եղել այնտեղ այլ այն բանով, որ բլուրի վրայի վերջին բնակիչները միջնաբերդի վերջնական ավերումից հետո, շենքերի փլատակների միջից առանձնացրել են փայտի կտորներն իրենց տնտեսական նպատակներին օգտագործելու համար։ Այդ միանգամայն հասկանալի կլինի, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Դվինի շրջապատի անտառներն այդ ժամանակ լիակատար կերպով ոչնչացել էին և թոսրովի տնկել տված ծառերը ոչ միայն Արարատյան դաշտավայրի վրա, այլև Գառնիի ձորի մեջ արմատախիլ էին արված։

Միջնաբերդի պալատական շենքի հատակն ամեն տեղ շարված է եղել թրծած աղյուսով, միայն մի քանի հանդիսավոր հարկաբաժիններում բացվել են շքաղյուսե հատակի հետքեր, որտեղ հասարակ աղյուսի փոխարեն օգտագործել են կանաչ ջնարակով պատած գեղեցիկ աղյուսներ։ Երբեմն հարկաբաժինների նորոգության ժամանակ հատակը բարձրացել է և դրա հետևանքով որոշ տեղերում իրար վրա գոյացել են երեք տարբեր հատակներ, իսկ տնտեսական հարկաբաժիններից մի քանիսն ունեցել են միայն կավածեփ հատակ։ Ոչ մի տեղում դեռևս չի գտնվել քարե կանոնավոր սալահատակ, ինչպիսին ունեցել են կաթողիկե եկեղեցին և կաթողիկոսական պալատի սկզբնական շինությունը։

Միջնաբերդի մեծ շինության պատերը թեև հում աղյուսից են եղել, բայց ներսի կողմից նրա մի շարք հարկաբաժիններն ունեցել են գեղեցիկ հարդարանք՝ ձուլածո գաջի կարդերով, գույնզգույն խճաքարով կամ ձևավոր աղյուսե տարրեր երկրաչափական օրնամենտներով։ Գաջի կարդերի մեջ կան նաև փորագիր նախշեր, որոնք գլխավորապես օգտագործվել են այստեղ ձևավոր աղյուսների շարվածքների միջև ընկած բացատներում։

Նկ. 94. Փայտե սյան խարիսխ, գտնված միջնաբերդի կենտրոնական մասի ներքին շերտում

Գաջե կամ գիպսե ձուլածո բեկորների մեջ տարածված է մեծ մասամբ կենդանական օրնամենտը, գլխավորապես միմյանց հետևից վազող չորքոտանիների նեղ և երկար գոտին։ Այդ կենդանիների մեջ մեծ տեղ են բռնում միմյանց հետևից վազող կամ իրար դիմաց կանգնած բարակ շները։ Հավանաբար այդ օրնամենտն ստացվել է ոչ թե գլանավոր կաղապարների կամ ուղղակի կերպով պատի վրա ձուլելու միջոցով, այլ պատերը հարդարող վարպետների ձեռքով։ Տոկարսկին ենթադրում է, որ դրանք պատրաստվել են հատուկ արհեստանոցներում և վաճառել տուն նորոգող կամ տուն կառուցող ունևոր մարդ-



Նկ. 95. Գիպսե ձուլածո որմնազարդերի բեկորներ կենդանական օրնամենտով, գտնված միջնաբերդում և բերդի հրապարակի մոտ բացված բնակելի շենքում

Նկար Ա. Պատրիկի

կանց։ Նա այդ եզրակացությանն է հանգել այն պատճառով, որ տարբեր տեղերում գտնված այդ զարդարանքները խիստ նման են միմյանց։ Մենք կարծում ենք, որ այդ ձևերի նմանությունը նրանից է, որ Դվինում ընդունված են եղել այդ սյուժեները և վարպետներն իրենք ունեցել են դրանց կաղապարները, որոնցով և ձուլել են պետք եղած դեպքում։ Այդ ձուլածո որմնազարդերն այնքան են միմյանց նման, որ նույնիսկ դժվար է տարբերել Անիում և Դվինում գտնվածները միմյանցից։ Բայց պարզ է, որ այդ ձուլածո զարդարանքներն ինչպես Անիում, այնպես էլ Դվինում տեղական արտադրություն են և իրենց սյուժեով սերտորեն կապվում են ժամանակի հայ արվեստի հետ։

Այս օրնամենտի մեջ ուշ արաբական արվեստին հակառակ, կենդանիները մեկը մյուսի կրկնությունը չեն, այլ նրանք անվերջ փոփոխվում են և միայն 5-րդ կամ 6-րդ հատվածում կրկնվում, թեև ունենք, օրինակ, միջնաբերդում գտնված հավի ձագերի իրար դիմաց կանգնած զարդագոտու մնացորդը, որտեղ հավանաբար այդ օրնամենտն անվերջ կրկնվել է, բայց ինչպես ասացինք, հարափոփոխ օրնամենտը խիստ բնորոշ է այս որմնազարդերի մեջ (Նկ. 96—98)։

Նկ. 96. Գիպսե ձուլածո որմնազարդի բեկոր կենդանական օրնամենտով, գտնված բերդի հրապարակի մոտի շենքում
Նկար Մ. Մոխի

Նկ. 97. Գիպսե ձուլածո որմնազարդի բեկոր երկրաչափական օրնամենտով, գտնված միջնաբերդում
Նկար ճարտ. Ա. Սիվկովի

Սրանց ժամանակակից պետք է համարել միջնաբերդի նույն շինության մեջ գտնված

գիպսե փորագիր վարդյակների գեղեցիկ որմնազարդերը, որոնց խորն ընկած փոսիկները ներկված են կապույտ գույնով։ Շենքի անկյունավորվող մասերում հազցված են եղել ձուլածո կամ փորագիր, երբեմն նույնիսկ ցանցկեն զարդարանքներ, որոնք իրենց

Նկ. 98. Գիպսե փորագիր վարդյակներ և այլ բուսական օրնամենտներ, գտնված միջնաբերդի մեծ շինության հյուսիսային հարկարաժիններից մեկում

կենդանական և բուսական օրնամենտներով սերտորեն կապվում են Հայաստանի 12-13-րդ դարերի ճարտարապետական հուշարձանների քանդակազարդության հետ։ Այստեղ հետաքրքիր է նաև մի այլ երևույթ, որ գիպսե ձուլածո հարդարանքի բեկորներն իրենց սյուժեով և արվեստով, ինչպես նաև տեխնիկայով, բոլորովին առնչություն չունեն արտաքուստ խիստ նման կարասների դրոշմազարդ գոտիներին, որոնց սյուժեն գլխավորապես կապված է այծերի և աքլորների հետ։ Կարասների վրա երբեք չեն լինում բարակ շների վազքի տեսարան, թեև որոշ դեպքերում հանդիպում են պար եկող մարդկանց, առյուծների պատկերներ և այլն, որոնք իրենց սյուժեով դարձյալ չեն կապվում գիպսե զարդերին, որովհետև կարասների գոտիների մեջ գերակշռում է ստատիկ վիճակը, իսկ գիպսե զարդերի մեջ՝ դինամիկ դրությունը, էլ չասենք այն մասին, որ գիպսերի վրա կենդանիները մշակված են ամենայն մանրամասնությամբ և բարձր արվեստով, իսկ կարասների վրա նրանք հաճախ շատ պայմանական են ու սխեմատիկ։

Անիի պեղումների ժամանակ էլ դուրս են եկել գիպսե ձուլածո որմնազարդերի բազմաթիվ բեկորներ՝ դարձյալ միջնաբերդի պալատական շինությունների միջից, Բագրատունյաց պալատի հյուսիս-արևելյան դահլիճից։ Ինչպես ասացինք, Անիում հայտնաբերված այդ որմնազարդերը մեծ նմանություն ունեն Դվինում գտնվածներին և ժամանակակից են միմյանց։ Ն. Մառն այդ որմնազարդերի Բագրատունյաց թագավորության ժամանակներին պատկանելը կասկածի տակ է առնում և ենթադրում է, որ դրանք պատկանում են պալատի ավելի ուշ ժամանակի տերերին, որոնք պատերի հին զեղազարդությունները քանդելով, այդ գիպսե հարդարանքներն են տեղադրել այնտեղ[1]։ Նույնը պետք է ասել նաև Դվինի մասին. այստեղ էլ գիպսի բեկորները, միջնաբերդի մեծ շենքի սկզբնական կառուցվածքին չեն պատկանում, այլ նրանք 12—13-րդ դարերի գործ են, միայն այն տարբերությամբ, որ Անիում գիպսե զարդերը սրբատաշ քարե պատերի վրա ամրացրել են հետագայի նորոգության ժամանակ, կարկատանի ձևով, իսկ Դվինում կավակերտ պատերի վերակառուցման ժամանակ այդ զարդարանքները շինել են պատերի վերին մասերի հետ միասին, ուստի և նրանք այդտեղ հանդես են գալիս ոչ թե իբրև հետնագույն կարկատան, այլ շենքի կառուցվածքն ամբողջացնող և շենքի հետ օրգանապես կապվող հարդարանք։

Անալոգիկ գիպսե զարդարանքներ կան նաև այսպես կոչված ուշ արաբական արվեստի մեջ, գլխավորապես մավրիտանական և սելջուկյան հնավայրերից ծագող, բայց Դվինի միջնաբերդում գտնվածներն իրենց հյուսածո մոտիվներով միանգամայն հարազատ են հայկական քարե քանդակներին և մանավանդ մանրանկարչական զարդարանքներին։

Սակայն, մեր ասածին հակառակ, մի քանի տեղերում դուրս եկան զոգավոր արաբատառ գիպսե զարդարանքներ, որոնք սենյակների վերին մասերում կատարել են

[1] Н. Я. Марр, Ани, Книжная история города и раскопки на месте городища, стр. 70.



Նկ. [illegible]. Գիպսե ձուլածո որմնազարդերի բեկորներ, գտնված միջնաբերդի մեծ շինության հարկաբաժիններում

Նկար Ա. Պատրիկի

քիվի վեր։ Սրանք միայն մզկիթի ավերակների, կամ Դվինի արաբ բնակչության տների զարդարանքները չեն եղել, այլ գործածվել են նաև տեղացիների տներում։ Այսպիսի զարդերի բեկորներ գտնվել են կաթողիկոսի պալատի սյունազարդ դահլիճի պեղումներից, որն առիթ տվեց ենթադրելու, որ այդ պալատը, 893 թվականի մեծ երկրաշարժից հետո, վեր է ածվել մզկիթի[1]։

Նկ. 100. Գիպսե որմնազարդ, գտնված միջնաբերդի մեծ շինության հարկաբաժիններից մեկում

Դվինում ավելի մեծ տարածում է ունեցել ագյուսների զանազան ձևավոր բեկորներից որմնազարդեր կազմելու սովորությունը, որոնց կտորտանքը կարելի է գտնել բերդի գրեթե ամբողջ տարածության վրա և քաղաքի հարավային մասերի մի

Նկ. 101. Որմնազարդ տերակոտի բեկոր, գտնված միջնաբերդի մեծ շինության կենտրոնական հարկաբաժիններից մեկում

քանի տեղերում։ Ի միջի այլոց, մեծ քանակությամբ այդպիսի որմնազարդի բեկորներ 1949 թվականին ի հայտ եկան 4-րդ տեղամասում բացված շենքի մեջ։

Միջնաբերդում դեռևս 1939 թվականի պեղումների ժամանակ բացվեց շուտ եկած գրեթե մի ամբողջ պատ, որն ուներ այդպիսի զարդեր, բայց շուտ գալու ժամանակ ամբողջովին փշրվել և ցրվել էր։ Վերջին տարիների պեղումների ժամանակ ռեստավրատոր ընկ. Գ. Աբեշատյանն այդ բեկորները գիպսով ամրացրեց և որոշ կանգվածներ վերականգնեց, թեև մեծ մասը հնարավոր չեղավ ամրացնել, որովհետև արդեն

Նկ. 102. Որմնազարդ տերակոտի բեկոր. գտնված միջնաբերդի մեծ շինության նույն հարկաբաժնում

ընկնելու ժամանակ ցրիվ էր եկել, բայց մնացածն էլ որոշ հասկացողություն տալիս է նրա ամբողջության մասին։ Այնտեղ նկատելի էր պատի երկու կողմերում վերևվից ներքև իջնող եռանկյունաձև խորշեր, նրանց կողքերին՝ որմնասյուներ, իսկ պատի կենտրոնական մասում՝ բավականին մեծ կամարաձևություն։ Այդ կամարաձևության տակ, հավանաբար, սենյակի մուտքն է եղել։

Միջնաբերդում գտնվել են նաև որոշ որմնանկարների հետքեր, որոնք արված են գաջի բարակ սվաղի վրա, բայց, հավանաբար, որմնանկարն այդտեղ զուգակցել է ձևավոր ագյուսներին և գիպսե ձուլածո և փորագիր զարդերին, իսկ առանձին սյուժետային մեծ որմնանկարների հետքեր չեն գտնըվել։

Խճաքարի փոքրիկ բեկորները և թափված հատիկները ցույց են տալիս, որ Դվինի միջնաբերդը ծանոթ է նաև մոզայիկ որմնազարդերին։ Սակայն, եթե այնտեղ գտնված մոզայիկի հետքերը կաթողիկե եկեղեցու բեկորների հետ չեն գնացել միջնաբերդ, այդ դեպքում պետք է ենթադրենք, որ

[1] Н. М. Токарский, Архитектура древней Армении, стр. 43 и 302 (примечание).

այդ մոզայիկի բեկորները պատկանել են միջնաբերդի ավելի հին շենքերի՝ Արշակունյաց թագավորների կամ մարզպանների պալատներին, որովհետև ընդհանուր առմամբ մոզայիկան Հայաստանում տարածված է եղել միայն 5—7-րդ դարերում, որից հետո նա իսպառ վերացել է ասպարեզից։

Ի միջի այլոց, անհրաժեշտ է այստեղ նշել, որ եվրոպացի ուսումնասիրողները հաճախ Կովկասյան երկրների կուլտուրային ծանոթանալով՝ անմիջապես որևէ ընդհանրացած անուն են կպցնում նրան (արաբեսկ, սասանյան, բյուզանդական, սիրիական), առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ այդ ոճերը նույնքան հատուկ են տեղական կուլտուրային։ Բազմաթիվ օրինակներով կարելի է հաստատել, որ «արաբեսկը», «սելջուկյան շղթան», մուտքերի ճակատների վերադիր քանդակազարդ շրջանակները, սլաքավոր կամարները և մի շարք «պարսկա-սասանյան» և «բյուզանդական» երևույթներ՝ («սասանյան» գեմմաներ, «բյուզանդական» մանրանկարներ), Հայաստանում տեղական երևույթներ են, և ծա-

Նկ. 103. Որմնազարդ տերակոտի մի քանի բեկորներ, գտնված միջնաբերդի մեծ շինության նույն հարկաբաժնում

Նկ. 104. Որմնազարդ կամարաձև տերակոտի բեկոր, գտնված միջնաբերդի մեծ շինության նույն հարկաբաժնում

գել ու զարգացել են հենց տեղում, իհարկե շրջապատի երկրների հետ փոխազդեցության մթնոլորտում։

Միջնաբերդի կառուցվածքների մեջ առանձնապես կարևոր է բաղանիքը, որից մնացել է միայն կրակարանը և արևմըտյան լողասրահի ընդհատակյա մասը։ Թեպետ մինչև այժմ մեզ ծանոթ են եղել միջնադարյան Հայաստանի երեք ուրիշ բաղանիքներ՝ Զվարթնոցում, Անիում, Ամբերդում[1], որոնցից առաջինը պատկանում է 7-րդ դարի կեսերին, իսկ վերջին երկուսը՝ 11-րդ դարին, բայց այդ երեք բաղանիքներն էլ սրբատաշ քարով են շինված, իսկ Դվինի բաղանիքի հիմքերը թրծած աղյուսով է շարված և հավանաբար բաղանիքի վերին մասերն էլ նույն նյութից եղած կլինեին։

Նկ. 105. Մոզայիկ բեկոր, գտնված կաթողիկոսարանի մոտ, հավանաբար պատկանել է կաթողիկե եկեղեցուն

Զվարթնոցի բաղանիքը կառուցված է տաճարի հարավակողմյան աշխարհիկ շենքերի արևելյան ծայրին և ժամանակակից է եկեղեցուն։ Նա բռնում է ընդարձակ տարածություն։ Նրա ջրամբարը և կրակարանը տեղավորված են երկու հաստահեղույս մույթեր ունեցող մեծ լողասրահի արևելյան ծայրին։ Այդ մույթերի միջով բարձրանում են կավե խողովակներով շինված ծըխանելույցներ։ Հնոցի կրակն ու ծխախառն տաք օդը լողասրահի հատակի տակով անցնելուց հետո, պատերի և մույթերի ծխնելույցների միջոցով բարձրացել է վերև և տաքացրել լողասրահի հատակն ու պատերը։ Երկու մույթերը ցույց են տալիս, որ լողասրահն ունեցել է երկու կամ երեք բուլթ գմբեթ՝ գոլորշին իրենց մեջ հավաքելու և սրահի մեջ օդի բարեխառնությունը պահպանելու համար[1]։

Ամբերդի բաղանիքն էլ գրեթե նույն կազմությունն ունի, բայց եղածների մեջ ամենափոքրն է և ամենալավ պահպանվածը։ Այստեղ բաղանիքի ծածկն ու լողասրահի երկու բուլթ գմբեթները գրեթե անաղարտ վիճակում պահպանվել են տեղում։ Սակայն բաղանիքը փոքր է և ունի ընդամենը երկու բաժանմունք՝ 5×2,5 մետր հատակի մակերեսով լողասրահ և 2,5×1,1 մետր կրակարան։ Վերջինիս վրա անմիջականորեն տեղավորված է ջրամբարը։ Կրակարանի և ջրամբարի միջև դրված է եղել մի պղնձե թիթեղ, որի շնորհիվ ջուրն արագ կերպով տաքացել է և երկաթե խողովակներով հոսել դեպի լողասրահը, իսկ սառը ջուրը բաղանիքի ներսում հոսել է թրծուն կավե փոքրիկ խողովակներով, որոնց բեկորները պահպանվել են բաղանիքի պատերի մեջ։ Ամբերդի բաղանիքում էլ կրակարանի տաք

Նկ. 106. Ձևավոր աղյուս, գտնված միջնաբերդում

ծուխը լողասրահի հատակի տակով է անցել և շենքի պատերի միջի մի քանի ծխնելույցներով բարձրացել վերև։

Այժմ Ամբերդի բաղանիքն ունի մի լողասրահ, բայց նշաններ կան, որ նա

[1] Բաղանիք կա նաև Լոռու բերդի մեջ, բայց դժբախտաբար մինչև օրս ուսումնասիրված չէ։

[1] Զվարթնոցի այս բաղանիքը Խաչիկ վ. Դադյանը համարում էր կրակապաշտների հեթանոսական տաճար, առանց հաշվի առնելու կառուցման ուշ ժամանակը և նրա կազմությունը։ Դադյանին քննադատեց և հերքեց Թ. Թորամանյանը («Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», աշխատությունների 2-րդ ժողովածու, էջ 92—106)։

երկու մասի է բաժանված եղել, որովհետև այժմյան վիճակում այդ փոքրիկ բաղնիքը հանդերձարան չունի և անհնարին է, որ մարդիկ միևնույն լողասրահում հանվեին և այնտեղ էլ լողանային՝ իրենց շորերը թրջելու վտանգին ենթարկելով։ Նշանակում է, Ամբերդի բաղնիքի լողասրահը երկու մասի է բաժանված եղել երկու գմբեթների մեջտեղով, որոնցից մեկը ծառայել է իբրև հանդերձարան, իսկ մյուսը՝ իբրև լողասրահ[1]։ Զվարթնոցի բաղնիքն էլ իր լողասրահի հյուսիսային կողմում ունեցել է մի ընդարձակ հանդերձարան և գուցե հանգստանալու կամ հովանալու առանձին սրահ։

Բագրատունյաց պալատական բաղնիքըն Անիում անհամեմատ ավելի մեծ է, քան Ամբերդինը և ունի 7 բաժանմունք։ Դրանցից 2-ը լողասրահ են, և իրենց միջին ունեցել են նաև լողանալու ավազան, մյուս երկուսը ծառայել են իբրև հանդերձարան, իսկ մնացածներն օժանդակ սենյակներ են հանգստանալու համար։ Հանդերձարանում էլ եղել է ջրի ավազան՝ հագնվելու ժամանակ ոտները լվանալու համար։ Գործածված ջուրը բաղնիքից դուրս է հոսել կավե լայն խողովակների միջոցով, իսկ տաք ջրի համար այստեղ էլ օգտագործվել է երկաթե խողովակը։

Երկու այդպիսի բաղնիք էլի հայտ են եկել Վրաստանի Դմանիսի միջնադարյան քաղաքում 1936 և 1937 թվականների պեղումների ժամանակ, որոնցից մեկը միջնաբերդում է գտնվել, իսկ մյուսը՝ քաղաքում։ Միջնաբերդի բաղնիքն Ամբերդինի նման ունեցել է երեք փոքրիկ բաժանմունք՝ հանդերձարան, լողասրահ և ջրամբար։ Վերջինի տակ գտնվել է կրակարանը, ըստ որում հանդերձարանի հատակն ավելի բարձր է եղել, քան լողասրահինը, որն ունեցել է ընդհատակյա ջեռուցում[1]։

Նկ. 107. Միջնաբերդի բաղնիքի լողասրահի ընդհատակյա հենակների ավերակները

[1] *Ամբերդի բաղնիքի մասին տես* И Орбели, Баня и скоморох XII века. Памятники эпохи Руставели. Сборник государственного Эрмитажа, Л., 1938, стр. 159—170. *Բաղնիքի հատակաձևը և կտրվածքը տես* Н. М. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946, стр. 163. *Տոկարսկուց օգտվելով հրատարակել է նաև Ա. Յակոբսոնը՝ Խերսոնեսի բաղնիքի կապակցությամբ։ Տես* А. Л. Якобсон, Из истории средневековой архитектуры в Крыму. III. Средневековые бани Херсонеса. Советская археология, VIII, 1946, стр. *273 և նույն հեղինակի՝* Средневековый Херсонес (XII—XIV вв.) Материалы и исследоваиия по археологии СССР, № 17, М. Л., 1950 г. стр. 82.

[1] Л. Мусхелишвили, Раскопки в Дманиси, Советская археология, VI, 1940, стр. 270—276.

Նույն սիստեմն է ունեցել նաև 1937 թվականին պեղումների ժամանակ Խերսոնեսում բացված բաղնիքը Ղրիմի թերակղզու վրա, որը պատկանում է 13-րդ դարին[1]։

Ինչպես տեսնում ենք, բաղնիքների այս սիստեմը ընդհանուր է եղել ամբողջ Անդրկովկասի և նույնիսկ Ղրիմի համար և դրանց շնորհիվ էլ Դվինի բաղնիքի մի շարք մանրամասնությունները հասկանալի են դառնում, վերոհիշյալ մյուս բաղնիքների, համեմատաբար լավ պահպանված մասերի օգնությամբ։

Դվինի բաղնիքի գրեթե կենտրոնում գետեղված է եղել 2×3 քմ տարածություն բռնող կրակարանը, որի վրա տեղավորված պետք է լիներ տաքացող ջրի ջրամբարը։ Կրակարանից դեպի արևմուտք տեղադրված է եղել 4×4 քմ բռնող գլխավոր լողասրահը, որի հատակը նստած է եղել մի քանի շարքեր կազմող աղյուսաշեն հենակների վրա։ Այդ աղյուսաշեն հենակների արանքով անցել է տաքացած օդն ու ծուխը և դուրս եկել պատերի մեջ արված հատուկ ծխնելույզներով՝ տաքացնելով լողասրահի հատակը և պատերի որոշ մասերը։ Տաք ջուրը ջրամբարից դեպի լողասրահ է հոսել երկաթի խողովակներով, որոնցից մի երկու կտոր գտնվեց տեղում, իսկ գործածած ջուրը լայն կավե խողովակների միջոցով դուրս է հոսել լողասրահի հյուսիս-արևմտյան անկյունից և թափվել գեղեցիկ սալքարով ծածկված խոր հորի մեջ։ Թե որտեղ է եղել բաղնիքի հանդերձարանը, այդ բանն այժմ անհայտ է, բայց մի բան գիտենք, որ կրակարանի արևելյան կողմի սրահը, որի միայն հետքերն են պահպանվել, պատկանել է այս բաղնիքին և հավանաբար Անիի պալատական բաղնիքի նման հանդիսացել է նրա երկրորդ լողասրահը, այլապես չենք կարող ենթադրել, որ կարող էր բաղնիքի հանդերձարանը կրակարանի մի կողմում լինել, իսկ լողասրահը՝ մյուս, որովհետև այդ դեպքում լողացողը շորերը հանդերձարանում հանելուց հետո լողասրահ անցնելու համար պետք է կրակարանի միջովը գնար, որ անհեթեթություն է։ Իսկ երկու լողասրահ ունենալը, ինչպես տեսնում ենք Անիում, գրեթե պարտադիր էր, որովհետև մեկում լողանում էին կանայք և մյուսում՝ տղամարդիկ։

Դվինի միջնաբերդի իր շրջապատի նկատմամբ ունեցած բարձրությունը մեզ ստիպում է ենթադրել, որ ջուրը մարդկանց կամ անասունների ուժով են ստորին բերդից բարձրացրել միջնաբերդ և լցրել բաղնիքի ջրամբարը։ Սակայն, այդ պարագային պարզ է, որ բաղնիքը, բացի տաքացող ջրամբարից, որ պետք է գտնվեր անմիջապես կրակարանի վրա, ունենալու էր նաև մի ուրիշ ջրամբար, հատկապես սառը ջրի համար. այլապես պետք է ենթադրենք, որ բաղնիքում ջուրը տաքացնում էին միայն այնքան, որ այլևս խառնուրդ անելու կարիքը չզգացվեր, իսկ դա մեծ անհամարություն կլիներ լողացողների համար, մանավանդ որ հնում սովորություն էր, որ եթե բաղնիքը ինքնահոսով եկող ջրից չէր օգտվում, ունենում էր երկու ջրամբար, մեկը տաք ջրի և մյուսը սառը ջրի համար։ Դվինի բաղնիքի լողասրահի հարավ արևմտյան անկյունում մի փոքրիկ բաժանմունք գոյություն ունի, մեջը կրաշաղախի հաստ ծեփով սվաղած, ամենայն հավանականությամբ դա եղել է բաղնիքի սառը ջրի ամբարը, որ կարող էր ընդհանուր լինել երկու լողասրահների համար։

Սառը ջրի առանձին ջրամբար ունեցել են նաև Անիի և Դմանիսիի միջնաբերդերի բաղնիքները[1]։

ԲԵՐԴԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԲԱՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

(Երրորդ տեղամաս)

1938 և 1939 թվականներին բերդի հյուսիս արևմտյան կողմի ցածրադիր շրջափակի մեջ (հրապարակ) միջնաբերդի բլրի հենց սկզբնավորության վրա, պեղումների ժամանակ բացվեցին մի քանի բնակելի շինություններ, որոնք բաժանված են հարավային և հյուսիսային խմբերի, ընդ որում հարավայինն ավելի բարձր էր գտնվում

[1] Ա. Յակոբսոնն իր քիչ առաջ հիշատակած աշխատությունների մեջ հիշատակել է նաև Տաթևի վանքի բաղնիքը, որ խիստ նման է Ամբերդի և մյուս տեղերի բաղնիքներին. միայն թե գմբեթի փոխարեն ունի թաղակապ ծածկ։ Չափագրությունները տե՛ս МИА СССР, № 17, стр. 84

[1] Н. Я. Марр, Ани... стр. 71. и Л. Мусхелишвили, Раскопки в Дманиси. стр. 274 и 276.

քան հյուսիսայինը, թեև երկուսն էլ հրապարակի համեմատությամբ ավելի բարձր են տեղադրված բլրի լանջին։ Այդ երկու խմբերի մեջ առավել հետաքրքիրը հարավային շինությունն էր, որ կազմված էր կավակերտ պատերով շինված երեք սենյակներից։ Դրանցից մեկը երկհարկանի է եղել, որովհետև բլրի կողմում պահպանվել են հարկահանդիսացել են իբրև ներսի սենյակներ։ Բացի երեք վերոհիշյալ սենյակներից, այս տունն իր հյուսիսային կողմում ուներ նաև մի փոքր մառան, որն իր հաստ պատերի շնորհիվ բավականին լավ էր պահպանված և գտնվում էր փոքր սենյակի արևելյան կողմում և իր պատերով միասին թաղված էր ամբողջապես բլրի լանջի մեջ։ Ինչպես

Նկ. 108. Միջնաբերդի հյուսիսային լանջին բացված խորշավոր սենյակի ավերակները

միջյան բաժանման հետքերը։ Այստեղ պատի մեջ երևում են փտած փայտի մնացորդները։ Այդ սենյակի արևմտյան պատը պահպանվել էր մոտ 3 մետր բարձրությամբ և իր վրա ուներ երկու տեղ փլվածքներ, որոնք իրենց վերին մասում ավելի լայն էին, քան ներքևում։ Այդ փլվածքները միմյանցից սիմետրիկորեն հավասար հեռավորության վրա գտնվելու հանգամանքից կարելի է ենթադրել, որ դրանք լուսամուտներ են եղել ստորին հարկի համար և բացվել են հրապարակի վրա։ Այդ սենյակն ուներ երկու դուռ, մեկը դեպի հյուսիս, որ տանում էր մի այլ ավելի փոքր սենյակ, իսկ մյուսը դեպի հարավ, որով նա կապվում էր իր հարավակողմյան խորշավոր սենյակի հետ։ Բոլոր նշաններից երևում է, որ բնակարանը դրսի հետ հաղորդակցություն է ունեցել միայն այս խորշավոր սենյակի միջոցով, իսկ մյուս երկուսը, ինչպես նաև երկհարկանին, տան համար փոքրիկ սենյակը, այնպես էլ մառանն իրենց կառուցվածքի մեջ որևէ հետաքրքիր բան չէին պարունակում, միայն թե մառանի հատակը երկու աստիճանով ավելի ցածր էր սենյակի հատակից և նրա ներսում կային մոտ 1,20—1,0 մետր բարձրության երկու շարքի վրա դասավորված ութը կարասներ։ Այդ կարասները լցված էին փլվածքի հողով։ Նշանակում է, շենքի ավերման ժամանակ դրանք դատարկ են եղել, իսկ թե առաջ ինչով են եղել լցված, հացահատիկով թե՞ գինով չի պարզվում։

Հյուսիսային փոքր սենյակում գտնվեց հասարակ և ջնարակած կերամիկայի բազմաթիվ կտորտանք և բոլոր սենյակներում ի հայտ եկան գիպսե ձուլածո հարդարանքի բազմաթիվ բեկորներ։ Դրսի սենյակում պեղումների ժամանակ բացվեց մի գեղեցիկ խորշ, որտեղ պահպանվել էր խորշը եզերող ձուլածո գիպսե զարդերի երկու շրջանակ։ Արտաքինը՝ շղթա ձևացնող

զարդերով, իսկ ներքինը՝ կենդանիների վազքով, որտեղ բուսական օրնամենտների միջով միմյանց հետևից վազում են երկարապոչ չորքոտանի կենդանիներ առյուծի, բարակ շան կամ թռչունի գլխով (Նկ. № 110)։ Այս երկու զարդաշրջանակներն էլ խորշի գլխին շարունակվում են ուղիղ անկյան տակ, իսկ խորշն ինքը կամարաձև է։ Դիպակ շրջանակի և խորշի կամարաձևության միջև առաջացող ընդարձակ տարածության վրա հագցրած են եռանկյունաձև զարդեր՝ թևավոր առյուծների պատկերով, որոնք իրենց գլխին կրում են Կիլիկյան խույրեր։ Այս սյուժեն միանգամայն հարազատ է 13-րդ դարի հայկական ճարտարապետության և մանրանկարչության համար, որոնցից մեզ հասել են բազմաթիվ օրինակներ (Հովհաննավանքում, Ամաղույում, և այլն)։ Խորշի ճակատն ուներ իր զարդերով միասին 1,0 մ լայնք և 1,5 մ բարձրություն, իսկ բուն խորշը՝ 0,45 մ լայնք և 1,20 մ բարձրություն։ Խորշը շարված էր



Նկ. 109. Միջնաբերդի հյուսիսային լանջին բացված բնակելի տան մառանի ավերակները

աղյուսով և պատած գաջի սվաղով։ Խորշի վրա եղած կենդանիների վազքը խիստ նման է Մշո Առաքելոց վանքի փայտե դռան շրջանակի կենդանիների վազքին, որ դարձյալ առնված է բուսական օրնամենտի մեջ (տես Նկ. 111)։

Այս խորշի գյուտը Դվինի ճարտարապետության համար ունի մեծ կարևորություն այն իմաստով, որ գիպսե ձուլածո հարդարանքները, որոնք այնքան շատ գտնըվել են Անիի և Դվինի պեղումներից թափված և տեղահան արված վիճակում, այստեղ առաջին անգամ ի հայտ եկան իրենց բուն տեղում և այդ իսկ տեսակետով, գաղափար են տալիս ընդհանրապես նրանց գործածության եղանակի մասին։

Դրսի սենյակի աղյուսապատ հատակը խորշի մոտ 10 սմ ավելի բարձր էր, քան մյուս մասերում, իսկ հարավային անկյունի մոտ թոնրափի նման մի բարձունք կար 60 սմ հատակից բարձր, որի ինչ լինելը չպարզվեց, միայն թե այդ բարձունքի վրա հատակի տակին բացվեց մի հոր, բոլորովին դատարկ դրության մեջ, բերանը սալահատակի տակ փայտով ծածկված։

Ճիշտ մի այդպիսի հոր էլ բացվեց սենյակի կենտրոնական մասի հատակի տակին, դարձյալ դատարկ վիճակում։ Սրանք, ամենայն հավանականությամբ, սովորական ջրհորներ չէին, այլ ծառայել են իբրև թաքստարան, որտեղ տան տերը պատերազմի ժամանակ թաքցրել է իր հարստությունը կամ նույնիսկ մարդկանց։

Դրսի սենյակը, մեծ մասամբ, հատակված էր քառակուսի մեծ աղյուսներով, իսկ տեղ-տեղ էլ՝ սալքարերով։ Սենյակի ճակատային պատը բոլորովին չէր պահպանվել տեղում, նա գտնվելով բլրի լանջի թեք տարածության վրա՝ փլվել և ոչնչացել էր։ Ոչ մի նշան չէր մնացել նաև շենքի ծածկից, իսկ մյուս մասերը պահպանվել էին այն աստիճան, որ նրանց հիման վրա կարելի էր գաղափար կազմել շենքի սկզբնական դրության վերաբերյալ։

Պեղումներից պարզվեց, որ հարավային շենքը վերոհիշյալ չորս բաժանմունքներով չէր վերջանում, այլ նա շարունակվել է նաև դեպի հարավ, բայց այդ կողմի վրա պեղումները չշարունակվեցին։

Շենքերի հյուսիսային խումբը ևս լրիվ չի պեղվել, այդտեղ բաց արվեց մի ցածրադիր նկուղանման սենյակ կամ մառան, որտեղ գտնվեցին միջին մեծության մի քանի կարաս (Նկ. 109) և այդ սենյակից դեպի հարավ ի հայտ եկավ մի այլ սենյակ, որտեղ պատերը գրեթե հիմնահատակ կործանվել էին, բայց որոշ տեղերում դեռևս պահպանվել էր աղյուսե հատակի հետքերը։ Այս սենյակում ջարդոտված վիճակում գտնվեց մի փոքրիկ դրոշմազարդ գոտիով կարաս՝ (Նկ. 167) այծի պատկերներով զարդարած և տնային գործածության ջնարակած ու հասարակ կերամիկայի բազմաթիվ բեկորներ։

Նկ. 110. Միջնաբերդի հյուսիսային լանջին բացված բնակելի տան խորշի վերակազմությունը
Վերակազմեց Լ. Սադոյան



Նկ. 111. Մշո առաքելոց վանքի 1134 թվականի փորաքանդակ դուռը
Գրչանկար Ա. Պատրիկի

Այս երկու շինությունները էլ ժամանակակից են միմյանց և պատկանում են 10–11-րդ դարին[1]*։ Բայց վերանորոգվել են 13-րդ դարի սկզբներին։*

Հարավային շենքի մեջ կային երկու քառակուսի փոսեր, որոնք, մեր ենթադրությամբ, ջրհորներ են եղել, ուստի և պետք է ենթադրենք, որ բերդի ներսում, բացի

Այստեղ հետաքրքիր է իմանալ, թե ում է պատկանել խորշավոր սենյակով տունը։ Այդ շենքի մեջ արաբատառ գիպսե զարդավոր հարդարանքի բեկորներ ևս գտնվեցին, որոնք հավանաբար ծառայել են սենյակներից մեկին իբրև քիվ։ Այդ գիպսե հարդարանքները մեզ երբեմն գցել են թյուրիմացության մեջ։ Սկզբներում, երբ որևէ շեն-

Նկ. 112. Միջնաբերդի հյուսիսային լանջին բացված երկրորդ բնակելի տան մուտքի ավերակները

իշխանական տան ներկայացուցիչներից և զինվորական դասից, ապրել են նաև անմիջականորեն բարձր դասին սպասարկող արհեստավորներ, որոնց գոյությունը բերդում կարող ենք ապացուցված համարել նաև բազմաթիվ այլ փաստերով։

քում գտնում էինք արաբատառ գիպսե զարդեր, կարծում էինք, որ այդ շենքը պատկանել է արաբացու։ Սակայն, շուտով ստիպված եղանք հրաժարվել այդ մտքից, որովհետև սենյակների ներսի զարդավոր քիվերը միշտ արաբատառ են լինում, իսկ

[1] *Տոկարսկին առանց հաշվի առնելու վերոհիշյալ շենքերի միջից դուրս եկած հնագիտական առարկաները, այդ շենքերը վերագրում է 13—14-րդ դարերին։ Մենք այստեղ այս հարցի վրա չէինք ծանրանա, եթե նա այս օրինակի հիման վրա ընդհանրացում չկատարեր և չհայտարարեր, որ հակառակ հայ մատենագիրների տված տեղեկությունների, իբրև թե 13-րդ և 14-րդ դարերում, մոնղոլների տիրապետության տակ, Դվինը, ինչպես նաև ամբողջ Հայաստանը, ապրել են ծաղկման շրջան, երբ դեռևս ժողովուրդը հարուստ էր և զարդարուն շենքեր էր կառուցում։ Այնուհետև ապացուցված համարելով իր այդ միանգամայն անհիմն հայտարարությունը, շարունակում է.*

«Դվինի տված այս դասը օգտակար է հիշել բոլոր նրանց համար, ովքեր հենվում են միայն գրավոր պատմության վրա և աչքաթող են անում նյութական հիշատակարանները՝ չգիտությամբ կամ, որ ավելի վատ է, գիտակցաբար» (Н. Токарский, Архитектура древней Армении, стр. 305)։ *Այստեղ Տոկարսկին մի կարևոր հանգամանք՝ «չգիտությամբ կամ, որ ավելի վատ է, գիտակցաբար» մոռացել է նշել, թե ինչ չափով վնասակար է հայկական ճարտարապետության պատմությունը գրելը՝ մատենական և վիմական գրավոր տեղեկությունները, ինչպես նաև հնագիտական առարկաները բոլորովին հաշվի չառնելով։*

այդ նույն շենքերից հաճախ գտնվում են նաև այնպիսի առարկաներ, որոնք արարացուն չէին կարող պատկանել։ Հենց այս սենյակի պեղումների ժամանակ գտնվեց պղնձե ունկավոր մի փոքրիկ խաչ, ճիշտ այնպիսին, ինչպիսին քրիստոնյաներն են իրենց վզից կախում։ Այդ արդեն մի ապացույց

Նկ. 113. Թագողի այգեկութի հարթաքանդակ. գտնված Վերին Արտաշատ գյուղի գերեզմանոցում. սկզբնապես ծառայել է մի աշխարհիկ շենքի՝ իբրև մուտքի ճակատակալ քար

էր այն բանի, որ այդ շենքում ապրել են քրիստոնյաներ։ Մեզ թվում է, որ արաբական գրերի իմիտացիան, որոնց բովանդակությունը որևէ կարևորություն չունի, Դվինում և Անիում լայն չափերով տարածվել է իբրև լոկ զարդարանք, այդ պատճառով էլ գիպսե այդ զարդարանքների գրության մեջ կան գծագրվող տեղին հարմարեցրած այնպիսի գրեր, որոնց ընթերցումն անհնարին է։ Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ այդ զարդավոր վարդերը գտնըվում են նաև քրիստոնյաների տներում։ Ճիշտ նույն երևույթը մենք տեսնում ենք նաև կերամիկայի մեջ. Հայկական ջնարակած բրեզանների եզրերին հաճախ լինում են զարդագրոտի արաբական քուֆի գրերի նմանողությամբ։

Իսկ Դվինի պատմության վերջին շրջանում, հատկապես 13-րդ դարի սկզբից սկսած, երբ վաղուց արդեն քաղաքը դադարել էր Հայաստանի մայրաքաղաք լինելուց և պատկանում էր տեղական մի իշխանության, նրա միջնաբերդը կորցրել էր իր նշանակությունը։ Նախկին պալատական շինությունների մեջ նոր բնակիչները նույնիսկ այնպիսի աղմկոտ արհեստանոցներ էին հիմնել, ինչպիսին է դարբնոցը։

Դվինի գոյության վերջին շրջանի այդ տեղական իշխանությունները, որոնք մեծ մասամբ արդեն կորցրել էին իրենց քաղաքական և տնտեսական դերն ու նշանակությունը, այնքան գործակալությունների և պաշտոնյաների պետք չունեին, ինչքան առաջ, երբ Դվինը Հայաստանի մայրաքաղաք էր, ուստի և բերդում պաշտոնեության համար հատուկ թաղեր ունենալու կարիքը չկար։ Մեզ թվում է, որ 13-րդ դարում, Դվինի վերոհիշյալ շենքը պատկանել է մի ունևոր արհեստավորի, որովհետև այդ շենքի մեջ գտնվեցին երկու ջլկանոթեր և, որ գլխավորն է, ընդարձակ հրապարակն այդ ժամանակ առևտրական կամ տոնավաճառային շուկայի է վերածված եղել, որտեղ կենտրոնացվել է քաղաքի գլխավոր առևտուրը, գուցե և վաճառատներն ու արհեստանոցների մի մասը։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԵԿՈՐՆԵՐ ԵՎ ՔԱՆԴԱԿՎԱԾ ՔԱՐԵՐ

Պեղումների ժամանակ, ինչպես և նրանցից առաջ տարբեր ժամանակներում, Դվինում գտնվել են բազմաթիվ ճարտարապետական քանդակազարդ բեկորներ, բայց մենք այստեղ համառոտակի կանգ կառնենք դրանցից միայն մի քանիսի վրա։

1. 1939 թվականին Դվինի հնագիտական արշավախմբի աշխատակիցները Վերին Արտաշատ գյուղի գերեզմանոցում գտան մի հարթաքանդակ տուֆ քար, որի վրա պատ-

Նկ. 111. Մենավոր սյան խոյակ, գտնված քաղաքի կենտրոնական թաղում

կերված է խաղողի բերքահավաքը։ Պատկերաքանդակի գրեթե կենտրոնում խաղողի որթի կամարաձևության տակ խաղող հավաքող կնոջ պատկերն է, որ կռացած դիրքով թփից խաղող է պոկում, նրանից դեպի ձախ, կրկնակի մեծությամբ մի այլ կին խաղողի լի կողովը ուսին, գնում է այգուց դուրս, իսկ քարի աջակողմյան ծայրին քանդակված է մի խաչ, որի մի մասը ջարդված է։ Աշխատանքային տեսարան պատկերող այս բացառիկ նմուշը պատկանում է 5—6-րդ դարերին և իր հարթ մակերեսին արված փորագրությամբ միանգամայն բնորոշ է Դվինի վաղագույն շրջանի համար։ Քարը սկզբնապես տեղավորված է եղել շենքի պատի մեջ, հավանաբար իբրև մուտքի ճակատակալ քար, բայց թե ի՞նչ շենքի է պատկանել, այժմ անհնարին է ճշտել, որովհետև, ինչպես ասացինք, նա իր

Նկ. 113. Նույն խոյակի մյուս երեսը

բուն տեղից հեռացված էր։ Ճիշտ նույն խաչը պատկերող մի այլ քար էլ գտնվել է հին քաղաքի տարածության վրա, բայց կողքի սյուժետային նկարն անհետացած է։ Այդ քարը ևս նույն ժամանակին է պատկանում, այստեղ հիշատակեցինք այն, որովհետև նա ծառայում է իբրև ապացույց սյուժետային պատկերաքանդակների գոյության Դվինի վաղագույն շրջանում (Նկ. № 113)։

2. 1948 թվականին Վերին Արտաշատ գյուղի սահմաններում գտնվեց ծայր աստիճան հետաքրքիր խոյակի մի բեկոր, որի

մի երեսին պատկերված է մի սրբապատկեր, ձիու վրա նստած և ձիու ոտների տակ վիշապ օձը՝ երախը բաց վիճակում։ Քարի վրա պահպանվել է միայն ձիու առաջին կեսը և հեծյալի թևը՝ սանձը ձեռքին։ Քարի մյուս երեսին քանդակված է մի խաչ, որի վերին թևի փոխարեն քրիստոսի պատկերն է դրված լուսապսակով, իսկ նրա ձախ կողքին մի այլ սրբապատկեր, որ հավանաբար Հովհաննես Մկրտիչն է (տե՛ս նկ. № 114 և 115)։

Այս խոյակն իր պատկերաքանդակներով միասին մինչև այժմ գտնված հայկական քանդակների մեջ մի եզակի նմուշ է, թեև նման սյուժե ունեցող քարեր մեզ ծանոթ են վաղ բյուզանդական արվեստից։ Այդ խոյակն ամենայն հավանականությամբ, շենքի վրա չի եղել, այլ նա առանձին կանգնած գերեզմանական սյան գլխին է եղել դրված։

Այդ սյուներն իրենց խաչերով միասին Հայաստանում տարածված են եղել 5—7-րդ դարերում։ Իսկ խոյակը թեև իր տեսակի մեջ միակ օրինակն է, բայց նրա «արևելյան» սյուժեն ցույց է տալիս, որ նա ժամանակին մեծ չափով տարածված է եղել Փոքր Ասիայում և Հայաստանում, և եթե այսօր մեզ անծանոթ են այդ տիպի հուշարձանների այլ օրինակներ, պատճառն այն է, որ մենք դեռ ևս նոր ենք ձեռնամուխ լինում վաղ միջնադարի մանրակըրկիտ ուսումնասիրության։



Նկ. 116. Մենավոր սյան կողովաձև խոյակ, գտնված քաղաքի կենտրոնական թաղում
Չափագրություն Լ. Սաղոյանի

3. Դվինում, դեռևս պեղումներից առաջ, գտնվել են մի քանի փոքրածավալ խոյակներ, որոնցից երկուսը զամբյուղաձև են, իսկ մյուսները՝ քառակող, վերևի մասը լայն, իսկ ստորին մասը նեղ (տե՛ս նկ. №№ 116 և 118)։ Այդ զամբյուղաձև խոյակները որոշ նմանություն ունեն Զվարթնոցի նույնատիպ խոյակներին. երկու տեղում էլ խոյակի ճակատի քառակող մասին հաջորդում են խոյողի ոլորանները, որոնք նստած են հյուսածո կլոր մասի վրա։ Սակայն մանրամասնությունների մեջ խիստ տարբերվում են միմյանցից։ Նախ՝ զամբյուղա-

Նկ. 117. Մենավոր սյան գլխաքար, գտնված հին քաղաքի տարածության վրա

Նկ. 118. Մենավոր սյան խոյակ, գտնված քաղաքի կենտրոնական թաղում

Նկ. 119, Պտուտակավոր զարդով որմնասյան ձողունի բեկորներ, գտնված քաղաքի տարածության վրա

Նկ. 120. Սիրամարգի հարթաքանդակ, գտնված քաղաքի տարածության վրա

Նկ. 121. Արխիվոլտ անհայտ շենքի վրայից, գտնված քաղաքի կենտրոնական թաղում

Նկ. 122. Քանդակազարդ որմնաքար, գտնված քաղաքի կենտրոնական թաղում

Նկ. 123. Քառակող կոթող, գտնված Այգեստան գյուղի գերեզմանոցում

Նկ. 124. Որմնասյան բուն, գտնված Այգեստան գյուղի գերեզմանոցում

Նկ. 125. Ձևավոր որմնաքար, գտնված Այգեստան գյուղի գերեզմանոցում

Նկ. 126. Քառակող կոթող, գտնված Այգեստան գյուղի գերեզմանոցում

Նկ. 127. Որթնաոյան խոյակ, գտնված կաթողիկե եկեղեցու արևելյան կողմում

Նկ. 130. Սյան խարիսխ, գտնված քաղաքի կենտրոնական թաղի արևմտյան կողմի ավերակ շենքի մեջ

Նկ. 128. Քանդակազարդ բեկոր, գտնված բերդի հրապարակում
Չափագրությունն Գր. Քոչոյանի

Նկ. 131. Քանդակազարդ բեկոր, գտնված քաղաքի կենտրոնական թաղում

Նկ. 129. Քանդակազարդ բեկոր
Վերակազմությունն Գր. Քոչոյանի

Նկ. 132. Խոյակ, գտնված Այգեստան գյուղի գերեզմանոցում

ձև մասը Զվարթնոցում խիստ երկարավուն է, իսկ Դվինում՝ կարճ, երկրորդ՝ Զվարթնոցի խոյակը մեծ է, իսկ Դվինինը՝ փոքր, երրորդ՝ Զվարթնոցի խոյակի մեջ վերևից ներքև անցք չկա, իսկ Դվինինն անցք ունի՝ ինչ որ բան հագցնելու համար։ Հենց այս վերջին հանգամանքը ցույց է տալիս, որ Դվինի խոյակը ոչ թե որևէ շենքի մաս, այլ եկեղեցու մոտ առանձին կանգնած գերեզմանական սյուն է եղել և իր գլխին ունեցել է «թևավոր» խաչ։ Այդ սյուներն, ինչպես ասացինք, կանգնեցվել են 5—7-րդ դարերում միայն։ Հետևապես, վերոհիշյալ խոյակները պատկանում են այդ ժամանակին։

Մյուս խոյակի վրա կենտրոնական քանդակը խաչն է, բայց կան նաև այլ օրնամենտներ, որոնք, հավանաբար, թռչունի թևեր են պատկերում։ Գտնվել են նաև մի շարք այլ քանդակազարդ բեկորներ՝ սրբամարդի հարթաքանդակ, շենքի անտրեվոլտ քառակող կոթողներ, խաչքարեր, ճարտարապետական բեկորներ և այլն, որոնցից մի քանիսի նկարները զետեղել ենք այստեղ, 117, 119--134 համարների տակ։

* * *

Ամփոփելով ճարտարապետական հուշարձաններին նվիրված ակնարկը, գալիս ենք հետևյալ եզրակացության.

Նկ. 133. Թևավոր խաչի բեկոր, գտնված քաղաքի կենտրոնական թաղում

Նկ. 134. Նույն խաչի վերակազմությունը
Աշխատանք Գր. Քոչոյանի

1. Կաթողիկե եկեղեցին սկզբնական շրջանում եղել է եռանավ բազիլիկ շինություն, առանց աբսիդի և ծառայել է իբրև հեթանոսական տաճար։ Քրիստոնեության մուտքի ժամանակ նա դարձել է եկեղեցի և ստացել արևելյան աբսիդը, 5-րդ դարում (450 թ.) նրա վրա ավելացել են արևելյան կողմի ավանդատները և արտաքին սյունազարդ սրահը, 485 թվականից հետո Վահան Մամիկոնյանը մեծ ծավալով նորոգել է եկե-

ղեցին, բայց կառուցվածքի մեջ էական փոփոխություն չի մտցրել։ 607—619 թվականների ընթացքում Սմբատ Բագրատունին հիմնովին ձևափոխել է տաճարը և պարձրել կողմնային աբսիդներ ունեցող գմբեթավոր շինություն։ Կաթողիկե եկեղեցին վերջնականապես կործանվել է 893 թվականի ուժեղ երկրաշարժի ժամանակ։

2. Միանավ բազիլիկ տաճարը քաղաքի կենտրոնական թաղում կառուցված է 554—555 թվականներին Ներսես Բագրևանդեցի կաթողիկոսի օրով, Ցիպտրուզիտի գերեզմանի վրա իբրև վկայարան։ Այս տաճարը նույնպես կործանվել է 893 թվականի մեծ երկրաշարժի ժամանակ։

Նկ. 135. Թևավոր խաչ, գտնված քաղաքի կենտրոնական թաղում

3. Կաթողիկոսի պալատը կառուցվել է 461 կամ 485 թվականից հետո և ավարտվել է 490 թվականից առաջ Հովհան Մանդակունու կաթողիկոսության օրով։ Այդ պալատի կենտրոնական դահլիճը հավանաբար եռանավ շենք է եղել և ունեցել է փայտե ծածկ։ Կաթողիկոսի պալատը քանդվել է 893 թվականի երկրաշարժից, որից հետո որոշ ձևափոխություններով վերաշինվել է և օգտագործվել հավանաբար իբրև մկկիթ։

4. Միջնաբերդի վերին շերտի պալատները կառուցված են 893 թվականի մեծ երկրաշարժից հետո, երբ կառուցողները հնարավորություն են ունեցել իրենց շենքի հիմքերն ամրացնելու համար օգտագործել



Նկ. 136. Թևավոր խաչ, գտնված քաղաքի կենտրոնական թաղում
Չափագրություն Գ. Քոչոյանի

կաթողիկե եկեղեցու և մյուս շենքերի սրբատաշ քարերը։ Միջնաբերդի մեծ շենքն իր գոյությունը շարունակել է մինչև 13-րդ դարը, և այդքան երկար ժամանակի ընթացքում մի շարք փոփոխությունների և վերանորոգումների է ենթարկվել, որոնց ընթացքում խճողվել է և կորցրել իր ամբողջությունը։

Այդ շենքը սակայն ունեցել է ներքին հարուստ հարդարանք, գիպսե ձուլածո և փորագիր գեղեցիկ որմնազարդերով, որմնանկարներով և գույնզգույն շքադյուսով։ Միջնաբերդի պալատն ունեցել է բազա-

նիք, տաք ջրի երկաթե խողովակներով և ընդհատակյա ջեռուցման սիստեմ, մի քանի արհեստանոց և կավանոթ թրծելու հնոց։

5. Դվինի միջնաբերդի հյուսիս արևմըտյան մասում բացված շենքը պատկանել է մի արհեստավորի և կառուցված է եղել Դվինի երկրաշարժից հետո,՝ հավանաբար 10-րդ դարում։

6. Դվինում գտնված փոքրածավալ խոյակները կենտրոնական թաղը և այլ տեղեր զարդարող գերեզմանական կոթողների մասերն են հանդիսանում։ Այդ խոյակները պատկանում են 5—6-րդ դարերին։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԳՏՆՎԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

(ժողովրդի զբաղմունքը և կենցաղը)

Գտնված առարկաներն անհերքելի ապացույց են իրենց ժամանակի տնտեսական կյանքի, արհեստների, ինչպես նաև հասարակական խավերի կենցաղի և սովորությունների համար։ Հին մատենագիրների տված տեղեկությունները ժողովրդի կենցաղի, սովորությունների, գործածած առարկաների, գոյություն ունեցող արհեստների և ճարտարագործության մասին կամ շատ ժլատ են ու թերի և կամ կոնկրետությունից բոլորովին զուրկ։ Բացի այդ, հին հեղինակների մոտեցումն այս կամ այն հարցին այսօր մեզ բոլորովին չի բավարարում։ Դրան հակառակ, գտնված առարկաները, եթե նույնիսկ ամբողջական չեն և կորցրել են իրենց նպատակին ծառայելու հատկանիշները, այնուամենայնիվ մեծ մասամբ ճիշտ հասկացողություն են տալիս իրենց ծագման և էության մասին։

Սակայն, անհրաժեշտ է նշել, որ բոլոր առարկաները միևնույն դիմացկունությունը չունեն և հողի տակ միատեսակ վիճակում չեն պահպանվել։ Կան առարկաներ, որոնք տասնյակ դարերի ընթացքում հողի տակ իրենց հատկանիշներից ոչ մի բան չեն կորցրել, բայց կան և այնպիսիները, որոնք արագ կերպով ոչնչացել են։ Օրինակ՝ քարե առարկաները, կերամիկայի մի շարք տեսակները, լավորակ ոսկին հողի տակ գրեթե որևէ փոփոխություն չեն կրել, իսկ երկաթե, պղնձե, փայտե և ոսկրե առարկաները հողի մեջ արագ փտել են, կամ օքսիդացել և ժամանակի ընթացքում ոչնչացել, մանավանդ, եթե հողի մեջ խոնավությունը շատ է եղել։ Բրդյա բանվածքները շատ ավելի արագ են ոչնչացել և անհետ կորել, այդ պատճառով էլ, պեղումների ժամանակ կտորեղեն գրեթե չի գտնվել և եթե Դվինի հին բնակիչների կենցաղի մասին դատելու լինենք միայն մեր գտած առարկաների հիման վրա, ապա պետք է սխալ ենթադրության հանգենք և կարծենք, որ հին դվինցիք մեծ մասամբ զբաղվել են կավագործությամբ և քարագործությամբ, իսկ մի շարք նուրբ արհեստների՝ ոստայնանկության, գորգագործության, ատաղձագործության, կաշեգործության բոլորովին ծանոթ չեն եղել։

Դվինի մասին գրավոր տեղեկություններ են հաղորդում մի շարք օտար հեղինակներ, բայց նրանք գրել են միայն այն բաների մասին, ինչը որ զարմացրել է իրենց, իսկ հայ մատենագիրները, որոնք Դվինի մասին ավելի շատ բան են գրել՝ բնակչության կենցաղի և սովորությունների վրա կանգ չեն առել։ Այդ պատճառով ժողովրդի զբաղմունքի և մի շարք այլ հանգամանքների մասին գրելիս՝ անհրաժեշտ է նկատի առնել պեղումներից հայտնագործված ինչպես նյութական մնացորդները, այնպես էլ հայ ու օտար մատենագիրների տված տեղեկությունները, այլապես ուսումնասիրությունը կլինի խիստ միակողմանի և թերի։

Պեղումների ժամանակ գտնված տեղա-

կան արտադրության առարկաները, մանավանդ արհեստավորների գործիքները, մատնանիշ են անում արհեստների զարգացման աստիճանը, ուստի մեզ համար բացառիկ կարևորություն ունեն դրանք։ Իսկ այլ երկրներից բերված առարկաները ցույց են տալիս միջազգային առևտրական այն կապերը, որոնք Դվինն ունեցել է այլ երկրների հետ, թեև գիտենք, որ մուծված առարկաները սովորաբար լայն գործածություն չեն ունեցել և ծառայել են գլխավորապես երկրի իշխող դասին։

Տեղական արհեստների մասին խոսելիս, անպայմանորեն, պետք է նկատի առնենք արհեստի երկու տարբեր ձևերը, մեկը՝ բուն արհեստն է իր պրոֆեսիոնալ արհեստավորով, որը մշտապես զբաղվել է միայն այդ գործով, իսկ մյուսը՝ տնայնագործն է, որ իր արհեստը ծառայեցրել է գլխավորապես իր տան կարիքներին։ Հասկանալի է, որ պրոֆեսիոնալ արհեստավորի արտադրանքը շուկայի համար է եղել, նա հաճախ բավարարել է ոչ միայն իր քաղաքի, այլև նրա շրջապատի և երբեմն էլ հեռավոր վայրերի կարիքները, նայած այն բանին, թե այդ արտադրանքն ինչ չափով է հարմար եղել հեռավոր վայրեր արտահանելու։ Երբեմն պատահել է նույնիսկ այնպես, որ որևէ տեղում արտադրված առարկա շատ քիչ է գործածվել նրա արտադրության վայրում և ամբողջապես արտահանվել է օտար երկրներ։ Օրինակ, դվինցիք արտադրել են բարձրորակ շողյուն հախճապակյա անոթներ, որոնք տեղում քիչ քանակությամբ գործ են ածվել միայն բարձր խավի կողմից, բայց մեծ չափով արտահանվել են այլ երկրներ։ Դվինում, արհեստավորների մեջ մրցումը շատ մեծ ծավալ է ունեցել և այդ մրցման մեջ արհեստավորն ստիպված է եղել մաքսիմալ չափերով կատարելագործել իր արհեստը և իր արտադրանքով աչքի ընկնել բոլոր գնորդների մոտ։ Այդ մրցման հետևանքով արհեստներից շատերը հասել են այնպիսի բարձրության, որ նրանց արտադրանքի նմուշները ստացել են գեղարվեստական բարձր արժանիք։ Այսպես է առաջ եկել գեղարվեստական կերամիկայի, ոսկերչության, ձեռագործի և գորգագործության բարձրարվեստ արտադրանքը։

Անցյալում, ինչպես ասացինք, մասնագետ արհեստավորի արտադրանքի կողքին գոյություն է ունեցել նաև «գյուղական» արհեստավորի մի այնպիսի կոպիտ արտադրանք, որը բավարարել է մեծ մասամբ չքավոր բնակչության կարիքները և սպառում է ունեցել խիստ սահմանափակ տարածության վրա։ Այս տիպի արհեստավորներ ևս եղել են Դվինում, չնայած այն բանին, որ նրանք ավելի բնորոշ են գյուղական հետամնաց վայրերի համար։

ՄԵՏԱՂԵ ԱՌԱՐԿԱՆԵՐ

(Մետաղամշակություն)

Երկաթե իրեր (դարբնություն, փականագործություն). — Դարբնի արտադրած առարկաները միջազգային առևտրի մեջ նկատելի դեր չեն խաղացել, ոչ միայն այն պատճառով, որ երկաթե առարկաների տեղափոխությունն այն ժամանակվա փոխադրական միջոցներով դժվար է եղել, այլև այն պատճառով, որ յուրաքանչյուր երկիր երկաթե գործիքների համար տարբեր ձևեր ուներ և մի երկրում արտադրված գործիքը մի այլ երկրում պետքական չէր կարող լինել, օրինակ Դվինում շինված բահը, գութանի խոփը, կացինը, մանգաղը պետք չէր կարող գալ որևէ այլ երկրում, որովհետև այնտեղ այդ առարկաներն այլ ձևեր ունեին․ այդ պատճառով էլ հնում երկաթը հանույթի վայրից այլ երկրներ են տեղափոխել մեծ մասամբ տձև վիճակում և ոչ թե պատրաստի առարկաների ձևով։

Դվին քաղաքի կենտրոնական թաղում, ինչպես նշեցինք, բացվեց դարբնի արհեստանոց, որը պատկանում էր 12-րդ դարի վերջին կամ 13-րդ դարի սկզբին։ Այստեղ նկուղային հարկում գտնվեց դարբնի շինած առարկաների մի մեծ կույտ, որի մեջ երևում էին կացնի, կեռ ծայրով երկաթե ձողերի, տապակի, մեծագլուխ գամերի և երկաթե շղթայի հետքեր՝ խիստ քայքայված վիճակում։ Բացի այդ, ամեն տարի պեղումների ժամանակ գտնվում են երկաթե կենքերի, գործիքների և զանազան առարկաների բազմաթիվ նմուշներ, որոնք միասին վերցրած ընդհանուր հասկացողություն են տալիս Դվինի դարբնության վիճակի մասին։



Նկ. 137. Երկաթե գործիքներ և պայտեր, գտնված Դվինում
Նկար Ա. Պ ա տ ր ի կ ի

Քաղաքի կենտրոնական թաղում գտնըված փայտե արորի մեծ խոփը, որը միջին դարերից սկսած, մինչև գրեթե Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելը,

Նկ. 138. Երկաթե րահ, գտնված միջնաբերդում. ինվ. № 1906 242

գործածվում էր ոչ միայն հետամնաց Թյուրքիայի տիրապետության տակ գտնվող Հայաստանի նահանգներում, այլև ցարական Ռուսաստանի սահմաններում ապրող հայերի մեջ։ Դվինում գտնված խոփն ըստ իր գյուտի հանգամանքների պետք է պատկանի ամենաուշը 9-րդ դարին. որովհետև նա ի հայտ է եկել կաթողիկե եկեղեցու հարավային կողմում, տաճարի հիմքերի մոտ, որն, ինչպես հայտնի է, քանդվել է Դվինի մեծ երկրաշարժի ժամանակ՝ 893 թվականին։

Դվինի խոփին ճիշտ նմանը գտնվել է Զվարթնոցում, որը նույնպես պատկանում է 9-րդ դարին, կամ ամենաուշը 10-րդ դարին, որովհետև Զվարթնոցը 10-րդ դարի վերջին քանդվեց, հավանաբար, տեղական արաբ էմիրների ձեռքով։

10-րդ դարի արաբ մատենագիր Ալ Մուկադասին գրում է, որ Արդաբիլի բնակիչները հողը վարում էին չորս լուծ եզներով քաշվող արորով, և այդ եզների յուրաքանչյուր զույգն ունեցել է մի բշող հոտաղ[1]։ Նույն տիպի փայտե գութանի մի քանի պատկեր պահպանվել են մի քիչ ավելի ուշ ժամանակների պատկանող բարձրաքանդակների մեջ, որոնք բոլորն էլ վկայում են այն մասին, որ այդ ծանր գութանը գոյություն է ունեցել նաև Հայաստանում Բագրատունյաց տիրապետության օրով՝ 9-ից մինչև 11-րդ դարերում։

Զվարթնոցի խոփի մեծ նմանությունը Դվինում գտնվածին, մեր կարծիքով, արդյունք է այն բանին, որ Դվինի գործիները սպառարկել են նաև մերձակա վայրերին, մինչև Վաղարշապատ։

Ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ գործության համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում 1949 թվականին միջնաբերդի պեղումների ժամանակ գտնըված րահը, որն իր ձևով նման է դեռ այսօր էլ մեր գյուղերում գործածվող րահին։ Արարատյան դաշտի գյուղերում այդ րահը կարևոր գործիքներից մեկն է եղել հող փորելու համար, և ինչքան էլ հողը պինդ լիներ գյուղացին բրիչ (փայտատ կամ քլունգ)

Նկ. 139. Երկաթե ուրագ, կիսապատրաստ վիճակում, գտնված միջնաբերդում. ինվ. № 1905/80

չէր գործածում, այլ րահի սուր ծայրը դընում էր գետնին և աջ ոտով, մարմնի ամբողջ ծանրությամբ, ընկնում էր րահի երկար կոթին ամրացրած օղակավոր փոքրիկ փայտի վրա (թափչակ) և խրում րահը հողի մեջ։ Րահը Հայաստանում թեև առաջին

[1] СМОМПК, выпуск XXXVIII, 1908, стр, 16.

անդամն է գտնվում, բայց նրա գործածությունը մեզ ծանոթ է 10-րդ դարին պատկանող Ախթամարի տաճարի խաղողի մշակության և նրա վնասատուներին նվիրված քանդակազարդ գոտիից, որտեղ քանդակների հատվածներից մեկում շինականը ճիշտ նույն ձևի բահով խաղողի այգին է փորում։ Բահի մի այլ օրինակ էլ գտնվեց կաթողիկե եկեղեցու մոտ բացված գաբրնի արհեստանոցի երկաթե առարկաների կույտի մեջ, բայց այդտեղ առարկաներն այնքան էին քայքայված, որ միայն նրա ուրվագծերն էին տեսանելի մնացել։

Պեղումների ժամանակ Դվինում գտնվել է երկու կացին, մեկը մեծ և մյուսը՝ փոքր։ Հավանաբար ինչպես այժմ, այնպես էլ անցյալում, տարբեր մեծության և տարբեր ձևի կացիններն ունեցել են իրենց գործածություն տարբեր նպատակը։ Դվինում գտնըված մեծ կացինը, բերանից մինչև իր կոթառն ունի 24 սմ երկարություն և բերանի սուր մասը լայնացած չէ։ Այս կացինը հարմար է անտառում փայտ կտրելու և փայտե սյուների և ծածկի գերանների մեջ ծակեր բաց անելու համար։ Հետևապես այս կացինը փայտ կոտորելու ծառայող սովորական կացին չէ, այլ հյուսնի կամ անտառահատի գործիք է։

Դվինում գտնված փոքր կացինն ունի ընդամենը 14 սմ երկարություն և 9,5 սմ բերան, բայց սկզբում բերանն ավելի լայն է եղել և ունեցել է կեռացած մաս։ Սա ևս սովորական փայտ կոտորելու կացին չէ, այլ տան մեջ զանազան թեթև աշխատանքների համար գործածվող գործիք է (Նկ. № 137)։

Հայաստանում, ինչպես հնում, այնպես էլ այժմ, փայտ տաշելու հիմնական գործիքը ուրագն է։ Մի ուրագ գտնվեց Դվինում 1949 թվականի պեղումների ժամանակ, որ այժմ գործածվող ուրագից ոչ մի բանով չի զանազանվում։ Ինչպես հայտնի է, ուրագը երկու տեսակ է լինում, փոքրը, որ կոչվում է ձեռնուրագ կամ պարզապես ուրագ՝ մի փոքր գործիք է ձեռքով փայտ տաշելուն ծառայող, իսկ մեծը, որ կոչվում է ոտնուրագ՝ մեծ գերաններ տաշելու համար է գործածվում և իր կոթի հետևում թակ չի ունենում։ Դվինում գտնված ուրագը ձեռնուրագ է և հետաքրքիրն այստեղ այն է, որ նա գաբրնի արհեստանոցում գտնվել է դեռևս կիսապատրաստ վիճակում, (կիսաֆաբրիկատ)։ Վարպետն այստեղ մետաղին թեև ուրագի ձև է տվել, բայց դեռևս նրան չի կռել և նրբացրել։ Այնպես որ, այդ կիսապատրաստ ուրագի գյուտը հետաքրքիր է նաև նրանով, որ նա անմիջապես վկայում է իր տեղական ծագումը դեռևս Բագրատունյաց տիրապետության ժամանակաշրջանում։

Պեղումների միջոցին գտնվել են երկաթե մի քանի մեծ ու փոքր դուրեր, որոնցից մի քանիսը ծառայել են փայտի մեջ անցքեր բանալու, իսկ մյուսները՝ երկաթե ձողեր ու թիթեղներ կտրատելու կամ ծակելու։ 1949 թվականին միջնաբերդում գտնըվեց երկաթե սղոցի մի քանի կտորներ, որ դարձյալ ծառայել են փայտի մշակման։ Նույն թվականին գտնվեց նաև երկաթե մանգաղաձև մի գործիք, որով պայտարր ձիու սմբակներն է տաշել։ Զանազան ժամանակ գտնվել են երկաթե բազմաթիվ այլ առարկաներ, որոնք բոլորն էլ տեղական գաբրինների արտադրանքն են հանդիսանում։ Դրանց մեջ մեծ տեղ են բռնում կենդանիների պայտերը, որոնց մեջ կան ձիու, էշի և եզան պայտեր։ Այդ պայտերը գամված են եղել կենդանիների ոտներին՝ սրածայր մեծագլուխ երկաթե գամերով։

Պեղումների ժամանակ, ամեն օր դուրս են գալիս մի քանի, երբեմն էլ մի քանի տասնյակ երկաթե մեծագլուխ բևեռներ, որոնք սովորաբար կլոր են լինում, թեև կան նաև քառակող և տափակ մեծ գլուխ ունեցողներ, որ հավանաբար օգտագործվել են այնպիսի տեղերում, որտեղ կլոր մարմին ունեցող գամը կարող էր ոլորվել և անպետքանալ։ Այդ գամերը ծառայել են զանազան նպատակների։ Կան գամեր, որոնցով ծածկի կըղմինդրը միացրել էր շաղախին, կան նաև այնպիսիները, որոնք եղել են փայտե դռաների վրա իբրև զարդարանքներ, իսկ սովորական գամերը ծառայել են տախտակները միմյանց միացնելու և նույնիսկ կենդանիների պայտերը գամելու համար։

1949 թվականին միջնաբերդում գտնըվեցին երկաթե մի քանի միանման առամնավոր առարկաներ, որոնք, կարծեք թե, ձի թիմարելու քերիչի մասեր են, թեև մեր այս ենթադրությունը պնդելու համար բացի նմանությունից որևէ այլ հիմք չունենք։



Նկ. 140. Երկաթե առարկաներ՝ գտնված միջնաբերդում. դուր, ուրագ, ձող և խողովակ

Նկար Ա. Պատրիկի

Նկ.141. Երկաթե առարկաներ, գտնված միջնաբերդում ա. և բ. մկրատ, գ. ե. զ. և է. օղեր, դ. անծանոթ եռոտանի իր, ը. գոտու ախ, ներքևի շարքում՝ զանազան ձևի գամեր

Նկար Ա. Պատրիկի

Հաճախ գտնվում են դռան փակերի մասեր, դռան կեռիկներ, օղակավոր գլուխ ունեցող գամեր, երկաթե ձողեր, և այլ բազմաթիվ առարկաներ, որոնք բնորոշում են երկաթի առատ գործածությունը և դարբնության խիստ տարածված ու կարևոր արհեստ լինելը Դվինում։

Դարբնի հիմնական աշխատանքը կատարվել է կռելու միջոցով, երկաթը դարբնի քուրայում շիկացնելուց հետո ունելիով դրել են սալի վրա և մեծ ու փոքր կռաններով կռել։ Դվինում բացված դարբնոցում սալը չէր պահպանվել, երևի հնում, Դվինն ավերվելուց հետո, փորումներ կատարողներն այդ սալը հանել և տարել են իրենց հետ։

Գտնված շղթաների բեկորները, շենքերի վրա գործածված օղակները և թասի բերանի կարկատանը ցույց են տալիս, որ Դվինի դարբինները ծանոթ են եղել նաև երկարի զոդման եղանակին, որի միջոցով երկաթի մի կտորը միացրել են մի այլ կտորի։ Սակայն, այստեղ զոդումը կապված է եղել դարձյալ երկաթը կռելու հետ։ Զոդելու մի այլ եղանակին էլ մենք ծանոթ ենք միջնաբերդի շենքերից մեկի մեջ գտնված երկաթե խողովակաձև առարկաների միջոցով, որտեղ երկաթը կլորել և երկու ծայրերը միմյանց հետ զոդել են պղնձի միջնորդությամբ, այդ պատճառով էլ խողովակի ամբողջ երկարությամբ՝ զոդման տեղում երևում է պղնձի մի բարակ շերտ։

Դվինի դարբինները, հավանաբար, ծանոթ չեն եղել երկաթ ձուլելու տեխնիկային։ Միջնաբերդում բացված բաղնիքի երկաթե խողովակներն ստացվել են երկաթը կռանով փափկացնելու և եզրերը վրա բերելով՝ միմյանց կպցնելու միջոցով։ Նույն եղանակով են ստացել նաև օղակավոր և ծակոտկեն երկաթե առարկաները, որոնց մեջ մեծ տոկոս են կազմում կաշվի վրա հագցվող օղերը, ճարմանդները, ձիասարքի մասերը, կոճակները, որոնք ըստ իրենց գործածության հարմարանքի ձևավորված են խիստ ուրույն ոճով։

Դվինում երկաթագործները պատրաստել են նաև երկաթե նրբին առարկաներ։ 1948 և 1949 թվականներին միջնաբերդում գտնվեցին երկու մկրատ՝ մեկը մեծ և մյուսը փոքր, որոնք իրենց ձևերով և նրբությամբ դրեթե չեն տարբերվում այժմյան գործարանային մկրատներից։ Ի միջի այլոց, այսպիսի նրբին և մանր առարկաներ, իհարկե, կարող էին նաև արտահանվել եթե ոչ հեռու, գոնե մոտիկ երկրներ։ Մեր միջնադարյան պատմագիրներից մի քանիսը հիշատակել են ոչ միայն դարբնելու կամ փականագործության արհեստները, այլև երկաթահանության գործը[1], որ այն ժամանակվա հասկացողությամբ, լայն չափերով ունեցել է իր արտադրությունը։ Հին և միջնադարյան Հայաստանում երկաթն այնքան շատ էր արտադրվում, որ նա մեծ քանակությամբ օգտագործվում էր շինարարության մեջ իբրև քարերն իրար հետ միացնելու միջոց։ Նույն իսկ կրաշաղախի հայտնագործումից հետո էլ շենքերի կառուցման մեջ երկաթը կարևոր դեր էր խաղում։ Թովմա Արծրունին, Գագիկ Արծրունու պալատի կառուցման նկարագրության մեջ վկայում է, որ այնտեղ գործադրվել է 200,000 լիտր երկաթ։

«Պատմեաց մեզ և հաւատարիմ ոստիկան մի ի գործավարաց քաղաքին, եթէ եմուտ ի շինուած տաճարին երկաթ լտերս իբրև ՄՌ, և հաւաստապէս ճշմարտութեամբ նուազեաց զասելն, քան թէ առատութեամբն յաւելեաց ի բազումս»[2]։

Այս թեկուզ չափազանցրած տեղեկությունից հետո զարմանալի չպիտի թվա այն, որ պեղումների ժամանակ ամենուրեք պատահում են երկաթե իրերի մնացորդներ, որոնց հիման վրա կարող ենք պնդել, որ երկաթը Դվինում լայնորեն օգտագործվել է գյուղատնտեսության, արհեստագործության, շինարարության, զինագործության և տնային տնտեսության մեջ, իսկ դարբնությունն ու փականագործությունը պատկանել են քաղաքի ամենաընդարձակ տարածում ունեցող կարևորագույն արհեստների շարքին։

Զենքեր (զինագործություն)։ Դվինում երկաթից են շինել զենքերի մի շարք կարևոր տեսակները՝ նետերի սլաքները, դաշույնները, նիզակի և տեգի ծայրերը և այլն։

1 Մովսէսի Կաղանկատուացւոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1860, էջ 131։

2 Թովմայի վարդապետի Արծրունւոյ, Պատմութիւն Տանն Արծրունեաց..., էջ 20[illegible]։

Դվինն իբրև երկրի ռազմական ուժերի կենտրոն և հավաքատեղի՝ ունեցել է ընդարձակ զինանոցներ և պահեստներ. Տուն զինուց և ասպազինաց:

Տեղեկություններ ունենք այն մասին, որ նախարարական զորքերը զենք ստանալու համար եկել են Դվին։ Օրինակ, Արտավազդ Մամիկոնյանն իր զորքով եկել է Դվին, որպեսզի այնտեղ «ստանայր զէնս և անօթս պատերազմի»[1]*։*

Նախարարական տներից շատերը խաղաղ ժամանակ իրենց զորքի կեսը և զրահը պետք է պատվիրեին Դվինի զինագործներին։ Դվինում գտնված զենքերը խիստ բազմազան են։

Միայն նետերի սլաքները *կարելի է խմբավորել վեց կարգերի մեջ։*

Ճանկավոր նետասլաքներ.— *Այս ձևի սլաքների ծագումը հին է, միայն թե հները գլխավորապես բրոնզից են, իսկ Դվինում գտնվածները՝ երկաթից և օբսիդիանից։ Դրանք բոլորն էլ պատկանում են միջին դարերին՝ 5-րդից մինչև 13-րդ դարերին։* Օբսիդիանե *ճանկավոր սլաքները գործածական են եղել նաև հնում, որոնք միջնադարյան սլաքներից ոչ մի բանով չեն տարբերվում։ Սրանց մեծությունն ընդամենը 3—4 սանտիմետր է, բայց փայտե կոթն այնպես է հագցված եղել սլաքին, որ վերքի միջից դուրս քաշելու ժամանակ կոթը հեշտությամբ պոկվում էր և դուրս գալիս, իսկ սլաքը մնում խրված տեղում։*

Երկարե *ճանկավոր սլաքները Դվինում գտնվում են քիչ քանակությամբ, բայց նրանց մեծության չափերը շատ տարբեր են։ Փոքրերը սովորաբար իրենց կոթառի հետ միասին լինում են ընդամենը 5—6* սմ *երկարություն, իսկ մեծերը՝ մինչև 12* սմ, *որ հավանաբար հատուկ տեսակի զորքերն են գործածել՝ զրահ ծակելու նպատակով (Նկ. № 143, ինվ. № 107 և 93)։*

Եռանիստ ակոսավոր սլաքներ.— *Սրանք սովորաբար ճանկավոր չեն, թեև երբեմն ունենում են նաև երեք կողմից ճանկերի որոշ մնացորդներ։ Այս սլաքի սուր ծայրից սկըսած երեք կողմերի վրա հավասարաչափ լայնանում են երեք եղուստներ, որոնք սլաքի կոթառի մոտ հանկարծ ընդհատվում են և որոշ անկյան տակ կտրվում։ Այս սլաքները շատ են տարածված Դվինում և Հայաստանի միջնադարյան այլ հնավայրերում (Նկ. № 142, ինվ. № 59, 27, 101 և այլն)։*

Տերևաձև տափակ սլաքներ.— *Սրանք երբեմն ստանում են շեղանկյուն քառան-*



Նկ. 142. Երկաթե զանազան տիպի նետասլաքներ, գտնված քաղաքի կենտրոնական թաղում և միջնաբերդում

Նկար Գր. Քոչոյանի

1 Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց, էջ 138։

կյան ձև՝ մի անկյան վրա երկարող քառակող պոչուկով, որը սովորաբար սլաքի բուն մարմնից բաժանված է լինում ուռուցիկ գոտիով։ Այդ ուռուցիկ մասը պահպանում է սլաքը փայտե կոթի մեջ չափից ավելի խրվելուց (Նկ. 142, ինվ. № 698)։



Նկ. 143. Երկաթե զանազան տիպի նետասլաքներ, գտնված քաղաքի կենտրոնական թաղում և միջնաբերդում
Նկար Գր. Քոչոյանի

Բրգաձև քառանիստ սլաքներ.— Սրանք շատ են տարածված միջին դարերում և Դվինում էլ ամենից շատ գործածված ձևերից մեկն է։ Թեթև սլաքների թվին է պատկանում և սրանց պոչուկի ունենում է ընդամենը 4 սմ երկարություն (Նկ. № 142, վերջինը)։

Սրածայր երկարավուն սլաքներ.— Դարձյալ շատ է տարածված Դվինում։ Ըստ երևույթին այս սլաքը ծառայել է խորը կերպով խոցելու և զրահը ծակելու համար, մինչդեռ նախորդ տեսակներից մի քանիսը թեև խորը չեն մտնում, բայց մեծ վերք են բաց անում մարմնի մեջ (Նկ. № 143, ինվ. № 309)։

Տձև սրածայր սլաքներ.— Սրանք կոպիտ կերպով շինված անկանոն ձևի սլաքներ են և մշակված են միայն խոցող ծայրի կողմից։ Սրանց միջուկը երբեմն բոլորովին անմշակ երկաթի մի զանգված է։ Այս տեսակից Դվինում շատ է գտնվում և սրանց մեծության չափերը խիստ տարբեր են միմյանցից (Նկ. № 143, ինվ. № 196)։

Այս անորոշ ձևի կոպիտ նետերը հավանաբար արդյունք են պատերազմական նեղ պայմաններում շտապ կերպով նետեր պատրաստելուն, երբ սուր պահանջ է եղել նետասլաքների։

Տարբեր ձևի և չափի նետերի գոյությունը արդյունք է հետևյալ հանգամանքների.

ա) Տարբեր նախարարությունների զորքեր գործ են ածել տարբեր ձևի նետասլաքներ։

բ) Զորքի տարբեր տեսակները այլևայլ նպատակների համար գործ են ածել տարբեր ձևի և տարբեր մեծության նետասլաքներ. օրինակ՝ նետաձիգների որոշ խմբեր կամ անհատներ, իրենց ֆիզիկական ուժի համեմատ, կարող էին հեռաձիգ աղեղնավոր լինել։ Մանր, բայց ուժգին հարվածի համար պետք է օգտագործեր երկարավուն մեծ նետասլաք և այլն։

գ) Դվին ներխուժած օտար զորքերը ևս գործ են ածել տարբեր տեսակի նետասլաքներ։

Սակայն, այժմ խիստ դժվար է տարբերել տեղականը օտարից, որովհետև դրա համար անհրաժեշտ է մանրակրկիտ հետազոտություն կատարել ոչ միայն Դվինում, այլև նախարարությունների կենտրոններում։ Նույնիսկ Դվինի տեղական գինագործների արհեստանոցներն այդ հարցում որևէ օգնություն չեն կարող ցույց տալ, որովհետև այնտեղ հաճախ ձմեռել են օտար զորքեր, հետևապես դվինցի զինագործներն

ստար զորքի համար ևս կարող են զենք պատրաստել նրանց ճաշակի համաձայն։

Դվինում գտնված սլաքների մեծագույն մասը պատրաստվել են կռելու միջոցով, իսկ տերևաձև և տձև սլաքներից շատերը պատրաստված են մկրատով կտրելու միջոցով։

Տեգի ծայրեր.— *Տեգն ըստ էության մի մեծ նետ է, որ գցում են ոչ թե աղեղի օգնությամբ, այլ ձեռքով։ Տեգի ծայրը թեև երբեմն կարելի է շփոթել նետի ծանր սլաքի կամ նիզակի ծայրի հետ, բայց մեծ մասամբ իր ձևով և մեծությամբ ճանաչելի է, որովհետև նա սովորաբար լինում է երկսայրի դանակի նման և ունենում է մոտավորապես 10* սմ *երկարություն, չհաշված պոչուկը կամ կոթառը։ Դվինում, ինչպես և Անիում, զենքի այս տեսակը շատ չի գտնված՝ հավանաբար քիչ գործածական լինելու պատճառով։*

Նիզակ.— *Նիզակը հին և միջին դարերում, մինչև հրազենի գյուտը, կարևորագույն զենքերից մեկն էր, որն իր գոյությունը պահպանեց մինչև 20-րդ դարը։ Հնում նա ծառայում էր մոտիկ տարածությունից թշնամուն ուժեղ հարվածով խոցելուն։ Նիզակը գլխավորապես գործածում էին հեծյալները և ռազմասայլի վրա կռվողները, թեև կային նաև հետևակ նիզակավոր զորքեր («գունդ նիզակաւորացն հայոց»[1])։ Նիզակավորները համարվում էին զորքի ընտիր տեսակ և դա հասկանալի է, որովհետև նիզակ գործածելը մեծ վարպետություն էր պահանջում, որին վարժվում էին դեռևս մանկության տարիներից սկսած։*

Պատմական գրավոր աղբյուրներից և միջնադարյան մանրանկարներից մեզ հայտնի է, որ հայերը հնում գործ են ածել նիզակի տարբեր տեսակներ։ Պեղումների ժամանակ Դվինում հայտնաբերվել են մի քանի միմյանցից բոլորովին տարբեր նիզակի ծայրեր։ Հնում հեծյալներն ունեցել են ծանր և երկար նիզակ, որի գեղարդը (նիզակի մետաղյա մասը) տերևաձև է և մեծ։ Այդպիսի մի գեղարդ 1949 թվականին գտնվեց Դվինում, որն ունի 40 սմ-*ից ավելի երկարություն, ըստ որում 30* սմ *շեղբն է և 10* սմ-*ից ավելի էլ կոթառը։ Պարզ է, որ այդ նիզակը չէր կարող պատկանել հետևակի, որովհետև հետիոտն վիճակում նրանով շեշտակի հարված տալն անհնարին է, իսկ հեծյալի ձեռին նա կհանդիսանար մի հուժկու զենք՝ ձիու արագության թափով թշնամուն խոցելու համար (նկ. № 144, ինվ. № 123)։*

Դրան հակառակ, նիզակի կոնաձև երկաթե գեղարդը, որ սովորաբար ունենում է ընդամենը 15 սմ *երկարություն, պարզ է,*



Նկ. 144. Երկաթե նիզակներ, գտնված միջնաբերդում. ա. նիզակի սրածայր գեղարդ, բ. նիզակաձև կեռիկավոր հատիչ, գ. ծանր նիզակի տերևաձև գեղարդ

Նկար Գ ր. Քոչոյանի

որ պետք է ծառայեր հետևակ նիզակավորին։ Մեր կարծիքով, բոլոր տեսակների մեջ կոնաձև նիզակն ամենանախնականն է, թեև հնից մեզ չի հասել և ոչ մի օրինակ, իսկ տերևաձև գեղարդով նիզակը, որ գիտական գրականության մեջ համարվում է հնագույնը, ըստ էության հանդիսանում է կոնաձևի կարգացած տեսակը, երբ կոնի վրա ավելանում են նաև սուր թևեր։ Կոնաձև

1 *Փաւստոսի Բուզանդացւոյ, Պատմութիւն հայոց, էջ 201։*

նիզակների մի քանի օրինակներ գտնվեցին Դվինի միջնաբերդի պեղումներից։

Հայաստանի հնագիտության համար խիստ մեծ արժեք են ներկայացնում 1946 և 1949 թվականներին Դվինի միջնաբերդում գտնված երկու յուրատիպ նիզակները, որոնց վրա արժե մի քիչ ավելի



Նկ. 145. Երկաթե նիզակներ. ա. Նիզակի սրածայր գեղարդ. գտնված քաղաքի կենտրոնական թաղում, բ. կեռիկավոր ծանր նիզակի գեղարդ, գտնված միջնաբերդի մեծ շինության ավերակներում

Նկար Դր. Քոչոյանի

հանգամանորեն խոսել, որովհետև այդ ձևի զենք առաջին անգամն է գտնվում Դվինում, թեև դրանց պատկերները մեզ հայտնի էին ուշ ժամանակի մանրանկարներից։

Դրանցից մեկը, որ բացի իր սուր ծայրից ունի նաև կողքից դուրս եկող կեռ մաս, ծառայել է իր սուր ծայրով սովորական նիզակի ձևով ուղիղ խոցելու, իսկ կեռիկով՝ ձիու վրայից կամ բերդի պարսպից թշնամուն քաշելու և վայր գցելու։ Այս նիզակի միայն ուղիղ ծայրը 25 սմ երկարություն ունի, իսկ ընդհանուր երկարության չափն այժմ ճիշտ կերպով չենք կարող որոշել, որովհետև կոթառը կոտրված է, բայց եթե կոթառի երկարությունը հաշվենք սովորականի չափով 10 սմ, այդ դեպքում, նրա ընդհանուր երկարությունը կլինի մոտ 45 սմ։

Մանրանկարների հիման վրա կարելի է պնդել, որ նիզակի այս ձևը տեղական է և գլխավորապես գործ են ածել հետևակ զորախմբերը՝ հեծելազորի և բերդապահ զորքերի դեմ կռվելու համար։

Նիզակի մյուս տեսակը, որ գուցե բոլորովին այլ անուն է ունեցել, ըստ էության ծառայել է ոչ թե խոցելու, այլ հատելու համար։ Նա իր ձևով նման է մանգաղի, բայց սուր բերանը ոչ թե կեռի ներսի կողմն է, այլ դրսի, որպեսզի փայտի երկար ձողի ծայրին հագցվելով, հնարավոր լինի նրա սուր բերանով թրի նման կտրել հեռու կանգնած թշնամուն։

Մեզ ծանոթ մանրանկարների համաձայն այս զենքն էլ հետևակ զորքերն են գործածել, թեև ընդհանուր առմամբ պետք է նշել, որ մանրանկարներն ավելի ուշ ժամանակի են պատկանում (մեծ մասամբ 13—16-րդ դարերին), քան Դվինում գտնված զենքերը՝ ուստի և նրանք կարող են լրիվ կերպով չնմանվել միմյանց, մանավանդ որ, 13-րդ դարից հետո հայերն արդեն ինքնուրույն զորք էլ այլևս չունեին Արևելյան Հայաստանում և գտնվում էին մոնղոլական ծանր լծի տակ, հետևապես և հայկական զենքի տեսակներն այդ ժամանակ կարող էին արդեն մոռացված լինել։

Դանակ և դաշույն.— Դվինում երկաթե դանակի շեղբեր շատ են գտնվել, բայց այժմ դժվար է որոշել, նրանք միայն դանակներ են, թե՞ գործածվել են նաև իբրև զենք։ Սակայն, քանի որ նրանց մեծ մասը գտնվել է զենքի մյուս տեսակների հետ միասին, այդ պատճառով էլ մենք այդ դանակները դասել ենք զենքերի շարքում. Այդ դանակներն նեղ ու երկար շեղբ ունեն, սրածայր են և չեն ծալվում։ Մեզ թվում է, որ սովորական դանակները Դվինում էլ եղել են այնպիսիք, ինչպիսիք գտնվել են Անիում. դրանք մոտ 8—10 սմ երկարու-

թյամբ կեռ ծայրով ծայրափի դանակներ են և ունեն ոսկրե երախակալ։

Զարմանալին այն է, որ մեր պատմագիրների այնքան շատ հիշատակած սակրը *և* սուսերը *մինչև այժմ չի գտնվել ոչ Անիում և ոչ էլ Դվինում, թեև գիտենք, որ հայկական զորքի մեջ եղել են սակրավորների և սուսերավորների ամբողջ խմբեր։*

Ի միջի այլոց, Դվինում, միջնաբերդի պեղումների ժամանակ, գտնվել են հավի ձվից մի քիչ փոքր մեծության միաչափ գետաքարերի կույտեր։ Դրանք պարզ է, որ պարսաքարեր *են, որոնք* պարսավոր *կոչվող զորքերը* պարսատիկով *նետել են թշնամու վրա։ Նույն տեղում գտնվել են նաև 15—25 կիլոգրամ ծանրության գետաքարեր, որոնք բերդի պաշտպաններին ծառայել են իբրև* ռմբաքար*։ Այդ քարերն* ռմբավոր *զորքերը հատուկ գործիքի (ռմբընկեցի) միջոցով նետել են թշնամու վրա։ Ռմբաքարն օգտագործվել է ոչ միայն թշնամու զորքի կամ նրա ռազմական սարքավորումների դեմ, այլև լայն չափերով կիրառվել է պաշարված քաղաքի բնակչությանն ահաբեկելու և ամրոցների ներսի շենքերը քար ու քանդ անելու համար։ Այնպես որ, բացի այդ քարակույտերից, Դվինում հաճախ հանդիպող մեծ գետաքարերից շատերն էլ կարող են ռմբաքար եղած լինել։*

Պղնձե առարկաներ (պղնձագործություն).— *Դվինում գտնված պղնձե առարկաների թիվը շատ քիչ է, չնայած այն բանին, որ Հայաստանը դեռևս հնագույն ժամանակներից սկսած հռչակված է եղել իր պղնձահանքերով և զարգացած պղնձագործությամբ։ Հնագույն վայրերի պեղումները (Կարմիր բլուր, շրջանի դամբարաններ ևն.) տվել են բարձրարվեստ բրոնզե իրեր և բրոնզե իրեր ձուլելու քարե կաղապարներ։ Դվինին ժամանակակից Անին ևս ունեցել է բարձրարվեստ պղնձե եկեղեցական և տնային կարասի։ Հայտնի է, որ Հայաստանից արտահանվող ապրանքների թվին են պատկանել նաև քանդակազարդ պղնձե առարկաները։ Դվինում պղնձե իրերի քիչ գտնըվելը, մեր կարծիքով, պատճառաբանվում է նրանով, որ այնտեղ կերամիկական արտադրությունը այնքան էր զարգացել, որ պղնձագործությունը չէր կարող մրցել նրա հետ, ուստի և պղնձագործությունը խիստ սահմանափակ արտադրություն ուներ և զբաղվում էր միայն այնպիսի առարկաների արտադրությամբ, որոնք կավից կամ հախճապակուց չէր կարելի շինել։*

Սխալ կլիներ ենթադրել, թե Դվինում պղնձագործությունը հետամնաց արհեստների թվին է պատկանել։ Ընդհակառակը, քիչ քանակությամբ գտնված թեկուզ և միանման պղնձե առարկաները, արհեստի և վարպետության տեսակետով ունեն առաջնակարգ նշանակություն, իսկ արհեստի միակողմանիությունն արտահայտվել է այն բանով, որ տնային սովորական կարասի և եկեղեցական սպաս գրեթե չի արտադրվել, այլ պղնձագործները մեծ մասամբ զբաղվել են պղնձե զարդեր, կոճակներ, բանալի, հավանք, դաստակ, ասեղ, գդալիկներ և այլ նման իրեր շինելով։



Նկ. 146. Զինական դանակներ և տեգերի ծայրեր
Նկար Գր. Քոչոյանի

Ըստ էության, պղնձագործությունն այստեղ պետք է բաժանենք երկու մի-միյանցից բոլորովին տարբեր արհեստների։



Իրականից գծ. Ա. ՊԱՏՐԻԿ

Նկ. 147. Դվինում գտնված պղնձե զանազան զարդարանքներ

Դրանցից մեկը գրեթե ոչ մի բանով չի տարբերվում արծաթագործությունից և, հավանաբար, այդ գործով զբաղվել են միայն ոսկերիչներն ու արծաթագործները և պատրաստել զարդարանքի առարկաներ, իսկ մյուսը՝ բուն պղնձագործությունն է, որն զբաղվել է պղնձե սովորական առարկաների պատրաստմամբ։

Պղնձե զարդարանքներ շինելու արհեստը Հայաստանում, մեծ չափով տարածված էր ոչ միայն միջին դարերում, այլև հետագայում, մինչև 20-րդ դարի սկզբները, գլխավորապես Վասպուրականի, Էրզրումի, Զանգեզուրի և մի շարք այլ վայրերի հայության մեջ, որոնք սիրում էին մետաղե զարդեր կրել իրենց զգեստի վրա։ Դվինում պղնձե զարդերը գործ է ածել քաղաքային բնակչության հասարակ խավը, որ ոսկե զարդարանքներ ձեռք բերելու հնարավորություն չուներ։ Այդ է պատճառը, որ պղնձե մատանիներ, ճարմանդներ, ապարանջաններ, կախիկներ, զարդաշղթաներ, բոժոժաձև զանգակներ, ականջօղեր և բազմաթիվ այլ առարկաներ գտնվում են ոչ թե միջնաբերդում և կաթողիկոսական թաղում, այլ մեծ մասամբ ստորին բերդի վերին շերտում և քաղաքի մյուս թաղերում, իսկ միջնաբերդի գագաթի պեղումների ժամանակ և կաթողիկոսական թաղամասում ի հայտ են գալիս ոսկե և արծաթե առարկաներ և դրամներ։

Դվինում երեք անգամ բացվել է ոսկերչի արհեստանոց—մեկը՝ 1939 թ., երկրորդը՝ 1947 թ. և վերջինը 1950 թվականին, բոլորն էլ միջնաբերդում։ Երեք արհեստանոցներում էլ բացվել են հրակայուն կավից շինված մոտավորապես թեյի բաժակի տարողությամբ հալոցներ, որոնց մեջ նույնիսկ մնացել է պղնձի և պղնձախառն արծաթի հետք։ Նշանակում է, որ այդ հալոցների մեջ ոսկերիչները մեծ մասամբ պղինձ են հալեցրել։ Միստ հետաքրքիր էր 1950 թվականին բացված արհեստանոցը, որտեղ հալոցի հետ միասին գտնվեց նաև պղնձի զարդարանքների մի ամբողջ կույտ, խիստ վատ վիճակում պահպանված։ Այս արհեստանոցը հավանաբար ավելի հին էր, քան 1939 և 1947 թվականներին բացվածները, թեև բոտ էության միմյանցից որևէ կանազանություն չունեին, միայն թե նախորդ երկուսը բացվել էին միջնաբերդի վերին շերտի ավերակների մեջ, իսկ 1950 թվականինը բացվել էր երկրի ավելի խորքում գտնվող հում աղյուսե պատեր ունեցող մեծ շինության մեջ, ուստի և առաջին երկու արհեստանոցները մենք վերագրում ենք 10—13-րդ, իսկ վերջինը՝ 9—10-րդ դարերին։ Այստեղ անհրաժեշտ է նկատել, որ տնայնագործական ոսկերչությունը ոչ միայն միջին դարերում, այլև մինչև 20-րդ դարը տեխնիկական խոշոր փոփոխություններ չի ենթարկվել։ Դեռ մինչև վերջերս էլ տնայնագործ ոսկերիչներն ու արծաթագործները գործ էին ածում ճիշտ նույնպիսի հալոցներ, ինչ-որ Դվինում են գործածել հազար և ավելի տարիներ մեզանից առաջ։

Նկ. 148. Դեղին պղնձե և երկաթե մեծագլուխ զարգագամեր, գտնված քաղաքի կենտրոնական թաղում

Թե ինչու են այդ արհեստանոցները Դվինի միջնաբերդում տեղավորված, թեկուզ և քաղաքի գոյության ուշ շրջանում, մեզ համար հասկանալի կլինի, եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ հնում ֆեոդալական տներն ունեցել են իրենց պալատական արհեստավորները, որոնք բավարարել են միայն իշխող տան կարիքները։ 1950 թվականին միջնաբերդի պեղումների ժամանակ գտնվել են արծաթապատ մեծագլուխ գամեր և այլ առարկաներ, որոնք ամենայն հավանականությամբ զարդարել են պալատական բազմոցները, աթոռները, տուփերը և այլ առարկաներ։ Հասկանալի է, որ այդ առարկաները պետք է պատրաստված լինեին այնպիսի պղնձագործի ձեռքով, որն արտադրում է միայն մանր զարդարանքներ։ Հալոցների հետ միասին միջնաբերդում գտնվել են նաև պղնձե փոքրիկ, բայց երկարապոչ գդալիկներ, հավանաբար, արհեստավորի գործիքներ, զանազան դեղորայք կամ հեղուկ

ցնելուն ծառայող։ Այդպիսի մի քանի դգալիկներ էլ գտնվել են Անիում։

Դվինում այնուամենայնիվ գոյություն է ունեցել նաև բուն պղնձագործությունը։ 1946 թվականին կաթողիկե եկեղեցու պեղումների ժամանակ գտնվեց բրոնզե մի մեծ բանալի, որն ամենայն հավանականությամբ պատկանել է կաթողիկե եկեղեցու արևմտյան դռանը, հետևապես պետք է շինված լինի ոչ ուշ, քան 9-րդ դարը, մինչև Դվինի մեծ երկրաշարժը՝ 893 թվականին, երբ այդ եկեղեցին հիմնահատակ կործանվեց։

Հնագիտության համար մեծ հետաքրքրություն ունի այս բանալին, որովհետև, ինչքան մեզ հայտնի է, նա Հայաստանում գտնված բանալիների հնագույն օրինակն է։ Այդ բանալին բրոնզե երկար ձող է, մեջը փուչ, բռնելու տեղը՝ այժմյան բանալիների նման օղակավոր, իսկ բացող մասում ունի երկու բավականին իրարից հեռու գտնվող ատամներ (Նկ. № 149)։ Բանալու երկարությունը 29 սանտիմետր է, որից 4 սմ բռնակն է, 6,5 սմ բացիչ մասը, իսկ մնացածը՝ ձողի երկարությունը, որից կարելի է եզրակացնել, որ դուռն ունեցել է մոտ 15 սմ հաստություն։ Դռան փակիչ սողնակը, հավանաբար, պղնձից կամ երկաթից է եղել և ամրացված է եղել հենց դռան վրա և բանալու ատամների միջոցով նա շարժվել է առաջ և հետ։ Փակելու միջոցին սողնակն առաջ շարժվելով մտել է մուտքի բարավորի մեջ և դուռը կողպել, իսկ բաց անելու ժամանակ սողնակը ետ է քաշվել և ազատել բարավորի անցքը։ Հնուց ի վեր սովորություն էր դռները դրսի երեսից պղնձով կամ երկաթով պատել։ Դվինում գտնված երկաթե մեծագլուխ գամերի պղնձե ու երկաթե թիթեղների մի մասը պատկանում են այդպիսի դռներին։ Բացի թիթեղապատ դռներից, անցյալից մենք ունենք Մշո Առաքելոց եկեղեցու, Տաթևի վանքի և Սևանա կղզու տաճարների երկու դռները, որոնք փայտից են և հարուստ կերպով քանդակազարդված են աշխարհիկ և կրոնական զարդաքանդակներով։

Ինչպես հայտնի է, Մշո Առաքելոց եկեղեցին, և Տաթևի վանքը դրսից պաշտպանված էին խոշոր պարիսպներով, իսկ Սևանա կղզու տաճարներն ապահով վիճակում էին գտնվում, այդ պատճառով էլ նրանց դռները շինելու ժամանակ նկատի են առել ոչ այնքան ամրությունը, որքան գեղեցկությունը։ Սակայն, մի շարք եկեղեցիներ, որոնք պաշտպանված չեն եղել պարսպով, պարզ է, որ պետք է ամուր և անխորտակելի դռներ ունենային։ Եվ իրոք, ամենուրեք միայնակ տաճարների դռները լինում են բերդերի դռների նման երկաթապատ և երբեմն էլ միակտուր բազալտ քարից (Փարպիի Ծիրանավոր եկեղեցին)։

Հին եկեղեցիների քարե դռները սովորաբար մեծ չէին լինում, մեր տեսածներից ամենամեծն ունի 130 սմ բարձրություն, իսկ փոքրերից մեկը, որ այժմ ցուցադրված է Պատմական թանգարանի Հնագիտական բաժնում, ունի ընդամենը 78 սմ բարձրություն և 68 սմ լայնք, դռան հաստությունը 22-ից մինչև 25 սանտիմետր է։

Դվինի կաթողիկե եկեղեցին քանի որ գտնվում էր պարսպապատ թաղամասում, պետք է ունենար զարդաքանդակ փայտե դուռ, բայց արաբների տիրապետության ժամանակ, երբ այդ թաղն այլևս ապահով չէր կարող համարվել, այդ միջոցին անհրաժեշտ էր այնտեղ դնել մեծ ամրություն ունեցող մի այլ դուռ։

Թանգարանում ցուցադրված քարե դուռն իր վրա ունի բանալու անցք, որի ներսի երեսի վրա երևում է փայտե սողնակի համար արված փորվածքը։ Թեև քարե դռան բանալի մինչև օրս չի գտնվել, բայց թանգարանում դրված դռան բանալու անցքի փոքրությունը (3,1 սմ) և սողնակի մեծությունը ցույց են տալիս, որ նրա բանալին փայտից չէր կարող լինել, որովհետև ինչքան էլ ամուր փայտից լիներ, ծանր սողնակը շարժելու ժամանակ կկոտրվեր։ Հավանաբար բանալին այստեղ ևս պղնձից էր, թեև գիտենք, որ փայտե բանալի գոյություն է ունեցել ինչպես միջին դարերում, այնպես էլ հետագայում, գլխավորապես բնակելի տների դռան ներսի սողնակն առաջ և ետ մղելու համար։

1946 թվականին միջնաբերդում գտնվեց պղնձից ձուլած հավանքի մի դաստակ։ Դվինում թեև հավանք չի գտնվել, բայց դաստակի գյուտը ցույց է տալիս, որ նրա հավանքն էլ պղնձից է եղել։ Պղն-



Նկ. 149. Պղնձե իրեր, գտնված քաղաքի կենտրոնական թաղում և միջնաբերդում. ա. հավանգի թակ, բ. արծաթագործի պղնձե թասանման գործիք, գ. կաթողիկե եկեղեցու բանալի, դ. ե. զ. ասեղներ և ծակիչ

Նկար Ա. Փատրիկի

ձև հավանքների գոյությունը միջնադարյան Հայաստանում ապացուցվել է նաև Ամբերդի պեղումներով, որտեղ գտնվել են գեղեցիկ զարդարանքներ ունեցող մի քանի պղնձե հավանք, բոլորն էլ հավանաբար 10—11-րդ դարերին պատկանող։ Դվինում գտնված դաստակը ևս պատկանում է 10—11-րդ դարերին, այդ գիտենք այն բանից, որ նա ի հայտ է եկել 893 թվականի մեծ երկրաշարժից հետո առաջացած շերտերի մեջ, որտեղ գտնվում են նույն ժամանակին վերագրվող դրոշմազարդ կավե կարասներ և կարմրավույն կավից շինած նրբին փարչեր։

Միջնաբերդի հորերից մեկում 1946 թվականին գտնվեց բրոնզե մի գեղեցիկ ձիթաճրագ։ Հազարավոր կավե ձիթաճրագների կողքին սա մի բացառիկ օրինակ է, որ ցույց է տալիս մի կողմից պղնձի սակավ գործածությունը և մյուս կողմից պղնձագործության բարձր մակարդակի վրա գտնվելը։

Պալատական շենքերի մեջ այս ձիթաճրագը հավանաբար ունեցել է առձեռն գործածություն, իսկ սենյակներն ու դահլիճները լուսավորվել են պղնձե և կավե ջահերով։ Ի դեպ, Անիում գտնվել է սեղանի վրա դրվող կավե ճրագակալի մի հետաքրքիր բեկոր, որն ամբողջական դրության մեջ իրենից ներկայացրել է կլոր մի իր, կենտրոնր բրգաձև բարձունքով և վրան երեք շարք, կողք կողքի տեղավորված բազմաթիվ ձիթաճրագներով։ Դվինում էլ հաճախ գտնվում են այդպիսի ճրագակալի վրայից կոտրված և ընկած ձիթաճրագներ, որոնք սովորական ձիթաճրագի ձև ունենալու պատճառով անհասկանալի կմնային, եթե համեմատության համար չունենայինք Անիի վերոհիշյալ ճրագակալի բեկորը։ Այդ ճրագակալի գոյությունը ցույց է տալիս, որ որոշ հանդիսավորություն ունեցող սենյակներ լուսավորվել են հատարակ կավից շինած այդպիսի ճրագակալներով, թեև պարզ է, որ կախվող կանթեղներ և ջահեր ևս գործածության մեջ են եղել։

Դվինում թեև կախովի պղնձե ջահեր չեն գտնվել, բայց կան անցքեր ունեցող պղնձե թիթեղներ և ձևավոր այլ մասեր, որոնց համեմատությունը Անիի Գագկաշեն տաճարի ջահի հետ ցույց է տալիս, որ դրանք էլ ջահի մասեր են, միայն այն տարբերությամբ, որ Անիի ջահը լուսավորել է եկեղեցին, իսկ Դվինում գտնված բեկորները՝ իշխանական պալատի դահլիճները։

1947 թվականի պեղումների ժամանակ միջնաբերդի հորերից մեկում գտնվեց պղնձե գմբեթավոր մի առարկա, որ ամենայն հավանականությամբ իշխանական ապարանքում ծառայել է իբրև կանթեղի կամ բուրվառի կափարիչ։

1947 թվականի աշնանը միջնաբերդում բացված ոսկերչանոցում գտնվեց մի փոքրիկ թաս, որն արհեստանոցում ծառայել է իբրև գործիք, հավանաբար, հեղուկ մետաղ կամ այլ նյութեր կրակի վրա դնելու համար։ Այդ փոքրիկ անոթի ձուլարանի անհրաժեշտ գործիք լինելն ապացուցվում է նրանով, որ 1950 թվականի պեղումների ժամանակ ևս ճիշտ նույնպիսի անոթ գտնվեց միջնաբերդում բացված ոսկերչանոցում (տես նկար № 149)։ Տնային պղնձե կարասիներ՝ կաթսա, լանգառ, պղնձե պուտուկ, քամիչ և այլ առարկաներ բոլորովին չեն գտնվել և հավանաբար Դվինի հին բնակիչները չեն էլ գործածել, որովհետև այդ առարկաներն իրենց բազմաթիվ ձևերով հանդես են գալիս կավից և հախճապակուց։

Պղնձագործության արտադրանքի մեջ բազմաթիվ առարկաներ՝ հավանքի դաստակը, մատանիներից մի քանիսը և այլն պատրաստված են հատուկ կաղապարների մեջ ձուլելու միջոցով։ Պղնձե խողովակը, թասերը և մի շարք ուրիշ իրեր ստացվել են մետաղը կռելու և զոդելու շնորհիվ։ Կան նաև դրոշմազարդ և նույնիսկ փորագիր գործեր, բայց շատ քիչ։

Մեր տեսակետն այն է, որ պղնձագործությունը, իբրև ինքնուրույն արհեստ, Դվինում շատ թույլ արտահայտություն է ունեցել։

Արծաթե առարկաներ (արծաթագործություն). — *Դվինի պեղումներից արծաթագործության նմուշներ գտնվել են միայն երկու անգամ։ 1947 թվականին կաթողիկե եկեղեցու մեջ գտնվեց արծաթե իրերի մի ժողովածու, որ հավանաբար վերաբերում է 6—7-րդ դարերին, իսկ մյուսը գտնվեց 1950 թվականին՝ միանավ բազիլիկ տաճարի*



Նկ. 180. Արծաթե զարդարանքներ, ոսկերչի հալոց և ոսկերչի գդալանման գործիքներ
Նկար Լ. Սադոյանի

արևելյան կողմում բացված կարասային թաղումների մեջ, որտեղ դուրս եկած արծաթե իրերը մի զույգ ականջօղեր են, որոնք վերաբերում են Դվինի նախնական շրջանին, երբ քաղաքը դեռևս գոյություն չուներ, հավանաբար մեր թվականության 1-ին և 2-րդ դարերին։ Այս օղակաձև ականջօղերն իրենց կենտրոնում երկարավուն թափանցիկ քարով զարդարված հասարակ և կոպիտ առարկաներ են և արվեստի տեսակետով իրենցից առանձնապես մի բան չեն ներկայացնում, իսկ առաջին ժողովածուն կազմված է չորս արծաթե մատանիներից, երկու օղակաձև փոքրիկ զարդարանքներից և կրծքի վրա կախվող մի փոքրիկ խաչից։ Այս ժողովածուի մեջ ամենից հետաքրքիրը ձուլածո խաչն է, որ թեև բավականաչափ մասսիվ գործ է, բայց իր ձևով կապվում է Դվինում գտնված սասանյան գեմմա ունեցող ոսկե խաչի հետ։ Նշանակում է, նա պատկանում է 6—7-րդ դարերին։ Այս երկու խաչերն էլ իրենց ձևով և կազմությամբ առընչվում են Դվինի կենտրոնական թաղում գտնված քարե խաչարձաններին, հատկապես իրենց թևերի ծայրին ունեցած գնդիկներով, որոնք խիստ բնորոշ են խաչերի ժամանակը որոշելու համար, որովհետև այդ գնդիկներն իրենց ուրույն ձևով գոյություն են ունեցել մինչև 7-րդ դարը, և հետագայում ձևափոխման ենթարկվելով, 10-րդ դարում վեր են ածվել հյուսածո քանդակների։ Թեև այս ժողովածուի մեջ եղող բոլոր մատանիներն էլ իրենց վրա ակ ունեն, բայց պատրաստման տեխնիկայով բաժանվում են երկու խմբի. մատանիներից երեքը միատեսակ են և ունեն կլորացող, բայց ծայրը ծայրին չհասնող օղակ, որոնց բաց տեղում հագցրած է շրջանակված ակն իր արծաթե բնի հետ միասին, իսկ չորրորդը շինված է բոլորովին այլ կերպ. նրա օղակը սնամեջ է և մատանու ակի բնի հետ միասին մի ամբողջություն է կազմում, միայն թե ակը հագցվել է մատանու միջի կողմից, որից հետո այդ մասը փակել են արծաթե լեցքով (Նկ. 150)։

Ինարկե, այս փոքրաթիվ գյուտերի հիման վրա ընդհանուր եզրակացություն հանելը, թեկուզ միայն 7-րդ դարի մասին, չի կարելի, բայց այն, որ պեղումներից արծաթագործության նմուշներ քիչ են գտնվել, ցույց է տալիս այդ արհեստի այնքան էլ մեծ տարածում չունենալը։ Այդ հանգամանքը, հավանաբար, առաջ է եկել արծաթի հումքի պակասի պատճառով։

Ոսկե զարդեր (ոսկերչություն).—Միանգամայն այլ բարձրության վրա է կանգնած եղել ոսկերչությունը։ Մեզ հասած նմուշները, որոնք մեծ մասամբ պատահական գյուտերի արդյունքն են, իրենց օրինակների բազմազանությամբ և արվեստի ու տեխնիկայի կատարելությամբ մատնանիշ են անում ոսկերչության բարձր կատարելության հասած լինելը։ Ոսկե առարկաներն առանց բացառության, ինարկե, չհաշված դրամները, զարդարանքներ են, այն էլ միմիայն կանացի։ Ծագումով բոլորն էլ տեղական են և Դվինի ոսկերչական արհեստանոցների արտադրանք, բայց մեր ձեռքը հասած այդ նմուշները, ցավոք սրտի, ոսկերչական արվեստի բոլոր ձևերի մասին համապատասխան գաղափար չեն տալիս, որովհետև նրանց մեծ մասը մի գանձ է, գվինցի մի հարուստ կնոջ պատկանող, որ ավելի շուտ գաղափար է տալիս իր տիրուհու ճաշակի, քան թե ոսկերչական արհեստի մեջ կիրառվող տեխնիկայի բոլոր ձևերի մասին[1]։ Պեղումների միջոցին գտնվել են երկու մատանի (1794/1411 և 1794/244), մի մանյակ (1641/63) ու մատանու մի քանի ակեր ու հուլունքներ, մնացած իրերը դարձյալ արդյունք են պատահական գյուտերի, որոնք Դվինի մերձակա գյուղերի կոլխոզնիկները գտել են իրենց դաշտային աշխատանքների ժամանակ և հանձնել մեր արշավախմբին։

1939 թվականի ամառային կամպանիայի ժամանակ, պեղումների առաջին օրը, միջնաբերդի գագաթին գտնվեց շղթայահյուս մի մանյակ № 164/63, որն ունի 100 գնդավոր կախիկներ՝ յուրաքանչյուրն առանձին շղթայիկի վրայից կախված (Նկ. № 151)։ Սա իր նրբությամբ և գեղեցկությամբ իրավամբ կարող է ոսկերչական

[1] Այդ ժողովածուն 1936 թվականին պատահականորեն գտել են Այգեստան գյուղի կոլխոզնիկներն իրենց գյուղի դաշտում։ Ժողովածուն իր մեջ ընդգրկում է 5 ապարանջան (№ 1283, 1372, 1374, 1376 և 1377), երկու մեծ ականջօղ (№№ 1285, 1379), 15 մանր ականջօղ (1284 ա-է, 1373 ա-բ, 1380 ա-ե և 1484) և ոսկե երեք ուլունք (№ 1378 ա-գ)։

Նկ. 151. Ոսկե զարդարանքներ՝ խաչ, մանյակ և հյուսածո ապարանջան, գտնված քաղաքի տարածության վրա

Նկար Լ. Սաղոյանի

հյուսվածքի մի գլուխ գործոց համարվել։ Դվինում պատահաբար գտնվել է նաև հյուսածո մի ապարանջան № 1745. սողնակային փակով, որը բաց անելիս ապարանջանի երկու ծայրերը թեթևակի հեռանում են միմյանցից և հնարավորություն ստեղծում ապարանջանը թևին հագցնելու։ Ապարանջանի փակի վրա շինված է մի մեդալիոն՝ առյուծի բաշի և առաջին երկու ոտների փորագիր պատկերով։ Ինչպես այս երկու առարկաները, այնպես էլ № 1379 և № 1285 իրար հետ զույգ կազմող կախիկավոր ականջօղերի նրբահյուս շղթաները ցույց են տալիս, որ Դվինում հյուսածո ոսկեթել զարդարանքների արհեստը խիստ կատարելության էր հասած և, անշուշտ նա է, որ մեծ ազդեցություն է գործել միջին դարերում և հետագայում մի շարք քաղաքների ոսկերչության վրա, Դվինի ոսկերչության ազդեցությունը հատկապես մեծ էր Կարնո քաղաքի, Տրապիզոնի, Անիի և Կարսի վրա, որովհետև այդ քաղաքներն ընկած էին Դվինից Տրապիզոնի վրայով դեպի Բյուզանդիա տանող միջազգային առևտրի ճանապարհի վրա, մանավանդ որ այդ քաղաքներն իրենք էլ իրենց հերթին մեծ չափով մասնակցում էին այդ առևտրին։ Հյուսածո ոսկերչական առարկաների արվեստի տարածումը Դվինից մինչև Կարին և Տրապիզոն ցույց է տալիս, որ ոսկերչական այդ նրբին առարկաները միջին դարերում արտահանվել են դեպի Բյուզանդիա և փոքր Ասիայի խորքերը։ Նույնը պետք է ասել նաև ցանցկեն ոսկե առարկաների մասին (աժուր), որոնք այնքան շատ էին տարածվել Կարնո և Տրապիզոնի հայության մեջ։ Դվինում գտնված օղակաձև ականջօղերը (№ 1373, 1380, 1284), ինչպես նաև վերոհիշյալ կախիկավոր գինդերն (№ 1379 և 1285) ու № 1378-ի տակ գրանցված ոսկե ուլունքները վկայում են այն մասին, որ այդ արվեստը նույնպես մեծ կատարելության էր հասել Դվինում Բագրատունյաց թագավորության շրջանում, որովհետև վերոհիշյալ բոլոր առարկաներն էլ պատկանում են 10—11-րդ դարերին։

1946 և 1949 թվականների պեղումների միջոցին գտնված երկու մատանիները փիրուզա ակներով, որոնցից առաջինը № 1794/411 մանկական է, իսկ երկրորդը՝ (№ 244) կանաչի և լավ պահպանված, ցույց են տալիս, որ նրբին կերպով սևադելու գործն էլ ծանոթ է եղել հին դվինցիներին, թեև մեր ձեռքը հասած ոսկե առարկաների մեջ սևադի նմուշները հազվագյուտ են։ Նույնպես հազվագյուտ են փորագիր առարկաների օրինակները, թեև, ինչպես հայտնի է, ակնեղեն քարերի վրա կատարվող փորագրության նմուշներով հարուստ է Հայաստանը և, ինչպես այդ մասին տեղեկանում ենք օտար աղբյուրներից (Եվստաթեոս Թեսաղոնիկեցի), ակնեղեն քարեր և կնիքներ փորագրելու քարը, դեռևս Արտաշիսյան հարստության թագավորների օրոք, դեպի Հունաստան և Հռոմ արտահանում էին Հայաստանից[1]։

Ոսկերչական առարկաների փորագիր նմուշների հազվագյուտ լինելը միանգամայն պատահական է, որովհետև մի շարք էական նշանակություն ունեցող հանգամանքներ ցույց են տալիս, որ ոսկերչական փորագրությունը զարգացած է եղել Դվինում։

Ընդհանուր առմամբ հայկական միջնադարյան արվեստի մեջ փորագրությունը կարևոր տեղ է գրավում. հայտնի են հայ ճարտարապետության և քանդակագործության բազմաթիվ բարձրարվեստ նմուշներ, մենք ունենք առաջնակարգ փորագրության օրինակներ փայտի վրա (Սևանա վանքում 874 և 1176 թվականներին, Տաթևի վանքում, Մշո Առաքելոց եկեղեցում և այլ տեղերում), հենց Բագրատունյաց իշխանության և մի քիչ ավելի ուշ ժամանակներին պատկանող։ Պահպանվել է նաև մի բացառիկ նմուշ՝ ոսկրի վրա կատարված փորագրության, դարձյալ 9-րդ կամ 10-րդ դարերին պատկանող։ Այստեղ մենք նկատի ունենք Էջմիածնի ավետարանի նշանավոր փղոսկրե կազմը։ Ըստ Ստրժիգովսկու, այդ կազմը ասորական ծագում ունի և պատկանում է 6-րդ դարին։ Այդ ակներև մի սխալ է, որովհետև փղոսկրե այդ կազմը հայկական է. պատկանում է 10-րդ դարին և փորագրված է հենց

[1] В. В. Латышев, Известия древных писателей греческих и латинских о Скифии и Кавказе, т. I, вып. I, СПБ., 1893, стр. 205. Այդտեղ Եվստաթեոսը մեջ է բերում Եվդոքսիոսի «Շրջագայություն երկրի վրա» գրքից (3-րդ դար, մ. թ. ա.) հետևյալը. «Հայաստանում մի քար են հանքահանում, որով կնիքներն են փորագրում և դայլիկոնում»։



Նկ․ 152․ Ոսկե ապարանջաններ, գտնված քաղաքի տարածության վրա
Նկար Լ․ Սողոյանի

նույն ձեռագիր ավետարանի կազմի համար[1]։ Բացի այդ բոլորից, ոսկերչական փորագրական արվեստի բազմաթիվ նմուշներ ունենք հետագայում, գլխավորապես 16—17-րդ դարերում, որոնք ծագում են պատմական Հայաստանի ներքին գավառներից (Կարին, Վան, Արճեշ և այլն), այդ արվեստի սկզբնավորությունը պետք է որոնել հենց Դվինում։ Ապարանջաններից մի քանիսի (№№ 1283, 1375, 1376) օձազարդ գլուխներն ունեն հատիկավոր վերադիր զարդեր, որոնք խիստ բնորոշ են Հայաստանի համար սկսած դեռևս ուրարտական ժամանակներից։ Կարմիր բլուրում 1948 թվականին գտնված մի զույգ ոսկե ուռուցիկ կիսալուսնաձև ականջօղերն իրենց վրա ունեն հենց այդպիսի հատիկավոր զարդեր։ Նույն երևույթը Հայաստանում պահպանվել է նաև ուշ ժամանակներում. օրինակ՝ 17 և 18-րդ դարերին պատկանող եկեղեցական ոսկե և արծաթե սպասի մեջ կան բազմաթիվ նմուշներ, որոնք իրենց վրա ունեն մանրիկ հատիկավոր զարդեր, նույնիսկ դրանց մեջ պահպանվել են եռանկյունաձև զարդերի ոճը, որ ծագում է առել շատ հնում։ 19-րդ դարին պատկանող ազգագրական բնույթի արծաթե գործերի մեջ ևս այդ հատիկավոր վերադիր զարդարանքները կարևոր տեղ են գրավում։

Դվինում գտնված ոսկե առարկաներն ունեն խիստ նուրբ և գեղեցիկ արտաքին։ Բոլոր մատանիներն ու ապարանջանները, բացի հյուսածո առարկաներից, սնամեջ են և թեթև, միայն № 1372 և № 1377 ապարանջանները, որոնք իրար հետ զույգ են կազմում, թեև սնամեջ են, բայց միանգամայն անզարդ։ Այդ էլ հավանաբար պետք է վերագրել կրողի տվյալ ժամանակամիջոցում հագած զգեստին հարմարեցնելու ձգտումին, քանի որ այսպես կոչված անզարդ ոսկի կարող էին կրել պալատական կանայք սգո օրերին։

Դվինի ոսկե զարդարանքների ժամանակի որոշումն այնքան էլ մեծ դժվարություն չի ներկայացնում շնորհիվ հարակից նյութերի։ Այգեստանի մոտ 1936 թվականին գտնված ժողովածուն իր մեջ պարունակում է բյուզանդական մի ոսկեդրամ, որ պատկանում է Ռոմանոս 4-րդ կայսեր (1067—1071), ուստի այդ ժողովածուն վերագրելու ենք 10—11-րդ դարերին։ 1935 թվականին գտնված խաչը (№ 1208) իր վրա ունեցած գեմմայի շնորհիվ պատկանում է 6-րդ դարին կամ 7-րդի սկզբներին։ Նույնն է ապացուցում նաև խաչի արխայիկ ձևը, որ, ինչպես նշեցինք վերևում, կապվում է թևավոր խաչերի հետ, միայն թե այստեղ թևերից յուրաքանչյուր կողմի զույգ գնդիկները խիստ փոքր են։ Խաչի թևերի երկարությամբ անցնող վերադիր հյուսվածքը հիշեցնում է 7-րդ դարի շենքերի քիվերի հյուսածո քանդակները։

Ի դեպ, Դվինի ոսկերչական նմուշները մեծ նմանություն ունեն 1824 թվականին Կիևի ագարակներից մեկում գտնված ոսկե գանձի մեջ եղող մի զույգ ականջօղերին։ Այդ գանձն ուսումնասիրող Կոնդակովը, թեև այդ ականջօղերը անվանում է կիևյան տիպի առարկաներ, բայց անմիջապես ավելացնում է, որ նրանց ծագումն արևելյան կամ պարսկական է[1]։ Կարծում ենք, որ Դվինի ոսկե գանձերը բանալի են հանդիսանում Կիևում գտնված այդ առարկաների ծագումը և ժամանակը ճշտելու գործում։ Թերևս, այդ երկու ականջօղերը ծագում են Դվինից և այնտեղ են ընկել հենց Բագրատունյաց ժամանակ Կիևյան Ռուսիայի հետ ունեցած առևտրական կապերի շնորհիվ։

Դվինի ոսկե առարկաներից մի քանիսը պատրաստված են կաղապարի մեջ՝ ձուլելու միջոցով (7-րդ դարի խաչը), բայց մեծ մասը շինված են կաղապարի վրա դրոշմելու եղանակով։ Այդպես են շինված, օրինակ, օձագլուխ ապարանջանները, մատանիները, ականջօղերի կախիկները, օղակաձև ականջօղերի մի քանի գնդաձև զարդարանքները և այլն։ Կաղապարի վրա դրոշմելու այս արհեստը միջնադարյան Հայաստանում մեծ չափերով կիրառվում էր եկեղեցական սյուժետավոր ոսկերչության մեջ, որտեղ դրոշմանախշերով պատրաստ-

[1] Այդ հարցը մենք մանրամասնաբար քննել ենք «Փորագրական արվեստը միջնադարյան Հայաստանում» թերավարտ աշխատության մեջ, այդ պատճառով այստեղ նրա վրա կանգ չենք առնի։

[1] Н. П. Кондаков, Русские клады. Исследование древностей великокняжеского периода. т. I, СПБ., 1896, стр. 128.



Նկ. 153. Ոսկե մատանիներ, ականջօղեր և ուլունքներ, գտնված քաղաքի տարածության վրա

Նկար Լ. Սաղոյանի

վում էին ամբողջ սրբապատկերներ, սըրբազան գրքերի կազմեր, եկեղեցական սպաս, զգեստի մասեր (վակաս, թագ), գրքերի ու մասունքների տուփեր և այլն։

Հայկական ոսկերչությանը խիստ բնորոշ է հաստ և բարակ թելեր ձգելու և այդ թելերով հյուսածո առարկաներ կամ ցանցկեն (աժուր) զարդարանքներ պատրաստելու գործը։ Դվինում գտնված մանյակը № 1641/63 և ապարանջաններից մեկը № 1745, ինչպես և այլ առարկաների վրա եղող շղթաներն արդյունք են հաստ ու բարակ թելերի միմյանց հետ զանազան ձևերով հյուսելու, իսկ որոշ առարկաներ էլ, ինչպես օրինակ, № 1379, № 1285 ականջօղերը, 1378 համարի տակ գրված ցանցկեն ուլունքները և բազմաթիվ օղակաձև ականջօղերի մասերը նույն բարակ և հաստ թելերին զանազան ձևեր տալու և միացման կետերն իրար զոդելու միջոցով պատրաստելու եղանակին (տես նկ. № 153)։

Ցանցկեն (աժուր) ոսկե զարդեր պատրաստելու արվեստը Հայաստանում շատ հին է։ Սիսիանի Տոլորս գյուղում 1952 թվականին բացված դամբարանի ցանցկեն ոսկեզարդերը պատկանում են մեր թվարկությունից առաջ 8—7-րդ դարերին և արդյունք են տեղական արտադրության։

Սակայն, ոչ միայն Դվինում, այլև ամբողջ Հայաստանում, շատ քիչ են գտնված արծնապակված (էմալապատած) ոսկե կամ արծաթե առարկաներ[1]։ Այդ արհեստն այժմ էլ Հայաստանում գրեթե գոյություն չունի։ Միայն 19-րդ դարի վերջերին, Շուշի քաղաքում (Ադրբեջանական ՍՍՌ, Լեռնային Ղարաբաղի մարզ) հանդիպում ենք այդ արհեստով զբաղվող Բաղամյանին, որ հավանաբար իր արհեստը սովորել էր Հյուսիսային Կովկասում, որտեղ մեծ չափով զարգացած էր արծնապակման գործը դեռևս ավելի հին ժամանակներից ի վեր։

Զարմանալին այն է, որ Անիի պեղումներից ոսկե կամ արծաթե առարկաներ չեն հայտնաբերվել, որպեսզի Դվինի նյութերը համեմատելու միջոցով պարզեինք տեղական առանձնահատկությունները և առարկաների ծագման ու զարգացման հանգամանքները։

Այնուամենայնիվ գտնված նյութերը ցույց են տալիս, որ ոսկերչությունը խիստ զարգացած է եղել Դվինում և նրա արտադրանքի առարկաները արտահանվել են այլ երկրներ, այդ պատճառով էլ նա մեծ ազդեցություն է գործել Հայաստանի արևմտյան մասի առևտրաշահ քաղաքներում զարգացող ոսկերչության վրա։

ՈՍԿՐԵ ԻՐԵՐ

Փորագրություն ոսկրի վրա

Ոսկրե առարկաների բազմաթիվ նմուշներ են գտնված Դվինում։ Մենք այստեղ կբերենք միայն մի քանի օրինակ, ցույց տալու համար նրանց էությունը։

1949 թվականին միջնաբերդում գտնըվեցին արագիլի ոտի ոսկրից շինված երկու շվի կամ սրինգ, մեկը՝ մեծ, ունի 5 անցք և մյուսը փոքր, որի երրորդ անցքից սկսած վերին մասը կոտրված է։ Մեծ շվիի ծայրը ևս կոտրված է, ուստի չգիտենք, թե ինչ ձևով էին այդ երաժշտական գործիքներն իրենց բերնին դրել նվագելու համար, շվիի ձևով ծայրից, թե սրինգի նման կողքից։ Այնուամենայնիվ, այս երկու երաժշտական գործիքները մեզ որոշ գաղափար են տալիս հին դվինցիների երաժշտության մասին ունեցած հասկացողությունների վերաբերյալ, քանի որ գործիքի վրա կա միայն հինգ անցք՝ հինգ մատների համար և առաջին ու երկրորդ անցքերի միջև էլ հետևի մասում անցք չկա բութ մատի համար, չնայած այն բանին, որ առաջին և երկրորդ անցքերն իրարից ավելի հեռու են գտնվում, քան մյուս միմյանցից հավասար հեռավորության վրա գտնվողները։

Սակայն, այստեղ հետաքրքիրն այն է, որ այդ երկու գործիքների մոտ գտնվեց կաշվե մի պարկ, որ կարող էր ծառայած լինել իբրև պարկապզուկ։ Այդ դեպքում երկու շվիների գոյությունը միանգամայն հասկանալի է դառնում, որովհետև պարկապզուկը միշտ էլ երկձայն է, մեկը՝ եղանակը նվագելու և մյուսը՝ քաշ ձայնը պահելու համար։

Միայն հինգ անցքերի գոյությունը երբեք նշան չէ այն բանին, որ դվինցիք ու-

---

[1] Կան մի քանի ձեռագիր ավետարանների արծաթե կազմեր, որոնց վրա պահպանվել են կարծես թե արծնապակման որոշ մնացորդներ։



Նկ. 184. Հացահատիկ մանրացնելու և աղալու քարե գործիքներ, գտնված քաղաքի տարածության վրա, ջրաղացաքարի բեկոր, սանդ և սանդղիտոռ, երկանքի քարի բեկոր, աղորիք

Նկար Ա. Պատրիկի

նեցել են միայն հինգ կամ ավելի ճիշտ վեց ձայնից կազմվող կոպիտ երաժշտություն, որովհետև գործիքի անցքերը որոշ չափով բաց անելու միջոցով նրանք կարող էին կիսաձայներ արտաբերել և այլ ձայնախաղեր առաջացնել, ինչպես սովորաբար արվում է այժմ։

Ոսկրից պատրաստված կան մի քանի սրածայր տափակ առարկաներ, որոնք հավանաբար ձեռագործ անող կամ բանվածք հյուսող վարպետի գործիքներ են։ Այդպիսի մի քանի առարկաներ. էլ գտնվել են Անիում։ Դրանց թիվը տարեց-տարի ավելանում է, բայց մենք իբրև նմուշ երեք օրինակ ցույց ենք տվել № 155 նկարի վերին շարքում։

Ոսկրե գործիքների մեջ մեծ տեղ են գրավում իլիկի գլուխները, որոնք հաճախ պատահում են նաև կավից շինված։ Սրանց մեջ էլ կան մեծերը և փոքրերը, որոնք արդյունք են հավանաբար տարբեր տեսակի թելեր մանելուն. մեծ իլիկով մանել են հաստ թել, իսկ փոքրիկ իլիկով՝ բարակ միատակ թել։

Դվինի միջնաբերդում գտնվել են նաև ոսկրե հերուն, շքասեղ, տնային թանկարժեք կահույքի՝ բազմոցի, բազկաթոռի զարդամասեր, փայտե տուփերի զարդարանքներ, որոնք կազմված են ոսկրի ձևավոր զարդաքանդակ մասերից № 1794/301 և № 1794/365։

Դվինում գտնված նարդու զարը և նույն խաղին ծառայող ոսկրե փուլը (նույն տախտակ) ցույց է տալիս Նարդի խաղի գոյությունը դեռևս բագրատունյաց շրջանում 10—11-րդ դարերում, թեև այդ խաղը համարվում է զուտ պարսկական, որ տարածում է գտել նաև Թյուրքիայում և Կովկասում։ Վերոհիշյալ ոսկրե առարկաներից շատերը պատրաստված են միայն հասարակ դանակով և սրածայր փորագրող գործիքով, բայց կան նրանց մեջ նաև այնպիսի առարկաներ, որոնք գլանակված են պտտվող անիվի վրա։ 1950 թվականին գտնված մի քանի առարկաները ցույց են տալիս, որ Դվինում կարողացել են շինել նաև խիստ նրբին ոսկրե առարկաներ և օգտագործել են փղոսկր։

Ոսկրի վրա փորագրությունը Դվինում միայն տեղական նշանակություն է ունեցել, չնայած այն հանգամանքին, որ նա ծառայել է մեծ մասամբ իշխող դասի կարիքներին։

ԲԱՆՎԱԾՔՆԵՐ

Ոստայնանկություն

Այս արհեստը թեև շատ մեծ զարգացում է ունեցել Դվինում և նրա արտադրանքը հռչակված է եղել միջազգային շուկաներում, բայց պեղումների ժամանակ շատ քիչ բան է գտնվել։ Մի քանի անգամ գտնըվել է ոսկեթել բանվածքի մնացորդ խիստ քայքայված վիճակում և մի անգամ էլ կոպիտ կտավ՝ միջնաբերդի գագաթին։ Դրան հակառակ, Անին, որ բանվածքների ավելի նվազ արտադրություն է ունեցել, պեղումների միջոցին տվել է ոստայնանկության համեմատաբար լավ պահպանված նմուշներ։ Այնտեղ գտնվել են դիպակի, մետաքսե զգեստի, ոսկեթելով զարդարված սփռոցների կտորտանք, ինչպես նաև կապերտի ու այլ բանվածքների մնացորդներ։ Դվինում ոստայնանկության մնացորդների վատ պահպանվելը բացատրվում է փուլ եկած կավե պատերի խոնավությամբ, որոնց տակ մնացած առարկաներն արագորեն քայքայվել և ոչնչացել են, իսկ Անիում բացված մանկական գամբարաններից մեկում մնացել էին նույնիսկ իրար վրա հագցրած մետաքսե զգեստները բավականաչափ լավ վիճակում։

Ոստայնանկության գործիքների մնացորդներ ևս չունենք, եթե չհաշվենք իլիկի գլուխները, որոնք գործածվել են միայն տանը թելերը հոգալու համար, իսկ պրոֆեսիոնալ մանածագործները հարկավ օգտագործել են ճախարակ։

1939 թվականին, Դվինում, բերդի հրապարակի մոտ բացված շենքերից մեկի մեջ կային երկու իրար նման, մոտ 50 սմ խորությամբ 55×40 բացվածքով հորեր, որոնց նմանները այժմ տնայնագործ ջուլհակներն օգտագործում են կտոր գործելու համար։ Դրանց ափին նստելով նրանք իրենց ոտները իջեցնում են հորի մեջ, որտեղ ոտների շարժումներով հերթով հենքի մի մասը բարձրացնելով և մյուսն իջեցնելով գործող թելի առուն անց են կացնում հենքի բացվածքի միջով և այդպիսով գործում



Նկ. 155. Ոսկրե առարկաներ, գտնված միջնաբերդում

Նկար Լ. Մաղոյանի

տարր։ Մեր կարծիքով, Դվինի հիշյալ բնակելի շենքի մեջ բացված երկու հորերն էլ այդպիսի ջլկահորեր էին, մանավանդ որ, ինչպես գիտենք, հնում արհեստավորներից շատերն աշխատում էին իրենց տներում։ Նրանք հումք էին ստանում պատվիրատուից և տանն աշխատելով, պատրաստի պրոդուկցիան ներկայացնում էին գործատիրոջը։

1949 և 1950 թվականներին միջնաբերդի վերին շերտի անմիջապես տակին գտնվեցին ճաղերի նմանվող երկաթե մի քանի փոքրիկ գործիքներ, որոնք հավանաբար գործ են ածել թել հարթող խազազճերը: Այժմ դժվար է ասել, թե այդ գործիքները միջնաբերդում ի՞նչ գործ են ունեցել, թեև կարելի է ենթադրել, որ Դվինի իշխող տունը պալատին կից ունեցել է նաև թել հարթող և կտոր գործող վարպետներ։

Պատմական աղբյուրները մատնանիշ են անում Դվինում գործվող դիպակի և գորգերի բարձր որակի մասին, բայց մինչև այժմ որևէ աչքի ընկնող նմուշ չի գտնվել։

Ոստայնանկությունը Դվինում ամենազարգացած արհեստներից մեկն է եղել և նրա արտադրանքը հանդիսացել է միջազգային առևտրի ամենակարևոր ապրանքը։

ԽԵՑԵՂԵՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Բրուտություն

Դվինի կերամիկական մնացորդները, այնուամենայնիվ, պեղումների արդյունքների մեջ գրավում են ամենաէական տեղը։ Այստեղ շատ են ոչ միայն առարկաների նմուշները լոկ քանակով, այլև իրենց սպառիչ բազմազանությամբ, որովհետև դվինցիք ամեն ինչ աշխատել են շինել կավից կամ հախճապակուց։ Ժամանակի տեսակետով էլ Դվինի խեցեղեն անոթներն իրենցից մեծ հետաքրքրություն են ներկայացնում, որովհետև այնտեղ սկսած էնեոլիթյան հնագույն ժամանակներից անընդհատ բոլոր դարաշրջանների առարկաներ գտնվում են մեծ առատությամբ, իհարկե, կենտրոնական տեղը միշտ վերապահելով միջնադարյան նմուշներին, որոնց մեջ կան հասարակ խեցեղենի, ջնարակածի և հախճապակու բազմաթիվ տեղական տեսակներ և արտասահմանյան թանկարժեք հախճապակու որոշ օրինակներ։

Նախնադարյան խեցին դուրս է գալիս Դվինի ավերակների ստորին շերտերից։

Էնեոլիթյան տիպիկ կերամիկան իր սև փայլով և ճնշմամբ արված զարդանախշերով, գրեթե ամեն տարի բացվում է միջնաբերդի լանջերին, գլխավորապես փլվածքների մեջ։ Այդ նույն տեղերից երբեմն ի հայտ են գալիս նաև գունազարդ խեցեղենի մնացորդներ, որոնք պատկանում են արդեն պղնձի դարաշրջանին (2-րդ հազարամյակ մեր թվականից առաջ)։ Առաջին հազարամյակի առաջին կեսին (մեր թվ. առաջ) պատկանող հնություններ բացվեցին կաթողիկե եկեղեցու հիմքերի մոտ կատարված պեղումների ժամանակ։ Այդտեղ գտնվեցին բնակարանների մնացորդներ՝ ուրարտական կարասների և նույն ժամանակի համար բնորոշ աղորիքների բեկորներ։ Նույն տեղում, այդ շերտից մոտ 0,5 մետր ավելի բարձր, բազմաթիվ անգամներ բացվեցին մեր թվականության սկզբներին պատկանող կարասե թաղումներ։ Դրանք բոլորն էլ պատկանում են Դվինի նախնական պատմության և կապ չունեն միջնադարյան շերտի հետ, որը փռված է այդ հնագույն մնացորդներից բարձր և հիմնականն է հանդիսանում քաղաքի ամբողջ տարածության համար, ուստի արժե քիչ ավելի հանգամանորեն կանգ առնել նրա պարունակած խեցանոթների վրա։

Միջնադարյան փոքր բնակավայրերում պրոֆեսիոնալ բրուտի կողքին հանդես է եկել իր սեփական կարիքների համար երբեմն-երբեմն բրուտություն անող անձնավորությունը շինելով կավե հասարակ ամաններ՝ փարչեր, կճուճներ, թոնիրներ, ձիթաճրագներ և այլ առարկաներ, որոնք նա թրծել է թոնրի մեջ կամ խարույկի վրա։ Դրան հակառակ, մեծ քաղաքներում, ինչպիսիք էին Դվինն ու Անին, տնական վարպետի պատրաստած կերամիկան քիչ տեղ է գրավել, այն էլ, մեծ մասամբ քաղաքի արվարձաններում և չքավորական թաղերում է հանդիպում։

Բնակչության տնտեսական ծանր կացությունը քաղաքի չքավորությանը ստիպել է զբաղվել նաև բրուտությամբ՝ իր առ-



Նկ. 156. Դվինում գտնված ձիթաճրագների տեսակներ՝ հասարակ կավից, պղնձից, հախճապակուց և ջնարակած կավից

Նկար Ա. Պատրիկի

տըրին կարիքները հոգալու համար։ Այդպիսի կերամիկայի բեկորներ գտնվում են այժմյան Այգեստան և Բզովան գյուղերից դեպի հարավ ընկած հին քաղաքամասի տարածության վրա, որտեղ գետնի երեսին կարելի է տեսնել միայն հասարակ և ջնարակած ամանեղենի բեկորներ, ըստ որում հասարակ խեցու մեջ կան բազմաթիվ օրինակներ, որոնք պատրաստված են ոչ մասնագետ վարպետի ձեռքով, առանց դուրգնի, իսկ հախճապակու բեկորներն այդտեղ միանգամայն հազվագյուտ են։ Նշանակում է,

Նկ. 157. Կարասներ՝ գտնված միջնաբերդի հարկաբաժիններից մեկում

նույնիսկ գետնի մակերեսի մնացորդներով հաճախ կարելի է ճանաչել քաղաքի չքավորական թաղերը։

Հակառակ պատկերն ենք տեսնում միջնաբերդում, քաղաքի կենտրոնական թաղում և բերդի հրապարակի տարածության վրա, որտեղ ջնարակած խեցանոթներն ու հախճապակին բավականին մեծ տոկոս են կազմում։ Այստեղ, նույնիսկ ձիթաճրագներն ու թոնիրները պրոֆեսիոնալ վարպետի ձեռքի աշխատանք են և գրեթե բոլոր դեպքերում զարդարված։ Միջնաբերդում գտնըված մի քանի հարյուր ձիթաճրագների մեջ միայն մեկը տնային վարպետի աշխատանքի արդյունք է, որը բացի կոպիտ լինելուց, իր ձևով էլ զանազանվում է մյուսներից։ Այդ ձիթաճրագը, որ միջնաբերդի համեմատաբար խոր շերտի մեջ է գտնվել և պատկանում է 9-րդ դարին, հավանաբար, գործ է ածվել իշխանական տան սպասարկող տնային ծառաներին հատկացված սենյակներում՝ կամ շենքի տնտեսական մասերում (գոմ, մառան), (№ 156 նկարի աջ կողմի վերջինը)։

Դվինի քաղաքը միջնադարյան խեցեղեն անոթների արտադրության կարևորագույն օջախներից մեկն է հանդիսացել, որով նա հռչակված է եղել հեռու և մոտիկ երկրներում։ Նրա կերամիկական արտադրությունը մենք բաժանել ենք հետևյալ հինգ խմբերին։

Հասարակ կավե տնային կարասի (ամանեղեն), որ տարածվել է միայն քաղաքում և նրա շրջակայքում։ Որոշ տեսակները արտահանվել են մերձակա քաղաքները։

Ջնարակած կավե տնային կարասի, որ թեև հեռու երկրներ չի արտահանվել, բայց երկրի ներսում տարածված է եղել լայն չափերով։

Տեղական արտադրանքի բարձրարվեստ հախճապակի, որ իր մի շարք տեսակներով նյութ է հանդիսացել միջազգային առևտրի համար, իսկ երկրի ներսում օգտագործվել է իշխող և ունևոր դասերի կողմից։

Օտար երկրներից բերված հախճապակե և ճենապակե թանկարժեք անոթներ, որոնք օգտագործվել են գրեթե միայն պալատներում։

Ճարտարապետական կերամիկա, որ ամբողջությամբ տեղական արտադրանք է և օգտագործվել է թանկարժեքը՝ հասարակական մեծ շենքերի և մասամբ էլ հարուստների ապարանքների մեջ, իսկ էժանագինը՝ նաև հասարակ տներում։

Այժմ վերոհիշյալ խեցանոթների յուրաքանչյուր տեսակը համառոտակի քննենք առանձին-առանձին։

Կավե հասարակ խեցեղենը, կարելի է ասել, քանակով մի քանի տասնյակ անգամ ավելի շատ է, քան կերամիկայի բոլոր մնացած տեսակները միասին վերցրած։ Հասարակ կավից են շինված մեծ մասամբ տնտեսական բնույթի խոշոր առարկաները՝ գինու և հացահատիկի մեծ կարասները, թոնիրները, կերակուր եփելու կճուճներն ու քրեղանները, իսկ կավե նուրբ անոթների մեջ գերակշռում են ջնարակ ունեցողները, թեև հասարակ կավից

կան նույնիսկ նրբագույն և գեղեցիկ այնպիսի անոթներ, որոնք կերամիկական արտադրության գլուխգործոցներ կարող են համարվել։

Խեցանոթների կավահողը Դվինում ավելի նուրբ է, քան թե Անիում, Ամբերդում և մի շարք այլ հնավայրերում։ Այդ պատճառով էլ Դվինն իր յուրահատուկ բաց շիկագույն նուրբ խեցիով ամենուրեք ճանաչելի է, որն արդյունք է կավահողի հատկության, իսկ, օրինակ, Անիի կավահողն ավելի կոշտ է և նրա խեցին թրծուն աղյուսի գույն ունի։ Կարծրությամբ էլ խիստ կերպով տարբերվում է Դվինի խեցին Անիի խեցուց։ Դվինինն զգալի չափով կարծր է, քան Անիինը[1]։

Այստեղ պետք է նկատի ունենալ նաև մի այլ հանգամանք, այդ այն է, որ Անիի կյանքում կերամիկան այնքան էական դեր չի խաղացել, ինչքան Դվինում։ Դվինի շինարարությունը, սկսած բերդապարիսպներից և պալատական շենքերից և վերջացրած աղքատիկ հյուղակներով, բոլորն էլ կավաշեն են։ Տնային կահկարասին էլ ինչպես պալատներում, այնպես էլ չքավորական տներում, բոլորն էլ կավից են, բայց չքավորական տների մեջ գործածվողը հասարակը և էժանագինն է, իսկ իշխողներինը՝ բարձրորակն ու թանկարժեքը։ Դրան հակառակ, Անիում տնային կարասու մեջ կարևոր տեղ է գրավում պղնձեղենը, երևի այն պատճառով, որ տեղական կավն այնքան էլ լավորակ չէ, ուստի և հնուց ի վեր Շիրակում սովորություն է եղել պղնձեղեն ամանների գործածությունը։

Դվինցիները շատ են սիրել իրենց կավե հասարակ կարասին զարդարել զանազան եղանակներով. Նույնը կարելի է ասել ամբողջ Հայաստանի մասին։ Այսպես օրինակ, կավե հսկայական կարասները գրեթե միշտ զարդարված են, նրանք սովորաբար ունենում են ուղիղ ձգվող կամ ալիքավոր ուռուցիկ զարդագծեր։ Երբեմն այդ զարդագծերն ունենում են օղակներ ու հանգույցներ կազմող նախշեր։ Կարասները հաճախ ունենում են ուռուցիկ և լայն գոտիներ՝ պարզ կամ որոշ զարդանախշերով։ Այստեղ հետաքրքիրն այն է, որ այդ գոտիներն ու նրանց վրայի նախշերը թեև պահպանողական են և տասնյակ դարերի ընթացքում շատ քիչ փոփոխության են ենթարկվում, այնուամենայնիվ որոշ փոփոխություն տեղի է ունեցել հնագույնների և միջնադարյանների, ինչպես օրնամենտի, այնպես էլ կարասի ձևի մեջ։ Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ հնագույն կարասները, որոնց թվում նաև ուրարտականները, ավելի ուռուցիկ են, քան թե անտիկ և միջնադարյան շրջանին պատկանողները, որոնք լայն փորի փոխարեն ունեն ավելի երկարավուն և նեղ իրան, թեև միջնադարյան զարդագրոշմ փոքրավիր կարասների փորը ևս ուռած է և բերանները լայն, բայց այս արդեն բոլորովին այլ երևույթ է և առաջ է եկել այդ կարասների գործածության հարմարությունից։

Նկ. 158. Կարաս՝ գտնված քաղաքի կենտրոնական թաղում

Դվինի միջնադարյան հասարակ կերամիկան ձևավոր, մեծ մասամբ կենդանակերպ անոթների շատ օրինակներ ունի։ Հնում այդ երևույթը գրեթե բոլորովին հանդես չի գալիս, թեև Կարմիր վանքի գունազարդ խեցանոթների մեջ կան թռչնակտուց ծորակով կճուճներ, բայց դրանք հազվագյուտ են և բոլորովին բնորոշ չեն

[1] Б. А. Шелковников. Художественная керамичеcкая промышленность средневековой Армении. Известия АрмФАН, 1942, № 3—4, стр. 11.

հին ժամանակների համար։ Հնում ավելի շատ սիրել են անոթների վրա կենդանիների վերադիր զարդեր դնել, քան թե անոթներին կենդանու կերպարանք տալ։ Մեր թվականությունից առաջ, երկրորդ և առաջին հազարամյակներին պատկանող խեցանոթների մեջ, ուրույն տեղ են գրավում եզան գլխի վերադիր զարդերը (Կարմիր բլուր), ոչխարների և մարդկանց արձանիկները (Նոր Բայազետ), գալարվող օձերի ուռուցիկ պատկերները (Սանահին, Կարմիր բլուր և այլն)։ Իսկ Հայաստանի միջնադարյան կերամիկայի համար խիստ բնորոշ են կենդանակերպ անոթները, օրինակ, 1946—1948 թվականների պեղումների ժամանակ Դվինի միջնաբերդում գտնըվեցին մի քանի միմյանց նման սափորների բեկորներ, որոնց բերանները խոյերի գլխի ձև ունեն։ Այդ սափորների ամենաբնորոշ օրինակները կարող են համարվել 1794/175 և 1794/343 համարների տակ գրանցվածները, որոնց պատկերը ցույց ենք տվել № 161 նկարի մեջ։ Այդ նույն տեղում դարձյալ 1946 թվականին գտնվեց մի այլ սափոր, որն ունեցել է մարդու մարմնի ձև (1794/157)։ Իհարկե այս ձևավոր անոթներն արդյունք են Դվինի արհեստավորների բարձր վարպետության, բայց կավահողի որակը ևս, մեր կարծիքով, վճռական դեր է խաղացել այդտեղ, մանավանդ որ հաճախ այդ կավանոթներն ունենում են խիստ բարակ պատեր և շատ գեղեցիկ ձև։ Այդպիսի նուրբ և թեթև ամաններ ամենից շատ գտնվում են միջնաբերդում, 10—12-րդ դարերի շերտի մեջ։ Դա նշանակում է, որ այդ խեցանոթը թեև ջնարակ չունի, բայց այնուամենայնիվ էժանագին չի համարվել և գործածվել է Դվինի բնակչության իշխող և ունևոր խավերի կողմից։ Այդպիսի մի քանի սափորների լավագույն օրինակներ մենք ցույց ենք տվել №№ 162, 163 և 164 նկարների մեջ, որոնց պատերի հաստությունը անոթի փորի վրա հազիվ 2 միլիմետր է և անոթի ծակոտկեն նստուկը գեղեցիկ և թեթև է։ Այս տիպի անոթներին հատուկ է փորի վրայի ներս ընկած և ուռուցիկ զոլերը, որոնք տարբեր ձևերով, մեծ մասամբ շեղակի երիզներով, շրջանակում են անոթի ամբողջ փորը։ Նուրբ լինելու պատճառով, այս անոթները շատ ջարդոտված վիճակում են գտնվում պեղումների ժամանակ, ուստի թեև ամբողջացողների քանակը քիչ է, բայց գտնված կտորների թիվը շատ մեծ է և երևում է, որ կերամիկայի այս տեսակն ընդարձակ գործածություն է ունեցել միջնաբերդում։ Այս տիպի խեցանոթները, սովորաբար, դրոշմով կամ այլ ոճի քանդակներով զարդարված չեն լինում, այլ թրծվելուց հետո ներկված են լինում խիստ դուրեկան կարմիր, երբեմն էլ դարչնագույն կամ սև ներկով։

Նկ. 159. Կարասներ, գտնված միջնաբերդի հյուսիսային լանջի բնակելի տան հարկարաժիններից մեկում

Դվինում հաճախ գտնվում են նաև մի այլ տիպի նրբին փարչերի և սափորիկների բեկորներ, բոլորովին աններկ վիճակում, որոնց խեցին բաց կանաչավուն գույն ունի։ Այդ անոթների բնորոշ կողմը նրանց փորի վերին մասում ու շուրթերի մոտ քանդակներ ունենալն է։ Սրանց քանդակները երբեմն թեև շատ մանրակրկիտ և ճոխ են լինում, բայց երբեք չեն կարողանում իրենց գեղեցկությամբ մրցել վերևում նկարագրած կարմրավուն անոթների հետ, որովհետև այնտեղ արհեստավորի ազատ ձեռքը վարպետորեն ձևավորել է ամբողջ անոթը, այստեղ նա միայն աչք է մաշել անոթը թրծելուց առաջ զանազան մանր փորագրություններ կատարելու համար (տես նկ. № 165, ինվ. № 1794/186)։

Դվինի հասարակ կերամիկայի մեջ խիստ կարևոր տեղ են գրավում դրոշմազարդ փոքրադիր կարասները (բարձրությունը 50—70 սմ, փորի տրամագիծը՝ 40—60 սմ), որոնք լինում են երկու տիպի. դրանցից մեծերն ավելի երկարավուն են և ունեն բերանի համեմատաբար փոքր բացվածք, բայց ունկ բոլորովին չեն ունե-



Նկ. 100. Հասարակ կավե անոթների սովորական տեսակներ, գտնված քաղաքի կենտրոնական թաղում և միջնաբերդում

Նկար Ա. Պատրիկի

նում և նստուկն էլ լինում է շատ փոքր։ Այս տիպի կարասների տարողությունը 80-ից մինչև 100 լիտր է լինում։ Սրանք իրենց ձևով բոլորովին չեն տարբերվում պահեստներում և մառաններում պահվող և տնտեսական նպատակների համար օգտագործվող սովորական կարասներից։ Բոլոր նշաններից երևում է, որ այս կարասներն էլ մառաններում են պահվել՝ կիսով չափ գետնի մեջ թաղված վիճակում, որովհետև նրանց ստորին մասը ներկված չի լինում (տե՛ս նկ. № 166 և 167)։

Դրոշմազարդ կարասների երկրորդ և ամենատարածված տիպը բոլորովին յուրա-

Նկ. 161. Կենդանակերպ սափորների բեկորներ, գտնված քաղաքի կենտրոնական թաղում

հատուկ ձև ունի։ Նա խիստ ուռուցիկ փոր է ունենում և իղն ու տակի մասը կարճ է լինում, իսկ բերանի բացվածքը և կարասի նիստը՝ մեծ։ Նա ունենում է երկու, հաճախ նաև չորս կամ վեց ձևավոր կանթ և ամբողջությամբ ներկված է լինում կարմիր դուրեկան գույնով։ Ամենայն հավանականությամբ այս տիպի կարասները պահվել են ոչ թե մառաններում, այլ խնճույքի ժամանակ դրվել են սեղանի վրա և նրանց միջից գավաթներով հանել են գինին խմելու համար (տե՛ս նկ. №№ 168 և 169)։

Դրոշմազարդ կարասների այս երկու տիպերն էլ իրենց փորին, կարասի ամենալայն տեղում, կամ մի քիչ նրանից բարձր, ունենում են դրոշմած պատկերների գոտի և այդ հիմնական գոտուն կից, դեպի կարասի բերանը, դարձյալ նույնպիսի զարդարանքների չորս կամ վեց շերտեր, որոնք կարասի բերանի մոտ ընդհատվում են որևէ օրնամենտի հանդիպելով։

Սեղանի վրա դրվող կարասներից շատերն ունենում են նաև դեպի ներքև գնացող և ամանի նստուկի մոտ ընդհատվող դրոշմազարդ շերտեր, սովորաբար չորս տեղից։ Դրոշմազարդ կարասները հաճախ իրենց բերանի մոտ ևս ունենում են հարուստ զարդարանքներ և զանազան քարերով կամ հախճապակու կտորներով արված ինկրուստացիա։

Այս կարասների գլխավոր զարդարանքը հանդիսացող դրոշմազարդ գոտին ունենում է պատկերների խիստ սահմանափակ սյուժե։ Այստեղ գլխավորապես հանդես է գալիս վայրի այծը, որսի թռչունը (կաքավ և այլն) և երբեմն էլ այլ վայրի կենդանիները (տե՛ս նկ. 170 և 171)։ Մարդը շատ քիչ է պատկերվել այդ քանդակների մեջ. միայն մի քանի տեղերում նա հանդես է գալիս պարողի դերում։ Օրինակ, 1946 թվականին միջնաբերդում գտնված մի բեկորի վրա (1794/275) վայրի թռչունի և վայրի այծի հետ միասին պատկերված են պարող երեք մարդիկ, հավանաբար մեկը մայրն է, երկրորդը՝ ընտանիքի հայրը և երրորդը նրանց երեխան, իսկ նույն կոլեկցիայի 274 համարի տակ եղող բեկորի վրա պատկերված է պարող միայն մի մարդ՝ մի ինչ-որ չորքոտանի կենդանու հարևանությամբ։ Ինչպես տեսնում ենք, այդ կարասների վրա պատկերված են որսի և խրախճանքի տեսարաններ, որոնք այնքան սիրված են եղել միջին դարերում՝ բագրատունյաց շրջանում և հետագայում։ Բացի կարասներից, այդ սյուժեն հանդես է եկել նաև բարձրաքանդակների և բանաստեղծության մեջ։ Կարասների վրա այդ պատկերների հանդես գալը միանգամայն հասկանալի է, քանի որ նրանք ծառայել են խնճույքներին իբրև գինու կարաս։ Պատկերները կարասների վրա դրոշմված են գլանաձև կնիքներով՝ կարասի թրծվելուց առաջ, դեռևս թաց վիճակում։ Չափավոր ճնշումով այդ կնիքը պտտեցրել են կարասի փորի վրայով և ստացել քանդակադրոշմ պատկերներ, այդ պատճառով էլ պատկերները շարունակ կրկնվում են և յուրաքանչյուր կրկնվող մաս բռնում է ընդամենը 10-ից մինչև 20 սանտիմետր տարածություն։ Այդ նշանակում է, որ գլանաձև կնիքներն ունեցել են 10—20 սանտիմետր շրջագիծ։ Պատկերներն իրենց ֆոնի համեմատությամբ ուռուցիկ են և որ կա-

Նկ. 182. Նրբագույն, կարմրաներկ սափոր, գտնված միջնաբերդում. ինվ. № 1794 443
Նկար Ա. Պ ա տ ր ի կ ի

Նկ. 163. Նրբագույն կարմրաներկ սափորիկ, գտնված միջնաբերդում, ինվ. № 1906/230

Նկար Ա. Պատրիկի

Նկ. [illegible]. Երկրագույն գորշնագույն սափորիկ. գտնված միջնաբերդում, ինվ. № [illegible]

Նկար Ա. Գ[illegible]



Նկ. 108. Դեղնակարմրաշավուն կավե նրբահեցի անոթների տեսակներ, գտնված մեծ մա-
ռանի միջնաբերդում Նկար Ա. Պատրիկի

բևորն է, խիստ ոճավորված ու սխեմատիկ։ Պատկերների յուրաքանչյուր հատված մյուսից բաժանված է լինում ճյուղավոր տերևազարդ ծառով կամ սանդղաձև զար-

Նկ. 166. Կարաս դրոշմազարդ գոտիով, գտնված միջնաբերդում. ինվ. № 1848/16

Նկ. 167. Կարաս դրոշմազարդ գոտիով, գտնված միջնաբերդի հյուսիսային լանջի բնակելի շենքի նարկարաժիններից մեկում. ինվ. № 1617/204

դով, թեև պատահում են նաև այնպիսի կարասներ, որոնց պատկերների հատվածները միմյանցից ոչնչով բաժանված չեն։

Դրոշմազարդ կարասների բազմաթիվ բեկորներ գտնվել են Հայաստանի նաև այլ հնավայրերում, ինչպես օրինակ՝ Զվարթնոցում, Անիում, Գառնիում, Տափուշի բերդում և այլն։ Անիում գտնված բեկորները թեև քանակով շատ չեն, բայց իրենց տեսակներով

Նկ. 168. Լայնաբերան կարաս դրոշմազարդ գոտիով, գտնված միջնաբերդում. ինվ. № 1913/93

Նկ. 169. Լայնաբերան կարաս դրոշմազարդ գոտիով, գտնված միջնաբերդում. ինվ. № 1847/180

գերազանցում են Դվինին։ Բացի դրոշմազարդ գոտկավոր կարասներից, Անիում գտնվել են նաև ուռուցիկ վերադիր կենդանապատկեր ունեցող կարասներ, որոնց նմանները հայտնի չեն այլ տեղերից։ Անիի կարասները հետազոտող Գ. Զուրինաշվիլու կարծիքով վերադիր զարդեր ունեցող կարասներն ավելի հին են, քան դրոշմազարդ գոտի ունեցողները։ Նրա կարծիքով, ընդհանուր առմամբ, հայկական դրոշմազարդ

կարասները պատկանում են ուշ միջնադարին և արդյունք են փոխառության, թեև այդպիսի կարասներ հայտնի չեն որևէ այլ երկրում։ Նա հիմնվելով այն բանի վրա, որ Հ. Օրբելին Անիի կարասների դրոշմազարդ քանդակները համեմատում է Դաղստանի պղնձե կաթսաների քանդակների հետ, հաստատում է, որ այդ դրոշմազարդ կարասներն ընդօրինակություն են դաղստանյան պղնձե կաթսաների, որոնց վրա կան դրոշմազարդ նշաններ[1]։

Զուբինաշվիլու այս տեսակետները քննադատել է Դվինի և Անիի կերամիկայի հետազոտող Բ. Շելկովնիկովը և ապացուցել, որ ժամանակի որոշման մեջ Զուբինաշվիլին սխալվել է և այդ կարասները Շելկովնիկովի կարծիքով, ոչ թե 13-րդ դարից հետո են երևան գալիս, այլ ըստ իրենց գտնված տեղի պատկանում են 12-րդ դարի վերջին և 13-րդ դարի սկզբին։

Այստեղ, ի միջի այլոց պետք է ասել, որ միջնադարյան խեցեղենի ժամանակը որոշելու մեջ գոյություն ունի մի սխալ տեսակետ։ Հարցն այն է, որ Հայաստանի կերամիկայի ժամանակը մինչ այժմ որոշվել է գլխավորապես Անիի նյութերի հիման վրա, այդ պատճառով էլ ինչ որ գտնվել է Անիում, վերագրվել է 10—13-րդ դարերին, որովհետև Անին քաղաք է դարձել 961 թվականին, երբ Բագրատունիք այնտեղ հաստատեցին իրենց գահը, թեպետ նա մինչ այդ էլ գոյություն է ունեցել իբրև ամրոց։

Դրան հակառակ, Դվինն իբրև քաղաք իր սկիզբն է առնում 4-րդ դարում և կործանվում 13-րդ դարում, ուստի այնտեղ գտնվել են բազմաթիվ առարկաներ, որոնք պատկանում են հենց 4-րդ դարին կամ հետագային, մինչև 13-րդ դարը։ Մենք, Դվինում գտնված դրամները, արձանագրությունները, կենցաղային և կուլտային բազմաթիվ առարկաներ ճանաչում ենք և նրանց ժամանակը ճիշտ որոշում, իսկ նույն առարկաների հետ գտնված խեցեղեն անոթները և նրանց բեկորները վերագրում ենք ավելի ուշ ժամանակներին։ Այդ սխալի հետևանքով այժմ ստացվել է շատ անհեթեթ մի բան, այն, որ մեր թվականության առաջին հազարամյակի գրեթե ամբողջ տևողության ընթացքում կավե անոթներ չեն գործածվել Հայաստանում, որովհետև Հայաստանում գտնված կերամիկան կամ վերագրվել է մեր թվականությունից առաջ առաջին հազարամյակին, կամ մեր թվականության 9-րդից սկսած մինչև 13-րդ դարերին։ Այդ նշանակում է, որ մենք դեռևս չենք ճանաչում մեր միջնադարյան կերամիկան։ Այդ սխալի ճշտումը վերապահված է Դվինին, որովհետև նա իբրև քաղաք հանդես է գալիս վաղ միջնադարում, և իր գոյությունը շարունակում է նաև հետագայում, Անիին զուգահեռ մինչև 13-րդ դարը։ Նշանակում է, Դվինի նյութերի հիման վրա հետզհետե պետք է ուղղել միջնադարյան կերամիկայի ժամանակը, առաջին հերթին այդ ուղղումը վերաբերվելու է հասարակ կերամիկային, որովհետև, եթե կերամիկայի այս կամ այն ձևը հնում կարող էր բոլորովին գոյություն չունենալ, այնուամենայնիվ, հասարակ կերամիկան անպատճառ պետք է գոյություն ունենար՝ իր բազմազան տեսակներով։

Եվ իրոք, այդ ուղղությամբ կատարված քննությունները ցույց են տալիս, որ կան որոշ նյութեր, որոնց ճիշտ ժամանակը պատմահամեմատական մեթոդով ուսումնասիրելու դեպքում, հնարավոր է վերականգնել։ Այսպես օրինակ, 1938 թվականին քաղաքի կենտրոնական թաղամասի 20 i քառակուսու մեջ (միանավ բազիլիկ տաճարի մոտ) գտնվեց սև կճուճի մի բեկոր, որի վրա կա գալարվող որթատունկի վերադիր զարդեր խաղողի ողկույզներով։ Այս բեկորն անպայմանորեն պատկանում է ամենաուշը 7-րդ դարին, որովհետև մի կողմից նա իր քանդակներով կապվում է մեր 7-րդ դարի ճարտարապետական զարդերի հետ, իսկ մյուս կողմից, նա գտնված է այն միջավայրում, որն անպայմանորեն պատկանում է 7-րդ դարի սկզբներին։ Հարցն այն է, որ այդ կճուճի բեկորի հետ գտնվել է նաև 7-րդ դարի պղնձե մի խաչ։ Ի միջի այլոց այս բեկորը կերամիկայի պատմության մեջ եզակի նմուշ է և մինչև այդ հնագիտությանը հայտնի չէր։ Նույն խեցին ունեցող մոխրագույն կավե անոթների բազմաթիվ օրինակներ են գտնվել դարձյալ քաղաքի

[1] Г. Чубинов. Декоративное убранство анийских карасов (опыт классификации), ХВ, том V, выпуск I, СПБ., 1916, стр. 22—39.

№ 169 ա. Դրոշմազարդ կարաս, գտնված միջնաբերդում

Նկ. 170. Կարասների գրոշմազարդ գոտիների նմուշներ

Նկար Ա. Պատրիկի



Նկ. 171. Կարասների դրոշմազարդ գոտիների նմուշներ
Նկար Ա. Պատրիկի

№ 171 ա. Դրոշմազարդ կարաս, գտնված միջնաբերդում

կենտրոնական թաղում 5-րդ և 7-րդ դարերի նյութերի հետ միասին։ Այդ անոթներին խիստ հատուկ է պղնձեղեն ամանների ձևեր ունենալը։

Այդ վայրում գտնված նույնիսկ ջնարակած խեցանոթների որոշ տեսակները, մանավանդ կապտականաչավուն ջնարակով պատած միագույն անոթները, պետք է վերագրել նույն վաղ ժամանակներին, որովհետև Դվինն այդ շրջանում, բացի հասարակ կավե անոթներից, ունենալու էր նաև թանկարժեք ամաններ, որոնք դեռևս մեզ համար մնում են անճանաչելի։

Այնպես որ, դրոշմազարդ կարասների ժամանակի վերաբերյալ մենք չենք կարող համաձայնել նաև Բ. Շելկովնիկովի հետ, որովհետև վերջին երկու տարվա պեղումները ցույց տվին, որ նրանք առանց բացառության պատկանում են ոչ թե 12—13-րդ, այլ 9—12-րդ դարերին։ Հայկական կարասները չէին կարող կրել դաղստանյան պղնձե կաթսաների ազդեցություն նաև այն պատճառով, որ Հայաստանն ուներ Դաղստանից ավելի հին և շատ ավելի լավ ձևավորված տեղական կաթսաներ։ Օրինակ՝ Հաղարծնի 1232 թվականի պղնձե կաթսան իր առյուծազարդ կանթերով կարող է համարվել հայկական արվեստի լավագույն նմուշներից մեկը։ Այստեղ ավելորդ չենք համարում մեջ բերել նրա արձանագրության բովանդակությունը, որը ձուլված է նրա շրթերին շուրջանակի ձևով։

Ի Թ ՈՋԱ ԵՍ ՋՈՍԻՄԱ ՔԱՀԱ ՄԵՂԱՊԱՐՏ ԱՆՋԱՄԲ ՍՏԱՑԱ ՋՔՈԲՍ ՅԱՐԴԵԱՆՑ ԻՄՈՑ. ՄԻԱԲԱՆՔՍ ԷՏՈՒՆ ԻՆՋ Ի ՏԱՐԻՆ. Ա. ԺԱՄ ԳՈՐԴԱ ՋԱՒՐԱՎԱՐ ՏՂԻՆԻՆ[1]։

Այս ցույց է տալիս, որ մեր կաթսաները, որոնցից քաղաքական անբարենպաստ կացության հետևանքով քիչ օրինակներ են մեզ հասել, կարող էին ազդեցության ավելի լավ աղբյուր հանդիսանալ կարասների համար, քան Դաղստանում ավելի ուշ ժամանակ եղածները, որովհետև, ինչպես հայտնի է հնագետներին, Դաղստանի կաթսաները երբեք Հայաստան չեն բերվել։ Սակայն, կարասների վրա ազդել են ոչ միայն կաթսաները, այլև ընդհակառակը, կարասները կարող էին ազդել կաթսաների վրա այն իմաստով, որ կերամիկան Դվինում միշտ ավելի լայն զարգացում է ունեցել, քան պղնձագործությունը։

Գ. Զուրինաշվիլին սխալվում է նաև կարասների հաջորդականությունը որոշելու հարցում. նա բոլոր կարգարուն կարասները բաժանում է երեք խմբի, ըստ որում առաջին խմբի մեջ է դնում վերադիր զարդեր ունեցողները, երկրորդ խմբի մեջ՝ ուռուցիկ զարդարանքներովը և միայն վերջին խմբին է վերագրում դրոշմազարդ գոտի ունեցողները։ Մեր կարծիքով, դրոշմազարդ գոտիով կարասներն ավելի հին են, քան ուռուցիկ վերադիր զարդեր ունեցողները, նախ՝ այն պատճառով, որ Դվինում, որ ավելի հին քաղաք է, քան Անին, ոչ մի ուռուցիկ զարդով կարասի բեկոր չի գտնվել և ապա այն պատճառով, որ ուռուցիկ զարդերը (վազը, առյուծ և այլն) կապվում են 12—13-րդ դարերի ճարտարապետական բարձրաքանդակների հետ, իսկ դրոշմազարդ գոտիով կարասները, ինչպես ասացինք, դուրս են գալիս 9—12-րդ դարերի շերտից, հետևապես և պատկանում են այդ ժամանակներին։

Նկ. 172. Քրեղան հասարակ կավից չորս կանթով, գտնված միջնաբերդի ստորին շերտերում. ինվ. № 1847/19

Դվինի դրոշմազարդ խեցանոթների մեջ միանգամայն ուրույն տեղ են գրավում կարասների և թոնիրների խուփերը, որովհետև նրանց դրոշմի օրնամենտը գրեթե արմատապես տարբերվում է կարասների օրնամենտից։ Թոնրի և կարասի խուփերը ևս մի քանի խմբերի են բաժանվում։ Փոք-

[1] ՔԱՀԱ բառը հավանաբար քահանա պետք է կարդալ, որովհետև դժվար թե նա կապ ունենա խահա՝ այսինքն, ուշ ժամանակ փոխառյալ բառի հետ։ Վերջին երեք բառը, Գորգայ Ջաւրավար տղինին պետք է կարդալ Գէորգայ զաւրավարի տղինին, որտեղ վերջին բառի մեջ Ա գիրը ձուլված է գլխավայր վիճակում։

ները մեծ մասամբ քանդակներից զուրկ են լինում և միայն կարմիր ներկ են ունենում իրենց երեսի կողմում։ Սրանց բռնակը խուփի կենտրոնում շինած մի ելուստ է, որ երկու տեսակ է լինում, մեկը վերջանում է ուռուցիկ ծայրով և մյուսը՝ ելուստի կենտրոնում ունենում է փոսիկ։ Այդպիսի խուփեր պահպանվել են Կարնո հայկական

րին բերդի տարածության վրա, որոնց մի քանի բնորոշ օրինակները ցույց ենք տվել № 178—182 նկարների վրա։

Ինչպես երևում է այդ օրինակներից, թոնիրների և մեծ կարասների խուփերի մակերեսը զարդարել են տարբեր դրոշմանիքներով՝ քառակուսի, կլոր կամ առարկայաձև, սակայն սրանց օրնամենտներն

Նկ. 173. Կարասի բեկոր գորշագույն կավից, խաղողի ողկույզների ուռուցիկ զարդերով. գտնված քաղաքի կենտրոնական թաղում. ինվ. № 1617, 49

գյուղերի մեջ, որոնք այնտեղ իրենց ելուստի պատճառով կրում են մանչ կամ աղջիկ մականունները։

Ավելի հետաքրքիր են Դվինում գտնված մեծ խուփերը, որոնք թեև ներկված չեն, բայց իրենց վրա ունենում են դրոշմանիշ զարդարանքներ։ 1950 թվականին միջնաբերդում գտնվեց այդպիսի մի խիստ գեղեցիկ խուփ, որը գործածվել է մի միջակ թոնրի վրա (Նկ. 177)։ Դրոշմազարդ խուփերի բազմաթիվ այլ օրինակների բեկորներ գտնվել են նաև տարբեր ժամանակներում, գլխավորապես միջնաբերդի և ստո-

իրենց ձևերով հիմնովին տարբերվում են կարասների նախշերից։ Խուփերի վրա կենդանական օրնամենտի հետ հավասար չափով հանդես են գալիս նաև բուսական և մանավանդ երկրաչափական ձևերը, որոնք երբեմն արտահայտվում են նաև հայերեն գրերի իմիտացիայի միջոցով։ Խուփերի նախշերը դրոշմված են ոչ թե գլանավոր կնիքներով, այլ վերադիր դաճերով, ուստի կրկնվող զարդերն այստեղ ոչ թե միմյանց հաջորդում են մի պատկերաշարքի մեջ, այլ իրարից անջատ վիճակում հանդես են գալիս խուփի երեսի տարբեր կետերում։ Մեր ասա-



Նկ. 174. Քաղաքի կենտրոնական թաղում գտնված վաղագույն կավանոթների բնորոշ ձևեր
Նկար Ա. Պատրիկի

ծին հակառակ, Դվինում գտնվել են մի քանի խուփեր, որոնց երեսը զարդարված է գլանավոր դրոշմով, մեկի վրա փախչող այծերի պատկերներ են, իսկ մի ուրիշի վրա՝ բուսական օրնամենտ է պատկերված։ Այդ բազմազանությունը ցույց է տալիս, որ այստեղ կարևորը ոչ թե պատկերի սյուժեն է, այլ որևէ նախշով զարդարելը և առարկան գեղեցիկ վիճակում ցույց տալը, թեպետև նա լոկ տնտեսական նպատակի է ծառայել։

Նկ. 175. Կարասի խուփ ցցուն բռնակով. ինվ. № 1905/15

Պեղումների միջոցին նկատել ենք, որ դրոշմազարդ կարասներն ավելի կարճ կյանք են ունեցել, քան դրոշմազարդ խուփերը և եթե կարասների գոյության ժամանակամիջոցը մենք ընդունում ենք 9—12-րդ դարերը, ապա խուփերինը համարելու ենք 10-րդ դարից (գուցե և ավելի վաղ) սկսած մինչև Դվին քաղաքի վերջնական անկումը 13-րդ դարում։

Նկ. 176. Կարասի խուփ փոսիկավոր բռնակով. ինվ. № 1905/113

Դրոշմազարդ կարասների բեկորներ գտնըվել են նաև Ամբերդի և Ջվարթնոցի պեղումներից, որոնք ոչ մի բանով չեն տարբերվում Դվինում գտնվածներից։ Անիում գտնըված կարասների մեջ էլ կան այնպիսիները, որոնք մեծ նմանություն ունեն Դվինի կարասներին։ Դրան կարող ենք ավելացնել նաև այն, որ Ադրբեջանի Գանձակ քաղաքում և Վրաստանի Դմանիսիում գտնված կարասները էլ մեծ նմանություն ունեն Դվինի և Անիի կարասներին։ Իհարկե, ինչպես ճիշտ է նկատել Բ. Շելկովնիկովը, այնքան մեծ հեռավորության վրա մի տեղից մյուսը չեն տարել այդ կարասները, այլ հավանական է, որ առևտրով և կուլտուրայով իրար հետ կապեր պահպանող երեք ժողովուրդները միմյանց համագործակցելով իրենց քաղաքներում առաջ են բերել միանման արտադրություն։ Անիում 1910 թվականին գտնվել է կարասների գլանաձև դրոշմ, այդ արդեն մի ապացույց է, որ այնտեղ այդ արտադրությունը տեղական է։ Դվինում և մյուս հնավայրերում դեռևս այդպիսի դրոշմ չի գտնվել, բայց դա բոլորովին իրավունք չի տալիս կարծելու, որ միայն Անին է արտադրել այդպիսի կարասներ, որովհետև այդ քաղաքների կավանոթների խեցու տարբերությունը խիստ զգալի է։

Դվինի դրոշմազարդ կերամիկայի թվի մեջ պետք է հիշատակել նաև գեղնավուն կավից պատրաստած սափորներն ու գավաթները, որոնք իրենց վրա երբեմն ունենում են դրոշմազարդ գոտի։

Այդ անոթների վրա զարդերի շերտը լայն տեղ է գրավում ամանի վզի կամ փորի վերին մասի վրա։ Այս խեցեղենը տարածված է ոչ միայն միջնաբերդում, այլ քաղաքի մնացած մասերում ևս։ Դրանից կարելի է եզրակացնել, որ նա համարվել է կերամիկայի էժանագին տեսակներից մեկը և մատչելի է եղել քաղաքի բնակչության մեծ մասին։

Դվինում գտնված դրոշմազարդ հասարակ խեցանոթների մեջ խիստ կարևոր տեղ են գրավում այսպես կոչված սնդկամաններ, որոնք 11—13-րդ դարերում հանդես են գալիս երկրագնդի տարբեր կետերում շատ ընդարձակ տարածության վրա՝ Միջին Ասիայից սկսած մինչև Հայաստան և Հարավային Ռուսաստան։ Սնդկամանները, մեծ մասամբ ձվաձև կավե անոթներ են, առանց նստուկի, հաստ պատերով և փոքրիկ պտկավոր բերանով։ Արտաքուստ լինում են պարզ կամ զանազան դրոշմներով զարդարուն։ Երբեմն ունենում են նաև ինկրուստացիա՝ փոքրիկ հախճապակու բեկորներով կամ մանր քարերով սարքած։



Նկ. 177. Թոնրի դրոշմազարդ խուփ, գտնված միջնաբերդում՝ Գ. Արեշատյանի վերակազմությամբ. ինվ. № 1907|158 Նկար Ա. Պատրիկի



Նկ. 178. Թոնրի գրոշմազարդ խուփերի բեկորներ, գտնված միջնաբերդում և ստորին բերդում

Նկար Ա. Պատրիկի

Անգկամանների նշանակության և ծագման մասին գոյություն ունի ընդարձակ գրականություն և միմյանցից տարբեր բազմաթիվ կարծիքներ։ Մի ժամանակ կարծում էին, որ այդ անոթները պատկանել են միայն մի ցեղի, որն իր գաղթած վայրերում թողել է նրանց բեկորները։ Սակայն, այժմ այդ կարծիքը հերքված է և նորագույն ուսումնասիրողներն եկել են այն եզրակացության, որ անգկամանները միջին դարերում արտադրվել են երկրագնդի տարբեր ցեղերի և ժողովուրդների կողմից, այդ պատճառով մի վայրում գտնվածը նման չէ մի այլ վայրում գտնվածին ոչ միայն խեցիով, այլև վրայի զարդագրոշմներով ու անոթի ձևով։

Նկ. 179. Թոնրի դրոշմազարդ խուփի բեկոր, գտնված ստորին բերդում

Հայաստանում անգկամաններ գտնվել են մեծ մասամբ Անիում և Դվինում, թեև հայտնի են մի շարք այլ վայրերում ևս պատահաբար գտնված անգկամաններ (Զրվարթնոց, Ամբերդ), բոլոր տարիների պեղումների ընթացքում Դվինում գտնվել են մոտ հարյուր այդպիսի անոթներ, որոնք տրամագծով բռունցքից քիչ ավելի մեծ են, իսկ Միջին Ասիայում և այլ տեղերում անգկամանները կրկնակի և եռակի մեծություն ունեն, նույնիսկ Անիի անգկամաններն ընդհանուր առմամբ ավելի մեծ են, քան Դվինում գտնվածները, ուստի Դվինի անգկամանները կարող ենք համարել մինչև այժմ հայտնի անգկամանների մեջ փոքրագույնները։ Բացի այդ, Դվինի անգկամանները տարբերվում են մեզ հայտնի այլ վայրերում գտնվածներից նաև նրանով, որ քիչ են նախշազարդված։ Նույնիսկ Անիի անգկամաններն ավելի ճոխ են զարդարված, քան Դվինինը։ Նշանակում է, փոքրությունը

Նկ. 180. Թոնրի դրոշմազարդ խուփի բեկորներ, գտնված ստորին բերդում

և քիչ զարդարված լինելը Դվինի անոթների յուրահատուկ կողմերն են, և գլխավորապես դրանցով է, որ տարբերվում են այլ տեղերի նույնանման անոթներից։

Դվինում գտնվել են նաև սնդկամանի արտադրական խոտանի մի քանի օրինակներ, որոնք անհերքելիորեն ապացուցում են նրանց տեղական ծագումը։ Էլ չխոսենք

Նկ. 181. Թոնրի դրոշմազարդ խուփի բեկորներ, գտնված ստորին բերդում

Նկ. 182. Թոնրի դրոշմազարդ խուփի բեկորներ, գտնված ստորին բերդում

այն մասին, որ Դվինի անոթները խեցիի գույնով և կարծրությամբ էլ զգալի չափով տարբերվում են այլ տեղերում գտնվածներից։ Դվինի անոթների խեցին գորշ կապտավուն գույն ունի, իսկ Անիինը՝ ավելի գեղնավուն է։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Հայաստանի այդ երկու քաղաքները ինքնուրույն կենտրոններ են հանդիսացել սնդկամանների արտադրության համար։ Սակայն, սնդկամանը Դվինում էժանագին կերամիկայի շարքին չի պատկանել։ Հենց միայն այն հանգամանքը, որ բացի մի քանիսից, մնացած բոլոր անոթները գտնվել են միջնաբերդի գագաթին և լանջերին, ցույց է տալիս, որ նա օգտագործվել է քաղաքի միայն բարձր խավի կողմից, իսկ չքավորությունը և արհեստավորությունը երբեք չի գործածել դրանք։

Այստեղ հետաքրքիրն այն է, թե այդ անոթներն ինչ նպատակի են ծառայել։

Այդ մասին գիտնականները հայտնել են բազմաթիվ կարծիքներ։

Ոմանք կարծել են, որ այդ անոթները ծառայել են իբրև հրձիգ նռնակներ, որոնց մեջ այրվող նյութ են լցրել և նետել թշնամու վրա։ Ուրիշները ենթադրել են, որ դրանք ձիթաճրագներ են, դրա համար էլ բերանի փոխարեն փոքրիկ անցք ունեն պատրույգի համար։ Եղել են նույնիսկ կարծողներ, որ այդ անոթներն անապատներում ծառայել են իբրև ջրաման։ Մեկն էլ ենթադրել է, որ դրանք ճարտարապետական զարդարանքներ են, քիվի փոխարեն շենքի ճակատին շարված։

Սակայն, վերոհիշյալ բոլոր կարծիքներն էլ այժմ հերքված են և նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ ամաններն իրոք ծառայել են իբրև սնդկամաններ, բայց այն տարբերությամբ, որ նրանց մեջ պահել են ոչ միայն սնդիկ,

Նկ. 183. Դվինի միջնաբերդում գտնված սնդկամանների բնորոշ ձևեր
Նկար Ա. Պատրիկի

Նկ. 33. Դվինում գտնված անոթների վրայի փորագիր նշանները

այլև ուրիշ անուշահոտ օծանելիքներ և այլ արագ ցնդող նյութեր։ Այդպիսով, հավանական է դառնում, թե ինչու այս անոթները գտնվում են միայն հարուստ խավին պատկանող շինությունների մեջ։ Ինչպես հայտնի է, միջին դարերում սնդիկը լայն չափերով օգտագործվել է կոսմետիկայի մեջ՝ մաշկային հիվանդությունների դեմ, ուստի և այդ սնդկամանները իբրև պերճանքի առարկա, ծածկվել են զարդարուն նախշերով։ Դվինի սնդկամանների բնորոշ ձևերը մենք ցույց ենք տվել № 183 նկարի մեջ, իսկ նրանց վրա թրծելուց հետո անվարժ ձեռքով արված փորագրությունները, որոնք անշուշտ ցույց են տալիս անոթների պատկանելիությունը, ցույց ենք տվել №184 նկարի մեջ։ Այստեղ մենք կանգ չենք առնի Դվինի սնդկամանների մանրամասնությունների վրա, որովհետև այդ հարցի առթիվ արդեն լույս են ընծայվել հատուկ ուսումնասիրություններ[1]։

Դվինում արտադրվել և տեղում էլ ամենուրեք լայն չափերով գործածվել է խոհանոցային և տնտեսական նշանակություն ունեցող հասարակ կավանոթներ՝ սափոր, պուտուկ, քրեղան, թաս, փարչ, ափսե, աղաման, ծափ, կճուճ, և այլն, որոնց հիման վրա կարելի է պարզաբանել միջնադարյան դվինցիների բնակարանների, հացատների և պահեստային նշանակություն ունեցող հարկաբաժինների ներքին կահավորումը։

Մենք այստեղ կանգ չենք առնի այդ կերամիկայի նկարագրության վրա, որի հիմնական ձևերը ներկայացրել ենք № 160 և № 161 նկարների մեջ, բայց անհրաժեշտ ենք գտնում հաղորդել, որ այդ խեցեղենը հիմնականում բաժանվում է երեք խմբի։

Առաջին խումբը կոպիտ ամաններ են, գլխավորապես փարչեր, քրեղաններ և մի կանթով կճուճներ, որոնք շինված են գեղնաշիկագույն կավից։ Սրանք ծառայել են կաթնեղենի համար (կաթ, մածուն, սերուցք և պանիր պահելու) և կրակի վրա չեն դրվել։ Երկրորդ խումբը շինված է կավի մի այլ տեսակից, որը կրակի ազդեցության լավ է դիմանում. այդ կավից շինել են կրակի վրա դրվող կերակուրի ամաններ, մեկ կամ մի քանի կանթ ունեցող կճուճներ, պուտուկներ և այլն։ Այս տեսակ ամանների խեցին մոխրագույն է և երբեմն էլ մի քիչ կարմրավուն։

Երրորդ տեսակը գեղնաշիկագույն կավից պատրաստած նրբին գավեր և սափորիկներ են, որոնք խիստ հաճելի ձևեր և նուրբ խեցի ունեն, ծառայել են իբրև ջրաման։ Սրանք երբեմն ունենում են նաև զարդարանք։

Ջնարակած կավե կարասի.—Այս խեցեղենը խիստ մեծ տեղ է գրավում Դվինի գեղարվեստական կերամիկայի մեջ։ Եթե հաշվի չառնենք խոշոր կարասները, թոնիրները և ծածկի կղմինդրը, կարելի է ասել, որ Դվինում ջնարակով են ծածկել գրեթե ամեն տեսակ խեցանոթ՝ սկսած փոքրիկ աղամաններից և ձիթաճրագներից, մինչև խոշոր սափորները և քրեղանները։ Նույն իսկ թոնրի խուփերի և հատակի աղյուսների մեջ կան ջնարակված օրինակներ։ 1950 թվականին միջնաբերդում գտնվեց թոնրի խուփի մի մեծ բեկոր կանաչ ջնարակով պատած։ Ամենից շատ ջնարակված է ճաշասեղանի սպասը և տնային կարասու մի քանի այլ տեսակները (ափսե, գավաթ, գավ. քրեղան, թաս, սափոր, փարչ, ձիթաճրագ, կուլիկ), որ միագույն լինելու դեպքում, մեծ մասամբ, ունենում է մուգ կանաչ ջնարակ, իսկ բազմագույն լինելու դեպքում, գույների բազմերանգության մեջ գերիշխում են վառ դեղնավուն, նարնջագույնը և կանաչը։

Միագույն ջնարակով պատած են լինում գլխավորապես սափորները, մեծ քրեղանները, փարչերը, և ձիթաճրագները, իսկ երփներանգ են լինում փոքր և միջակ քրեղանները, թասերը, ափսեները։ Դվինի խեցեղենի վրա ընդհանուր առմամբ ջնարակը շատ լավ է պահպանվել և գույների թարմությունը երբեք չի կորել ամանների վրայից։ Սակայն, ջնարակը երբեմն ունենում է մանր ճաքեր ամանի ամբողջ մակերեսի վրա և այդ ճաքերի շնորհիվ ջնարակը թափվում է ամանի երեսից։ Մեր կարծիքով, այդ երևույթն առաջ է գալիս ճաքերի արանքից խեցու մեջ խոնավություն ներծծվելու պատճառով։

[1] Հ. Ջանփոլադյան. Դվինի պեղումներից հայտնաբերված ձկան անոթները։ Աշխատություններ Հայաստանի Պետական Պատմական Թանգարանի, հատոր 3, Երևան, 1950 թ., էջ 157—167։ Б. А. Шелковников, Художественная керамическая промышленность средневековой Армении. Известия Арм. ФАН'а 1942, № 3—4, стр. 14—16.



Նկ. 185. Ջնարակապատ միագույն կավանոթների սովորական ձևեր
Նկար Ա. Փատրիկի

Դվինում գտնված ջնարակած վաղագույն անոթները խիստ կերպով տարբերվում են ուշ ժամանակներին պատկանողներից ինչպես իրենց գույներով, այնպես էլ զարդերի ոճով։ Հետաքրքիրն այն է, որ այդ հնագույն ոճի ջնարակած խեցանոթները բոլորովին ծանոթ չեն Անիին և մի շարք այլ վայրերի, որովհետև Անին քաղաք դառնալուց առաջ արդեն խեցու այդ տեսակը վերացել էր գործածությունից։ մարզպանական ժամանակներում։ Բ. Շելկովնիկովը այս կերամիկան վերագրում է 9-րդ և ամենաուշը 10-րդ դարին, որովհետև համեմատություն է գտնում Սամարայում գտնված նույնատիպ խեցեղենի հետ[1]։

Այստեղ 10-րդ դարի մասին խոսք լինել չի կարող, որովհետև այն շինությունները, որոնք այդ խեցեղենն են պարունակում, քանդվել են 893 թվականի մեծ երկրաշարժի ժամանակ։

Նկ. 186. Ջնարակապատ միագույն սափորներ, գտնված միջնաբերդում. ինվ. №№ ձախից աջ՝ 1794/144, 1794/71, 1794/31

Ջնարակած կերամիկայի հին տեսակը հայտնի է մեծ մասամբ ծանծաղ քրեղաններով, հաճախ առանց շրթները վեր ծալված լինելու, որոնց միջի և դրսի խորդուբորդությունները հարթված են սպիտակ կավի ծածկույթով (անգոբ) և վրան էլ պատած մի քանի գույնի ջնարակով։

Այս տիպի խեցանոթները Դվինում գտնվում են բացառապես կաթողիկե եկեղեցու շրջապատում, նյութական կուլտուրայի հնագույն մնացորդների հետ միասին։ Նշանակում է, այս խեցեղեն անոթները պատկանում են ամենաուշը 9-րդ դարին և սկիզբն են առել, եթե դատելու լինենք հարակից նյութերի հիման վրա, դեռևս

Այս տիպին պատկանող ջնարակած ամանների բեկորներ գտնվել են նաև Զվարթնոցում, որը, ինչպես հայտնի է, քանդվել է 10-րդ դարի վերջերին, բայց Զվարթնոցի գոյության վերջին շրջանում արդեն հանդես էին եկել ջնարակած խեցեղենի ավելի նոր տեսակներ։

Այս խեցեղենի տիպիկ օրինակը կարող է համարվել 1938 թվականին գտնված մի թաս, որի դեղնավուն ֆոնի վրա, շրթունքին մոտիկ, գծված են եր-

---

[1]. Б. А. Шелковников. Художественная керамика двинских раскопок, Известия Арм. ФАН'а СССР, 1940, № 4—5, стр. 183.

կու շրջանակ՝ կանաչ և դարչնագույն ջնարակով։ Շրջանակների մեջ գծված է մի քառակուսի՝ միմյանց հաջորդող դարչնագույն և կանաչ 4 գծերով, իսկ այդ քառակուսին բաժանված է 16 ավելի մանր քառակուսիների, որոնց մեջ շախմատի կարգով պատկերված են 8 դարչնագույն սլաքներ։ Նույնատիպ կերամիկայի մնացորդը գտնվել է Դվինի կենտրոնական թաղամասում 1938 և 1939 թվականների պեղումների ժամանակ։ Այս խեցեղենի ամենատիպիկ օրնամենտը քառակուսիներն են և նրանց մեջ գծված սլաքները, թեև բացի սլաքներից, քառակուսիների մեջ հանդիպում են նաև փոքրիկ շրջագծեր և կետագիր զարդեր (տե՛ս Նկ. № 189)։



Նկ. 187. Ջնարակապատ բազմագույն խեցանոթների հնագույն տիպի բեկորներ, գտնված քաղաքի կենտրոնական թաղում

Նկ. 188. Հնագույն տիպի ջնարակապատ բազմագույն քրեղան, գտնված քաղաքի կենտրոնական թաղում. Ինվ. № 1617/133

1949 թվականին, միջնաբերդի առաջին շերտերի պեղումների ժամանակ, գտնվեց նույնատիպ քրեղանի կամ թասի հատակ, որի վրա մնացել է ոճավորված սանձավոր ձիու բաշը, իսկ կենտրոնական թաղամասում գտնված մի քանի բեկորների վրա երևում են բուսական պատկերներ։ Նշանակում է, Դվինի ջնարակած հնագույն խեցեղենը թեև բոլորովին փորագիր զարդեր չունի, բայց բացի երկրաչափական պարզ ձևերից, ծանոթ է նաև բուսական և կենդանական գունազարդ զարդաձևերին։

Ջնարակի զարգացման հաջորդ շրջանի խեցանոթները, հավանաբար, պատկանում են 10—11-րդ դարերին։ Այս կերամիկան լինում է երկու տեսակ. առաջին տեսակի վրա գույները դարձյալ նույնն են մնացել՝ դեղ-

№ 189. Հնագույն տիպի ջնարակապատ բազմագույն քրեղան, գտնված քաղաքի կենտրոնական թաղում

նակարմրավուն ֆոն, կանաչ և դարչնագույն զարդագծեր, բայց օրնամենտիկան մեծ չափով փոփոխության է ենթարկվել և, բացի այդ, ավելացել են նաև ամանների մեջ արված փորագիր զարդաձևերը։ Այստեղ օրնամենտիկան ինչպես փորագիրը,



կու գույների խառն գրությամբ։ Այս տիպի խեցեղենը Դվինում գրեթե բացառապես գտնվում է միջնաբերդում, իսկ քաղաքի կենտրոնական թաղամասում նա լինում է միայն 10-րդ և 11-րդ դարի շենքերի մեջ։

Այս կերամիկայի երկրորդ տեսակը դարձյալ յուրահատուկ է միայն Դվինին և Հայաստանի որևէ այլ տեղում դեռևս չի գտնվել։ Նա ունի հյուսածո և բուսական օրնամենտի փորագիր զարդեր, որոնց վրա մեծ խնամքով գույներ են տված։ Այդպիսի անոթներ գտնվեցին Դվինում միայն 1948 և հետագա տարիներին, երբ արշավախումբը ձեռնամուխ եղավ միջնաբերդի երկրորդ շերտի պեղման, որը պատկանում է 10-րդ և 11-րդ դարերին։ Այս խեցանոթն



Նկ. 190. Ջնարակապատ բազմագույն թասերի նմուշներ «ճարտարապետական» օրնամենտով, գտնված միջնաբերդի ներքին շերտերում

Նկար Լ. Սագոյանի

այնպես էլ գունավորը, ճառագայթաձև սփռվում են ամանի կենտրոնից դեպի նրա եզրերը։ Գունավոր զարդարանքները երկարավուն ցայտքեր են՝ կանաչ և դարչնագույն ջնարակով արված, բայց հետաքրքիրն այն է, որ այդ ցայտքերն ամանի կենտրոնից դեպի եզրերը ճառագայթաձև են տարածվում՝ վերոհիշյալ եր-

ունենում է անգոբի վրա արված բաց դարչնագույն կամ նարնջագույն ջնարակած ֆոն, իսկ օրնամենտը, գրեթե միշտ, արվում է դեղնագույն ջնարակով։ Բացի այդ, անոթների վրա այստեղ ու այնտեղ անկանոն կերպով լինում են նաև կանաչ ջնարակի մեծ և փոքր ցայտքեր։

Այս անոթները թեև իրենց օրնամեն-

տով սերտորեն կապվում են Հայաստանի 10—11-րդ դարերի ճարտարապետական հյուսված քանդակների հետ, բայց զարմանալին այն է, որ Անիում այդ կերամիկան բոլորովին չի գտնվել, թեև, ինչպես գիտենք, այդ կերամիկայի արտադրության ժամանակ Անին արդեն մայրաքաղաք էր 961 թվականից սկսած։ Այդ նշանակում է, որ կերամիկայի այս տեսակը 10-րդ դարի երկրորդ կեսին այլևս հարգի չէր և նրա արտադրությունը Անի չգնաց, դրա փոխարեն 10-րդ դարում Անի մուտք գործեց ջնարակած խեցեղենի մի այլ տեսակը, որն արհունական և իրանական նույնատիպ խեցանոթներն ավելի շատ ենՆման միմյանց, քան թե Դվինի տարբեր ոճերն իրար։ Դրանից իհարկե չի հետևում, որ այդ կերամիկան առաջ է եկել և զարգացել մի որևէ վայրում, իսկ մյուսներն ընդօրինակել են նրան, այլ ընդհակառակը, մենք այն կարծիքին ենք, որ միմյանց հետ տնտեսական և կուլտուրական կապեր պահպանող մի շարք երկրներ միասին են մշակել և զարգացրել կերամիկայի այդ տեսակը։

Նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ղրիմի միջնադարյան



Նկ. 191 Ջնարակապատ բազմագույն թաս և քրեղան «ճարտարապետական» օրնամենտով, գտնված միջնաբերդի ներքին շերտերում

Նկար Լ. Սադոյանի

ղեն Դվինից բացի տարածված էր նաև գրեթե ամբողջ Անդրկովկասում և մի շարք այլ երկրներում՝ Բյուզանդիայում, Հարավային Ռուսաստանում, Պարսկաստանում և այլն։ Այդ կերամիկան առաջ եկավ 10—11-րդ դարերում և հարատևեց մինչև 14-րդ դարը, ըստ որում, այդ 300 տարիների ընթացքում նա գրեթե ոճական աչքի ընկնող փոփոխության չենթարկվեց և մեզ հայտնի Անդրկովկասյան խոշոր կենտրոնները—Դմանիսին՝ Վրաստանում, Գանձակը՝ Աղվանքում, Անին և Դվինը Հայաստանում, ունեն միմյանց խիստ նմանող այս տիպի խեցանոթներ։ Նույնիսկ բյուզանդական, հասարակ և ջնարակած խեցանոթներն առանձնապես մոտիկ են Անդրկովկասի և մասնավորապես Դվինի ու Անիի խեցանոթներին, և այդ մոտիկությունը միջնադարյան Խերսոնեսի ուսումնասիրող Ա. Լ. Յակոբսոնը բացատրում է քաղաքական, տնտեսական և կուլտուրական ուժեղ կապերով, որ Հայաստանն ու Վրաստանը ունեցել են Ղրիմի Թերակղզու հետ Տրապիզոնից գնացող ծովային ճանապարհի միջոցով[1]։

[1] А. Л. Якобсон, Средневековый Херсонес (XII—XIII вв.), МИА СССР, № 17, М.—Л., 1950 г. стр. 254.

Սակայն, եթե ընդհանուր բնույթով այդ խեցեղենը տարբեր երկրներում միատեսակ է, ապա իր օրնամենտիկայի մանրամասնություններով, խեցու որակով և գույների համակարգով խիստ կերպով զանազանվում է մի տեղինը մյուս տեղից։

Դվինում այս խեցեղենը ժամանակագրական կարգով ջնարակածների մեջ երրորդն է համարվում՝ սյաքավոր և ճարտարապետական օրնամենտ ունեցող անոթներից հետո։ Այս խեցեղենի բնորոշ հատկանիշն այն է, որ սրա օրնամենտիկան արդեն միանգամայն կտրվել է իր ակունքներից՝ մեծ մասամբ բուսական և երբեմն էլ երկրաչափական ռեալիստական նկարներից և ճարտարապետական բարձրաքանդակից, և խիստ կերպով ոճավորվելով, ստացել է միանգամայն առանձին բնույթ, որ հատուկ է միայն կերամիկային։ Դվինում այս կավանոթների ջնարակը, համարյա թե առանց բացառության, զուգակցված է անգոբի վրա կատարված փորագիր զարդարանքներին, միայն հատ ու կենտ փոքրիկ առարկաներ փորագրական զարդարանքներ չունեն։ Հաճախ հարուստ փորագրություն են ունենում նույնիսկ միագույն ջնարակով պատած քրեղանները, սափորները, ափսեները և այլ առարկաները, իսկ մեծ քրեղաններն իրենց մեջ ունենում են նաև վարդյակների կամ բուսական այլ օրնամենտների խիստ ոճավորված փորագիր զարդարանքներ։ Այս շրջանի խեցանոթների մեջ կենդանական նախշերը բնորոշ են Անիի և այլ վայրերի համար, բայց շատ հազվադեպ են Դվինում, և եթե չլիներ Դվինի և Անիի կավանոթների խեցու կարծրության և որակի տարբերությունը, կարելի կլիներ ենթադրել, որ Դվինում գտնված մի քանի կենդանազարդ ջնարակած խեցանոթները բերված են Անիից։ Այնուամենայնիվ եղած գյուտերը ցույց են տալիս, որ Դվինն էլ արտադրել է կենդանազարդ ջնարակած խեցանոթ, միայն թե խիստ սահմանափակ քանակով (տե՛ս Նկ. № 195)։





Նկ. 192. Ջնարակած բազմագույն թասերի նմուշներ «ճարտարապետական» օրնամենտով, գտնված միջնաբերդի ներքին շերտերում
Նկար Լ. Սադոյանի

Դրան հակառակ, Դվինում, երրորդ շրջանին պատկանող ջնարակած խեցանոթների համար շատ բնորոշ է փորագիր զարդաբանքի անփույթ կերպով գունազարդումը, որ երբեմն բոլորովին չի համընկնում փորագրության հետ, կամ այնքան է գունազարդումը ցրվում և դուրս գալիս փորագրության սահմաններից, որ այլևս չի կապվում նրա հետ։ Այս երևույթը Դվինում այն աստիճան է զարգացել, որ կե-



Նկ. 193. Ջնարակապատ միագույն սափոր «ճարտարապետական» օրնամենտով, գտնված միջնաբերդի ներքին շերտերում. ինվ. № 1906/128

րամիկայի մեջ դարձել է առանձին ոճ և տվել այդ ոճին պատկանող գլուխգործոցներ։ 1939 թվականին Դվինում գտնըվեց ջնարակած մի մեծ թաս 28,5 սմ տրամագծով և 9 սմ բարձրությամբ, որի մեջ փորագրված է խիստ ոճավոր մի ծաղիկ այն աստիճան անփույթ գունազարդությամբ, որ միայն ուշադիր նայելուց հետո կարելի է նկատել, որ վարպետն ուզեցել է իրրև թե միայն փորագիր ծաղիկը գունազարդել, իսկ վառ գույների համերաշխ խաղն այդ ամանին տվել է արտակարգ գեղեցկություն (Նկ. 198)։ Մի քանի այդպիսի գունազարդ անոթներ էլ դուրս եկան 1949 և 1950 թվականի պեղումների ժամանակ՝ միջնաբերդում բացված հորերի միջից։

Ինչպես Անին, այնպես էլ հարևան Վրաստանի Դմանիսի և Ադրբեջանի Գանձակ քաղաքներն ունեցել են այս ոճի խեցեղեն անոթների արտադրություն, բայց յուրաքանչյուր քաղաքի արտադրությունն այս կամ այն չափով տարբերվել է մյուսներից, ինչպես նախշերի մանրամասնությամբ, այնպես էլ խեցու գույնով և որակով։

Դվինում գտնված մի քանի հարյուր այդպիսի անոթների և նրանց բեկորների առանձնահատուկ կողմն այն է, որ նրանց խեցին համեմատաբար նուրբ է և գույնը դեղնավուն կամ բաց վարդագույն։ Դվինում գտնվել են մի քանի տասնյակ կավե փոքրիկ եռոտանիներ, որոնք գործածվել են թրծման հնոցներում, թրծվող ամանները մեկը մյուսին չկպչելու համար (Նկ. 197)։ Հարցն այն է, որ ջնարակած քրեղանները հնոցի մեջ շարում էին մեկը մյուսի վրա՝ բերանով դեպի ներքև և նրանց արանքներում դնում էին այդ սրածայր եռոտանիները, որպեսզի թրծվող ամանները մեկը մյուսին չկպչեն։ Այդ պատճառով էլ, հաճախ, ջնարակած անոթների մեջ երևում են առանց ջնարակի մնացած երեք փոքրիկ կետեր, որոնք եռոտանու ոտների կպած տեղերն են ցույց տալիս։ Այդ եռոտանիների գյուտը Դվինում ցույց է տալիս, որ խեցանոթների արդյունագործությունը կազմակերպված է եղել հենց տեղում։ Նույնն են ապացուցում պեղումների ժամանակ գտնված արտադրական խոտանի բազմաթիվ նմուշները։ Սրանց միջոցով արդեն որոշվում են տեղական արտադրության տեսակները, որովհետև թրծման ժամանակ մեկը մյուսին կպչելու հետևանքով անպետքացած ամանների մնացորդները ոչ մի դեպքում ուրիշ քաղաքից չէին բերի այստեղ։ Դվինի ջնարակած ամանների երրորդ շրջանին պատկանող նմուշները ցույց ենք տվել №№ 194, 195, 196 նկարների մեջ։

Հախճապակի.— Դվինի կերամիկայի մեջ չափազանց կարևոր տեղ է գրավում հախճապակին, որը մենք բաժանել ենք երեք մեծ խմբերի։ Առաջին խմբի մեջ դրել ենք հախճապակու տեղական արտադրանքի սովորական տեսակները, Երկրորդի մեջ՝ տեղական արտադրանքի այն տեսակները, որոնք արտադրել են գլխավորապես օտար շուկաներ արտահանելու նպատակով և Երրորդ խմբի մեջ՝ օտար երկրներից ներմուծված հախճապակին։



Նկ. 194. Ջնարակապատ բազմագույն խեցանոթներ, գտնված միջնաբերդի մեծ շինության մեջ
Նկար Ա. Պատրիկի

Հախճապակու արտադրանքի ծավալը Դվինում թեև մի քանի անգամ պակաս է եղել, քան ջնարակած կավանոթներինը, բայց և այնպես հախճապակին էլ համեմատաբար խոշոր դեր է կատարել Դվինի տնտեսական կյանքում։

Դվինում արտադրված հախճապակին *խիստ բազմազան է և միանգամայն ուշագրավ իր պատրաստման բարձր արվեստով և տեխնիկայով։ Այստեղ սպիտակ, բայց բոլոր դեպքերում փափուկ խեցին, առանց անգոբի, երեսպատվում է մի քանի*

Նկ. 195. Ջնարակապատ քրեղան արագիլի պատկերով, գտնված միջնաբերդի մեծ շինության հորերից մեկում. ինվ. № 1794,314

Նկար Ա. Պատրիկի

Մի քանի տարիների ընթացքում Դվինի պեղումներից ստացվել են բազմաթիվ ամբողջական անոթներ և բեկորներ, որոնց հիման վրա հնարավոր է ընդհանուր հասկացողություն կազմել հախճապակու արտադրության և նրա գործածության մասին։

եղանակով։ Ամենից շատ տարածվածը սպիտակ, մուգ կապույտ կամ կանաչ ջնարակով ծածկված միագույն ամուր թասերն են, որոնք նախօրոք մեզ ծանոթ էին Անիի միջնաբերդի պեղումներից։ Դրանց ջնարակը կոբալտի և երբեմն էլ պղնձի օքսի-

գով է լինում արված, երբեմն էլ, թեև անհամեմատ քիչ, բայց լինում է նաև գորշ մանիշակագույն ջնարակով՝ մարգանեցի օքսիդի միացմամբ, իսկ խիստ տարածված կաթնագույն մակերեսն արդյունք է անթափանցիկ կապարային ջնարակի։

Այս տիպի թասերը սովորաբար 18—20 սմ *տրամագծով և 6—8* սմ *բարձրությամբ հախճապակյա ամաններ են, որոնց 6–7* սմ *նստուկի վրա բարձրանում են հետզհետե լայնացող կողերը։ Այս ամանների միջի կողմն ամբողջովին ջնարակված է լինում, իսկ արտաքինը՝ գրեթե մինչև նստուկը։ Սրանց դրսի երեսը հարթ է լինում, իսկ ներսն ունենում է փորագիր զարդերի գոտի, որի մի շարք տեղերում փորված են լինում փոքրիկ անցքեր։ Այդ անցքերը ջնարակելու ժամանակ փակված են լինում թափանցիկ ջնարակով, որով նրանք լուսաթափանց են դառնում և շատ հաճելի տպավորություն են գործում լույսի դիմաց։ Ինչպես այս, նույնպես և մի քանի այլ հախճապակյա անոթների տեսակներ, Դվինում և Անիում բացառապես գտնվում են միայն միջնաբերդի պեղումներից, հետևապես, կարելի է վստահ կերպով պնդել, որ դրանք գործ են ածվել միայն իշխող դասի կողմից և շուկայում էլ թանկ են գնահատվել, որովհետև այն մեծ աշխատանքը, որ գործադրված է ամանը քանդակելու և նրա վրա 80-ից մինչև 120 փոքրիկ, բայց միաչափ անցքեր բաց անե-*

Նկ. 196. Ջնարակապատ բազմագույն թաս, թերթավոր ծաղկի փորագրությամբ, գտնված միջնաբերդի մեծ շինության հորերից մեկում. ինվ. № 1641,35

լու համար, զգալի չափով բարձրացրել են նրա ինքնարժեքը։

Անիի և Դվինի ծակոտկեն թասերի քանդակազարդ գոտին իր օրնամենտների ոճով հայկական է և մինչև այժմ գտնվել է բացառապես միայն Հայաստանում։ Էլ չասենք այն մասին, որ երբեմն այդ անոթները ունենում են կապույտ ջնարակի ցայտքեր, որոնք իբրև խալ՝ գույների միապաղաղության մեջ որոշ աշխուժություն են մտցնում։

197. Եռոտանի, որ գործածվել է ջնարակած կավանոթներ թրծելու ժամանակ, որպեսզի ամանները միմյանց չկպչեն

Դվինում և Անիում գտնված ծակոտկեն հախճապակին իր նրբին խեցիով և օրնամենտիկայով ոչ մի նմանություն չունի իրանական ամուր հախճապակու հետ, բայց հայկական այդ երկու քաղաքների ծակոտկեն հախճապակի անոթներն այնքան են նման միմյանց իրենց խեցիով, քանդակներով և ջնարակով, որ ոչ մի դեպքում չի կարելի զանազանել միմյանցից։ Այդ պատճառով էլ, կարծում ենք, որ նրանք միևնույն վայրի արտադրություն են հանդիսանում։ Մենք այն կարծիքին ենք, որ ծակոտկեն հախճապակին արտադրվել է

Նկ. 198. Թաս բազմագույն ջնարակով, գտնված Դվինի մեծ շինության հորերից մեկում. Ինվ. № 1847/59 Նկար Ա. Պատրիկի

ների նստուկի տակին հանդիպում են հայերեն գրերով արված վարպետների նշաններ[1]։

Այս տիպին պատկանող կաթնագույն, կապույտ և կանաչ թասերի օրնամենտիկայի մեջ որևէ տարբերություն չի նկատվում, միայն թե կաթնագույն թասերը Դվինում, որովհետև այնտեղ նա շատ բազմազան է և որ ամենաէականն է, հաճախ գտնվում է նրա արտադրական խոտանը։

Անիի նյութերի հիման վրա Բ. Շելկովնիկովը եկել է այն եզրակացության, որ այս ծակոտկեն թասերը պատկանում են ամենաուշը 11-րդ դարի կեսերին, որովհետև նրանք սելջուկների 1064 թվականի հարձակումից հետո այլևս չեն հանդիպում։

[1] Б. А. Шелковников. Художественная керамическая промышленность средневековой Армении, стр. 25.

Գրեթե նույն թվականն է ստացվում նաև Դվինի պեղումների տվյալներով։ Այստեղ ևս ծակոտկեն թասերը գտնվում են միջնաբերդի հորերի միջից, որոնցից մեկում, այդ թասերի հետ միասին, 1949 թվին, դուրս եկավ բյուզանդական մի ոսկեդրամ՝ 1067—1070 թվականներին պատկանող, Ռոմանոս կայսեր, և նրա Եվդոկիա, Միքայել և Կոստանդին որդիների անունով կտրված։

Ինչպես Անիի, այնպես էլ Դվինի այդ տվյալների հիման վրա կարելի է անվրեպ եզրակացնել, որ հախճապակյա նրբին թասերի արտադրությունը Հայաստանում առաջ է եկել և զարգացել Բագրատունյաց տիրապետության օրոք և նրանց անկումից հետո (11-րդ դարում) շատ կարճ ժամանակամիջոցում վերացել է։ Դրա լավագույն ապացույցն այն է, որ Անիում նա գտնվել է միայն Բագրատունյաց պալատական շենքերի մեջ բացված հորերում։

Դվինում արտադրվող հախճապակյա անոթների մեջ կարևոր տեղ են գրավում 12—13-րդ դարերում մեծ զարգացում ստացած գեղարվեստական այն թասերը, որոնք ունենալով նույն խեցին և նույն ջնարակը, ծակոտիների և խորաքանդակ զարդերի փոխարեն իրենց միագույն, գլխավորապես

Նկ. 199. Ջիթաէրագ հախճապակուց, կապույտ ջնարակով, վրան սևագույն ցայտքեր, գտնված միջնաբերդի մեծ շինության հորերից մեկում, ինվ. № 1794 232

Նկ. 200. Հախճապակյա օրնամենտավոր թաս, կանաչավուն ջնարակով, գտնված միջնաբերդի մեծ շինության հորերից մեկում. ինվ. № 1847|16

Նկար Ա. Պատրիկի

կանաչավուն (փիրուզա) կամ կապույտ ֆոնի վրա ունեն սև, մուգ դարչնագույն կամ մուգ կապույտ վերջնարակային գունազարդություն։ Այս թասերի ջնարակի վրա նկարված

Նկ. 203. Փորագիր զարդարանքներ ունեցող հախճապակյա կանաչավուն գավ, գտնված միջնաբերդի մեծ շինության հորերից մեկում. ինվ. № 1794/233
Նկար Ա. Պատրիկի

են լինում գլխավորապես մարդկային դեմքով ֆանտաստիկ թռչուններ։ Այս տիպին պատկանող կան նաև ավելի մեծ ափսեներ, որոնց նկարազարդությունն ունի ոսկեգույն փայլ և կարող է համարվել տեղական արտադրության ամենաթանկարժեք խեցեղենը.

Նույն ժամանակներում (12—13-րդ դարերում) Դվինում մեծ տարածում է ունեցել հախճապակյա միագույն անոթների այն տեսակը, որն իր վրա կրում է մարդկային դեմքի և վարդյակների վերադիր զարդարանքներ. Այստեղ, հաճախ, մարդկային դիմանկարը, վարդյակն ու զանազան տիպի վերադիր հյուսվածքները կըպցրել են փորագրված զարդեր ունեցող անոթի վրա և դրանով ավելի գեղեցկացըրել նրա արտաքինը։ Ճիշտ նույն տիպի հախճապակյա անոթներ են գտնվել նաև



Նկ. 204. Փորագիր զարդարանքներ ունեցող հախճապակյա կանաչավուն ափսե, գտնված միջնաբերդի մեծ շինության հորերից մեկում. Ինվ. № 1794/234

Նկար. Ա. Պատրիկի

Անիում և Վրաստանի Դմանիսի քաղաքում։

Դվինի, Անիի և Դմանիսիի այս տիպի հախճապակին միմյանց մեծ չափով նման են և այդ հանգամանքը դարձյալ մատնանիշ է անում Անդրկովկասյան ժողովուրդների կուլտուրական սերտ համագործակցությունը, բայց ինչպես հայտնի է, 12—13-րդ դարերում մի շարք քաղաքներ իրենց զարգացումով Դվինից շատ ավելի առաջ անցան և այդ ժամանակ արդեն նրանք էլ իրենց հերթին առատ կերպով սկսեցին արտադրել հախճապակու բարձր տեսակներ։ Այդ իսկ

Նկ. 206. Հախճապակյա ափսե սպիտակ ջնարակով. վրան կապտավուն ծաղիկներ, գտնված քաղաքի կենտրոնական թաղում

պատճառով սխալ կլինի պնդել, որ վերադիր զարդերով հախճապակին միայն Դվինում է արտադրվել, որովհետև այդ ժամանակ նա կարող էր մեծ չափով արտադրվել նաև Անիում, ինչպես նաև Վրաստանի քաղաքներում։

Վերադիր զարդերի մեջ ամենից շատ տարածվածը թագակիր դիմակների մի քանի ձևերն են, որոնք այնքան ուռուցիկ են, որ ամբողջական գլխի տպավորություն են գործում։ Երբեմն մարդկանց դիմաքանդակներն՝ կպցրել են նույնիսկ ամանների ունկերի ծայրերին։ 1949 թվականի պեղումների ժամանակ Դվինի միջնաբերդում գտնվեց մի կանաչավուն ջնարակով հախճապակյա, ըստ երևույթին, թասի մի բեկոր մորուքավոր մարդու վերադիր դիմանկարով (Նկ. 208)։

Վերադիր զարդերով հախճապակյա անոթների մեջ մեծ թիվ են կազմում երկու կամ չորս ունկ ունեցող խորը քրեզանները, մեծադիր գեղեցիկ սափորները, թասերը և ձևավոր մի շարք այլ անոթներ։ Այս հախճապակին մինչև այժմ բացի Հայաստանից և Վրաստանից որևէ այլ տեղ չի գտնված։

Դվինում 12—13-րդ դարերում արտադրվել է նաև շողյուն ոսկեգույն հախճապակի։ Մինչև այժմ գիտնականներն այդ հախճապակին, որտեղ էլ նա գտնված լիներ, վերագրում էին Պարսկաստանին, գլխավորապես Ռեյ և Սուլթանաբադ քաղաքներին։ Սակայն, մի քանի գյուտերը Անիում և այժմս էլ Դվինում, եկան անհերքելիորեն ապացուցելու, որ այդ տիպի թանկարժեք խեցանոթներ պատրաստել են նաև Հայաստանի Անի և Դվին քաղաքներում, թեև, ինչպես Անիում, այնպես էլ Դվինում, գտնվել են նաև իսկական Ռեյան կարծրախեցի շողյուն խեցանոթներ, իսկ Դվինի և Անիի տեղական արտադրությունն ունի փափուկ խեցի[1]։ Բացի այդ, Դվինում արտադրված անոթների վերջնարակային նկարազարդությունը համեմատաբար ավելի մուգ է։ Այս կերամիկան Դվինում արտադրվել է գլխավորապես արտաքին առևտրի և մասամբ էլ Հայաստանի բնակչության իշխող դասի օգտագործման համար։

Տեղական արտադրության կերամիկայի մեջ անկասկած առաջնակարգ տեղը պատկանում է կիսաթափանցիկ հախճապակուն, որից մեզ հասել են մի քանի ամբողջական թասեր ճիշտ նույն չափերի, ինչ լինում են ծակոտկենները և բազմաթիվ բեկորներ, որոնք ընդհանուր հասկացողություն են տալիս նրանց օրնամենտիկայի մասին։ Այս լուսաթափանց խեցին թրծելուց առաջ, դեռևս լրիվ չչորացած, քանդակազարդվել է ոսկրե սրածայր գործիքով և այնուհետև կաթնագույն ջնարակով պատվելուց և թրծվելուց հետո՝ ստացել է շատ դուրեկան տեսք, իսկ օրնամենտիկան լույսի դիմաց, առանձնապես, լավ է տեսանելի դառնում։

[1] Э. К. Кверфельдт, Керамика Ближнего Востока, Ленинград, 1947, стр 41. Գրքի հեղինակը հիմնվելով Դվինում գտնված շողյուն խեցանոթների վրա, նշում է, որ Հայաստանում ևս արտադրվել է վերջնարակային գունազարդություն ունեցող շողյուն հախճապակի։

Այս տեսակի թասերի լավագույն օրինակները գտնվեցին Դվինում 1949 և 1950 թվականների պեղումների ժամանակ՝ միջնաբերդի ստորին շերտերը հետազոտելու միջոցին, դրանք ամենայն հավանականությամբ պատկանում են 10—11-րդ դարերին։

Այս կերամիկայի օրնամենտիկան բացառապես բուսական է, որը թասի կողերին նեղ կամ լայն շերտով լրիվ գոտի է կազմում։ Այստեղ հետաքրքիրն այն է, որ այս կիսաթափանցիկ կերամիկայից Անիում գտնվել է միայն մի փոքրիկ բեկոր, իսկ այլ տեղերում, ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս, դեռևս չի գտնվել, հետևապես մենք իրավունք ունենք այս միանգամայն ուշագրավ կերամիկան հատկացնել Դվինին։

Բարձրորակ տեղական հախճապակի.— Դվինի կերամիկայի մեջ բացառիկ տեղ է գրավում տեղական արտադրության այն բարձրորակ հախճապակին, որ հայտնի է մի քանի զարդարուն խոշոր սկուտեղների և ափսեների միջոցով։ Սրանք որոշ նմանություն ունեն չինական նույնանման խեցանոթներին, բայց օրնամենտիկան և խեցին տեղական են։ Այս թանկարժեք խեցանոթները գտնվել են միայն միջնաբերդի հորերում, որտեղ պահված են եղել, հավանաբար, պատերազմի վտանգի ժամանակ։

Այսպիսի մեծարժեք սկուտեղներ Հայաստանում գտնվում են առաջին անգամ։ Գտնված սկուտեղները բոլորն էլ միագույն են, գլխավորապես կաթնագույն, բայց մեջերը մի քանի տեղով ունեն կապույտ ցայտքեր։ Միայն մի մեծ ափսե է գտնվել կանաչավուն (փիրուզա) գույնի, որն իր չափերով ավելի փոքր է, քան կաթնագույնները, թեև որևէ այլ բանով չի տարբերվում նրանցից։

Այս սկուտեղներից յուրաքանչյուրի մեջ նկարված է երևակայական որևէ կենդանի՝ հրեշատիպ չորքոտանի գազան, կնոջ դեմքով թևավոր առյուծ, գազանատիպ եղջերու, բադ և այլն, որ քանդակված են սկուտեղը ջնարակելուց և թրծելուց առաջ։ Սրանց միջի քանդակները հասնում են բարձր կատարելության։ Այդ նկարների սյուժեն անշուշտ կապված է եղել տեղական ավանդությունների հետ։

Այս սկուտեղները խիստ մեծ են և նրանց խեցին բավականաչափ կարծր, ամենամեծների տրամագիծը հասնում է մինչև 37 սմ, իսկ ամենափոքրինը՝ 28 սմ։

Ըստ հնագիտական առընթեր նյութի այս սկուտեղները պատկանում են 10—11-րդ դարերին։ Այդ սկուտեղներից մի քանիսի նմանահանությունները դրել ենք 209—212 նկարների մեջ։

Նկ. 207. Հախճապակյա անոթի բեկոր, վերադիր դիմաքանդակներով, գտնված միջնաբերդի մեծ շինության մեջ. ինվ. № 1617/331

Օտար երկրներից բերված թանկարժեք հախճապակի.— Դվինում որոշ չափով գտնըված է օտար երկրներից բերված թանկարժեք հախճապակի, որը բացառապես օգտագործվել է իշխող և ունևոր խավերի կողմից։ Դրա համար էլ այդ հախճապակին տեղական արտադրության թանկարժեք խեցեղենի հետ միասին գտնվում է միայն միջնաբերդում և երբեմն էլ դրսում, քաղաքի ունևոր բնակիչների տներում։

Դվինում գտնվել են մի քանի առաջնակարգ ռեյան առարկաներ, որոնց մեջ աչքի են ընկնում 1939 թվականին միջնաբերդում գտնված իրանական շողյուն հախճապակյա սափորիկը, որն ունի կնոջ դեմքով թռչունի ձև (նկ. 213) և 1946 թվականին նույն



Նկ. 308. Վերադիր զարդերով հախճապակյա անոթներ

Նկար Ա. Պատրիկի

սմ.

Նկ. 209. Հախճապակյա սկուտեղ, կանաչավուն ջնարակով, թևավոր առյուծի փորագիր պատկերով, գտնված միջնաբերդի մեծ շինության հարկաբաժիններից մեկի հորի մեջ
Նկար Ա. Պատրիկի

Նկ. 210. Հախճապակյա կաթնագույն սկուտեղ, կապույտ զարդերով և թռչունի փորագիր պատկերով, գտնված միջնաբերդի մեծ շինության հարկաբաժիններից մեկի հորի մեջ

Նկար Ա. Պատրիկի

սմ.

Նկ. 211. Հախճապակյա կաթնագույն սկուտեղ, կապույտ ջնարակի ցայտքերով և երևակայական փասանի փորագիր պատկերով, գտնված միջնաբերդի մեծ շինության հարկաբաժիններից մեկի հորի մեջ. ինվ. № 1794/473

Նկար Ա. Պատրիկի

Նկ. 212. Հախճապակյա կաթնագույն սկուտեղ՝ կապույտ ջնարակի ցայտքերով և երեսակայական գազանի փորագիր պատկերով, գտնված միջնաբերդի մեծ շինության հարկաբաժիններից մեկի հորի մեջ

Նկար Ա. Պատրիկի

տեղում գտնված մեծադիր քրեղանը, որի հատակին կան մարդկային երկու կերպարներ, իսկ կողերին և շուրթերին՝ արաբերեն 2 տող ընդարձակ արձանագրություն և քուֆի գրերի նմանող զարդարանքներ, որոնց միջև ընկած տարածությունը լրացված է բուսական օրնամենտներով։ Ամանը դրսից ևս զարդարված է բուսական նախշազարդերով։ Կան այդպիսի ամանների բազմաթիվ արձանագրած և անարձանագիր բեկորներ, որոնք ենթակա են հատուկ ուսումնասիրության։

Դվինում գտնվել է նաև իրանական բազմագույն նկարազարդ հախճապակի։ Այս կարգի գյուտերի մեջ աչքի է ընկնում մի թաս (թերի), որի հատակին երևում է ուղտի պատկեր, իսկ կողքերին՝ մարդկանց նկարի մնացորդներ։

Այստեղ հետաքրքիր է մի այլ երևույթ ևս. Անիում, բագրատունյաց պալատների պեղման ժամանակ գտնվել են չինական սելադոնի բազմաթիվ բեկորներ։ Դրան հակառակ, Դվինում, որ ավելի մեծ քաղաք է եղել և շատ մեծ չափերով է մասնակցել միջազգային առևտրին, չինական արտադրության սելադոն, գտնվել է միայն մի քանի կտոր։ Մեր կարծիքով այս երևույթը պատահականության արդյունք չէ, այլ ապացույց է այն բանի, որ Դվինում սելադոն գրեթե չեն գործածել։

Դվինի պալատում սելադոնին փոխարինել է տեղական արտադրության կիսաթափանցիկ և բաց-ձրարվեստ կերամիկան, որ դժվարությամբ է զանազանվում ճենապակուց.

Ճարտարապետական կերամիկա.—Դվինի շինարարության մեջ կավը էական դեր է խաղացել։ Կավակերտ էին ոչ միայն հասարակ շենքերը, այլև պալատներն ու բերդերը։ Բնակելի տների պատերը շերտ առ շերտ կավով բարձրացրել են ճիշտ այնպես, ինչպես այժմ ցեմենտ-բետոնն է արվում։ Շենքերի ծածկերն ու աղքատիկ տների հատակը ևս կավակերտ են եղել։ Սենյակների հատակի և շենքերի կտուրների կավը հարթ շերտով փռելուց հետո, դեռևս լավ չչորացած վիճակում մամլել են քարե հատուկ գլանով և թակերով՝ կավի շերտն ամրացնելու համար։ Քիչ թե շատ բարեկեցիկ իճակ ունեցող քաղաքացիների բնակարանների հատակը պատել են մեծադիր կավե աղյուսներով։ Շենքերի ինչպես ստորին, այնպես էլ բարձրադիր հարկերը տախտակե հատակ չեն ունեցել, ոչ միայն քաղաքի հետամնաց թաղերում, այլև միջնաբերդում։ Տախտակե հատակով շենքեր չեն գտնվել նաև Անիում և Ամբերդում։ Նշանակում է, տախտակե հատակի հասկացողությունը չի եղել միջին դարերում։ Հանդիսավոր շենքերի մեջ աղյուսե հատակի փոխարեն սովորություն է եղել քարե սալահատակ անելը (եկեղեցիներ, միջնա-

Նկ. 213. Թռչնաձև իրանական հախճապակյա անոթ, կաթնագույն ջնարակի վրա շողյուն գունազարդությամբ, գտնված միջնաբերդի մեծ շինության մեջ

բերդի որոշ հարկաբաժիններ, 4-րդ տեղամասի մեծ շինությունը և այլն)։ Բայց, այդ չի նշանակում, թե միջին դարերում աղյուսի կամ քարի վրա են նստել կամ կանգնել մարդիկ։ Նրանք կավակերտ սենյակներում հատակի վրա փռել են եղեգնահյուս խսիր և նրա վրա ծածկել զանազան բանվածքներ՝ կապերտ կամ գորգ։ Դվինի միջնաբերդում և նրա հյուսիսային լանջին պեղված խորշազարդ սենյակի հատակին գտնվեց խսիրի արդեն փտած մնացորդ՝ հատակին փռած վիճակում։

Միջնաբերդի որոշ տեղերում հատակը ծածկված է եղել կանաչ ջնարակով պատած շքադյուսով, որի մնացորդները երևում են տեղում։ Կարծում ենք, որ այդ շքադյուսն օգտագործվել է այնպիսի հարկաբաժիններում, որտեղ խսիր կամ որևէ

բանվածք հարմար չէր փռել, ինչպես օրինակ՝ շքամուտքի միջանցքներում և նախասենյակներում։ Ջնարակած աղյուսի կտորտանք շատ կան թափթփված միջնաբերդի գագաթին և լանջերին, որ մատնանիշ է անում այդ շքաղյուսի զգալի չափով գործածված լինելուն իբրև հատակի շինանյութ։

տեսակները սահմանափակ են և նրանց չափերն զգալի կերպով ստանդարտի ենթարկված։

Տաշած աղյուսների գոյությունը հետաքրքիր է մի այլ տեսակետով ևս։ Հարցն այն է, որ, ըստ երևույթին, Դվինի աղյուսի արհեստանոցները որմնաղյուսի սովորական ձևերը մասսայաբար արտադրելով

Նկ. 214. Իրանական նախճապակյա թրեզան, սպիտակ ջնարակի վրա ոսկեգույն շողյուն գունազարդությամբ, գտնված միջնաբերդի մեծ շինության հարկաբաժիններից մեկում, ցրիվ եկած վիճակում

Կերամիկան Դվինում մեծ չափերով օգտագործվել է նաև իբրև պատի հարդարանք, գլխավորապես շենքի ներսը ձևավորելու համար։ Միջնաբերդի պալատական շենքերում օգտագործվել են զանազան երկրաչափական ձևերի աղյուսներ, որոնցից շատերի վրա երևում են տաշվածքի հետքեր։ Դրանից կարելի է ենթադրել, որ այդ աղյուսների բարդ ձևերը երբեմն վարպետներն իրենք են տաշել շարելու ժամանակ, իսկ հիմնական ձևերը, պարզ է, որ արտադրվել են աղյուսի գործարաններում։ Դվինում, ամենայն հավանականությամբ, այդ ձևավոր աղյուսները մասսայաբար է արտադրվել և վաճառվել շենք կառուցողներին։ Այդ է պատճառը, որ աղյուսների ձևերի

հանդերձ, ձևավոր աղյուսների հատուկ պատվերներ չէին ընդունել, որովհետև, եթե այդպիսի պատվերներ ընդունեին, այն պարագային հարդարողները հարկադրված չէին լինի որոշ տեսակները հենց շարելու միջոցին տաշելու և ձև տալու, այլ բոլոր տեսակներն էլ կպատվիրեին արհեստանոցին։

Այսպիսի աղյուսներով զարդարված են եղել ոչ միայն բնակելի շինությունները, այլև հասարակական մեծ կառույցները։ Օրինակ՝ 4-րդ տեղամասում բացված մեծ շինության սենյակների մեջ գտնվեցին հազարավոր այդպիսի կարկառուն որմնաղյուսներ, բայց այդ շենքը բնակելի չէր, որովհետև այնտեղ ոչ մի կենցաղային առարկա և տնային իր չգտնվեց։ Միջնա-

բերդում գտնված այդ աղյուսաշեն որմնազարդի բեկորների նմուշները ցույց ենք տվել № 101—104 նկարների մեջ։

Բացի ձևավոր աղյուսներից, Դվինում գտնվել են նաև 25×12 սմ մեծության սովորական թրծած աղյուսներ, որոնց երեսին կան բավականին խորն ընկնող ձուլածո զարդարանքներ, վարդյակներ և աստ-

գտնվող Տիկնունի ամրոցում, որտեղ, ըստ երևույթին, 12—13-րդ դարերում ապրել են արաբ պաշտոնյաներ կամ իշխաններ։

Դվինում, ի միջի այլոց, պատերի հարդարանքների մեջ քիչ քանակությամբ օգտագործվել է նաև ապակի։ Խճանկարների ոսկեգույն զարդարանքներն ապակու վրա են արված և, բացի այդ, ապակին գործադըր-

Նկ. 215. Թրծուն կղմինդրե հատակ՝ քաղաքի կենտրոնական թաղի դարբնոցում

ղեր։ Այդ աղյուսները գտնվել են (նկար № 106) տեղահան վիճակում միջնաբերդում և ստորին բերդում, այդ պատճառով էլ այժմ դժվար է որոշել նրանց գործադրված տեղը, բայց հավանաբար այդ աղյուսներով զարդարված են եղել պալատական շենքերի արտաքին պատերի որոշ մասերը։

Շենքերի ներքին հարդարանքների համար ձևավոր աղյուսների հետ միասին օգտագործվել է նաև գիպսե ձուլածո և փորագիր օրնամենտը, իսկ հախճապակյա կամ ջնարակած կավե բազմերանգ հարդարանքը, որ այնքան տարածված է եղել միջնադարյան Արևելքում, Դվինում բոլորովին չի գտնվել։ Այդպիսի հարդարանքի բեկորներ շատ կան Դվինից դեպի հյուսիս

վել է նաև գիպսե ձուլածո կենդանակերպ որմնազարդերի մեջ իբրև կենդանիների աչքեր, թագերի զարդարանքներ և այլն։ Դրանք բազմերանգ ապակուց շինված կոնաձև կամ կիսագնդաձև առարկաներ են, որոնք ունեն 1—2 սանտիմետր մեծություն։ Հետաքրքիրն այն է, որ այս ապակե կըտորները Դվինի միջնաբերդի վերին շերտում բոլորովին չեն գտնվում, այլ միշտ հանդես են գալիս ավելի մեծ խորության մեջ, աղյուսե մեծ շենքի շերտերում։

Դվինում կերամիկան օգտագործվել է նաև շենքի ծածկի համար։ Կաթողիկե եկեղեցու ծածկի կղմինդրը երևացող տեղերում ներկված է եղել կարմիր գույնով, ճիշտ այնպես, ինչպես ներկվել են դրոշմազարդ կարասներն ու փոքրիկ ամանները։



Նկ. 216. Միջնաբերդի մեծ շինության հատակի աղյուսի և ջրատար փողրակի չափերը
Չափագրությունը Գր. Քոչոյանի

Դվինում արտադրված ծածկի կղմինդրը ձուլված է հատուկ կաղապարներում։ Նա բաժանվում է երկու տեսակի՝ մի տեսակը, որ տափակ է, իրար կողքի է շարվել շարքով, իսկ մյուս տեսակը, որ կիսագլանաձև է, հագցվել է իրար կողքի դրված տափակ կղմինդրների միացման տեղերի վրա՝ վերևից ներքև, ուստի և անձրևաջուրն արդեն ոչ մի տեղից հնարավորություն չի ունեցել թափվելու շենքի մեջ և տափակ կղմինդրների վրայով ծածկից հոսել է ներքև և թափվել շենքի շրջապատի վրա։ Ծածկի կղմինդրը երկաթե գամերով ամրացվել է տանիքի կրաշաղախին և բոլոր նշաններից երևում է, որ նա օգտագործվել է միայն թաղակապ քար ու կիր ծածկի համար և ոչ մի հարմարություն չի ունեցել փայտե ծածկ ունեցող շենքերի տանիքների վրա գործադրվելու։

Դվինի ծածկի կղմինդրի ձևերը ցույց ենք տվել №№ 217 և 218 նկարների մեջ։ Շենքերի մեջ օգտագործվել է նաև կավե փողրակ, պատի միջով ծուխը վերև բարձրացնելու, հորերի մեջ ջուր լցնելու, աղբյուրների համար և այլն, որոնց ձևերը ներկայացրել ենք № 218 նկարի մեջ։

Նկ. 217. Կաթողիկե եկեղեցու ծածկի կղմինդրի օրինակներ

Կավե այլ առարկաներ.—*Կավը Դվինում օգտագործվել է նաև բազմաթիվ այլ նպատակների համար։ Բերենք մի քանի օրինակ։*

1. 1949 թվականին կաթողիկե եկեղեցու հյուսիս-արևմտյան կողմում բացվեց բրուտի մի արհեստանոց, որտեղ գտնըվեցին կավից պատրաստած երկու նույնանման դուրգ, որ որոշ տեղերում մինչև այժմս էլ օգտագործվում է կավե ամաններ շինելու համար։ Այդ դուրգը կավե մի սկավառակ է, 23 սմ տրամագծով, որն աման շինողին ծառայել է իբրև պտտվող սեղան։ Բրուտը դրա վրա է դրել կավը և շինել իր ամանները։ Սկավառակի տակ կա գլանաձև մի մաս, մոտ 12 սմ երկարությամբ, որ ծառայել է իբրև առանցքակալ՝ դուրգը հորի մեջ գտնվող ծանր թափանիվին միացնելու համար։ Բրուտն իր ոտների շարժումով պտտեցրել է հորի միջի թափանիվը, որի հետ պտտել է նաև դուրգը։ Այս դուրգի պատկերը զետեղել ենք № 219 նկարում[1]։

[1] *Մինչև այժմս էլ Վրաստանում հանդիպում են այդպիսի դուրգեր։ Տե՛ս Լ. Բոչորիշվիլու հոդվածը* საქართველოს სახელმწიფო მუზეუმის მოამბე, თბილისი, XIV-B, 1947, էջ 404.



Նկ. 218. Կաթողիկե եկեղեցու ծածկի կղմինդրի և ջրատար փողրակի չափեր
Չափագրություն Գր. Քոչոյանի

2. Դվինում 1938 թվականին գտնվեց 10×13 սմ մակերեսով և 3,5 սմ բարձրությամբ կավե մի ներկաման, որն իր երեսին ունի երեք փոսիկներ, մեկը՝ մեծ, 3 սմ տրամագծով, իսկ երկուսը՝ փոքր, յուրաքանչյուրը 2-ական սանտիմետր տրամագծով։ Փոքր փոսիկներից մեկի մեջ երևում է կարմիր ներկի, ամենայն հավանականությամբ որդան կարմրի մնացորդը, իսկ մյուս փոքրի մեջ երևում է կապույտ ներկի հետք։ Ըստ երևույթին, մեծ փոսիկը լցված է եղել սև գույնի ներկով, որը, սակայն, մնացորդ չի թողել ամանի մեջ։ Երեք գույների առկայությունը ներկամանի մեջ միանգամայն հասկանալի կլիրեն արձանագրություն՝ բոլորաձև երկաթագրի և բոլորգրի խառնուրդով, որից հասկացվում է, որ ներկամանի տերը ոմն Ստեփանոսն է եղել։ Այս ներկամանը, որը մինչև այժմ եզակի օրինակ է հին դարերից մնացած, գտնվել է կաթողիկոսական պալատի հարավային մուտքի մոտ, վեհարանի նախասենյակում և ըստ գրի հնագրական առանձնահատկությունների, պատկանում է մարզպանական Հայաստանի վերջին շրջանին, յոթերորդ դարի առաջին տասնամյակներին։

3. 1950 թվականին միջնաբերդի № 19 սենյակի հորում գտնվեց հում կավե մի խիստ հետաքրքիր կնքադրոշմ, որով կնքել



Նկ. 219. Բրուտի դուրգ, գտնված քաղաքի կենտրոնական թաղում
Նկար Ա. Պատրիկի

նի, եթե նկատի առնենք մեր հնագույն ձեռագիր մատյանները, որոնց մեջ բնագիրը սև ներկով էր գրվում, իսկ սկզբնագրերն ու զարդագրերն այլ գույներով։

Ներկամանի վրայի եզրագծից երևում է, որ նա ունեցել է կավե հաստուկ կափարիչ, որը, սակայն, մեր ձեռքը չի հասել, բայց կան մի քանի կափարիչներ, մի քիչ ավելի մեծ կամ փոքր չափի, որոնք իրենց նիստով միանգամայն հարմար են ներկամանը փակելուն։ Այդ երևույթը ցույց է տալիս, որ այդպիսի ներկամանները սովորական են եղել Դվինում, գուցե և ամբողջ Հայաստանում։

Ներկամանի մի կողքի վրա կա հայերեն միջնաբերդի կարևոր դռներից մեկը։ Այդ կնքադրոշմը 2,5 սմ տրամագիծ ունեցող մի կլորակ է, որի երեսի կողմն ուռուցիկ է, իսկ տակինը՝ տափակ։ Կնքադրոշմի միջով, մի կողմից դեպի մյուսը անցք է արված կնիքի թելն անցկացնելու համար՝ մի կողմում երկու և մյուսում մեկ, ինչպես այժմյան սովորական կապարե պլոմբներն են ունենում։ Կնքադրոշմը կնքված է երեսի ուռուցիկ կողմում երեք տարբեր ձևածիր կնիքներով, որոնցից մեկը և համեմատաբար մեծը կենտրոնումն է, իսկ մյուս երկուսը՝ կողքերին։ Կենտրոնական դրոշմը պատկերում է խաչի նշան, իսկ կողքի երկու դրոշմներից մեկն ունի վա-

բազի պատկեր, և մյուսը՝ խոպոպավոր թռչուն (տես նկ. № 221)։

Կնքադրոշմի վրա երեք տարբեր անձերի կնիք դնելն ապացույց է այն բանի, որ կնքվող դուռն ունեցել է մեծ կարևորություն և նա եղել է պետական գանձարանի կամ նրան հավասարվող որևէ այլ պետական պահեստի դռան վրա։

Հնոցը պահպանվել է խիստ քայքայված վիճակում։ Հնոցի քանդվելուն մեծ չափով նպաստել են նրա մոտով հոսող փոքրիկ գետակը և երբեմն-երբեմն առաջացող հեղեղները։ Այնուամենայնիվ տեղում պահպանված հիմնապատերից երևում է, որ հնոցն ունեցել է բոլորակ ձև և նման է եղել մինչև

Նկ. 220. Ներկաման, գտնված քաղաքի կենտրոնական թաղում. ինվ. № 1617/33
Նկար Ա. Պատրիկի

Նկ. 221. Կնքադրոշմ, գտնված միջնաբերդի ներքին շերտերում
Նկար Լ. Սադոյանի

Դրոշմներից երևում է, որ կնիքները զետեղված են եղել մատանիների վրա և պատկանել են պետական պաշտոնյաների, ըստ որում խաչի նշանով կնիքը պատկանել է երեք անձերից ամենակարևոր պաշտոնյային, որովհետև նա իր կնիքը դրոշմել է մյուս երկու պաշտոնյաներից հետո, հենց կնքակալի կենտրոնում։

Գտնված հարակից առարկաները ցույց են տալիս, որ կնքադրոշմը պատկանել է 9—10-րդ դարերին և վերաբերվել է հումաղյուսով շինված մեծ շենքին։

Բրուտի հնոց.—*Դվինում 1947 թվականին հայտնաբերվեց բրուտի մի հնոց, որը գտնըվում էր այժմյան Բզովան գյուղից դեպի հարավ, մոտավորապես կես կիլոմետր հեռավորության վրա, փոքրիկ գետակի ափին։ Այդ հնոցը, ինչպես երևում է նրա մնացորդներից, վերաբերում է քաղաքի գոյության վերջին շրջանին (13-րդ դարին), որովհետև նրա հիմքերի տակ երևում են 12—13-րդ դարերին պատկանող խեցանոթների բեկորներ։*

վերջերս Հայաստանի տարբեր շրջաններում գործածվող բրուտի հնոցներին։ Այժմյան Յուվա գյուղում էլ օգտագործվում են նման բոլորակ հնոցներ։ Այդպիսի երկու հնոց 1940 թվականին բացվել են նաև Ղրիմի թերակղզու վրա, Խերսոնեսի պեղումների ժամանակ, որոնք վերագրվում են 11—12-րդ դարերին[1]*։*

1950 թվականին Դվինի միջնաբերդում 18-րդ սենյակի խորացման աշխատանքների ժամանակ, մոտ 5 մետր խորության մեջ, բացվեց բրուտի հնոցի մի շատ հետաքրքիր մնացորդ, որի գոյությունը միջնաբերդում ցույց է տալիս, որ արքունական տներն իրենց մոտ ունեցել են ամեն տեսակ արհեստավորների խմբեր։

Այստեղ ևս հնոցից մնացել էր նրա հիմնապատերի միայն մի փոքր մասը, որովհետև հնոցը զետեղված լինելով միջնաբերդի գագաթի եզրին, լանջի սահանքի հետ փուլ էր եկել նրա մեծագույն մասը, իսկ

[1] А. Л. Якобсон, Средневековый Херсонес (XII—XIV вв.), стр. 161.

տեղում պահպանված մասը, որ ցույց ենք տվել № 222 լուսանկարի մեջ, հազիվ մնացել էր 12 շարք աղյուսի բարձրությամբ։

Հնոցի պատերի խիստ կանոնավոր շարվածքից և նրա միջնաբերդում գտնվելու հանգամանքից պետք է եզրակացնենք, որ նա Դվինի լավագույն հնոցներից մեկն է եղել և նրա մեջ թրծել են պալատում գործածվող բարձրարժեք կերամիկական առարկաները։

Հնոցի պատերը բոլորակ չեն, այլ ուղիղ։ Նշանակում է, որ հնոցն ունեցել է քառանկյունի տեսք։ Նման մի քառանկյունի հնոց էլ 1932 թվականին բացվել է Բուլղարիայի Մադարա գյուղի մոտ, որն անհամեմատ լավ վիճակում է պահպանված, քան Դվինինը, ուստի նրա հատակագիծը վերարտադրում ենք այստեղ՝ Դվինի հնոցի մասին ընդհանուր հասկացողություն կազմելու համար։ Մադարայի հնոցն, ըստ ուսումնասիրողների, պատկանում է 9—10-րդ դարերին։ Դվինի միջնաբերդի հնոցը ևս ճիշտ նույն ժամանակներին պետք է վերագրենք, որովհետև նա ժամանակակից է միջնաբերդի պալատի ներքին շերտերում բացված հում աղյուսից կառուցված պալատական մեծ շինության։

Եզրակացնում ենք, որ բրուտի հնոցի այս գյուտերն արժեքավոր են Դվինի համար, որովհետև հասկացողություն են տալիս միջնադարյան մի այնպիսի կարևոր գործի մասին, ինչպիսին է խեցեղեն անոթների թրծումը։

Նկ. 222. Բրուտի հնոցի ավերակները միջնաբերդում

ԱՊԱԿԵ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Դվինի պեղումների ընթացքում գտնվել են բազմաթիվ ապակե առարկաներ, մեծ մասամբ գեղեցիկ թասեր, փոքրիկ և մեծ շշեր, բաժակներ, բանկաներ, երկարավիզ սափորիկներ, գավաթներ, սրվակներ, ապարանջանների բազմաթիվ տեսակներ, ապակու հարթ բեկորներ, ուլունքներ և այլ առարկաներ, որոնց մեջ, չնայած ապակու դյուրաբեկության, կան մի քանի ամբողջական առարկաներ։ Այդ տեսակետով ուշագրավ է 1949 թվականին միջնաբերդի № 3 սենյակի խորացման ժամանակ դուրս եկած ամբողջական գեղեցիկ թասը, որ լրիվ չափով պահպանել է նաև իր թափանցիկությունը։ Սա ունի 12 սմ տրամագիծ և 6 սմ բարձրություն, փոքր քիչ

ուռած է և տակն ունի մոտ 0,8 սմ հաստությամբ օղակաձև նստուկ։ Ապակու գույնը քիչ կանաչավուն է և փորի վրա ունի բուսական վերադիր օրնամենտ։ Ապակե անոթների մեծագույն մասը, սակայն, իրենց թափանցիկությունը հողի մեջ կորցրել են՝ նրանց երեսի շերտը քայքայվել է և այդ քայքայված ու շերտավորված մա-



Նկ. 223. Հատակաձև՝ Բուլղարիայում գտնված բրուտի հնոցի (ըստ Յակոբսոնի)

կերեսն ստացել է արծաթի գույն։

Դվինում գտնված ապակե առարկաները, բացի վերադիր զարդերից, ունեն նաև ձուլածո զարդեր՝ ամանի հետ միասին

Նկ. 224. Վերադիր զարդերով ապակե թաս, գտնված միջնաբերդում

ձուլված։ Որոշ անոթներ ունեն նաև ապակու վրա արված բազմերանգ նկարազարդություն և զանազան հյուսածո օրնամենտներ։

Այստեղ մենք թեև ապակու մասնագիտական քննությունը չենք կատարում, բայց այնուամենայնիվ պետք է նշենք,

Նկ. 223. Վերադիր զարդերով ապակե անոթ, գտնված միջնաբերդում

որ ուսումնասիրողները մինչև այժմ, Հայաստանում գտնված ապակու ծագումը վերագրել են Միջերկրական ծովի արևելյան ափերին՝ Փյունիկիային և Եգիպտոսին։ Կարծում ենք, որ այդ տեսակետն այժմ կարիք ունի վերանայման, որովհետև, ըստ մատենագրական տեղեկությունների, Հայաստանում մեծ չափով օգտագործվել է Կիլիկյան Հայաստանում արտադրված ապակին, որի ամենալավ տեսակն արտադրվել է Սիս քաղաքում։ Իսկ Դվինում ապակի արտադրվել է թե ոչ, թեև առայժմ պարզված չէ, բայց մեր թվականության սկզբներին Վաղարշապատում արտադրվել է, որին մենք ծանոթ ենք այնտեղի գերեզմաններից դուրս եկած սրվակների միջոցով։ Բացի այդ, Ագաթանգեղոսի պատմությունից տեղեկանում ենք, որ 4-րդ դարի սկզբին Վաղարշապատում Հռիփսիմյանց կույսերն զբաղվել են ապակեգործությամբ։

Ծաղկի ոսկուջրով զարդարված ապակե անոթի բեկորի գյուտը Դվինում ցույց է տալիս, որ միջին դարերում, հատկապես 7-րդ դարում, Դվինն ունեցել է նաև ապակու բարձրարվեստ արտադրություն։

ԴՐԱՄՆԵՐ

Դվինում պեղման բոլոր տարիների ընթացքում գտնվել է 400 դրամ, որոնցից 25-ը ոսկի է, 122-ը արծաթ, իսկ մնացած 253-ը պղինձ։ Պղնձե դրամները մեծ մասամբ գտնվել են առանձին-առանձին, եր-

բեմի միայն մի քանի հատը միասին, փոքրիկ գանձերի ձևով։

Մեր կարծիքով, պղնձե դրամների խմբական գյուտերն արդյունք են ոչ թե պահելու նպատակով հավաքված ժողովածուների, ինչպես արծաթե և ոսկե դրամների գանձերը, այլ պատահականորեն մի տեղ են կուտակվել իրենց տիրոջ առօրյա գործառնությունների ընթացքում, որովհետև դրամ կուտակողը երբեք պղնձե դրամ չէր հավաքի պահելու համար, այլ պղինձը կփոխեր արծաթի կամ ոսկու և վերջինը կպահեր։ Այդ է հիմնական պատճառը, որ պղնձե դրամների մեծագույն մասը գտնվել է հատ-հատ, կամ երբեմն էլ մի քանի հատ միասին, իսկ դրան հակառակ, 122 արծաթ դրամներից 115-ը միասին են գտնվել մի գանձի մեջ, 2-ը՝ մի այլ տեղում և միայն մնացած 5-ը՝ առանձին-առանձին։ Ոսկի դրամների մասին դժվար է որևէ խոսք ասել, որովհետև նրանց մեծ մասը պատահական գյուտերի արդյունք են և գտնողները շատ դեպքերում ճիշտ տեղեկություններ չեն տվել քանակի մասին։ Բայց և այնպես մեր ձեռքը հասած 25 դրամներից 22-ը խմբական գյուտի արդյունք են, որոնցից 12-ը պատկանում են Այգեստան գյուղի, իսկ 10-ը վերին Արտաշատ գյուղի մոտ գտնված գանձերին[1]։ Մնացած երեք ոսկե դրամները գտնվել են հատ-հատ պեղումների ժամանակ։

Պղնձե դրամներից երկուսը հռոմեական են, կայսերական շրջանից, 5-ը՝ բյուզանդական, 63-ը՝ արաբական և պատկանում են աբասյան հարստության, մեկը՝ Միջագետքի էյուբյաններին (1200—1245), 52-ը՝ Ադրբեջանի իլդիգիզյան աթաբեկներին և պարսկական քաղաքներին, 7-ը՝ վրացական, ըստ որում վրացականներից մեկը պատկանում է Դեմետրե 2-րդին (1270—1289), իսկ 6-ը՝ Թամար Թագուհուն և Դավիթ Սոսլանին (1200 թ.)։

Բացի այդ, Դվինում գտնվել են ուշ ժամանակների ռուսական 3 դրամ և թյուրքական 1 դրամ։ Անորոշ են մնում խիստ մաշված կամ մեզ անծանոթ 118 դրամ, որոնց մի մասն արաբատառ է և պատկանում է զանազան մանր էմիրությունների[1]։

Արծաթե դրամների ընդհանուր թիվը, ինչպես ասացինք, 122 է, որից 115-ը մի գանձ է՝ մի քանի մարգարտի հետ լցրած մի տոպրակի մեջ, որ 1947 թվականին գտնվեց կաթողիկե եկեղեցու հարավ-արևմըտյան անկյունի մոտ, 17-C քառակուսու մեջ։

Այդ գանձի դրամները բոլորն էլ պատկանում են բյուզանդական Հերակլ կայսեր, ըստ որում 106-ը կտրված են Հերակլի և նրա որդի Հերակլիոս Կոստանդինոսի անունով (610—641 թթ.), իսկ 9-ը՝ Հերակլ կայսրի և նրա որդիների՝ Հերակլիոս Կոստանդինոսի և Հերակլիանոսի անունով (638—641)։ Ամենայն հավանականությամբ այդ գանձը պատկանել է կաթողիկե եկեղեցու միաբաններից մեկին, որն արաբների կողմից Դվինը գրավելու ժամանակ թաքցրել է այդտեղ, բայց հետո հնարավորություն չի ունեցել այնտեղից դուրս բերելու՝ սպանվելու կամ գերի գնալու պատճառով։

Արծաթե մնացած 7 դրամներից 2-ը հռոմեական են և պատկանում են Օգոստոս Օքտավիանոս կայսեր (30 թ. մ. թ. ա. 14 թ. մեր թվականութ.), 1-ը Սասանյան Պարսկաստանինն է, 1-ը՝ աբասյան խալիֆներին, 1-ը՝ օմայան հարստության Վալիդ 1-ին խալիֆին (705—715), 1-ը՝ դարձյալ օմայան հարստության շրջանում է (661—750) կտրվել Արմենիայի անունով՝ նրա Դվին մայրաքաղաքում և վերջապես, մեկն էլ՝ պատկանում է սելջուկներին։

Ոսկե դրամները բոլորն էլ բյուզան-

---

[1] Այս երկու գանձերն էլ ըստ տեղեկությունների՝ շատ են եղել և գյուղացիները գտել են դաշտային աշխատանքների ժամանակ հնում և բաժանել իրար մեջ, որից միայն մի մասն է հետագայում թանգարան մուտք գործել գնման միջոցով։ Նման մի գանձ էլ գտնված է եղել 1918 թվականին Թոփաղկալա գյուղի մոտ, բայց նրանից ոչ մի դրամ մեր ձեռքը չի հասել, սակայն գտնողների պատմածից կարելի է եզրակացնել, որ նա բաղկացած է եղել մոտ 300 բյուզանդական ոսկե դրամներից։ Մոտակա գյուղի բնակիչները պատմում են նաև դրամական այլ գանձերի գյուտի մասին։

[1] Պրոֆեսոր Ե. Ա. Պախոմովը 1945 թվականին Մոսկվայում հրավիրված Համամիութենական առաջին հնագիտական խորհրդակցության նիստերից մեկում կարդաց մի զեկուցում, որը նվիրված էր Դվինում կտրված արաբատառ դրամներին։

դական են։ Դրանցից մեկը պատկանում է Արտեմիոս-Անաստասիոս կայսրին (713—716 թթ.), 4-ը՝ Կոստանդին 9-րդ Մոնոմախին (1042—1055), 11-ը՝ Կոստանդին 13-րդ Դուկային (1059—1067) և 9-ը՝ Ռոմանոս 4-րդին ու նրա Եվդոկիա, Միքայել և Կոստանդին որդիներին (1067—1070)[1]։

Վերևում բերված տեղեկություններից երևում է, որ արաբական տիրապետության շրջանում արծաթ և ոսկի դրամ Հայաստանում գրեթե չի գտնվել։ Դա հետևանք է այն հարկային դաժան քաղաքականության, որ արաբները վարում էին Հայաստանում և դրամը, ինչպես նաև ամեն տեսակի հարստություն, տանում էին իրենց երկիրը։ Այլապես անբացատրելի կլինի, թե ինչու Արաբական խալիֆների գերիշխանության ողջ ժամանակաշրջանից Դվինում գտնվել է միայն մի արծաթե դրամ, իսկ մնացածն ամբողջովին պղնձե մանր դրամներ են։ Արաբների ժամանակ դրամի պակասը Հայաստանում առաջ էր բերել ապրանքների աներևակայելի էժանություն, որովհետև մանր հարկերը միայն դրամով էին վերցնում։

Արաբ մատենագիր Ալ Իստախրին թվելով Հայաստանի քաղաքներն, ավելացնում է.—

> «Այդ քաղաքներում գներն այնքան էժան են, որ մի քանի տեղերում ոչխարի արժեքը մինչև երկու դիրհեմ է, իսկ մեղրի արժեքը մի քանի տեղերում հասնում է այն բանին, որ երկու կամ երեք մանան արժենում է մի դիրհեմ»[2]։

Այդ աներևակայելի էժանությունը, ինչպես ասացինք, առաջ էր գալիս անհնարին չափերով բնակչության վրա դրամական հարկեր դնելու պատճառով։ Ըստ տեղեկությունների, Հայաստանը խալիֆաթին տալիս էր տարեկան 4.000.000 դիրհեմ տուրք։

Միքայել Ասորին գրում է, որ մարդիկ էշը և եզը մի-մի դրամով էին վաճառում, իսկ իրենց երեխաներին՝ հինգ դրամով, որպեսզի մանր հարկեր վճարեն։

> «Վաճառէին զէշ և զեզն ընդ դրամի միոյ և կողայս ընդ հինգ դրամի. զի տացեն հարկս պահանջողացն»[1]։

Այդ է պատճառը, որ արաբական տիրապետության շրջանից Դվինում միայն պղնձե մանր դրամներ են գտնվել, մանավանդ որ, այդ ժամանակ արաբական առևտրի գլխավոր ճանապարհները դեպի Բյուզանդիա փակ էին արաբների և Բյուզանդական կայսրության միջև տեղի ունեցող կռիվների պատճառով, իսկ արծաթե և ոսկե դրամը այդ ժամանակներում հազվագյուտ էր նույնիսկ նախարարական տներում ու եկեղեցում, որոնք նույնպես զրկել էին մանր տուրքերի տակ և հաճախ կողոպուտի էին ենթարկվում սանձարձակ արաբ պաշտոնյաների կողմից։

Դրան հակառակ, Դվինում գտնված պղնձե դրամների մեծագույն մասը և գրեթե ոսկե դրամների ողջ ժողովածուն պատկանում են 11-րդ դարին, երբ վաճառականությունը համեմատաբար ազատ էր և փոխանակային կապիտալը մեծ չափերի էր հասել։

Այստեղ հարց է առաջանում, թե ինչու բագրատունյաց շրջանից, երբ միջազգային առևտուրը մեծագույն չափերի էր հասել և երկրի ներսում զարգացել էր դրամական շրջանառությունը, ոսկե և արծաթե դրամներ մեզ չի հասել։

Դրա պատճառը, կարծում ենք, պետք է որոնել բագրատունյաց անկումից անմիջապես հետո առաջ եկած մասսայական գաղթականության մեջ, երբ ամեն մի ունևոր ընտանիք թողնում էր իր երկիրն ու հեռանում Բյուզանդիա և այլ երկրներ, իր հետ տանելով կուտակած գանձերը, նույնիսկ գաղթվողներն իրենց ինչքը ծախելով ոսկու և արծաթի էին վերածում ու հետները տանում իրենց նոր բնակավայրը։

Դվինում մոնղոլական դրամների գրեթե իսպառ բացակայությունը ապացույց է այն բանին, որ նրանց արշավանքի հենց սկզբին հիմնահատակ կործանվեց քաղաքը և այնուհետ քաղաքային կյանքը միան-

---

[1] Արաբատառ դրամների որոշման մեջ մեզ օգնել է Պատմական թանգարանի դրամագետ ընկ. Ա. Շահնազարյանը։

[2] СМОМПК XXIX, էջ 27։

[1] Միքայել Ասորի ժամանակագրություն, Երուսաղէմ, 1870 թ., էջ 363։

զամայն դադարել է գոյություն ունենալուց։

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ

(Անասնապահություն և որսորդություն)

Պեղումների ընթացքում դուրս են եկել մեծ քանակությամբ զանազան կենդանիների ոսկորներ, որոնց ուսումնասիրությունը կարող է որոշ չափով լույս սփռել այն ժամանակվա կենդանական աշխարհի վրա և պարզել, թե հին դվինցիք ինչ կենդանիներ են պահել և ինչ կենդանիներ որսացել։ Դժբախտաբար պեղման առաջին տարիներին կենդանական մնացորդների վրա ուշադրություն չի դարձվել, թեև պետք է խոստովանենք, որ քաղաքի կենտրոնական թաղում կենդանական մնացորդներ քիչ են եղել այն պարզ պատճառով, որ այնտեղ գլխավորապես տեղավորված են եղել հասարակական շինություններ, իսկ քաղաքի կենտրոնին մոտիկ գտնվող չքավորական թաղերում կենդանական մնացորդների հետքերը խիստ խղճուկ էին, որովհետև այդ թաղերում մսեղեն կերակուր շատ քիչ են գործածել։

Միջնաբերդում պեղումների ժամանակ բացվեցին մի քանի տասնյակ հորեր, որոնց մի մասը հնում հատկապես փորված են եղել խոհանոցային մնացորդներ լցնելու համար։ Պեղումների ժամանակ այդ հորերից դուրս եկան կենդանիների և թռչունների բազմաթիվ ոսկորներ, որոնք այժմ ենթարկվում են մասնագիտական քննության։ Որոշ չափով ոսկորներ գտնըվել են թոնրի մեջ դրված ամաններում, այսինքն կերակուրի մեջ են եղել։ Զանազան փոսերում հավաքված մանր ջարդոտված ոսկորները ևս կերակրի մնացորդ են լինելու, որովհետև կերակրի մեջ օգտագործվող մսի ոսկորը սովորաբար կացնով ջարդոտված է լինում, իսկ եթե միսը չի օգտագործվել սննդի համար, ապա ոսկորները ամբողջական են մնում։ Այդպիսով, այս կամ այն եղանակով հնարավոր է մոտավորապես վերականգնել այն կենդանիների ցանկը, որոնց հետ հին դվինցիք գործ են ունեցել։

Այժմ, երբ դեռ նոր է հիմք դրվում միջնադարյան Հայաստանի կենդանական մնացորդների ուսումնասիրության, վաղաժամ է վերջնականորեն որոշել, թե կենդանիներն ինչ քանակ են կազմել Դվինում և ինչ տեսակարար կշիռ են ունեցել նրանք քաղաքի տնտեսության մեջ։ Այստեղ հետաքրքիր է նաև կենդանիների ցեղական առանձնահատկությունների որոշումը, որ պահանջում է մասնագիտական մանրակրկիտ քննություն[1]։

Մինչև այժմ Դվինում գտնվել են հետևյալ ընտանի կենդանիների մնացորդները։

Ամենից շատ գտնվել են եզան, կովի, ոչխարի և այծի մնացորդներ։ Կա նաև գոմեշը, ինչպես արուն, այնպես էլ էգը։ Ձին նույնպես շատ է պատահում, բայց, իհարկե, ոչ թե կերակրի մնացորդների մեջ, այլ ուրիշ տեղերում, իսկ էշի մնացորդները շատ քիչ քանակ են կազմում։ Դա, մեր կարծիքով, պետք է բացատրել ոչ թե ընդհանուր առմամբ այդ կենդանու քիչ լինելով, այլ այն պատճառով, որ Դվինի միջնաբերդում և քաղաքի կենտրոնական թաղում, որտեղ ապրել են երկրի աշխարհիկ և հոգևոր իշխանները, այդ կենդանուց քիչ են օգտվել, իսկ դրան հակառակ, նրանք ձի շատ են պահել։ Կան ուղտի մնացորդներ, որն, ինչպես հայտնի է, ջորու հետ միասին հանդիսացել է հեռու տեղեր ապրանք փոխադրելու հիմնական դրաստը։ Շատ են գտնվում նաև կատվի ոսկորի մնացորդներ, իսկ շան ոսկոր միջնաբերդում բոլորովին չի գտնվել։ Ըստ երևույթին, շունը սատկելուց հետո նրա դին միջնաբերդի սահմաններից հեռացրել են, կամ միջնաբերդում շուն չեն պահել։ Գտնվել է նաև արաբ հեղինակների այնքան գովաբանած հայկական ջորու մնացորդներ։

Ընտանի թռչուններից Դվինում շատ են պահել հավ և սագ։ Միջնաբերդի տարբեր մասերում մեծ քանակությամբ ձվի կճեպի գյուտերը ցույց են տալիս, որ հավն այն ժամանակ էլ շատ տարածված էր իբրև ձվաբեր թռչուն։

Միջնաբերդի պեղումների ժամանակ գտնվել են որսի կենդանիների բազմաթիվ

[1] Դվինի կենդանական մնացորդների մասնագիտական քննությունը կատարում է Ս. Կ. Դալը, որի օգնությանն ենք դիմել այս հատվածի մեջ հիշատակված կենդանիների անունները ճշտելու համար։

մնացորդներ, որոնց մեջ մեծ թիվ են կազմում վայրի ոչխարի, բեզոարյան այծի, գազելի (ջեյրանի), եղջերուի մնացորդները։ Բացի այդ, շատ կան զանազան վայրի թռչունների ոսկորներ. կաքավ, լոր և այլն։

Դվինի կենդանական աշխարհի այս հարևանցի ծանոթությունն իսկ ցույց է տալիս, որ Հայաստանում կենդանական աշխարհը վերջին 8—10 դարերի ընթացքում մեծ փոփոխությունների չի ենթարկվել, բացի այն հանգամանքից, որ այժմ որսի կենդանիների տեսակարար կշիռը մեծ չափով ընկել է անցյալի համեմատությամբ և միջին դարերում բնակչության բարձր խավի մսեղեն կերակուրի կեսից ավելին վայրի կենդանիների և թռչունների միսն է հանդիսացել, իսկ մսեղեն կերակուրը նրանց ուտելիքի մեջ խիստ շատ մնացորդներ է թողել։ Դրան հակառակ, միջնաբերդից դուրս, Դվինի չքավորական թաղերում որպես սնունդ օգտագործված կենդանիների ոսկորների մնացորդները խիստ աղքատիկ են։ Նշանակում է, այդ թաղերում մարդկանց ուտելիքի մեջ միսը չնչին տոկոս է կազմել և այնտեղ կերակուրը բաղկացած է եղել գլխավորապես բուսականությունից։

Պարզ է, որ եզը, ձին, էշը, գոմեշը, ուղտը ծառայել են, ինչպես հետագայում, այնպես էլ այն ժամանակ, իբրև աշխատող անասուն՝ բեռներ տանելու և ծանրություն քաշելու համար։ Սակայն, այստեղ էլ աշխատող անասունների մնացորդների քանակային հարաբերությունը բոլորովին էլ չի կարող ցուցանիշ հանդիսանալ ընդհանրապես այդ կենդանիների շատ կամ քիչ լինելուն, որովհետև գյուղատնտեսական քաշող անասունների թիվը քաղաքի կենտրոնական թաղերում և միջնաբերդում կարող էր քիչ լինել հենց այն պատճառով, որ այդտեղ հողագործությամբ պարապողներ գրեթե չկային։ Քաղաքի բոլոր թաղերում բազմաթիվ օրինակներով գտնվող յուղ և պանիր պահելու կարասները, ինչպես նաև մածունի և կաթի կճուճները ցույց են տալիս կթվող անասունների զգալի թիվը և նրանց կարևորությունը քաղաքի տնտեսության մեջ։

ԲՈՒՍԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ
(Երկրագործություն, այգեգործություն և անտառային տնտեսություն)

Միջնադարյան Դվինն իր բնակչության զբաղմունքով զգալի կերպով տարբերվել է այժմյան քաղաքներից։ Մեր ժամանակներում քաղաքի բնակչության չնչին տոկոսը միայն զբաղվում է երկրագործությամբ, այն էլ քաղաքի արվարձաններում, իսկ միջին դարերում երկրագործությունը քաղաքի բնակչության մի ստվար մասի եկամտի գլխավոր աղբյուրն է հանդիսացել։ Դվինում երկրագործությամբ են պարապել ոչ միայն քաղաքի արվարձանների բնակիչները, այլև քաղաքի կենտրոնական թաղերում ապրողները։ Դրա համար էլ հաճախ այդ թաղերի պեղումների ժամանակ գտնվում են երկրագործական գործիքներ և այլ առարկաներ, որոնք կապ ունեն այդ զբաղմունքի հետ։ Դվինի կենտրոնական թաղում և բերդի գրեթե բոլոր մասերում հաճախ բացվում են սանդեր և երկանքաքարեր, որոնք ծառայել են հացահատիկ մանրացնելուն։ Այնտեղ գտնված սանդերը և երկանքաքարերը մեծ լեռքարից են, որոնց կողքին դեռևս գործ են ածել հնադարյան աղորիքը, որ կազմված է միմյանց քսվող երկու քարերից։ Այս երևույթը նախ ցույց է տալիս հասարակության մեջ առաջ եկած ինչքային ծայրահեղ անհավասարությունը և մյուս կողմից էլ՝ տեխնիկայի բավական զարգացած ձևերի կողքին ամենանախնականի հավասարապես պահպանումը ֆեոդալական կարգերի պայմաններում։ Այս հակադրությունն ավելի է ուժեղանում, երբ նկատի ենք առնում նաև այն հանգամանքը, որ Դվինում գտնվել է նաև ջրաղացաքարի բեկոր (տես նկ. № 154)։

Միջնաբերդում բացվել են մի քանի տոննա տարողությամբ հացահատիկի հորեր, գտնվել են ցորենի և կորեկի մնացորդներ, հաճախ հայտնաբերվել են խաղողի կորիզի կույտեր, ձմերուկի և սալորի կորիզ, կաղինի և ընկույզի կճեպ և մի շարք այլ ընդեղեններ, որոնք կարոտ են մասնագիտական ուսումնասիրության։

Ստորին բերդի պեղումները ցույց տվին, որ այնտեղ եղել են փոքրիկ ծաղկա-

նոցներ՝ և ստորին բերդը, բացի խմելու ջրից, ունեցել է նաև ոռոգման ծառայող առվի ջուր։

Դվինում գտնվել են նաև մի քանի երկրագործական գործիքներ, երեք—չորս լուծ եզներով քաշվող գութանի խոփ, մեծ մասամբ այգեգործական նպատակներով օգտագործվող թափչակով բահ, փոքրիկ փոցխ, որ գտնվեց երկաթե առարկաների կույտի մեջ և այլն։ Մոտավորապես դրանք են այն գյուտերը, որոնք այս կամ այն չափով կապ ունեն երկրագործության հետ և բնորոշում են նրա զարգացման աստիճանը։

Դվինում մեծ և փոքր կարասների շարքերը գինիների մառաններում և տնային կարասու մի քանի տեսակները ցույց են տալիս այգեգործության և գինեգործության զարգացած վիճակը։ Եղած բոլոր մնացորդներից երևում է, որ այգեգործության մեջ կենտրոնական դերը խաղացել է խաղողի մշակությունը, իսկ մնացած կուլտուրաներն ունեցել են ավելի պակաս նշանակություն։

Դվինում ամենուրեք բացված բազմաթիվ թոնիրներն ապացույց են այն բանի, որ բնակչության հաց եփելու հիմնական եղանակը ինչպես հնագույն, այնպես էլ այն ժամանակ, թոնրի մեջ լավաշ հաց թխելն է եղել։ Մի քանի անգամ հայտնաբերվել է թոնրի մեջ ածխացած լավաշ հացի կտորներ, որոնք եփելու ժամանակ կպել են գնացել՝ Թոնրի մեջ լավաշ հաց եփելը հայերին ծանոթ է շատ վաղ ժամանակներից. գոնե մեր թվականությունից առաջ, առաջին հազարամյակի կեսերին պատկանող ավերակներում թոնրաման խոր օջախներ են հայտնաբերվել Կիրովականի շրջանի Մակարաշեն գյուղի սահմաններում գտնվող ընդարձակ ցիկլոպյան ամրոցում, իսկ Դվինում թոնրի գոյությունը փաստական տվյալներով ապացուցվում է ամենաուշը 7-րդ դարում։ Պարզ է, որ հնագույն ժամանակներից ի վեր Հայաստանում թոնիրը հանդիսացել է վառարանի հիմնական տեսակը։

Բուսական մնացորդների շարքին են պատկանում նաև փայտի մնացորդները։ Սակայն, այստեղ պետք է նկատել, որ Դվինն ինչպես այժմ, այնպես էլ միջին դարերում, սկսած քաղաքի գոյության սկզբից, աղքատ է եղել անտառներով և իբրև շինափայտ օգտագործվող ծառերով։ Հենց միայն այն փաստը, որ թագավորն իր որսը կատարելու համար արհեստական անտառ է տնկում այնտեղ, ցույց է տալիս, որ այդ շրջանն այն ժամանակ էլ անտառազուրկ է եղել։ Այդ է հիմնական պատճառը, որ քաղաքը փայտե առարկաներից գրեթե զուրկ է։ Ինչպես հայտնի է, Հայաստանի անտառաշատ վայրերում տընային կարասու մեջ փայտե առարկաները խիստ մեծ տեղ են գրավում. փայտից են լինում խմորի հսկայական տաշտերը, ջուր պահելու ամանները, խնոցին, կերակուրի ափսեները, թասերը (գուշ), հացի մատուցարանը, շերեփը, նույնիսկ կողպեքն ու բանալիները, սենյակների ներքին հարմարանքը (պահարան, մահճակալ, բազմոց, սեղան), չափի ամանները, հացի ամբարները, պարանները (ծնել) և այլ բազմաթիվ առարկաներ։ Դվինում դրանցից և ոչ մեկը չկա։ Այնտեղ այդ բոլորին, որտեղ հնարավոր է, փոխարինել է կավը։ Այնտեղ փայտից են շինվել միայն շենքերի սյուները, նրանց ծածկերը և այլն, որոնց մեջ օգտագործվել են ոչ թե փայտի անտառային տեսակները (եղևնի, շամ, հաճար, կաղնի և այլն), այլ ջրափին բուսնող բարդիներ, ուռենիներ և երևի էլ այլ տեսակներ։

Նշանակում է, Դվինի մոտերքում հին ժամանակ էլ անտառ չի եղել և այդ պատճառով փայտի մնացորդների քանակը քիչ է այնտեղ։

ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՀԻՇԱՏԱԿԱԳՐԵՐ

Դվինում պեղումների միջոցին գտնված գրավոր հիշատակարանները, եթե հաշվի չառնենք դրամները, շատ քիչ են չնայած այն բանին, որ մեր միջնադարյան բոլոր հնավայրերի մեջ վիմական արձանագրությունների թիվը սովորաբար մեծ է լինում։ Դվինում արձանագրությունների քիչ լինելը, մեր կարծիքով, բացատրվում է հետևյալ հանգամանքներով.

1. Դվինում կառուցված շենքերը գըլխավորապես հում աղյուսից են, որոնց վը-

րա սովորություն չի եղել արձանագրություն գրելը։

2. Քարե շենքերի մնացորդներից շատ քիչ բան է հասել մեզ, հասածն էլ մեծ մասամբ հիմնապատեր են, ուստի և շենքերի վրայի արձանագրած քարերը պարզաքանդակների հետ միասին անխնա կերպով ոչնչացվել են հետագա դարերում։

3. Դվինը դեռևս 9-րդ դարի վերջերին, կաթողիկե եկեղեցու ավերմամբ և կաթողիկոսի այնտեղից հեռանալու օրից դադարել է մշտավոր կենտրոն լինելուց, այդ պատճառով էլ այնտեղ արձանագրությունների թիվը քիչ է եղել, որովհետև հայերեն վիմական արձանագրությունների մեծագույն մասը սովորաբար հասարակական շենքերի վրա է լինում։

Դվինում մինչև այժմ գտնված են հայերեն արձանագրությամբ՝

ա) երկու հնագույն տապանաքար,

բ) ծածկի կղմինդրի մի քանի բեկոր և

գ) կավե մի թանաքաման կամ ներկաման[1]։

Արձանագրած հնագույն տապանաքարեր.— *Կաթողիկե եկեղեցու մոտ գտնված երկու երկթեք տապանաքարերն ունեն մեկական տող հայերեն հնագույն արձանագրություն, առանց թվականի, հետևյալ բովանդակությամբ.*—

Երկթեք տապանաքարերը Հայաստանում սկիզբ են առնում թևավոր խաչերի հետ միասին ամենաուշը 5-րդ դարում և հարատևում են մինչև 12-րդ դարի վերջերը, միայն այն տարբերությամբ, որ մինչև 8-րդ դարի վերջերը տապանաքարի արևելյան ծայրին, երեսով դեպի արևմուտք, պատվանդանավոր սյան վրա դրվում էր թևավոր խաչ, իսկ հետագայում, թևավոր խաչի փոխարեն դրվում էր պատվանդանավոր խաչքար։ Նկատելի է, որ հնագույն երկթեք տապանաքարերն ավելի լայն նստվածք ունեն, իսկ հետագա դարյաններն ավելի ամփոփ և համեմատաբար բարձր են։

Հայաստանում քրիստոնեության սկզբնական շրջանի գերեզմանական ճարտարապետությունը, եկեղեցական ճարտարապետության նման զգալի կերպով բազմազան է և նա ունեցել է երեք հիմնական տեսակներ։

1. Մեզ հայտնի է ստորերկրյա թաղակապ գեղեցիկ կառուցվածքն Արշակունի հայ թագավորների գերեզմանների վրա՝ Աշտարակի շրջանի Աղց (այժմ Հախս) գյուղում, որն իր ներսում ունի քառակուսի քարերի վրա փորագրված հարթաքանդակներ։

2. Մեզ ծանոթ են բազմաթիվ տեղերում

№1.

Վերծանություն.— *Այս գիր Յոհանայ է Գրիգորո որ[դոյ]*

№2. 

Վերծանություն.— *Այս գիրս Գէորգա քահանայի է։*

Առաջին տապանաքարը մեջտեղից ջարդված է և միջին մասի գրերից շատերը փշրված, իսկ երկրորդի վրա արձանագրությունը լրիվ է պահպանված, թեև քարի ծայրերը փշրված են։

գերեզմանական քառակող կոթողներ իրենց բարձրարվեստ քանդակներով, որոնք սկզբնավորվելով քրիստոնեության սկզբնական շրջանում (Դարբանդ գյուղ Լենինականի մոտ) իրենց գոյությունը շարունակել են մինչև 7-րդ դարը (Հառիճ, Ջվարթնոց)։

3. Երկթեք տապանաքարերը հանդիսացել են գերեզմանական ճարտարապետության բոլորովին մի այլ տիպը,

[1] Դվինում գտնվել են նաև արաբերեն արձանագրություններ գիպսե որմնազարդերի և կերամիկական մնացորդների վրա, որոնց մասնագիտական քննությամբ զբաղվում է պատմական գիտությունների թեկնածու Լ. Գյուզալյանը։

որն, ըստ երևույթին, ծագել է գագաթի վրա դրվող երկթեք կափարիչի ձևից։ Եվ իրոք, երկթեք գերեզմանաքարերի տակ, 20—60 սմ խորության մեջ քարե դագաղ է լինում՝ մի ամբողջական քարից կամ 4—6 քարերով շինված և 2—3 քարով ծածկած։

Իսկ այստեղ, Դվինի, ինչպես նաև Դավիթ Գնթունու տապանաքարերի վրա, թվական չլինելը, կարծում ենք, արդյունք է նրանց հնության։ Ի միջի այլոց, հայոց թվականը թեև հիշատակվել է Դվինի ժողովում՝ 554 թվին, բայց երկար ժամանակ

Նկ. 226. Ցոհանի տապանաքարը քաղաքի կենտրոնական թաղում

Այսպիսի մի այլ հնագույն երկթեք տապանաքար էլ պահվում է մեր թանգարանում, որը եղել է Գնթունյաց Դավիթ իշխանի գերեզմանաքարը։ Այս տապանաքարի մի երեսը բաժանված է երկու մասի և արձանագրությունը տեղավորված մասերից մեկում այսպես.

№3. ԱՅՍԷՀԱՆԳԻՍՄԴ
ԱԻԹԻԳԸԹՈՒՆԵ
ԱՑՄՆՈՐԴՈՎԱՍ
ԱԿԱԲԱՐԷՊԱ

Վերծանություն.—*Այս է հանգիստ Դաւթի գըթունեաց տ(եառ)ն որդո(յ) Վասակա բարէպա(շտի)։*

Դվինում գտնված այս երկու արձանագրությունները, մանավանդ Յոհանի տապանագիրը, հայկական գրչության հնագույն օրինակների շարքին են պատկանում, թեև իրենց վրա թվական չունեն։ Ինչպես հայտնի է, արձանագրությունների մեջ տապանաքարերն են, որ գրեթե պարտադիր կերպով միշտ թվական են ունենում, վիմական արձանագրությունների մեջ նա գործածական չի եղել։ Մեզ հայտնի ամենահին թվակիր արձանագրությունը 8-րդ դարից է, և կրում է հայոց ՄԼԲ—783 թվականը։

Նկ. 227. Դավիթ Գնթունու տապանաքարի արձանագրությունը

Հնագրական բոլոր տվյալների հիման վրա կարելի է Դվինի տապանաքարերը վերագրել 6-րդ դարին, որովհետև 7-րդ դարին պատկանող մեզ հայտնի բոլոր արձանագրություններից էլ նրանք հին են իրենց գրչության ձևերով։

Դվինի տապանաքարերը պետք է որ իրենց ժամանակում նշանավոր անձանց

պատկանեին, որովհետև քաղաքի կենտրոնում թաղվելու իրավունք կարող էին ստանալ միայն որևէ բանով նշանավորված մարդիկ, այլապես նրանց կթաղեին քաղաքից դուրս գտնվող հասարակական գերեզմանոցում։ Սակայն, այդ անձնավորությունները, ինչպես երևում է, Դվինի քաղաքական հասարակական

Նկ. 228. Գևորգ քահանայի տապանաքարը քաղաքի կենտրոնական թաղում

կյանքում որևէ էական դեր չեն կատարել, որովհետև նրանց անունը որևէ առիթով չի հիշատակված պատմության մեջ։ Մնում է ենթադրել, որ Գրիգորի որդի Հովհաննեսն ու Գևորգ քահանան իրենց հաշվին որևէ բարեգործություն են կատարել Դվինում և դրանով արժանացել ուշադրության։

Պատմությանն անծանոթ է նաև Գնթունյաց Դավիթ իշխանը, թեև պարզ է, որ նրա տապանաքարը ևս 6-րդ դարին է պատկանում։

Ն4.

Խիստ ուշագրավ է № 4 արձանագրությունը, որ հավանաբար մի մեծ արձանագրության վերջավորություն է։ Նրա գրերը խիստ արխայիկ են և մեծ նմանություն ունեն Եղվարդի բազիլիկ տաճարի կառուցման վերաբերող 5-րդ կամ 6-րդ դարի աղճատված արձանագրության գրերին։

Արձանագրած կղմինդրները պատկանում են կաթողիկե եկեղեցու վերջին նորոգության, որը կատարեց Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունին 607—617 թվականների ընթացքում և քանի որ կղմինդրի վրա գրերը փորագրված են նրանց թրծվելուց առաջ, ապա դրանից պարզվում է, որ նրանք հատուկ պատվերով են շինված և այդ պատճառով էլ նրանց վրա հիշատակված է կաթողիկե եկեղեցու սուրբ Գրիգոր անունը։ Այս արձանագրությունները մեծ մասամբ փոքրիկ հիշատակագրեր են և գրչախաղեր վանքի անհայտ միաբանների անունից գրված։ Այդ պատճառով էլ նրանք բովանդակության տեսակետով որևէ հետաքրքրություն չունեն մեզ համար, բայց դրան հակառակ, այդ արձանագրությունները հայկական գրերի զարգացման պատմության համար ունեն բացառիկ նշանակություն, որովհետև նրանց մեջ հայերեն գլխագիր գրերի հնագույն ձևերին զուգընթաց գործ են ածվել նաև ուղ-

Նկ. 229. Արձանագրած որմնաքար, կաթողիկե եկեղեցու վրայից

ղագիծ երկաթագրի և շղագրի ձևեր, որոնք գիտնականների կարծիքով իբրև թե ուշ ժամանակներում են առաջ եկել։

Հայկական գրերի զարգացման վերաբերող գրականության մեջ ընդունված է այն

կարծիքը, թե 5-րդ դարում Մեսրոպ Մաշտոցը հորինել է միայն բոլորաձև երկաթագիրը (այժմյան գլխագիր գրերի ոճը), որ հաճախ բուն Մեսրոպյան երկաթագիր է կոչվում։ Այնուհետև, 9-րդ դարում բոլորաձև երկաթագրից առաջ է եկել ուղղագիծ երկաթագիրը կամ հին անունով միջին երկաթագիրը, որ գարձյալ գլխագրի ձև ունի, բայց տառասյուները միացնող գծերն ուղիղ են և ոչ կամարաձև, իսկ 12-րդ դարում, ուղղագիծ երկաթագրից առաջացել է բոլորգիրը և վերջինիցս էլ 13-րդ դարում՝ նոտրգիրն ու շղագիրը:

1897 թվին, գրերի կարգացման այս տեսակետին դեմ դուրս եկավ Հ. Վ. Տաշյանը։ Հենվելով Ագաթանգեղոսի կրկնագիր ձեռագրերի վրա, որտեղ մագաղաթի վրա հնում գրված է եղել ուղղագիծ երկաթագրով Ագաթանգեղոսի պատմությունը, իսկ 10-րդ դարում այդ գրվածքը ջնջել և վրայից գրել են բոլորաձև երկաթագրով ավետարան, նա եկավ այն եզրակացության, որ գրի սկզբնական տեսակը կամ միայն ուղղագիծ երկաթագիրն է և կամ ուղղագիծ ու բոլորաձև երկաթագրերը միասին[1]։

Այնուհետև 1932 թվականին, ՀՍՍՌ Կուլտուրայի պատմության ինստիտուտում կարդացած մեր զեկուցման մեջ, նկատի առնելով Զվարթնոցի 7—10-րդ դարերի մի շարք հիշատակագրությունները պատերի սվաղի վրա և մի քանի վիմական արձանագրություններ ու ձեռագիր մատյաններ, որոնց մեջ բացի պաշտոնական բոլորաձև երկաթագրից կային նաև ուղղագիծ երկաթագրի, բոլորգրի և շղագրի խառնուրդ, եկանք այն եզրակացության, որ Մեսրոպ Մաշտոցը 5-րդ դարում, օգտվելով արդեն գիր ունեցող ժողովուրդների փորձից, հայերի համար հորինել է երեք տեսակ գրչության ոճ. այն է՝

1. Բոլորաձև երկաթագիրը՝ վիմական արձանագրությունների և պաշտամունքային ձեռագրերի (ավետարան) համար։

2. Ուղղագիծ երկաթագիրը՝ ձեռագիր մատյանների համար, և

3. Նոտրգիրը՝ առօրյա գործածության համար։

Հետագայում ուղղագիծ երկաթագրից առաջացել են շղագիրն ու բոլորգիրը, գրեթե միաժամանակ։

Այս ենթադրությունը հաստատվեց նաև Դվինում գտնված ծածկի կղմինդրների արձանագրություններով[1]։

Նշանակում է, Դվինում գտնված ծածկի կղմինդրի վրայի արձանագրությունները կարևոր ապացույց են այն բանի, որ արդեն 7-րդ դարի սկզբներին գոյություն են ունեցել բոլորգրի և շղագրի ձևերը, մի բան, որ ընդունված չի եղել գիտական գրականության մեջ։

Մինչև այժմ գտնվել են կղմինդրի 9 արձանագրած բեկոր, որոնք ունեն հետևյալ հիշատակագրերը.

ա. 

Վերծանություն.—Ես Յովհաննես վարդապետս ծառա սրբոյ Գրիգորի յաղաւթս յիշեցէք ի տ(է)ր։

բ. 

№ 751—Գ. 1937 թ.

Վերծանություն.—զՎարդան զմեղաւ— որ յիշեցեք յաղաւթս

[1] Հ. Հ. Վ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրության վրա, Վիեննա, 1897։

[1] Կ. Ղափադարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան, 1939 թ., էջ 71։



Դ. 1938

Վերծանություն.— *Ա(ստուա)ծ ողոր-*
մեայ Աբիսո-
ղոմոյ եկեղ(ե)ց(ոյ)ս
Ն. ո. ց. ...



№ 724—Դ. 1937

Այստեղ սկզբի երկու գրերը պետք է կարդալ Ես *այնուհետև երրորդ* Գ *գիրը անձնանվան սկզբնավորություն է, և հավանաբար 2-րդ տողի* Ր Կ *գրերի հետ միասին պետք է լինեն* Գաւրկ Գորկ, Գէորգ-*ի այն ժամանակ ընդունված ձևերից մեկը: 3-րդ տողի* շեցե-*գրերը պարզ է, որ պետք է լինեն* յիշեցէք: *Այսպիսով, այս մի քանի գրերից կարելի է վերականգնել հետևյալ բովանդակությունը:*

Ես Գաւրկ... յիշեցէք:



Դ. 1938

Որևէ լրիվ բառ այս բեկորի վրա չի պահպանվում, ըստ երևույթին գրչափորձ է:



№ 46 Դ—1938

Բովանդակությունից զուրկ է:



Դ—1938

Դարձյալ բովանդակություն չունի, հավանաբար գրչափորձ է:



№ 816 Դ—1937 թ.

Պարզապես գրչափորձ է՝ հայկական այբուբենը գրելու:



Ես վարդ...

Գրված է գեղեցիկ բոլորաձև երկաթագրով, իր ձևերի պահպանմամբ:

* * *

Այս արձանագրած ինը բեկորների վրա կան խիստ հետաքրքիր տառաձևեր ինչպես հնագրական, այնպես էլ ուղղագրական տեսակետով:

1. Ինչպես Ա, այնպես էլ Բ արձանագրությունների մեջ ա *գրերը եռասյուն են և սյուները միացնող կամարները Ա-ի մեջ միշտ վերևից, իսկ Բ-ի մեջ առաջինը ներքևից և երկրորդը վերևից:*

2. Արձանագրության մեջ կա ով *գրերի փակագիր ձևը, այն էլ այն դեպքում, երբ* ո *գիրը միջնական է (փոքր), իսկ* վ-*ն ամբողջական (մեծ): Այդ նշանակում է, որ հնում առօրյա գործածության գրերի ան-*

տակների մեջ էլ փակագիր ձեն ընդունված և գործածված է եղել։

3. Ա և Բ արձանագրություններից երևում է, որ դեռևս 7-րդ դարի սկզբներին պարզ հասկացողություն կար գրերի չորս բարձրությունների մասին, ըստ որում՝ ա, ո, ռ, ս, տ, ւ գրերը միջնական են, ինչպես այժմ, ե, ծ, մ, ն գրերը վերնական,



Նկ. 230. Արձանագրված կղմինդր, կաթողիկե եկեղեցու վրայից (Գ արձանագրություն)

հարկավ ժ, հ, ձ և ճ գրերն էլ վերնական կլինեին, թեև այստեղ գործածված չեն, բայց հ և ժ գրերը Զվարթնոցի պատերի վրայի արձանագրությունների մեջ վերնական են։

Ի տարբերություն այժմյան տառաձևերին ե գիրը ինչպես այս արձանագրություններում, նույնպես և բազմաթիվ այլ տեղերում վերնական է և ոչ թե ամբողջական։ Ա և Բ արձանագրությունների մեջ բ, գ, դ, զ, ղ, յ, պ, ր, ց, ք գրերը ստորնական են։ Այստեղ հետաքրքիր է յ գիրը, որը թեև հանդես է գալիս գլխագիր ձևով (3), բայց գրված է գրերի ստորին մասում՝ իբրև սոսկ ստորնական։ Ստորնական գրերից այստեղ չեն գործածված ը, լ և չ գրերը, որոնք ոչ մի կասկած չի թողնում, որ գործածվելու դեպքում ստորնական կլինեին։ Այստեղ միայն ր գիրը դեռևս տատանման մեջ է, նա Ա արձանագրության մեջ երեք անգամ միջնական է և երկու անգամ ստորնական։ Ամբողջական են թ, ի, կ, վ գրերը. փ գիրն այստեղ չի գործածված, բայց նա կա Դվինի ներկամանի արձանագրության մեջ և Զվարթնոցում ամբողջական ձևով։ Մեզ անծանոթ է խ գիրը, որն անպայման ամբողջական կլիներ գործածվելու դեպքում, որովհետև ձեռագրերի մեջ ինչպես բոլորգրում, այնպես էլ նոտր և շեղ գրերի մեջ, ամենուրեք ամբողջական է։ Այստեղ կասկածելի է ջ գրի ամբողջական լինելը, որովհետև նա վերևում գլխիկ ունի, բայց քանի որ այդ գլխիկն իրենից վերև երկարող սրածայր մաս ունի, այդ պատճառով ջ գիրը ևս կարող էր ամբողջական լինել։

Նկ. 231. Հայերեն շղագիր գրությամբ կղմինդր, կաթողիկե եկեղեցու վրայից (Ը արձանագրություն)

Այսպիսով, գալիս ենք այն եզրակացության, որ հայկական գրի ժապավենաձև հնագույն տեսակների (երկաթագրերի) կողքին 7-րդ դարի սկզբին արդեն գոյություն ուներ տարբեր բարձրության գրվող գրերի

սիստեմը, որը փոքր փոփոխություններով հասել է մեզ՝ բոլորգրի, շղագրի և նոտրգրի միջոցով։

Դվինի այս արձանագրությունները հետաքրքիր են, ինչպես տեսանք, նաև ուղղագրության տեսակետով։

Ա. արձանագրության մեջ Հովհաննես բառը գրված է Ե-ով, ե-ի և է-ի շփոթություն կա նաև Բ արձանագրության յիշեցեք բառի մեջ։ Դ արձանագրության մեջ (յիէ)շցէ(ք) բառի մեջ Ե-ի փոխարեն գրված է Է, նշանակում է, դեռևս 7-րդ դարում Ե և Է հնչյունները արդեն գործածության որոշ տեղերում իրենց տարբերությունը կորցրած են եղել արտասանության մեջ։

Նույնը կարելի է ասել յ հնչյունի մասին։ Նա ևս, ամենայն հավանականությամբ, բառի վերջին չի արտաբերվել, դրա համար էլ Ա արձանագրության մեջ ծառայ բառի վերջին յ գիրը չի գրված։ Հնում Յովհաննես անունը խիստ գործածական է եղել և շատ մաշված ձևեր ունի բարբառներում՝ Հովհան, Հոհան, Օհան, Հանէս, Ավան, Օնես, Օվո, փաղաքշական իկ մասնիկով՝ Օնիկ ձևերով։

Արտասովոր է նաև սեռական հոլովի Աբիսողոմո ձևը, փոխանակ Աբիսողոմայ։

Արձանագրած ներկամանը.—Ներկամանի վրայի արձանագրությունը խիստ մաշված է և հազիվ տեսանելի։ Առաջին տողի մի քանի գրերը թեև ճանաչելի են, բայց նրանցից բառ չի կազմվում, իսկ հաջորդ երկու տողերից երևում է, որ արձանագրությունը ցույց է տալիս պատկանելիությունը։



Վերծանություն.—Որ զան... ե. սի ւ մ
գե Ստեփանո(սին)
բան(ն) է այս

Ուրեմն հասկանալի է միայն «Ստեփանոսին բանն է այս» նախադասությունը, թեպետ խիստ սխալաշատ է գրությունը։

Հնում այդպես սովորաբար գրում էր առարկան շինող վարպետը։ Օրինակ, Նոր Բայազետի Սարուխան գյուղում գտնված մի մեռոնամանի վրա գրված է՝ «Թոխաթցի Օհանին բանն է այս», իսկ Թոխաթցի Օհանը ոսկերիչ վարպետ է՝ գրավել է ալքիմիայով։

Ստեփանոսը կարող է լինել ներկամանի շինողը կամ տերը, բայց հավանական է, որ նա շինողն է, որովհետև հազիվ թե ներկամանի գործածողն այդքան անգրագետ արձանագրություն կազմեր։

* * *

Վերոհիշյալ բոլոր արձանագրությունների մեջ եղած գրերի բարձրության տարբերությունները քննելով գալիս ենք հետևյալ եզրակացության.

1. Եռաստեղն ա-ն առաջ է եկել գլխագիր Ա գրից, որի երկու ստեղների միջից անցնող կարգագիծն արագ գրվելու հետևանքով դարձել է գրի երրորդ ստեղնը, ինչպես այդ տեսնում ենք մեր Դ և ներկամանի արձանագրությունների մեջ։

2. Ստորնական են դարձել գլխագրի այն գրերը, որոնք վերևի մասում գլուխ ունեն, իսկ ներքևում որևէ սահմանափակիչ մաս չունեն և վերևի մասով չեն կարողացել երկարել։ Այդպես են բ, գ, դ, զ, ղ, շ, պ, ր, ց, ք, (ը, լ, ն)։

3. Վերնական են դարձել գլխագրի այն գրերը, որոնք իրենց ստորին մասով սահմանափակված են գրի մարմնով, իսկ վերևից ազատ են։ Այդպես են՝ ե, է, ծ, մ, ն, (ժ, հ, ն)։

4. Ամբողջական են դարձել վերևից և ներքևից սահմանափակիչ մաս չունեցող գրերը—թ, ի, խ, կ, վ, փ։ Այստեղ հետաքրքիրն այն է, որ գրերը միայն մի ստեղնով են երկարել, իսկ մյուս ստեղնը մնացել է միջնական։ Բացառություն են կազմում թ և կ գրերը։ Թ գիրը ամբողջական է դարձել հակառակ այն բանին, որ նա վերևի կողմում սահմանափակություն ունի։ Դրա պատճառն այն է, որ թ գրի երկրորդ ստեղնի մեջ գծերի ոլորտ կա, ուստի

գրիչներն ստիպված են եղել նրա փոքր մեծ նկարել, որպեսզի ոլորտը տեղավորվի այնտեղ, իսկ կ գրի մեջ, հակառակ մեր պընդածի, առաջին ստեղնը երկարել է վերին կողմից, իսկ երկրորդը՝ միայն ներքևից։ Դրա պատճառն այն է, որ Կ գիրը գլխագրի մեջ ևս այդպես է, առաջին ստեղնը՝ բարձր, իսկ երկրորդը ցածր, առաջինը՝ վերնական, երկրորդը՝ ստորնական։

5. Միջնական են մնում բոլոր այն գրերը, որոնք երկու կամ երեք հավասար ստեղներ ունեն (ա ո ս տ)։ Այստեղ հետաքրքիր է մի բան, թե ինչու բոլորաձև երկաթագրի Ի գիրը, որ օրինքով դառնալու էր ամբողջական, ինչպես Ի>ի, Խ>խ, Վ>վ, գրերն են, մնում է միջնական, Ի ձևից դառնալով ւ։ Մեր կարծիքով դա ունի երկու հիմնական պատճառ, նախ՝ Ի-ի աջակողմյան ելուստը հին բոլորաձև երկաթագրի մեջ միայն մի հորիզոնական գիծ է և գրի կենտրոնում կամարաձևություն չունի, և ապա, ւ-ը մեծ մասամբ ո և ա միջնական գրերի հետ անբաժանորեն գործածվելու հետևանքով աւ, ու և ւոյ (վերջածանց) կապակցությունների մեջ, ա-ի և ո-ի նման մնացել է միջնական։ Ճիշտ է, ւ-ը գործածվել է նաև Ի-ի հետ իբրև երկբարբառ իւ, բայց աշխատել են Ի-ն ւ-ից տարբեր գրել միմյանց հետ չշփոթելու համար։

Ց գիրը ստորնական է դարձել միայն այն պատճառով, որ նա հնում իր վերին մասում ունեցել է գլխիկ և հին շղագրի մեջ երկար ժամանակ գրվել է գլխագրի նման Ց ձևով, ինչպես այդ տեսնում ենք Ա և Բ արձանագրությունների մեջ։ Նույն օրինակով զ գիրը ստորնական է դարձել, որովհետև հնում վերին գլխիկը փակ է եղել, ինչպես այժմյան տպագիր տառաձևերի մեջ։

ԱՐՁԱՆԱՔԱՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Դվինում պատահական գյուտերի հետևանքով, տարբեր ժամանակներում, գտնըվել են մի քանի քարե արձանի գլուխներ, որոնք մեծ կարևորություն ունեն մեր հնագույն ժողովրդական արվեստի պատմության համար։

1. Այժմյան Ներքին Դվին գյուղի մատերքում, 1925 թվականին, դաշտային աշխատանքների ժամանակ գտնվել է մոխրագույն տուֆ քարից շինված մարդու սաղավարտակիր գլուխ։ Բոլոր նշաններից երևում է, որ աշխարհիկ իշխանավորի, հավանաբար, հայոց արքայի գլուխ է և ոչ մի կապ չունի հեթանոսական աստվածների պանթեոնի հետ, ինչպես ենթադրել են ոմանք։ Արձանի գլխի վերին մասի ծայրերը ջարդոտված են և այդ պատճառով լավ չի պարզվում, թե սաղավարտն ինչպես է ավարտվել, ատամներով, թե հարթ։ Արձանի տակի մասը ևս կոտրված է վզի տեղից, որից կարելի է եզրակացնել, որ նա ամբողջ մարդու արձանի մասն է եղել։ Արձանի գլխի բարձրությունը 38 սմ է, պարագիծը՝ մոտավորապես մարդու գլխի բնական մեծություն։ Արձանի վրա մշակված է միայն դեմքը, իսկ պրոֆիլը և, մանավանդ, ետևի մասը թողնված է անմշակ, նշանակում է նա շինված է եղել միայն դիմացից դիտելու համար։ Արձանի դեմքին այտերն ու կզակը մի հարթության վրա են, իսկ ճակատից ուղղաձիգ կերպով իջնող քիթն այժմ ջարդված է։ Աչքերի տեղում կլոր անցքեր են արված, որտեղ, ըստ երևույթին, հնում աչքերի նման փայլող քարեր կամ ապակիներ են հագցված եղել։ Ականջներից կախված կան երկուսի ճյուղավորված տանձաձև ականջօղեր։ Ճակատի ստորին մասը բաց է, իսկ վերինը՝ ծածկված է սաղավարտով, որի ստորին ատամնավոր ուղղաձիգ զարդերը հասնում են մինչև ականջներին։ Սաղավարտի վերին մասում կան թեքագիր վիճակում գտնվող ցանցավոր գծազարդեր (Նկ. № 232, վերևինը)։

2. Երկրորդ քարե գլուխը դարձյալ նույն տեղում է գտնվել, 1925 թվականին։ Նա կարմրավուն տուֆ քարից է, բայց նախորդի համեմատությամբ՝ ավելի պրիմիտիվ և կոպիտ։ Դեմքը տափակ է, աչքերը գրեթե չեն փորված, բերանի տեղը՝ մի քիչ գծած։ Գլխին ունի եղնաձև անկյունավոր զարդերով մի սաղավարտ, որ նման է նախորդին։ Մշակված է միայն դեմքը, որը մի քիչ փոքր է բնականից։ Բարձրությունը 28 սմ է և նախորդի նման վզից կոտրված։ Սա ևս աշխարհիկ իշխանավորի արձանի բեկոր է (Նկ. № 332, ներքևինը)։

3. Մի նման, բայց շատ ավելի կոպիտ

Նկ. 232. Քարե արձանի գլուխներ, գտնված քաղաքի տարածության վրա
Նկար Ա. Փատրիկի

արձանի գլուխ էլ գտնվել է դարձյալ 1925 թվականին Դվինի մոտ գտնվող Լուսակերտ գյուղի դաշտերում։ Սա ևս կարմրավուն տուֆ քարից է, ունի 28 սմ բարձրություն, դեմքը տափակ է, միայն քիթն է պրոֆիլը և գլխի հետևի մասերը բոլորովին անմշակ են։ Այս արձանը ևս վզից կոտրված է և ներկայացնում է աշխարհիկ մարդու դեմք (Նկ. № 233 վերևինը)։

4. Նման, բայց շատ ավելի փոքր մի

Նկ. 233. Քարե արձանի գլուխներ և սրբապատկեր՝ գտնված քաղաքի տարածության վրա
Նկար Ա. Պատրիկի

արձանի գլուխ էլ գտնվեց Դվինում 1938 թվականի պեղումների ժամանակ։ Այս բեկորը ևս տուֆ քարից է։ Արձանը սաղավարտ կամ գլխի այլ ծածկոց չունի։ Դեմքը հարթ է, աչքերի և բերանի տեղերը երկարավուն ու խոր փոսեր են արված, ականջները ռելեֆ են, պրոֆիլն ու գանգի բարձր քթում ճակատին հավասար, բայց դեմքի ոչ ճիշտ կենտրոնում, աչքերի և բերանի տեղը թեթև գծած է։ Անհամաչափ ճակատի վրա կան ուղղահայաց գծեր, որոնք կամ մազերն են ցույց տալիս և կամ սաղավարտի զարդերն են ներկայացնում։ Ականջների տեղը թեթևակի միայն նշված է.

եստի մասն անմշակ։ Սա ևս աղյուսից դիտելու է համարեցրած։ Գլխի բարձրությունը 8 սմ է։ Պատկերացնում է աշխարհիկ մարդ և, հավանաբար, եղել է երեխայի ամբողջական արձանի գլուխ։ Գտնվել է կաթողիկոսի պալատի հիմքերի մոտ։

Վերևում նկարագրած բոլոր արձանները էլ, մեզ թվում է, պատկանում են Դվինի պատմության նախնական շրջանին, մեր թվականության առաջին երեք դարերին։ Մեր այս ենթադրությունը հաստատվում է մի քանի փաստերով։

1. Քրիստոնեության մուտքի ժամանակ արգելված էր որևէ մեկի արձանը շինել, դա համարվում էր մեծագույն հանցանք և հավասարազոր էր կռապաշտության։

2. Քրիստոնեության մուտքից հետո ոչ միայն հեթանոսական աստվածների, այլև աշխարհիկ մարդկանց արձանները կոտրատվեցին և ոչնչացվեցին։

3. Մեր նկարագրած արձաններից առաջինը զգալի չափով նման է հայ թագավոր-

Նկ. 234. Սրբապատկեր կաթողիկե եկեղեցու ծածկի կղմինդրի վրա

ների մեզ ծանոթ պատկերներին՝ Տիգրան Երկրորդին և Արտավազդ առաջինին, որոնց նկարները մնացել են դրամների վրա։ Առանձնապես աչքի է ընկնում սաղավարտի ականջօղերի, զգեստի նմանությունը։ Դժբախտաբար հայ Արշակունի թագավորների դրամները դեռևս անճանաչելի են մնում, որպեսզի այս արձանների գլուխները համեմատության դնեինք դրամների վրայի արքայական պատկերների հետ, որովհետև նրանց շատ պետք է նման լինեին։

4. Արձաններն արխայիկ են և իրենց ոճով ոչ մի կապ չունեն միջնադարյան հայ թագավորների պատկերների հետ, որոնց մենք ծանոթ ենք արձանների (Գագիկ Ա Բագրատունի), բարձրաքանդակների (Սմբատ տիեզերակալ, Գուրգեն Կյուրիկյան թագավորության հիմնադիր, Գագիկ Արծրունի, Զաքարե և Իվանե եղբայրներ և այլն) և մանրանկարների (Կարուց Գագիկ թագավոր և Կիլիկյան մի շարք թագավորներ ու արքայական ընտանիքի անդամներ) միջոցով։

5. Դվինի արձանները թեև պրիմիտիվ են և չեն առնչվում հելլինիստական ոճի հետ (Անահիտ աստվածուհու գլուխը Նոր Բայազետից և Սատաղից), որը տարածված էր արքունիքում, բայց և այնպես այդ արձանները Հայաստանի անտիկ շրջանի ժողովրդական ոճի արտահայտություններ են և այդ տեսակետով էլ նրանք, իրենց պրիմիտիվ արվեստով հանդերձ, ունեն մեծ հետաքրքրություն հայկական ժողովրդական արվեստի ուսումնասիրության համար։

* * *

Այստեղ անհրաժեշտ է ներկայացնել նաև 1938 թվականին կաթողիկե եկեղեցու մոտ կատարված պեղումների ժամանակ գտնված ծածկի կղմինդրի վրա սրածայր բրիչով արագորեն փորագրած քրիստոսի սրբապատկերը, որ պատկանում է 7-րդ դարի առաջին երկու տասնամյակներին։ Այդ քանդակը մեծ նմանություն ունի նույն ժամանակին պատկանող հայկական սրբապատկերներին և բարձրաքանդակներին, որոնց մենք ծանոթ ենք քառակող կոթողների և եկեղեցական քարերի վրայի պատկերներից։

Ինչպես արդեն առիթ ենք ունեցել նշելու, Դվինում գտնված պատկերների մեջ բացառիկ տեղ է գրավել տիրամոր պատկերը ներկայացնող խճապատկերը, որ թա-

չիկ վարդապետի 1907 թվականի պեղումների ժամանակ է բացվել կաթողիկե եկեղեցու մեջ և այնտեղ էլ ոչնչացել է լավ չպահպանելու պատճառով։ Այդ մոզայիկան, ինչպես և նրա շարունակությունը կազմող բազմաթիվ բեկորներ, որոնք գտնվեցին վերջին տարիներում կաթողիկե եկեղեցու մեջ, պատկանում են տաճարի վերջին նորոգության՝ 7-րդ դարի սկզբներին։ Մեզ թվում է, որ արաբ մատենագիր Մուկադդասիի վկայած տիրամոր նշանավոր մոզայիկ պատկերը Զվարթնոցի բեմի վրա, շինվել է Դվինի կաթողիկեի օրինակով, հավանաբար, նույն վարպետների ձեռքով։

* * *

Ինչպես տեսնում ենք, Դվինի պեղումների միջոցին գտնվել են բազմաթիվ առարկաներ, որոնց միջոցով մենք ծանոթանում ենք միջնադարյան Հայաստանի քաղաքային կյանքի բոլոր կողմերին՝ արհեստներին, արվեստին, ճարտարապետության, տնային կահ կարասուն, զենքերին, գործիքներին, գրչության արվեստին, արձանագրության, քանդակագործության, առևտրական հարաբերություններին, դրամաշրջանառության և այլ երևույթներին։ Այդ տեսակետով Դվինի պեղածո նյութերի արժեքը, խիստ մեծ է հայ ժողովրդի միջնադարյան պատմության համար։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ

Դվինում գտնված իրերի քննության զուգընթաց, անհրաժեշտ է մի հայացք գցել օտար երկրների հետ ունեցած առևտրի վրա՝ պեղումների ժամանակ գտնված իրերը ճիշտ արժեքավորելու և, մասամբ էլ, այլ երկրներից մուծված առարկաների ծագումը պարզելու նպատակով, մանավանդ որ, առևտուրն իբրև Դվինի բնակչության կարևոր զբաղմունքներից մեկը, զգալի դեր է խաղացել քաղաքի կյանքում։

Սելևկյան պետության անկումից հետո (189 թ. մեր թվականից առաջ), Հայաստանում հիմնադրվեց Արտաշեսյան թագավորությունը, որի ժամանակ երկիրն սկսեց արագ թափով զարգանալ։ Այդ թագավորության հիմնադիր Արտաշես առաջինը Հայաստանի վրայով անցնող առևտրական մեծ ճանապարհի վրա կառուցեց իր աթոռանիստ Արտաշատ մայրաքաղաքը, որ հույն հեղինակների ասելով, մի մեծ և գեղեցիկ քաղաք էր, կառուցված Արաքսի ափին։ Նա առևտրական կարավաններին ծառայում էր ոչ միայն իբրև իջևան, որտեղ նրանք կանգ էին առնում հանգստանալու և այնուհետև իրենց ճանապարհը շարունակելու համար, այլև օտարերկրյա կարավանների համար մի հանգուցակետ էր, որտեղ առևտրականները հանդիպում էին միմյանց հետ իրենց ապրանքները փոխանակում և այնուհետև վերադառնում իրենց երկրները։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանն իր „О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен“ աշխատության մեջ մի տեղեկություն է մեջ բերում, որ մեծ կարևորություն ունի Արտաշատ քաղաքի, ինչպես և հետագայում նրան փոխարինող Դվինի միջազգային առևտրի համար ունեցած նշանակությունը հասկանալու համար։ 387 թվականի պայմանագրով Բյուզանդիան և Սասանյան Պարսկաստանը միջազգային առևտրի փոխանակման երեք կետեր են որոշած եղել, մեկը պարսկական հողի վրա՝ Մծբին քաղաքը, երկրորդը՝ Բյուզանդական կայսրության սահմաններում գտնվող Կալինիկը (այժմ Ռակկա, Եփրատ գետի վրա) և երրորդը՝ Հայաստանում Արտաշատ քաղաքը։ Այս երեք քաղաքներում էլ եղել են մաքսատներ և առևտրին հետևող պետական պաշտոնյաներ։ Այն ժամանակ մի երկրից մյուսն անցնելը խստիվ արգելված էր և վաճառականներն իրենց ապրանքները մինչև պետությունների մայրաքաղաքները՝ Կոստանդնուպոլիս կամ Տիզբոն չէին կարող տանել, այլ պետք է պայմանագրում նշանակված վերոհիշյալ երեք քաղաքներից մեկը գնային, այնտեղ կատարեին ապրանքափոխանակությունը և վերադառնային իրենց երկիրը[1]։

Ինչպես հայտնի է, Դվին և Արտաշատ քաղաքներն իրարից հեռու չեն։ Նրանց միջև հազիվ 15 կիլոմետր տարածու-

[1]. Проф. Я. А. Манандян. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1930, стр. 41—42.

թյուն կա, Արտաշատի կլիմայական վատառողջ պայմանների հետևանքով՝, երբ Արշակունի հայոց թագավորներն իրենց արքունիքը տեղափոխեցին Դվին, վերջինս դարձավ միջազգային առևտրի հանգուցակետ, մանավանդ որ, հետագայում ևս պարսից Խոսրով Նուշիրվանի և Հուստինիանոս կայսեր միջև կնքած պայմանագրով առևտրի համար նախատեսված վերոհիշյալ երեք կետերն ուժի մեջ մնացին 5-րդ և 6-րդ դարերում։

Այդ ժամանակն էր, որ Դվինը խիստ մեծացավ և դարձավ խոշորագույն քաղաք։

Արշակունի վերջին թագավորների և մանավանդ մարզպանների իշխանության օրով Դվինը մի քանի առևտրական ճանապարհներով կապված էր զանազան երկրների հետ, թեև այդ ճանապարհները հնից սկսած միշտ նույնը չեն մնացել, այլ հաճախակի փոխել են իրենց ընթացքը՝ համաձայն երկրում ստեղծված վարչական քաղաքական պայմանների։

Աշխարհագրքի հետ տպագրված Մովսես Խորենացուն վերագրվող համառոտ աշխարհացույցի մեջ մի հատված կա, որն սկսվում է այսպես.

«Անհա կամիմ զչափ աշխարհիս համառօտել մղոնախաղաց ստնաչափութեամբ ուղղեկարար ապարիզաճեմ դրութեամբ»[1]։

Այս հատվածը ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակել է Սեն Մարտենը[2], ռուսերեն թարգմանությամբ ակադեմիկոս Հ. Մանանդյանը[3]։ Մենք այստեղ մեջ կբերենք գրաբար բնագիրը համառոտ աշխարհացույցից։

(1) «Ի Դունայ մղոն երկու հարիւր՝ ի Կարնոյ քաղաք,
Անտի մղոն հարիւր և քսան՝ ի փոռ աշխարհն Հայոց և Յունաց,
Անտի մղոն յիսուն՝ ի Կողոնիոյ բերդն,
Անտի մղոն հարիւր՝ ի Նիկիսար (Նեոկեսարիա),
Անտի մղոն ութսուն՝ յԱմասիայ,
Անտի մղոն հարիւր և երեսուն՝ ի Գանգրայ,
Անտի մղոն ութսուն՝ յԱնկիւրիայ,
Անտի մղոն երեք հարիւր քսան՝ ի Կոստանդինուպօլիս,
Անտի մղոն վեց հազար՝ ի Հռոմ։

(2) Ի Դունայ մղոն հարիւր և եօթանասուն՝ ի Խլաթ,
Անտի մղոն ութսուն՝ ի Քղիմար,
Անտի մղոն հարիւր և ութսուն՝ ի յՈւռհա,
Անտի մղոն քառասուն՝ յԵփրատ գետ,
Անտի մղոն հարիւր և յիսուն՝ յԱմասիա,
Անտի մղոն հարիւր՝ ի Դամասկոս,
Անտի մղոն յիսուն՝ ի Թարօր լեառն,
Անտի մղոն հարիւր՝ ի քաղաքն յԵրուսաղէմ։

(3) Ի Դունայ մղոն վաթսուն՝ ի Բերթկունսն,
Անտի մղոն հարիւր և վաթսուն ի Պարտաւ,
Անտի մղոն յիսուն՝ ի ծովն Կասբից։

(4) Ի Դունայ մղոն եօթանասուն՝ ի Նախչուան,
Անտի մղոն հարիւր և քսան՝ ի Գանձակ Շահաստան
Անտի մղոն երեք հարիւր և եօթանասուն՝ ի Տապօն,
Անտի մղոն եօթանասուն՝ ի Յակողոն,
Անտի մղոն հարիւր և քառասուն՝ ի Պասրայ,
Անտի մղոն քսան՝ ի ծովն Պարսկային։

(4 բ) Դարձեալ ի Գանձակայ մղոն հարիւր՝ ի Նինուէ,
Անտի մղոն հարիւր և հիսուն՝ յՈւռհայ։

(5) Ի Դունայ մղոն յիսուն՝ ի Կողբ,
Անտի մղոն հարիւր և հինգ՝ ի Կատ գեղ,
Անտի մղոն հարիւր և քառասուն՝ ի Տփխիս,
Անտի մղոն եօթանասուն՝ ի Հունարակերտ,
Անտի մղոն հարիւր՝ ի Պարտաւ,

---

[1] Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ, Ամստերդամ, 1669, էջ 61—64։ Այդ նույն հատվածը տպագրված է նաև նույն աշխարհացույցի Մարսելիայի 1676 և 1683 թվականների հրատարակության մեջ։ Մղոնաչափքի հին բնագիրը պահվել է Պետական Մատենադարանի նշանավոր № 102 (նոր համարը 2679) ձեռագրի մեջ (արտագրված 971 թ.)։ որ հրատարակել է ակադ. Հ. Մանանդյանն իր «Խորենացու առեղծվածի լուծումը» աշխատության 85-87 էջերում՝ Աղվեսագրքում տպված բնագրի հետ միասին։

[2] Saint Martin, Mémoires historiques et géographiques sur l' Arménie II, p. 397։

[3] Проф. Я. А. Манандян. О торговле и городах... էջ 171։

(Զր) Դարձեալ է յԵրուսաղէմ մղոն հինգ հարիւր՝ յԱղէքսանդրիայ,
Անտի մղոն հազար՝ ի Կոստանդնուպօլիս,
Անտի մղոն երեք հարիւր՝ ի Տրապօլիս,
Անտի մղոն հազար և երեսուն՝ յԱփրիկայ,
Անտի մղոն իննհարիւր՝ ի Սեպտե,
Անտի մղոն հազար՝ յՈվկիանոս ծովն անծանօթ[1]։

Ինչպես տեսնում ենք, այս մղոնաչափերի մեջ հիմնական կենտրոն լինելով Դվինը, ցույց է տրված հինգ հիմնական ճանապարհ։ Առաջինը գնում է դեպի արևմուտք—Կարին, Ամասիա, Անկարա, Կոստանդնուպոլիս և Հռոմ։ Երկրորդը՝ դեպի հարավ, Դվինից դեպի Երուսաղեմ և այնտեղից դեպի Աֆրիկա և Խաղաղ օվկիանոսի ափերը (2 ր.), երրորդը գնում է դեպի արևելք, Դվինից դեպի Կասպից ծովի ափերը։ Չորրորդը՝ Գանձակի վրայով Պարսից ծոց (4), իսկ նրա մի ճյուղն էլ Գանձակի վրայով դեպի Նինվե և Ուրֆա։ Հինգերորդ ճանապարհը գնում է դեպի Թբիլիսի։

Այս ուղեգծերի քննությունը ցույց է տալիս, որ Դվինն առևտրական կապեր է ունեցել. 1. Միջինասիական երկրների հետ՝ Կասպից ծովի վրայով, 2. Բյուզանդիայի հետ՝ Փոքր Ասիական ցամաքային ճանապարհով, 3. Հարավային Եվրոպայի և Աֆրիկայի հետ՝ Երուսաղեմի վրայով, առաջինի հետ ծովով, իսկ երկրորդի հետ՝ Աֆրիկայի հյուսիսային ափերով, 4. Հարավային Ասիայի հետ՝ Պարսից ծոցի ծովային ճանապարհով, 5. Վրաստանի, Հարավային Ռուսաստանի և հյուսիսային այլ երկրների հետ՝ Թբիլիսի - Բարդա ուղեգծով։ 6. Բացի այդ, մի ճանապարհ էլ գնացել է դեպի Միջագետքի հարավային երկրները՝ Նինվե և Եդեսիա (Ուռհա)։ Դվինը Թբիլիսիի հետ շատ է կապված եղել և այդ կապվածությունը երևում է նաև այն բանից, որ Դվին քաղաքի դռներից մեկը կոչվել է Թիֆլիսի դուռ:

Այս մղոնաչափերի մեջ զարմանալի կերպով չի նշված Դվինից դեպի Տրապիզոն տանող առևտրական ուղին, որ հայ և օտար մի շարք մատենագիրների տվյալների համաձայն խոշոր նշանակություն է ունեցել միջին դարերում։

Արաբացի հեղինակ Ալ Իստախրին խոսելով Հայաստանի և հայերի մասին, ասում է.

«Նրանք (հայերը) գիտեն մի տեղ, որտեղից մտնում են Ռում (Հռոմ—Բյուզանդիա), այդ տեղը հայտնի է Տարապեզունդե անունով (Տրապզոն)։ Այստեղ են հավաքվում վաճառականները և այնտեղից մեկնում Ռումի երկրներն առևտրի համար։ Այսպիսով ինչ որ հանդիպում է այդ երկրներում—դիպակյա, և՛ մետաքսյա, և՛ ռումական շորեր, դրանք Տարապեզունդեից են»[1]։

Տրապիզոնը, թեև այդքան մեծ դեր կատարեր առևտրի մեջ, չէր կարող չգրավել Մովսես Խորենացուն վերագրվող աշխարհացույցի հեղինակին։ Մեզ թվում է, որ այդ հատվածը գրվել է ոչ թե արաբների տիրապետության վերջին դարերին, կամ նրանից առաջ, ինչպես ենթադրել է ակադ. Մանանդյանը, այլ նրանից շատ առաջ, մարզպանության շրջանում, երբ դեռ ևս ուժի մեջ էր Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև կնքված պայմանագիրը, ըստ որի, այդ երկու պետությունների միջև առևտուր երեք որոշակի քաղաքներում էր միայն թույլատրվում կատարել. որոնցից մեկը Բյուզանդիայում էր (Կալինիկում), մեկը՝ Պարսկաստանում (Մծբին) և երրորդը՝ Հայաստանում (սկզբում Արտաշատ և հետագայում Դվին)։ Միայն այդ ժամանակ Տրապիզոնն իր առևտրական նշանակությունը կարող էր կորցրած լինել, որովհետև պետական տեսակետից արգելված էր այնտեղ օտար վաճառականների մուտքը։ Իսկ մինչ այդ, և արաբների տիրապետության ժամանակ, ցամաքային ճանապարհներից ավելի գերադասելի էր ծովայինը, որովհետև ցամաքի վրա Պարսկաստանը և Բյուզանդիան միմյանց հետ երկար ժամանակ պատերազմ էին վարում և վարչական մանր միավորումներին և քաղաքներին վաճառականներն անվերջ մաքս պետք է վճարեին մեկից մյուսն անցնելու ժամանակ։

---

[1] Գիրք աշխարհաց և աստղաբաշխութեանց որ է Աղուեսագիրք. Յամսթէրդամում, ի թուոյ փրկչին 1668, էջ 65—69։

[1] СМОМПК, XXIX, էջ 19—21։

* * *

Հայաստանի վրայով կատարվող առևտուրը միշտ չէ, որ ծաղկուն վիճակում է գտնվել։ Քաղաքական անբարենպաստ հանգամանքները հաճախ արգելակել և ժամանակավորապես դադարի են մատնել նրան։

Մարզպանության շրջանում առևտուրն ուժեղ թափ ստացավ հատկապես Դվինում, որը հանդիսանում էր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև կատարվող առևտրի երեք հանգուցակետերից մեկը։ Բայց 6-րդ դարում պարսկա-բյուզանդական պատերազմների ժամանակ, առևտուրը խիստ թուլացավ, մինչև Հուստինիանոսի՝ Պարսկաստանի հետ 562 թվականին պայմանագիր կնքելը, որից հետո առևտուրն սկսեց դարձյալ զարգանալ։

Պրոկոպիոս Կեսարացու վկայությամբ 5-րդ և 6-րդ դարերում Դվինը պարսկական և հռոմեական (բյուզանդական) ապրանքների փոխանակման շուկա էր։

Այդ առթիվ նա գրում է իր «Հռոմեացիների պատերազմները պարսիկների դեմ» գրքի 2-րդ հատորում.

«Դուվին (Դվինը), շատ բերքատու երկիր է, ունի բարեխառն օդ և լավ ջուր, Թեոդոսիոպոլսից հեռու է ընկած ութը օրվա ճանապարհով։ Այստեղ դաշտերը հարթ են և հարմար ձիավարության։ Միմյանց շատ մոտիկ գտնվող բազմամարդ գյուղերը բնակված են առևտրականներով, որովհետև Հնդկաստանից, հարևան Վրաստանից և պարսիկների և նույնիսկ հռոմեացիների հպատակության ներքո գտնվող գրեթե բոլոր տեղերից այդտեղ են բերում ապրանքներ, որոնցով նրանք առևտուր են անում»[1]։

Հին հեղինակները նշում են, որ Հնդկաստանից և Չինաստանից առևտրականները Եվրոպա են տարել զանազան հնդկական գործվածքներ, օծանելիքներ, փղոսկր, համեմունքներ, չինական մետաքս և այլ բազմաթիվ առարկաներ։ Եվրոպայից դեպի Ասիա են տարել այլ ապրանքներ։

Հայաստանն էլ իր ապրանքներով մասնակցել է այդ առևտրին։ Նա տվել է պղինձ, դեղատու բույսեր, ներկեր, թանկարժեք քարեր, շիբ, սրոցաքարեր և այլն։

Հին հեղինակները միայն պատահաբար են նշել Հայաստանից արտահանվող նյութերն այս կամ այն առիթով, այդ պատճառով էլ, ինչպես ճիշտ նշել է ակադ. Հ. Մանանդյանը, վերևում թվարկած առարկաներով չէր սահմանափակվում Հայաստանից արտահանվող առարկաների ցանկը։

Սակայն, արաբների արշավանքը 640 թվականին ամեն ինչ տակն ու վրա արեց և 8-րդ դարի սկզբներից սկսած արաբական իշխանության հետզհետե հիմնավորմանը զուգընթաց ինչպես առևտուրը, այնպես էլ երկրի ողջ էկոնոմիկան սկսեց քայքայվել և այդ քայքայման պրոցեսը տևեց մինչև 9-րդ դարի սկզբները, երբ արդեն արաբական իշխանությունը թուլացել էր և Հայաստանում ակտիվացել էին Բագրատունյաց, Արծրունյաց և Սյունյաց նախարարությունները։

Արաբներն իրենց տիրապետության ժամանակ, բացի ավարառությունից և կոտորածներից, տեղի հայ բնակչության վրա այնքան ծանր հարկեր ու զանազան տուրքեր էին դնում, որ նրանք այդ տուրքերի ծանրությանը և ապօրինություններին չդիմանալով, անվերջ ապստամբում էին նրանց դեմ և այդ պատճառով ավելի ուժեղ հալածանքի և ոչնչացման մատնվում։ Բացի այդ, արաբների տիրապետության շրջանում, Արաբիայից զանազան արաբական ցեղեր սկսեցին տեղափոխվել դեպի Հայաստան մշտապես այստեղ բնակվելու համար։ Գաղթող արաբացիք զանազան պատրվակներով հայերից խլում էին նրանց հարստությունը՝ տները, կալվածքները, շարժական գույքը, իսկ արաբ ոստիկանները պաշտպանում էին նրանց ապօրինի վարմունքը։

Առևտուրն ուժեղ թափով զարգացավ և իր զարգացման գագաթնակետին հասավ 9-րդ դարից սկսած մինչև 11-րդ դարի կեսերը, Բագրատունյաց թագավորության ժամանակ։ Արաբ հեղինակների տված մի կողմնակի վկայությունից երևում է, որ Հայաստանի արհեստավորներն այդ ժամանակ ոչ միայն մշակում և բանվածքներ էին պատ-

[1] Прокопий Кесарийский, История войн римлян с персами, перевод с греческого Спиридона Дестуниса, Спб, 1880, книга вторая, стр. 181—182.

րաստում տեղական հումքից, այլև նրանք հումք էին ստանում հարևան երկրներից։ 9-րդ դարի վերջերքի արաբ մատենագիր Ալ Յակուբին (մեռել է 904 թվականին) իր «Թագավորությունների» գրքի մեջ գրում է.

«Վասիտին (քաղաք) հետևում է Նիհրաբան քաղաքը, որտեղ հույկական բանվածքի հենք են պատրաստում, իսկ հետո տանում Հայաստան, որտեղ դրանք մանում և գործում են»[1]։

Արաբ մատենագիրները հաճախ հիշատակում են կարմիրդեղի մի նրբին տեսակը, որին նրանք անվանում են Հայկական։ Տասներորդ դարի մատենագիր Ալ Իստահրին իր «Թագավորությունների ճանապարհները» գրքի մեջ (գրել է 930 թվականին) ասում է՝

«Դաբիլը (Դվինը) մեծ է Արդաբիլից, այս քաղաքը Հայաստանի մայրաքաղաքն է և նրա մեջն է իշխանի պալատը, ինչպես որ Առանի իշխանի պալատը Բերդայում է և Ադերբեյջանինը՝ Արդաբիլում, Դաբիլի շուրջը (շատ բարձրր և զարմանալի) պարիսպ (կա), այստեղ շատ քրիստոնեաներ կան և գլխավոր մզկիթը եկեղեցու կողքին է։ Այս քաղաքում արտադրվում է բրդյա շորեր և գորգեր, բարձեր, բազմոցներ (մինդար), ժանյակներ և հայկական արտադրության այլ առարկաներ։ Այստեղ է արդյունահանվում «կըրմըզ» կոչվող ներկը, նրանով են ներկում մահուդը։ Ես տեղեկացա, որ դա որդ է, որն իր շրջապատը հյուսում է շերամի որդի նման, իսկ բացի դրանից, ես իմացա, որ հենց այդտեղ էլ արտադրում են բազմաթիվ մետաքսյա բանվածքներ։

Դաբիլը Հայաստանի մայրաքաղաքն է, այնտեղ Աշոտի որդի Սմբատն է։ Քաղաքը մշտապես գտնվել է քրիստոնյա մեծամեծների ձեռքին, իսկ քրիստոնյաները կազմում են Հայաստանի բնակչության մեծ մասը, սա է «Արմանի Թագավորությունը»[2]։

Նույն Իստահրին խոսելով խազարների երկրի մասին, գրում է.

«Խազարներն իրենք շոր չեն պատրաստում, այլ նրանք իրենց շորերն ստանում են բացառապես Գուրջանից (Վրաստանից) Տաբարիստանից, Հայաստանից, Ադերբեյջանից և Ռումից (Բյուզանդիայից)»[1]։

10-րդ դարի արաբ մատենագիր Ալ-Մուկադասին գրում է՝

«Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա նա մեծ երկիր է... այնտեղից արտահանում են ծածկոցներ, բրդյա ծածկոցներ, որոնք նշանավոր են և ունեն առանձին հատկություններ։ Մայրաքաղաքը Դաբիլն է, իսկ քաղաքներն են Բադլիսը, Խլաթը, Արջիշը, Բերկիրին, Խուվեյը (Խոյը), Սալմասը, Ուրմիան...»[2]։

Նույն հեղինակը մի այլ տեղում գրում է.

«Դաբիլից արտահանում են մահուդներ, գորգեր, բազմոցներ և նշանավոր ժանյակներ»[3]։

Ալ. Մուկադասին գրում է.

«Այնտեղ (Հայաստանում) ունեն նաև կըրմըզ, դա մի որդ է, որ հողի մեջ է առաջանում, կանայք գալիս և ուշադիր կերպով հավաքում են պղնձե անոթների մեջ և տեղավորում հացի փառարանների մեջ»[4]։

Նույն կըրմըզի մասին դարձյալ արաբ մատենագիր Ալ-Ֆակիհը 903 թվականին գրել է.

«Հայերն ասում են... մենք ունենք կըրմըզ, որը ոչ մի տեղ չկա, բացի այստեղից։ Դա կարմիր որդ է, որը հայտնվում է գարնան օրերին. Նրան հավաքում են, եփում և նրանով բուրդ են ներկում»[5]։

Արաբ մատենագիրների հաճախակի հիշատակած կըրմըզը նշանավոր Որդան կար-

[1] Из книги царств Ахмед-ибн-абу Якуб-ибн Вадых Ал Катиб Ал Якубия, перевод и примечания Н. А. Караулова, СМОМПК, вып. XXXII, Тифлис, 1903, стр. 59.

[2] Из книги путей царств Абу-Исхака Ибрагим-ибн-Мухаммеда ал Фарисия ал Истахрия, известного под именем ал-Керхия, СМОМПК, вып. XXIX, Тифлис. 1901, стр. 19.

[1] СМОМПК, вып. XXIX, Тифлис, 1901. стр. 51.

[2] Н. А. Караулов, Сведения арабских географов IX и X веков по р. Хр. о Кавказе, Армении и Азербайджане, СМОМПК, выпуск XXXVIII, стр. 6—7.

[3] Նույն տեղ, էջ 14։

[4] Նույն տեղ, էջ 16։

[5] СМОМПК, выпуск XXXI, стр. 39.

միր ներկն է, որ հնում մեծ չափերով արտահանվել է զանազան երկրներ։ Եթե նկատի ունենանք հին հույն հեղինակների հաղորդումները և ուշ ժամանակի գրավոր տեղեկությունները, կտեսնենք, որ որդան կարմիրը գրեթե 1500 տարի, եթե ոչ ավելի, օգտագործվել է տեղում իբրև ներկ և հանդիսացել է արտահանման կարևոր առարկա։

Դվինի բրդե և մետաքսե բանվածքներն ու գորգերը ևս մեծ գովասանքի են արժանացել և միջազգային շուկայում ճանաչված են եղել իբրև ամենալավը ու ամենից տարածվածը։

Հայկական բանվածքների և մետաքսի մասին Արաբ աշխարհագիր Իբն-Հաուկալն իր «Ճանապարհների և թագավորությունների գրքի» մեջ (գրել է 977—978 թվականներին) ասում է.

«Դաբիլում պատրաստում են մեծ քանակությամբ մետաքսյա շորեր, դրանց մասին պետք է ասեմ, որ Ռումի հողում էլ շատ կան, թեև սրանք (Դաբիլում արտադրվողը) ավելի արժեքավոր են, իսկ ինչ վերաբերում է «Հայկական գործվածքներ» կոչվածներին, դրանք բուստեր[1] են, բազմոցներ (մինդար), գորգեր, ծածկոցներ, խալիչաներ և բարձեր»—նրանց նմանը չկա աշխարհիս մի ծայրից մինչև մյուսը, բոլոր ուղղություններով»[2]։

Նույն աշխարհագիրը հիշատակում է արտահանվող կենդանիներ՝ ոչխար և ջորի, որոնց շատ է գովում, բայց մի քանի անգամ դարձյալ հիշատակում է Դվինում արտադրվող բանվածքներն իր գրքի զանազան մասերում։

Սակայն, նա հիշատակում է Դվինի կողքին նաև մի քանի այլ հայկական քաղաքներ, որտեղ նույնպես պատրաստում են երկրից դուրս արտահանվող առարկաներ։ Այս, կարծում ենք, շատ կարևոր խնդիր է, որի վրա մինչև այժմ ուշադրություն չի դարձվել մեր պատմագրության կողմից։ Հարցն այն է, որ միջազգային առևտրի զարգացման և ծավալման հետևանքով, տնայնագործական արհեստները Հայաստանում զարգացել են ոչ միայն կարավանային ճանապարհների հանգուցակետերում, այլ, ինչպես տեսնում ենք արաբ մատենագիրների տեղեկություններից, նաև երկրի տարբեր շրջաններում, որոնք առևտրական մեծ ճանապարհների հետ անմիջական կապ չեն ունեցել։ Պարզ է, որ այդ շրջանային քաղաքներին Դվինը ծառայել է իբրև ուղեցույց իր բազմակողմանի տնտեսությամբ։ Իբն-Հաուկալը Հայաստանի քաղաքները թվելուց հետո ավելացնում է.

«Այդ քաղաքներում և նրանց միջև ընկած շրջաններում կան ապրանքներ, մուծման առարկաներ, անհրաժեշտ կենդանիների տարբեր տեսակներ, ոչխար և զանազան երկրներ տարվող կտորեղեն, որոնք այն տեղերում հայտնի են և հռչակված, ինչպես օրինակ՝ Սալմասում (Սալմաստ) պատրաստվող և մեկ հատը մեկից մինչև տասը դինարի ծախվող հայկական գոտին, որի նմանը չկա այլ երկրներում։ Վերևում հիշատակված հայկական բանվածքները պատրաստվում են Դաբիլում, Մերանդում, Թերբիզում։ Դաբիլում և Հայաստանի շրջաններում պատրաստում են հայկական բազմոցներ, գորգեր, որոնք հայտնի են հայկական «Մեհֆուր» անունով, դրանց նմանը քիչ կա բոլոր երկրներում, որոնց գործվածքը նման է հայկական արտադրանքին։ Ճիշտ այդպես էլ Հայաստանում արտադրում են գլխաշորեր, նախշազարդ ծածկոցներ, շալեր, որոնք գործում են Միաֆարկինում (Տիգրանակերտ) և Հայաստանի տարբեր տեղերում»[1]։

Նույն հեղինակը հիշատակում է նաև հարևան երկրներից դեպի Խորասան, Իրաք, Ասորիք և այլ երկրներ արտահանվող ցեղական լավագույն ջորիների[2] մասին։

Նա գրում է.

---

[1] Արաբների գլխի ծածկոցը, որ մի մեծ մետաքսե կտոր է, հագնում են գլխին, իսկ շարունակությունը ծածկում ուսերը։ (Ծանոթ. թարգմանչի)։

[2] СМОМПК, вып. XXXVIII, стр. 92.

[1] СМОМПК, вып. XXXVIII, стр. 94—95։

[2] L. Laurent. L'Arménie entre Byzance et l'Islam (էջ 39)։ Ջորիի փոխարեն ձի է հիշատակում, որից և օգտվելով ակադ. Հ. Մանանդյանը նույնպես ձին է հիշատակել իբրև Հայաստանից արտահանվող կենդանի (О торговле и городах Армении էջ 158)։ Դժբախտաբար մենք ձեռքի տակ չունենք Իբն-Հաուկալի աշխատության բնագիրը՝ թարգմանության ստուգելու համար։

«Ջավազանից, Հայաստանի շրջաններից և Առանից (Աղվանք) դեպի Խորասան, Իրաք, Ասորիք և այլ երկրներ արտահանում են հիանալի ջորիներ, որոնք աչքի են ընկնում իրենց ցեղականությամբ, դիմացկունությամբ, որոնց մասին հիշատակելու պետք չկա, որովհետև բոլորին հայտնի են»[1]։

Բագրատունյաց շրջանում առևտրական կապերն ուժեղացել էին նաև Միջին Ասիայի հետ։ Արաբ հեղինակ Ալ-Իդրիսին «Բիթաբ-Ռոջեր» գրքի մեջ գրում է.

«Այդ (Մագրա) գետի (Միջին Ասիա) անտառներում կա մի կենդանի, որը կուղբ է կոչվում, այդ կենդանին ունի գեղեցիկ մորթի, որը պատկանում է լավագույն մորթիների թվին և բարձր գին ունի։ Այդպիսի բազմաթիվ կենդանիներ են որսում և նրանց մորթին տանում Ռումի և Հայաստանի բոլոր երկրները»[2]։

Թուրքմենստանում հայկական գորգերը բարձր են դասվել բոլոր տեսակի գորգերից և նրանք, իբրև թանկարժեք առարկաներ, արքային տրվող նվերների մեջ գրավել են կարևոր տեղ։ Այսպես օրինակ, 11-րդ դարի արաբ հեղինակ Աբու-լ-Ֆազլի-Բեյհակին իր «Թարիխ-ի-Բեյհակի» տարեգրության մեջ նկարագրելով Խորասանի սայիր դիվան Աբու-լ-Ֆազլ Սուրի Մուիզի էմիրին, հիջրեի 424 թվականին (մեր 1033) 500 հակ տարած նվերներին ասում է.

«Սուրիի այդ նվերների մեջ այնքան շատ կար հագուստեղեն, անոթներ, ոսկե և արծաթե առարկաներ, ստրուկներ ու ստրկուհիներ, մուշկ և քաֆուր, և մարգարիտ, հայկական գորգեր, և (սովորական) գորգեր և այլ բարիքներ, որ էմիրն ու բոլոր ներկա եղողները զարմացան»[3]։

Բագրատունյաց իշխանության ժամանակ առևտրի և արդյունագործության զարգացման հետևանքով միջազգային առևտրի ճանապարհների մի քանի կետերում առաջ եկան և զարգացան նոր քաղաքներ, որոնք իրենց հերթին հայ ժողովրդի պատմության մեջ խաղացին կարևոր դեր։ Միանգամայն իրավացի է ակադ. Հ. Մանանդյանը, երբ գրում է, որ Դվինից դեպի Տրապիզոն գնացող տարանցիկ ճանապարհի վրա Բագրատունյաց ժամանակ առաջ եկան և զարգացան Անի, Կարս և Արծն քաղաքները[1]։

Այդ քաղաքներից միայն մեկը, Անին է, որ հիմնավոր ուսումնասիրության է ենթարկվել սիստեմատիկ պեղումների միջոցով, իսկ մնացածների նյութական կուլտուրան մեզ բոլորովին անհայտ է։ Այսօր, երբ համեմատության ենք դնում Դվինի և Անիի պեղածո նյութերը միմյանց հետ, համոզվում ենք, որ սկզբնական շրջանում Անին հետևել է Դվինին և այդ պատճառով իր արտադրած առարկաները գրեթե նույնն են Դվինի միևնույն ժամանակաշրջանի արտադրության հետ, իսկ հետո, Անին զարգացնելով իր արդյունագործությունը, սկսել է հետզհետե Դվինից տարբերվել իր միանգամայն առանձնահատուկ արտադրությամբ։ Այդ երևույթն ամենից շատ աչքի է ընկնում գեղարվեստական խեցեղենի արտադրանքի մեջ։ Անին իր գոյության սկզբնական շրջանում ընթանալով Դվինի հետևից, շուտով սկսեց մրցել Դվինի հետ, որի ընթացքում նա ոչ միայն ետ չմնաց, այլև առանձին բնագավառներում առաջ անցավ նրանից։

Հայկական աղբյուրներն օտար երկրներ գնացող առևտրականների մասին գրեթե որևէ տեղեկություն չեն տալիս, միայն Թովմա Արծրունու (10-րդ դար) մի արտահայտությունից իմանում ենք, որ վաճառականները հեռավոր երկրներ գնալու համար ձմեռը պատրաստություններ էին տեսնում և գարունը բացվելուն պես ճանապարհ ընկնում։ Բուղայի արշավանքները նկարագրելու ժամանակ, Թովմա Արծրունին ասում է.

«Եւ եղև իբրև ձմեռն փոքրացաւ և ժամանակ գարնանային եղանակին մերձեցաւ և օդն մառախլաձև միգախառն յստակեցաւ և հարաւային ջերմագոյն օդն շնչեաց ի խորագոյն դաշտն քաղաքին Դվնայ, և ընդարձակեալ արմատքն և բոյսքն զգենուլ սկսան զզօրութիւն... և աշխատասէր մշակքն պատրաստեցան ի գործ երկասէր վաստակոցն, և որ-

[1] СМОМПК, вып. XXXVIII, стр. 97։

[2] Материалы по истории туркмен и Туркмении, том I, Москва—Ленинград, 1939, стр. 221.

[3] Նույն տեղ, էջ 238։

[1] Проф. Я. А. Манандян, О торговле... стр. 149.

սորդքն զինքեանց գործիսն պատրաստէին, և վաճառականքն զհեռաւոր ճանապարհացն խոկային պատրաստութիւնն, *և հովիւքն տաւաղելով զգառինսն բչէին ի դալարաբեր հովիտն»*[1]։

Ակադեմիկոս Ն. Մառը, չնայած այն բանին, որ նա տարիներ շարունակ սիստեմատիկ պեղումներ է կատարել Անիում, միանգամայն թերագնահատել է Անիի կուլտուրան Բագրատունյաց տիրապետության շրջանում։ Դեռ ավելին, նա բացասել է Հայաստանի աչքի ընկնող զարգացումը Բագրատունյաց թագավորության շրջանում։ Նա այդ շրջանը համարել է հին կուլտուրայի կրկնության ժամանակաշրջան, երբ որևէ նոր բան չի ստեղծագործվել։ Նա այդ առթիվ գրել է.

«...Հայոց թագավորների դարաշրջանում, Անիի շինությունները լոկ կրկնություն էին հին Հայաստանի տարբեր շրջաններում մշակված ճարտարապետական ոճերի։ Բագրատունի թագավորները 10-րդ դարի կեսերին Անին դարձնելով իրենց դահանիստը, աշխատում էին զարդարել իրենց մայրաքաղաքը, իրենց կարողության համեմատ վերարտադրելով այնտեղ արդեն գոյություն ունեցող օրինակները, ընդօրինակելով հայրենի արվեստի առավել նշանավոր հին հուշարձանները»[2]։

Իր այս միանգամայն սխալ եզրակացությունը հիմնավորելու նպատակով Մառը երկու օրինակ է բերել Անիի ճարտարապետական կառուցվածքներից։ Նա նշել է, որ Բագրատունյաց թագավորության շրջանում կառուցված Անիի Առաքելոց եկեղեցին կրկնությունն է հին Էջմիածնի տաճարի ձևերի, ինչպես այդ մասին նշել է ճարտարապետ Թորամանյանը, և Գագկաշեն բոլորակ եկեղեցին՝ Զվարթնոցի ընդօրինակությունն է։

Այստեղ Մառը մոռացել է, որ վերոհիշյալ երկու հուշարձանների կողքին Բագրատունյաց թագավորների օրով Անին զարդարվել է նաև այնպիսի, հին մատենագիրների բառով ասած, տիեզերահռչակ *կառուցվածքով, ինչպիսին է կաթողիկե եկեղեցին իր երկկենտրոն սլացիկ կամարներով և հռչակավոր Հովվի եկեղեցիով, որ միանգամայն նորություն էր ընդհանրապես այն ժամանակվա ճարտարապետության համար։ Բացի այդ, Մառն այստեղ մոռացել է մի այլ հանգամանք ևս, որ վերածնությունը, ինչպես այդ գիտենք Արևմտյան Եվրոպայի օրինակով, սկսվում է հին ձևերի* վերածնությամբ: *Գագկաշեն տաճարի կառուցման ժամանակ Զվարթնոցն արդեն կործանված էր, ուստի Անիի հռչակավոր Տրդատ ճարտարապետը պետք է կատարեր նրա վերակազմության նախագիծը և Անիում Գագիկի տաճարը կառուցեր այդ վերակազմության համաձայն։ Դա մի բարդ գիտական աշխատանք էր, որ երկրորդ անգամ կատարեց ճարտարապետ Թորամանյանը 20-րդ դարում և դրանով իսկ մեծ անուն վաստակեց։ Իսկ Առաքելոց եկեղեցու նմանությունը Էջմիածնին, զուտ գիտական խնդիր է և բոլորովին առնչություն չունի կրկնություն լինելու հետ, որովհետև այդ երկու տաճարները միմյանց նման են ոչ թե արտաքին ձևերով, այլ իրենց կառուցվածքի ոգով։*

Հայաստանի տնտեսական կյանքը միանգամից ուժեղ անկում ունեցավ 11-րդ դարում, սելջուկյան արշավանքների ժամանակ երբ վերջիններս ներխուժեցին Հայաստան և հիմնովին ավերեցին երկիրը։ Դրան զուգընթաց, Հայաստանի ներսում առաջ եկած արաբական ու հայկական մանր իշխանությունները շարունակ միմյանց դեմ կռիվներ մղելով և երկրի տերիտորիան իրարից անկախ բազմաթիվ մասերի տրոհելով, արգելակում էին միջազգային առևտրի զարգացմանը, որովհետև նախ երկիրն ապահով չէր կարավանների երթևեկության համար և ապա՝ մի իշխանությունից մյուսն անցնելու ժամանակ մաքս վճարելու անհրաժեշտությունը կար։

Սակայն, մի ավելի հիմնավոր պատճառ ևս կար Հայաստանի, մանավանդ նրա արևելյան մասի վրայով կատարվող առևտրի շուտափույթ անկմանը նպաստող։ Մի կողմից հարավային Ռուսաստանի առևտրական ճանապարհները կորցրել էին իրենց ապահովությունը, մյուս կողմից էլ, խաչակրաց արշավանքների պատճառով Հայաստանը դուրս մնաց Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող առևտրական ճանա-

[1] *Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն ի տանն Արծրունեաց, էջ 172։*

[2] Н. Я. Марр. Ани, стр. 35.

պարհների մագիստրալ գծից, որն այդ ժամանակ անցնում էր ավելի հարավից, Միջագետքի և Ասորիքի վրայով[1]։

Ակադեմիկոս Ն. Մառն այս հարցի վերաբերյալ ևս միանգամայն սխալ կարծիք է հայտնել։ Նրա կարծիքով սելջուկյան արշավանքները Հայաստանում ոչ միայն չկասեցրին երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացումը, այլև որոշ չափով նրա զարգացմանն ապգակ հանդիսացան, նույնիսկ «բախտի կամքով» փրկեցին երկիրը սոցիալական և քաղաքական ճգնաժամից։ Այդ առթիվ նա գրել է.

«...Հնամենի կարգը (Հայաստանում) կազմալուծվել էր։ Թարմ ուժ էր պահանջվում, որպեսզի անդարձ խորտակեր հինը և հնարավորություն տար սոցիալական նոր միջավայրում նոր կյանքի վերածնության։ Բյուզանդիան բավականաչափ ուժեղ դուրս չեկավ, որպեսզի այս «բախտի կամքի» կատարողը հանդիսանար։ Պահանջվում էր ավելի անհարկու, ավելի արմատորեն գործող ուժ»[2]։ Ըստ Ն. Մառի ասելով այդպիսի ուժ հանդիսացան սելջուկները։

Ն. Մառը բագրատունյաց թագավորության անկումից և սելջուկյան ավերիչ արշավանքներից հետո Անիում առաջ եկած Շեդադյան ցեղի տիրապետության տարիները՝ 1072 թվականից սկսած, որոշ ընդմիջումներով, մինչև 1161 թվականը դիտել է որպես զարգացման և վերելքի շրջան, անտեսելով այդ տիրապետության բացասական ազդեցությունը երկրի զարգացման վրա։ Մեր պատմագիրներն այդ շրջանի մասին հաղորդում են միայն նեղության, հարստահարության և ճնշման դեպքեր։ Ն. Մառն այդպես բարձր է գնահատում Շեդադյաններին, նկատի առնելով նրանց կատարած շինարարական աշխատանքը, սակայն, այդ առթիվ իր ժամանակին առարկելով Մառին, ճարտարապետ Թորոս Թորամանյանը եկել է այն եզրակացության, որ՝

«Շետտատյաններու շրջանին մեջ ճարտարապետության և գեղարվեստներու զարգացման տեսակետով առանձնապես աչքի ընկնող ոչինչ չեմ գտներ, ընդհակառակը, ,ողբերգակ բանաստեղծ լինել հարկ է՝ ․հունաց տիրապետութենեն և Արփասլանի կոտորածէն սկսած՝ մինչև մեծն Զաքարեի տիրապետության փըրկարար շրջանը բովանդակ Շիրակի սուգն ու շիվանը ողբալու համար։ Ես այստեղ Շետտատյաններու անունով առառավելն արձանագրել կարող եմ քանի մը արվեստագիտական այլանդակություններ և պատմական վշտառիթ անցքեր»[1]։

Բագրատունյաց ծաղկուն շրջանից հետո արհեստներն ու առևտուրը, ինչպես նաև քաղաքային կյանքն ընդհանրապես Դվինում, Անիում և Հայաստանի այլ քաղաքներում երկրորդ անգամ ծաղկեց Զաքարյան տոհմի իշխանության ժամանակ, երբ Հայաստանն անցավ վրաց տիրապետության տակ։ Սակայն, այդ ծաղկուն վիճակը կարճ տևեց, որովհետև 1236 թվականին մոնղոլական ցեղերը մտնելով Հայաստան, ոչ միայն կասեցրին զարգացումը, այլև հիմնահատակ կործանեցին քաղաքները։ Մոնղոլների տիրապետության ժամանակ ծանր հարկեր էին տալիս ոչ միայն գյուղացիք ու քաղաքի բնակիչները, այլև ֆեոդալական տները։ Այդ հարկերն այնքան մեծ էին, որ մարդիկ գերադասում էին իրենց կալվածքներից հրաժարվել և երկրից փախչել որևէ այլ տեղ։ Ուստի բնակչությունն սկսեց խոշոր խմբերով հեռանալ դեպի օտար երկրներ՝ ամայացնելով Հայաստանի քաղաքներն ու գյուղերը։ Այս ժամանակ է, որ Դվինը չքանում է պատմության ասպարեզից և նրա ավերակները ծածկվում են հողի թանձր շերտի տակ։

---

1 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Հայաստանի պատմությունը թյուրք-թաթարական արշավանքների շրջանում, ապակետիպ, ձեռագրի իրավունքով, Երևան, 1[illegible] թ., էջ 91։

2 Н. Я. Марр, Ани, стр. 25.

1 Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն, Նյութեր I հատոր, էջ 339։

РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК ГОРОДА ДВИН

РЕЗЮМЕ

Систематическое и подробное изучение истории армянского народа началось только после установления советской власти в Армении, когда в нашей республике впервые были открыты высшие учебные заведения и научно-исследовательские учреждения.

До этого времени археологическая работа у нас велась большей частью частными исследователями, главным образом любителями.

Советские археологи открыли на территории Армении неизвестные до того времени палеолитические и неолитические стоянки, которые доводят дело изучения культуры Армении до самых первоначальных стадий развития человеческого общества. Они открыли и изучили энеолитические поселения, охватывающие историю нашей страны в 3-м тысячелетии д. н. э. Была открыта и изучена урартская культура на Кармир-блуре и в других местах. Изучается культура античного времени (Гарни), о которой до последних лет имелись лишь очень скудные сведения. Наконец, были произведены систематические раскопки Двина, который являлся одним из крупнейших центров страны в течение почти целого тысячелетия, начиная с IV в. и до середины XIII в. нашей эры.

Двин, как столица Армении, играл большую роль не только в политической и культурной жизни средневековой Армении, но и был крупным центром ремесел и торговли того времени.

Именно в силу этих обстоятельств Совнарком Армянской ССР в 1936 г. вынес решение о необходимости приступить к систематическим раскопкам Двина. Эти работы, начавшиеся в 1937 г. и временно прерванные в годы Великой Отечественной войны, были возобновлены с 1946 г. и продолжаются до настоящего времени.

Результаты раскопок Двина так велики и многообразны, что трудно охватить их целиком, хотя бы в самых общих чертах в небольшом очерке. Поэтому мы здесь остановимся только на нескольких основных вопросах, которые рассмотрены в настоящей книге.

До раскопок Двина в науке господствовало мнение, согласно которому Двин стал городом лишь в период марзпанства, во второй половине V века, несмотря на то, что основание его приписывалось древнеармянскими историками (Фавст Бузанд, Моисей Хоренский) аршакидским царям и относилось к 30-м годам IV в. Эту точку зрения защищали особенно те исследователи, которые считали Моисея Хоренского автором не V века, а гораздо позднего времени, с целью показать тем самым, что Хоренский не знал истории V в.

Однако раскопки выяснили, что двинский холм имеет очень древнюю историю. Он стал поселением еще в конце 3-го тысячелетия до н. э., во время распространения энеолитической культуры, когда человек только пере-

ходил к изготовлению орудий из меди и основывал свои постоянные поселения. В нижних слоях двинского холма найдены многочисленные обломки предметов этой эпохи (черепки чернолощеной и краснолощеной керамики, обсидиановые и кремневые орудия, зернотерки, костяные шилья и т. д.).

Двинский холм, частично также его окрестности, были поселены в течение всего 2-го тысячелетия до н. э. и в урартскую эпоху, с IX по VI в. до н. э. Из этой эпохи найдены не только отдельные предметы (крашеная и урартская керамика), но также жилища начала I тысячелетия до н. э. и развалины урартских строений из сырцевого кирпича больших размеров.

В античную эпоху двинский холм был превращен в крепость. Из предметов этой эпохи самыми замечательными являются головы от статуй из туфового камня, найденные в пределах теперешнего села Двин (рис. 232 и 233).

Двинский холм был обитаем и в эпоху армянских Аршакидов, в I и II вв. н. э. В этот период он, по всей вероятности, был опять крепостью. Та территория холма, которая впоследствии была занята центральным кварталом города Двина, в эпоху Аршакидов служила крепостным кладбищем. Раскопками здесь обнаружены кувшинные погребения, в которых найдены такие же предметы, какие были раскопаны в аналогичных погребениях Эчмиадзина, Гарни и других мест (рис. 56—58).

В начале IV в. в Двине существовала не только крепость, но и городское поселение за крепостной оградой. Об этом свидетельствует наличие огромного языческого храма вне крепости, который при принятии армянами христианства был превращен в церковь.

В 30-х годах IV в. Двин становится столицей Армении.

О превращении Двина в столицу армянских Аршакидов, историк V в. Фавст Бузанд пишет, что по приказу царя Хосрова Кодака его военачальник Ваче посадил леса на двинском поле, начиная от крепости Гарни до Двина, согнав на эти работы тысячи жителей окружающих сел. Эти леса были искусственно заполнены дикими зверями для царской охоты, а на двинском холме были построены царские дворцы. Об этих же событиях пишет также историк V в. Моисей Хоренский; перенесение столицы из Арташата в Двин он объясняет дурным климатом старой столицы.

Наши современные исследователи правы, однако, в том, что Двин стал большим городом лишь в эпоху марзпанства, со второй половины V в., когда он был не только столицей Армении, но и центром экономической, политической и культурной жизни страны.

До раскопок Двина материальная культура Армении в IV—X вв., не считая архитектурных памятников и случайно найденных там и сям предметов, была совершенно неизвестна. Вот почему раскопки Двина имеют исключительно важное значение для раскрытия и понимания материальной культуры данного времени.

Раскопками в центральном квартале Двина (второй участок) были найдены многочисленные археологические предметы, относящиеся ко времени с IV по X вв.: различные виды простой и поливной керамики, почти все виды средневекового оружия, сосуды и украшения из стекла, сельскохозяйственные и ремесленные орудия и т. д.

Материалы, относящиеся к эпохе марзпанства (IV—VII вв.), раскопаны в центральном квартале города, где были построены здания IV—VI вв. Здесь, недалеко от однонефной базиличной церкви, найден обломок кувшина с орнаментом из виноградных гроздьев, указывающим на то, что этот предмет относится к VII в., ибо подобный орнамент был широко распространен только в это время.

Случайно найденный еще до начала раскопок золотой крест с так называемой „сасанидской“ геммой может быть

отнесен к концу VI и к началу VII в., не только благодаря наличию на нем геммы, но и по своим формам, а так же по плетеному орнаменту.

До раскопок Двина из средневекового оружия нам были известны лишь несколько типов наконечников стрел из Ани. В Двине же найдены самые разнообразные виды оружия: различные типы наконечников стрел и копий, секира, ножи и кинжалы, метательные камни и т.д.

С IV по X вв. Двин был не только местом сбора военных сил Армении и имел свои крупные арсеналы, но и центром производства оружия, а также постоянным местом для зимовья армянских войск и полчищ иноземных завоевателей. Это свидетельствует о том, что в Двине имелись не только соответствующие климатические условия и, как пишет византийский историк VI века Прокопий Кесарийский, „ровные поля, способные к конской езде", но также и соответствующие казармы, арсеналы, склады провианта и питьевая вода.

Вот почему вышеупомянутый историк, говоря о Двине, в первую очередь, пишет о том, что „Дувий (Двин) страна очень плодоносная, имеет благодарственный воздух и хорошую воду"[1].

При марзпанах (V—VII вв) Двин славился своими многочисленными мастерскими профессиональных ремесленников, значительная часть которых работала для внешнего рынка. Из правил, принятых в Двине в 554 г., мы узнаем, что в это время даже духовные лица участвовали в торговле и богатели на ростовщичестве[2].

В Двине побывали на короткий срок не только странствующие иноземные торговцы, но имелись также целые общины купцов-сирийцев, евреев и персов.

Из одного циркулярного письма католикоса Нерсеса II (548—557) видно, что сирийцы несторяне имели в Двине своего епископа и свою церковь, против которых католикос армян объявляет бойкот. В этом письме сказано, что сирийцы обосновались в Двине „в целях торговли" (*„պատճառաւ վաճառաշահութեան"*).

Интересно, что католикос предлагает не иметь никаких связей с несторианцами: не есть и не пить с ними, не иметь никаких родственных связей. Разрешается только вести с ними торговлю, как и с другими не христианскими народами.

Упомянутый нами выше византийский историк Прокопий Кесарийский пишет, что в Дувии (Двине):

> „Многолюдные селения, лежащие близко друг к другу, заняты торговцами: потому что из Индии, из соседственной Иверии и почти от всех народов, подвластных Персам и даже Римлянам, привозят туда товары, которыми они торгуют. Здешний христианский епископ называется греческим словом католикос, потому что он один имеет духовную власть над всеми здешними селениями"[1].

Этот отрывок дал повод акад. Я. А. Манандяну предполагать, что купцы не имели права селиться в самом городе и поэтому жили в окрестных селах. Это утверждение не подтверждается, ибо при марзпанах среди жителей самого города Двина упоминаются не только купцы-армяне, но и купцы других национальностей (евреи, персы, сирийцы). Из слов Прокопия видно лишь то, что купцов в Двине было так много, что они селились также и в окрестных селах. Однако в число тех населенных пунктов, о которых говорит Прокопий, по всей вероятности, входили также и небольшие города Армении, поскольку, когда он пишет о пределах распространения власти католикоса, указывает, что только он имеет власть на здешние села: между тем нам извест-

[1] Прокопий Кесарийский „История войн римлян с персами", кн. 2, Спб., 1880, стр. 181.

[2] *Գիրք Թղթոց* (Книга посланий), *Թիֆլիս, 1901, էջ 70*.

[1] Прокопий Кесарийский, ук. соч., стр. 182.

но, что власть католикоса распространялась не только на Двин, но и на все другие города Армении.

В период марзпанства в Двине велись большие строительные работы. Кроме крупных общественных строек (водопровод, мосты, родники, крепостные стены, церкви и т. д.), строились также дворцы для нахарарских (феодальных) родов и для католикоса.

Относительно этого периода Фома Арцруни пишет:

„Каждый из армянских нахараров строит царственные палаты и примечательные усадьбы и город окружают каменными стенами"[1].

Это указывает на то, что многие нахарары, кроме своих дворцов в собственном домене имели еще палаты в столице, благодаря чему они имели возможность участвовать в политической жизни страны, тем более, что многие из них занимали определенные должности во дворце марзпанов.

К сожалению, ни один из историков не оставил описания города Двина, хотя многие из них восхищались им и расточали похвалы по его адресу, называя Двин городом *грандиозным, знаменитым, известной великой столицей великих армян* и т. п.

